

Էջմիածին



Լ
1998

ՀԱՄԻՆ




ԾԴ ՏԱՐԻ

Է. ԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՒՈՅ
Ս. Է. ԶՄԻԱԾՆԻ

Յո-նո-ւր
1998



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական ֆարոգ Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում	3
--	---

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ - Աստղի ծագումը	8
----------------------------------	---

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի և Գրիստոնյա Նկեղեցիների պետերի միջև փոխանակված ողջույնի և քարեմալթաճանքների նամակներ ու հեռագրեր	12
Նորին Սուրբ Օծուբին Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Նոր տարույն առթիվ	16
Հաղորդագրություն	19
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Թրանսիսպում, Փարիզի Կոնգրեսների պալատում (Palas de Congres) ներկա գտնվելից Շառլ Ազնավուրի քաղաքապետի համերգին	20
ԱՐԱՐԱՏ ՍՐԿ. ԳԱՓՈՅԱՆ - Ամանորը Մայր Աթոռում	30
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Սուրբ Ծնունդ և Աստուածայայտություն	
Տեսուհի մերոյ Յիսուսի Քրիստոսի	32
Ամանորյա և Սուրբ Ծննդյան հանդեսների՝ Վեհափառ Հայրապետի հովանավորությամբ	36
Հայրապետական գնահատություն	38

ԿՐՈՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գևորգյան Հիմարանի տեսուչ Հայկազուն Մ. վրդ. Նաջարյանի ֆարոգը՝ խոսված Մայր Տաճարում	40
ՎԱՐԴԱՆ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԻԼԿԵՐԵԱՆ - Հեզերուն և Խոնարհներուն տունը	42
Շառն արհեստակցության Անհյանի դասախոսությունը՝ կարգացված Թաղեմ և Բարդուղիմեոս առաքյալների տոնի առթիվ	45
Երանելի Հովհաննես Առաքյալի և Աստվածաբան Ավետարանչի հանգիստը	52
Բարսեղ Կեսարացու Ջրօրհնյաց աղաթը	55
Սուրբ Նիկիմ խորի Ասորի	60
ՀԱԿՈՐ ՔՈՍՍԵՅԱՆ - Նշխարների Ստեփանոս Այսնեցու Հորի և Դանիելի մեկնություններից	95
Հ. ՇԱՌԼ ՌԸՆՈՒ - Փարիզի Ազգային գրադարանի հմր. 44 մասյանը (Քրիստոնեական ծիսակատարության մի հնագույն վկայություն)	106

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԹԱՆ - Հաղթի վանքը ԺԳ դարի սկզբին	115
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ - Անանիա Շիրակունու ՇԼԲ բոլորակը ըստ Խայերէն Խնագոյն թղթեայ ձեռագրի	125
ԿԱՐԱՊԵՏ ԱՐԵՂԱ ՀԱՐՈՒԹԹՈՒՆԹԱՆ - Հայր Պապի Ծիրենցական Խոսք Ուղղափառ եկեղեցու հավատարիմ և հավատավոր սպասավոր	144
ՊԱՎԵԼ ԿԼՈՐԵՆՍԿԻ - Քրիստոնեությունը և մշակույթը	145
ՀՐԱԶՅԱ ԱՇՈՏԻ ԱՍՄԱՐԹԱՆ - Իտալական ազգային-ազատագրական պայքարի առաջնորդները հայ հասարակական մտքի գնահատմամբ	155
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Հայ եկեղեցու հավատարիմ սպասավորը	162
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ	
Երեմ Երրենձա արեղաները անդրանիկ Պատարագ մատուցեցին	166
Տ. Արշակ արեղա Խաչատրյանի անդրանիկ ֆարզը՝ խոսված Մայր Տաճարում	166
Տ. Խոբեմ արեղա Հովհաննիսյանի անդրանիկ ֆարզը՝ խոսված Ս. Հոփսիմե եկեղեցում	170
Տ. Արշեմ արեղա Սանոսյանի անդրանիկ ֆարզը՝ խոսված Երևանի Ս. Սարգիս եկեղեցում	172
Քահանայական ձեռնադրություն Գեղարժուհիի թեմում	175
Տ. Գեյլ ֆահանա Մարտիրոսյան	176
Համաշխարհային Աղոթքի Շարաք Իտալիայում	177
Հայ Առաքելական եկեղեցին՝ Արևելյան Ուղղափառ և Բարեկարգյալ եկեղեցիների երկխոսության մասնակից	178
Ընդունելություններ Մայր Աթոռում	179
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ - Եկեղեցական քեմ. լուրեր	180
ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ - «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը (1974-1983)	183
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	194
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	196
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	198

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՇ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՁ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1998 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 6)

ԲԵԹՂԵՀԵՄ՝

ԱՂԲԻՒՐ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅԻ

«Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ,
... ի քէն ելցէ ինձ իշխան,
որ Հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ»:
(ՄԱՏԹ. Բ. 6)

(«Դու, ով Բեթղեհէմ՝ Յուդայի երկիր,
... քեզմէ պիտի դայ իշխան մը
որ պիտի Հովուէ իմ ժողովուրդը՝ Իսրայէլը»)

Եւ մենք այսօր, Քրիստոսի Ա. Ծննդեան տօնի օրը, անգամ մը
ևս կ'ողջունենք այդ Իշխանը, իր ծննդեան 1998-րդ տարեդարձին:

Իշխա՛ն...

Ի՞նչ են այդ իշխանութեան սկզբունքային օրէնքները. -
Այդ օրէնքները ամփոփուած են երկու բառերու մէջ, որոնք
արտասանուեցան Իշխանին ծնունդը աւետող երկնային պատ-
գամաբերներու՝ հրեշտակներու կողմէ Անոր ծննդեան պահուն. -

«Յերկիր ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, և

Ի մարդիկ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Երկու պատգամներ, երկու օրհնաբեր բարիքներ, որոնք
մարդկութեան ընծայուեցան Անոր կողմէ որ յալիտենապէս
փառաւորուած է - «փա՛ռք ի բարձունս Աստուծոյ» - և որ ահա իր
փառքը կ'արտայայտէ նոյնանալով մեր մարդկային բնութեան
հետ և յանձն առնելով իր մարդեղութեամբը խոնարհիլ դէպի
մարդը զայն բարձրացնելու համար անոր սկզբնատիպ իր
աստուածադրոշմ բնութեան և աստուածապարզ կոչումին
(ՓԻԼԻՊ. Բ. 7):

Այդ Իշխանը կու գար Բեթղեհէմէն, որ իբրև բառ կը նշանակէ
"Տուն հացի":

Աշխարհը կարօտ էր ոչ թե նիւթական հացին, որ կու գայ հողէն. այլ այն հացին, որ կու գայ ի վերուստ, երկրի և երկնի Արարիչէն: Նիւթեղէն հացը հողին տուրքն է. մեռք բերուած մարդկանց տքնութեամբ: Այն հացը որ այդ Իշխանը բերաւ Բեթղեհէմէն, երկինքէն և որ միշտ կ'ընծայուի բոլոր ժամանակներու սերունդներուն, ունի բնորոշիչ անուններ - աէր, հաւատք, յոյս, խաղաղութիւն, հաճութիւն, եղբայրութիւն, միասնութիւն, հաղորդութիւն և միութիւն:

Մեզ՝ մարդկային էակներու համար սա է հիմնական հարցումը - կրնա՞նք ըմբռնել ճշմարտօրէն մարդկային կեանք առանց այս հացին, այսպիսի բազմերանգ տարրերով թխուած: Բնականօրէն, մեր ամենօրեայ հացը, նիւթական հացը, էակաւորէն կարևոր է և անխուսափելիօրէն անհրաժեշտ մեր գոյութեանը համար: Նոյն Իշխանը՝ Ինք էր, որ Բեթղեհէմէն («Հացի Տուն»էն) գալով՝ մինչ կ'ուսուցանէր Իր առաքեալներուն աղօթելու արուեստը, անոնց պատգամեց և թելադրեց ըսել. «Զհաց մեր հաճապագորդ՝ տոբ մեզ այսօր» (ՄԱՏԹ. 2. 11):

Բայց նոյն Իշխանը չէ՞ր որ իր եռամեայ տնօրինական - վարդապետական իշխանութեան օրով յստակօրէն և շեշտակիօրէն ըսաւ. «Ե՛ս եմ կեանքի հացը» (ԶՈՎՀ. 2. 35): Նոյն իշխանը չէ՞ր որ դարձեալ պատգամեց թէ մենք չենք կրնար ապրիլ միայն (նիւթական) հացով (ՄԱՏԹ. 7. 4):

Երբ կը փորձենք կարդալ «Ժամանակի նշանները», չենք կրնար նուազագոյն կասկածն անգամ ունենալ որ այդ հոգեղէն հացի կարօտը աւելի շեշտակի կերպով ի յայտ կուգայ ներկայ ժամանակներուն՝ մանաւանդ երիտասարդ սերունդին մէջ: Եւ այդ անօթութիւնը այնքան խոր է և անմիջական որ շատ մարդիկ գոհացման համար կ'որոնեն այնպիսի աղբիւրներ զորս հաստատեալ աւանդական եկեղեցիներու պարունակին մէջ չեն գտներ:

Այսօր Ս. Ծննդեան օր է: Բեթղեհէմ բառը յաճախօրէն ներկայ է մեր միտքերուն և շրթներուն վրայ, մանաւանդ մատղաշ սերունդի պաւակներու՝ երեխաներու համար: Մեր աղօթքն ու յոյսն է որ մինչ կը մօտենանք 2000-րդ տարեդարձին, այդ բառը շատ լրջօրէն գրաւէ մեր հաղեցողութեան և ուշադրութեան կեդրոնը: Չենք կրնար զայն թողուլ այն աւանդական մտորի պատկերացումին մէջ ինչպէս սովոր ենք ընել մեր եկեղեցիներուն, սեփական ընտանեկան յարկերուն և այնքան ընդունելութիւն հասարակաց տարածում գտած մեր վաճառատուններուն և հրապարակային վայրերուն մէջ:

Հետևաբար, եկեք նայինք Բեթղեհէմին այն իմաստով ինչ որ բառը ինք կը թելադրէ - «Տուն հացի»: Եկեք միասին գործենք, ձեռք ձեռքի, իրար հետ բաժնելու համար այդ հացը այսպէս ըսած խմորուած և եփուած մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մարդեղութեամբը և առաքելութեամբը որ աւանդուած և վստահուած է իր եկեղեցիին: Այդ հացը աւելի առատ և համեղ ու օգտաշատ պիտի ըլլայ, երբ գիտնանք մասնաւորապէս զայն բաժնել անոնց հետ, որոնք աւելի անմիջական և ստիպողական կարիքն ունին անոր: Մեր պարտքը յատկօրէն գծուած է մեզի համար, այսինքն՝ մեր մարդկային գերագոյն ճիգը ի գործ դնել այդ հացը թարմօրէն մատուցելու համար ժողովուրդին: Բնականօրէն ան միշտ, յաւերժօրէն, թարմ է և համեղաճաշակ իր էութեանը մէջ այնպէս ինչպէս ան տրուած է մեզի որպէս «խմոր» Յիսուսի անձին և գործին մէջէն: Բայց մենք յաճախ ենթակայ ենք փորձութեանը զայն ներկայացնելու այնպիսի ձևով, որ պատմական և աւանդական տարրերով է պատկերացուած և պայմանաւորուած, ինչ որ կը նուազեցնէ անոր թարմութիւնը: Մենք կոչուած ենք նախ անձնապէս թարմանալու մեր ընկալման և ծառայութեանը մէջ անոր:



Ահաւասիկ այս երրորդ տարին է որ Մենք անձնապէս մեր Տիրոջ Ս. Ծննդեան և Աստուածայայտնութեան տօնը կը կատարենք Ս. Էջմիածնի մէջ, ուր 1700 տարիներ առաջ Քրիստոնէութիւնը պետականօրէն հռչակուեցաւ մեր հայ ազգի կրօնը: Որոշ իմաստով, ինչպէս սովոր ենք երբեմն ըսել, Ս. Էջմիածինը «Հայկական Բեթղեհէմ» է, ուր մեր ազգը ծնաւ որպէս քրիստոնէայ ազգ: Վերջին այս երեք տարիներու ընթացքին Մենք անձամբ վկայ եղանք հոգեւոր կարօտութեանը մեր ժողովուրդին, որ ստիպողական կարիքն ունի իր քրիստոնէական հաւատքը պօրացնելու իր նոր կեանքին, կեանքին ապատ ու անկախ Հանրապետութեան այս շրջանին:

Մենք բոլորս ենթակայ ենք փորձութեանը նիւթական հացի տիրապետութեան: Յաճախ զուտ աշխարհային և աշխարհայնապաշտ, մարմնապաշտ ու հաճոյապաշտ ձգումները և շարժումները արդիական, նոյնիսկ ըստ ոմանց, յետ-արդիական կամ գեր-արդիական կեանքի, խոր ազդեցութիւն կը գործեն և լայն ու տիրական տեղ կը գրաւեն մեր այսօրուան կեանքին մէջ: Մեր Հայաստանի, մեր ժողովուրդի ներկայի կեանքին մէջ դրսևորուող

հոգևոր վերարթնութեան այս շրջանին մենք պարտաւոր ենք գտնել միջոցը ներդաշնակելու նիւթական հացը հոգևոր հացին հետ: Եթէ այսօր թերանանք այդ խիստ էական պարտաւորութեան մէջ, ապագային աւելի դժուար կը դառնայ մեր գործը: Պարտաւոր ենք գործել ուժգնաբար, շարժիլ արագաբար: Մեր Հայց. Եկեղեցին տեսակ մը հացթուխ է հոգևոր այդ հացին, մեր հայրերու դարաւոր ասանդութեան փորձով և ոճով օժտուած: Այսօր Բեթղեհէմին հացին թարմացման առաքելութիւնն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջնահերթ պարտաւորութիւնը:

Ս. Ծննդեան տօնին այս առաւօտ կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին Հայաստանի, Արցախի և աշխարհատարած Սփիւռքի մէջ, վերանորոգելո՛ւ իրենց ճաշակը այդ հոգևոր հացին համար, որ մեզի կը հրամցուի Սուրբ Գրական Բեթղեհէմէն, ինչպէս նաև մեր այսպէս կոչուած ազգային Բեթղեհէմէն, մեր Ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռէն՝ Ս. Էջմիածնէն: Եկէք չփախցնենք այս սքանչելի առիթը, որպէսզի թարմացնենք մեր ճաշակը հոգևոր այն հացին հանդէպ, որ կ'ընծայուի մեզի մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ծննդեան խորհուրդին մէջէն և որ հարապատուօրին, վաւերականութիւն պիտի պարգևէ մեր քրիստոնէական կեանքին և երջանկութիւն ցանէ մեր ժողովուրդին մէջ, որ այնքան անգամներ պրկուած է եղած այդ երջանկութենէն մեր պատմութեան դառն փորձութիւններու և տառապանքներու պատճառաւ:

Այսօր կը գտնուինք անյետաձգելի հրամայականներու առջև թէ՛ Մայր Հայրենիքի և թէ՛ Արցախի մէջ: Բոլորդ՝ ալ գիտէք որ ամենաաղծուարին պայմաններու տակ կ'ապրինք: Ժամանակն է որ խօսելէ աւելի՝ գործենք, և՛ գործենք ձեռք ձեռքի, սիրտ սրտի, միասնական ներդաշնակեալ ջանքերով: Պատմութիւնը խօսքով և գրիչով չէ որ կը գրուի, այլ գործի մելանով, քրտինքով, ինքնազոհողութեամբ, դրական մասնակցութեամբ, նուիրումով: Գիտնանք պանապանել էականը երկրորդականէն, ընդհանրականը՝ մասնաւորէն, յաւիտենականը՝ ժամանակաւորէն:

Կոչ կ'ուղղենք նաև ուրիշ քրիստոնէական քոյր Եկեղեցիներու, Եկեղեցիի միութեան վերականգնման (էկումենական շարժումին) նուիրուած կազմակերպութիւններու իմ եղբայրներուն և քոյրերուն, որպէսզի եղբայրակցութեան գործնական եղանակներով պօրացնեն մեր ձեռքերը այն ծառայութեան համար որով այդ հոգևոր հացը մենք կը ջանանք բաժնել Հայ ժողովուրդին, մանաւանդ Հայաստանի մէջ: Այդ ժողովուրդին գիտակցութեանը մէջ թէն այդ հացին համը երբեք չէ կորսուած, բայց ան կարիքն

ունի վերանորոգություն, վերաթարմանալու և առատանալու անոր
այսօրուան տուեալ կենսի դժուարին պայմաններուն մէջ:

Իմ խորագոյն իղձն է, ինչպէս կը հաւատամ, իղձն է քրիս-
տոնէական եկեղեցիներու իմ բոլոր եղբայրներուն և քոյրերուն
տեսնել որ մինչ կը մօտենանք մեր Տիրոջ 2000-րդ տարեդարձին,
մենք առաւել զօրացուցած ըլլանք մեր մէջ մեր միասնութիւնը
դէպի քրիստոնէական միութիւն մեր որոնումի ճանապարհին
վրայ. միութիւն՝ որ տրուեցաւ Մեզի Բեթղեհէմի՝ "Հացի Տուն"ին
մէջ՝ ահաւասիկ երկու հազար տարիներ առաջ:

Սրտանց կ'աղօթենք որ այս տարուան Ս. Ծննդեան տօնը ողջ
մարդկութեան համար թարմացնէ այն հացը որ մենք միասին կը
բաժնենք Բեթղեհէմի մէջ ծնած մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի
անձին մէջէն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ
օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳՍՐԵԳՐՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ի Ս. Էջմիածին 1998

Ի Տօնի Ս. Ծննդեան և

Աստուածայայտնութեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՍՏՂԻ ԾԱԳՈՒՄԸ

«Արդ, որտե՛ղ փնտրեմ՝ Բեզ»:

Ս. Եփրեմ Ասորի

Թերթեցինք պատմության ես մեկ էջը, որ թվագրված էր 1997 էջահամարով: Նաև 1997 տարիներ անցան երբևէ անցյալ չդարձած և չդարձող, Հավիտենական ներկային պատկանող և մեր կյանքի ամեն վայրկյանի, ապրումների, դիտակցության Հանդեպ որպես չափանիշ փարոսացած այն օրից, երբ աշխարհի մի փոքրիկ վայրում, փափուկ բարձրից, անկողիններից ու զարդարված օրորոցից զուրկ, անասնագոմի խուլ անկյունում, մարգկանց աչքից Հեռու, քարե անկողնի ու եղոտե բարձերի մեջ ծնվեց Նա, Ում առավել քան վայել էին բոլոր մանուկներին բաժին Հասնող «Թագավորական բարձերն ու մահճակալները»:

Այս Հրաշալի Մենդյան ակամա վկաները դարձան անբաժնի կենդանիները, միամիտ ու պարզ Հովիվները, աստղազարդ երկնքի Հետքերով քայլող «Կույր Հավատքով» աննահանջ ու Համառ օտար աշխարհներից եկող մոզերը:

Հակասական խորհրդածությունների մեջ էր նաև այս Մանուկի կաթոգին մայրը՝ Մարիամը, որ Հրեշտակապետի ավետիսին ականջալուր ձայնել էր, Թե «Ահա ահա եկ կամ աղախին Տեսա՛ն» և «Մեծացուսցէ անձն իմ զՏէր և ցնծացաւ Հոգի իմ Աստուծով Փրկչաւ իմով»: Եվ դուրգուրալով իր զավակին մայրական «սրտում խորհում էր» (Ղուկ. Ը 19), Թե Աստվածային կանխասացությամբ ծնված իր որդին մի՞թե այսպիսի խեղճ պարագաներում աշխարհ գալով պիտի «կոչվի Աստուծո Որդի»: Ականատես էր լինում Հովիվների այցելությանը և օտարազգի մոզերի երկրպագությանը և առավել Համոզվում իր Որդու Փրկիչ լինելու Հաստատման մեջ:

Ջարմացած էր նաև Նորածնի Հոգեհայրը՝ «արդար» Հովսեփը, որի շուրջ, իր ընտանեկան Հարկից ներս խորհրդավոր դեպքերը Հաջորդում էին մեկը մյուսին իր իսկ կամքից և գիտակցությունից անկախ: Ինչպես որ անակնկալի էր եկել առաջին անգամ իր նշանածի Հղությունը տեսնելիս, այժմ էլ լուրջյամը դիտում էր այդ Հղության արգասիք պտուղը՝ մշտապես ի լուր ունենալով, որ «Նրա մէջ ծնուածը Սուրբ Հոգուց է»: Նա մի որդի պիտի ծնի և Նրա անունը Յիսուս պիտի դնես, քանի որ Նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից» (Մատթ. Ա 21):

Մարդկային այս ազնիվ և Հիացախառն զգացումներին գալիս էր ավելանալու նաև երկնային ցնծությունը: Հրեշտակները անդադար փառաբանությամբ ավետում էին ամբողջ աշխարհին, որ «ծնվեց ձեզ Նոր Արքա», Աստուծո փառքը իջավ բարձունքներից՝ մարգկանց մեջ իրական խաղաղություն Հաստատելու Համար:

Երկինքը իր պարզկա Հայացքով և աստղային լուսավոր աչքերով խաղաղությունը գրկած օրորում էր Հրաշք Մանուկին: Իսկ երկնածոցից ծնված մի

անսովոր լուսավորությունը աստղ փայլիլում էր Բեթղեհեմի Մսուրի վրա, որպես Աստուծո կնքանշան նոր մարդու և նոր կյանքի համար:

Եվ աստղի ծագումը հրաշափառ, սքանչելի և զարմանալի էր...



Այո՛, այսպիսին էր այդ պարզ ու հոգեգրավ իրադարձությունը, որը դուրս եկավ սոսկ պատմություն լինելու շրջանակից և խառնվեց մարդկային կյանքի հետ: Այսօր աշխարհի բոլոր ծագերում չկա մի անկյուն, ուր չհիշատակվի Հիսուսի Մենդյան դեպքը իր զանազան դրսևորումներով. երբեմն շքեղ ու ճոխ, ամեն չափ ու սահման անցնող և այդ ամենից Մենդյան հետ ոչ մի ներքին առնչություն չունեցող խրախճանքներով, երբեմն լուկ ավանդության, ժառանգականության և օրենքի ուժով ու արտաքին ձևերի մեջ սահմանափակվող հանդիսություններով, որոնք ավելի հոգնության և ոչ ուրախության տեղիք են և երբեմն էլ աղոթքով ու ինքնամոխիմամբ, Աստվածհայտնության վեհագույն խորհրդի հետ ազնիվ և անկեղծ երկխոսությամբ, համեմատությամբ և այդ խորհրդով ապրելու անխառն ցանկությամբ:

Այսօրվա աշխարհի չորս ծագերում դժվար թե գտնվի մի վայր, որտեղ քրիստոնյան կամ ոչ քրիստոնյան տեղյակ չլինի Բեթղեհեմում տեղի ունեցած խորախորհուրդ դեպքին: Սակայն այս ամբողջի մեջ միգուցե մի փոքր հատվածն է ծանոթ այդ իրողությանը, որովհետև ծանոթությունը նշանակում է հաղորդություն, նշանակում է գիտություն, նշանակում է ապրել նրանով, դարձնելով այն կյանքի ուղեցույց:

Այսօր էլ մենք ենք վկաները Աստվածորդու Մենդյան: Մենք ենք Հրեշտակների կրկնողությամբ ավետում, թե «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», մենք ենք այսօր վերաբծարծում և հովիվների պես ունկնդիր լինում, թե «ծնաւ ձեզ Փրկիչ, որ է Օծեալ Տէր», և վնդժապան փորձում ենք, մոգնորի պէս նրկրպաղաւ լինելով, մեր ունեցած գերագույնն ու լավագույնը ընծայել նրան:



Ամեն անգամ նոր Տարվա կամ Սուրբ Մենդյան Հիշատակությամբ, բարեկամ թե թշանմի, ամենաբարի մաղթանքներն ենք անում և շնորհավորական խոսքեր ուղղում միմյանց: Բայց դա առավել վավերական և ճշամարիտ է դառնում այն դեպքում, երբ կատարում ենք ոչ թե որպես պարտականություն, այլ որպես իրական դործ և շոշափելի ծառայություն:

Մեկ շրջան ևս անցավ այն օրից, երբ, մուտք դործելով նոր Տարվա մեջ և մասնակից լինելով Տիրոջ Աստվածհայտնությանը, մի տեսակ խոստացանք փոքր-ինչ չափով բարեշարժել մեր հոգևոր և ազգային կյանքը, եթե ոչ լուծել, բայց գոնե լուծման նախադրյալներ և պայմաններ ստեղծել՝ ապագայում

իրականացնելու համար: Ամենօրյա ճշմարտություն է Վեհափառ Հայրապետի խոսքը, թե «աշխարհը փոփոխվում է և փոփոխվում է մեծ արագությամբ: Սակայն ի՞նչ արժեք կունենա այն մեզ համար, եթե մենք անմասն մնանք դրանից: Աշխարհը կփոխվի, բայց մենք կմնանք նույնը»:

Կրկնակի անգամ դժվարին է այսօր, քանզի թվացյալ խաղաղության և ազատ գործելու պայմաններում Հայ եկեղեցու կողմից ծավալած բազմազան գործունեությունը դեմ-հանդիման ծառացած է արժեքների ամենօրյա կորստով, ժամանակի տնտեսական և ընկերային ծանր պայմանների թելադրած դեպի մակերեսայնություն և աշխարհայնացում ընթացող մեր ժողովրդի կյանքի պատկերը:

Եվ կարծես նույն միջավայրն ու նույն «ի լրումն ժամանակացն» էր, երբ ծնվեց աշխարհի Փրկիչը, պարզապես ժամանակների ձևի և արտաքին դրսևորումների տարբերությամբ, բայց ոչ երբեք բովանդակության: Մեր կյանքում տեղ գրավող բազմաթիվ ժողովրդական հուշումներն ու գծագրությունները, աղքատությունն ու ինքնապանությունները, չգիտակցված ազատության բերած դժվարին հանգամանքները ևս մեկ անգամ դնում են Աստվածորդու Մենդյան փաստի անհրաժեշտության առջև: Յուրաքանչյուրիս անհրաժեշտ է ոչ միայն քրիստոնյաներ լինել, այլև վերածվել Քրիստոսածին լինելու՝ մեր խոսքով, գործով և մտքով: Մեր ինքնավերարժեքուման այս կարևոր շրջանում առավել շեշտով են հնչում Պողոս առաքյալի այն խոսքերը, թե «Արդարեւ կենդանի Աստուծոյ տաճար էք դուք, ինչպէս ասաց Աստուած. «Պիտի բնակուեմ նրանց մէջ և պիտի ընթանամ նրանց միջով, և նրանց Աստուածը պիտի լինեմ և նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը»» (Թ Կորնթ. Զ 16): Ամեն ինչից առաջ և ամեն ինչից վեր պիտի համարձակություն ունենանք պատասխանելու, թե մենք որպես անհատ և ժողովուրդ համարում ենք մեզ Աստծունը կամ ոչ: Քանզի այս ընտրության մեջ չի կարող լինել միջին ճանապարհ. «Եւ եթէ Հայր էք կոչում նրան, որ առանց աշառութեան դատում է իւրաքանչիւրին ըստ գործերի, ապա երկիւղով ընթացէք այս աշխարհում ձեր պանդխտութեան ժամանակ» (Ա Պետ. Ա 17):

Այս Սուրբ Մենդյան տոնին ընդառաջ գնալով փորձենք իրական աչքերով տեսնել, թե այն ինչ նշանակություն ունի մեր կյանքի համար, և մենք ինչ մասնակցություն ունենք այդ Մենդյան խորհրդի մեջ: Եվ ամփոփելով ունկնդիր լինենք Հայոց Հայրապետի Սուրբ Մենդյան պատգամին. «Հետևաբար, եկէք նայինք Բեթղեհէմին այն իմաստով, ինչ որ բառը ինքը կը թելադրէ՝ «Տուն Հացի»: Եկէք միասին գործենք, ձեռքձեռքի, իրար հետ բաժնելու համար այդ Հացը, այսպէս ըսած, խմորուած և եփուած մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մարդեղութեամբը և առաքելութեամբը, որ աւանդուած և վատահուած է իր եկեղեցիին...եկէք չփախցնենք այս սքանչելի առիթը, որպէսզի թարմացնենք մեր ճաշակը հոգեւոր այն Հացին Հանդէպ, որ կընծայուի մեզի մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Մենդեան խորհուրդին մէջէն»:

ՊԵՇՏՈՆԵԿԸՆՔ

**ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԳՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ,**

Ն.Ս.Օ.Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

**ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐ**

Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Արքեպիսկոպոս
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ /Հոռմ/
Կոստանդնուպոլսի Հումաց Տիեզերական Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍ /Ստամբուլ/
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ /Կահիրե/
Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԱԼԵԶՍԻՅ Բ /Մոսկվա/
Ասորական Արևելյան Եկեղեցու Կաթողիկոս- Պատրիարք,
Նորին Արքեպիսկոպոս
ԽԱՆԱՆԻԱ ՄԱՐԳԻՆԿԱ IV /Նորտոն Արուվ, ԱՄՆ/
Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԲԶԱ Ա ԻՎԱՍ /Դամասկոս/
Եթովպիայի Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԱԲԲԱ ՊԱՌԻԼՈՍ /Ադիս Աբեբա/
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Արքեպիսկոպոս
ԻԼԻԱ Բ /Թբիլիսի/
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԹԵՈԿՏԻՍՏ /Բուխարեստ/
Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Արքեպիսկոպոս
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Գ /Դամասկոս/
Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս
ԳԻՈԳՈՐՈՍ /Երուսաղեմ/

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՄԱՔՍԻՄ /Սոֆիա/

Աերբիայի Պատրիարք, Նորին Սրբություն

ՊԱՎԵԼ /Բելգրադ/

Աթենքի և Համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ՍԵՐԱՖԻՄ /Աթենք/

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍ /Նիկոսիա/

Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԶՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ /Հելսինկի/

Ամտիոքի Մարոմիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐ /Բքերքե, Լիբանան/

Ամտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄ /Դամասկոս/

Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՀԱՔԻՄ Ե /Լիբանան/

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,

Նորին Սրբություն

ՊԵՏՐՈՍ /Եգիպտոս/

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և

միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ԶՈՐԶ ՔԵՐԻ /Լոնդոն/

Երուսաղեմի Անգլիկան Եկեղեցու Եպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ՍԱՄԻՐ ՔԱՖԻԹԻ /Երուսաղեմ/

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր քարտուղար

Դոկտ. **ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐ /Ժնև/**

Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի Ընդհանուր քարտուղար

Դոկտ. **ՔԻՏ ԿԼԵՄԵՆՅ /Ժնև/**

Միջին Արևելքի Եկեղեցիների Ընդհանուր քարտուղար

ՐԻԱԴ ԺԱՐԺՈՒՐ /Կիպրոս/

Ավստրալիայի Եկեղեցիների Ազգային Խորհրդի Ընդհանուր քարտուղար

ԴԵՅՎԻԴ ԿԻԼ /Կամբերա/

Միացյալ Նահանգների Եկեղեցիների Ազգային Խորհրդի

Ընդհանուր քարտուղար

ՏԻԿԻՑ ԶՈՍՆ ՔԵՄՊԵԼ

Ծվեյցարիայի Եկեղեցիների Միջօգնության Մարմնի

քարտուղար

ՌՈՒԴՈՒՆ ԲԵՆՃԵՐ

PRO ORIENTE կազմակերպություն /Ավստրիա/.

Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների խորհուրդ.

Միխթարյան Միաբանության արքանայր

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԵՇԻՇՅԱՆ

Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական Աթոռներից՝

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Նորին Սուրբ Օծություն

ԱՐԱՄ Ա /Ամթիլիաս/

Պատրիարք Հայոց Երուսաղեմի, Նորին Ամենապատվություն

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ /Երուսաղեմ/

Պատրիարք Հայոց Կ. Պոլսի, Նորին Ամենապատվություն

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ /Ստամբուլ/

Թեմակալ բոլոր Առաջնորդներից և Թեմական խորհուրդներից,
Համայնքներից:

Բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել քույր Եկեղեցիների
կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից,
Էկումենական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Պետական և ազգային շրջանակներից՝

Հայաստանի Հանրապետության Նախագահ, Վսեմաջուր

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ,

Մեծահարգ

ԲԱՐԿԵՆ ԱՐԱՐՔՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ, Մեծահարգ

ՌՈԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆ

Սահմանադրական դատարանի նախագահ, Մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեոնային Ղարաքաղի Հանրապետության Նախագահ, Վսեմաշուք

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեոնային Ղարաքաղի Հանրապետության Վարչապետ, Մեծարգո

ԼԵՈՆԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կառավարության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական, համալսարանական ամձնավորություններից, իրավագետներից և քաղաքական գործիչներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից և հասարակական կազմակերպություններից, Քաղաքացիական Ավիացիայի վարչությունից, Միջազգային «Կարմիր խաչ»-ի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամից, Հ.Բ.Ը.Մ-ից, Հայկական Համագումարից, Հ.Օ.Մ.-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու խնամակալությունից, Կարագյուզյան Ռիմնարկությունից, Ջիմիշյան ֆոնդից, Վեր. Մովսես Զամբազյանից՝ հանուն Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի բաժնից, Մելքոնյան Կրթական Հաստատությունից և մի շարք այլ սփյուռքահայ կառույցներից և հաստատություններից, Աթենքի համերգասրահի կազմակերպությունից, Իրանի Հայ ճարտարապետների և ճարտարագետների միության վարչության նախագահ Եփրեմ Տեր-Անտոնյանից, Իրանի Ռադիո-Տեսուչության հայերեն ռադիոժամի տնօրենությունից:

Օտար պետություններից՝

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ

ՍԵՅԵԴ ՄԱՀՄԱԴ ԽԱԹԱՄԻ

Լիբանանի Խորհրդարանի Նախագահ

ՆԱԲԻ ԲՐՐԻ

Լիբանանի Վարչապետ

ՌԱՖԻԿ ՀԱՐԻՐԻ

ԱՄՆ-ի Սենատոր

ԲՈԲ ԴՈՈՒԼ

Ծնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող օտար բոլոր դեսպանները, արտասահմանում գործող հայ դեսպանները, սփյուռքահայ հասարակական-քաղաքական և կրթամշակութային կազմակերպությունները:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԱՌԹԻԻ

(Արասանուած 1997-ի Դեկտեմբերի 31-ի կէս գիշերին)

Սիրելի զաւակունք Հայց. Ս. Եկեղեցու,

Ահա Հասել ենք անսահմանելի և անչափելի ժամանակի մէջ մարդու կողմէ նշանակուած մի սահմանագծի, որտեղ 7 թիվը փոխուում է 8-ի, 1997-ը փոխարինուում է 1998-ով:

Առաջին հերթին, սրտի պարտք եմ գգում, որպէս ձեր Հոգևոր Հայրը և մեր Հայց. Առաքելական Եկեղեցու Առաջին Սպասաւորը, շնորհաւորել ձեզ Նոր Տարուայ այս Հանգրուանին: Որպէս պետական ազգ մեր քրիստոնէական այս ծննդավայրում, մեր Ս. Եկեղեցու Մայր Աթոռում, Ս. Էջմիածնում, ազօթում ենք որ տիեզերքի Արարիչ, կեանքի Պարգևիչ և բարեաց Ազգիւր՝ Ամենակալն Աստուած Իր երկնածիւր շնորհները հեղու ձեր բոլորի՝ մեր ժողովրդի բոլոր զաւակների վրայ, ի Մայր Հայաստան, մեր ազատ ու անկախ Հանրապետութեան ողջ տարածքում, տասնեմէկ մարզերում, «յարևելից մինչ յարևմուտս, ի Հիւսիսոյ և ի Հարաւոյ», նրանից անբաժան՝ Արցախում և աշխարհատարած Սփիւռքում:

Այս պահին ես մտապատկերացնում եմ ձեզ նստած սեղանների շուրջ ձեր բնտանեկան յարկերի տակ կամ հաւաքական միջավայրի մէջ հաց ու աղ բաժանելիս միասնաբար և սիրոյ մթնոլորտում ողջունելիս Նոր Տարին:

Կաղանգի իրիկուն է:

Ինչպէս ամէն տարի, իմ դպրոցական կեանքի օրերից սկսեալ, ես յիշում եմ մի խօսք որ կեանքի է կոչուել մեր տաղանդաւոր բանաստեղծներից Սիամանթոյի գրչով.

«Նոր աարիի իրիկունն է: Ամէն երգիք իր

խրախճանքի պահն ունի:

Թոնիրին շուրջ, որուն վրայ այգիներուն

մրգեգէնները կը բուրեն,

Քառսուն անձ՝ մէկ տան զաւակ՝

բոլորակի նստեր են.

Մէկգմէկու նայուածքին մէջ՝ իւրաքանչիւրն

իր գրախտը կը տեսնէ...»:

Մարդկային կեանքի և ազգային ինքնութեան ինչ խոր փրկստփայութիւն: Մէն մի հայ ուրիշ հայի աչքերի մէջ իր դրախտը, իր երջանկութիւնը կը տեսնի:

Այո՛, սա է ճշմարիտ, իսկական, բնատուր հայութեան սահմանումը: Այդ նայուածքին անուանը Սէր է, և՛ չմոռանանք երբեք որ սիրոյ ճառագայթների անուններն են ՄԻՈՒԹԻԻՆ, ՄԻԱՍՆՈՒԹԻԻՆ, ԵՂԱՅԻՍԻՍԹԻՍԻՆ, ԾԱՌԱՅՈՒԹԻԻՆ, ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻԻՆ:

1997-ը ահա անցկացրինք: Բնականօրէն մի անխռով տարի չեղաւ: Բայց առհասարակ խաղաղ և ապահով մի կեանք վայելեցինք: Նեղօրերի միջից անցանք: Մեր Մայր Հայաստանի ժողովրդի տնտեսական, ընկերային, հասարակական կեանքը չեղաւ այնպէս պայծառ ինչպէս մեր բոլորի ցանկութիւնն է: Հակառակ այդ բոլոր պայմաններին, սակայն արձանագրուեցին նոր իրադարձումներ մեր հայրենիքի կրթական, մշակութային, գիտական, տնտեսական, յարաբերական կեանքի այլազան մարզերում:

Արցախի մէջ վերջնական խաղաղութեան հաստատման հարցը ողջ հայութեան կեանքում գրաւեց կեդրոնական տեղ: Մտահոգութիւնները երբեմն խռովեցին մեր միտքերը և հոգիները: Բայց փա՛ռք, հազար փառք Աստուծոյ, որ ոչ մի նահանջ չ'արձանագրուեց, այլ՝ ընդհակառակը՝ նորանոր նուաճումներ իրականացուեցին Արցախի մեր ժողովրդի հասարակական կեանքի ամրացման և զարգացման ընթացքում:

Ոստիկով մեր եկեղեցու մասին Մենք խոնարհաբար գոհութիւն ենք ընծայում Բարձրեալն Աստծուն, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր կեանքն ու առաքելութիւնը իրականացրեց վերանորոգութեան շունչով, կամքով և տեսիլքով:

Նոր հոգեւորականներ՝ սարկաւազներ, քահանաներ, արեղաներ, եպիսկոպոսներ ձեռնադրուեցին և լծուեցին եկեղեցու առաքելութեան սուրբ գործին: Վերաբացուեց Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի վերանորոգեալ շէնքը: Հոգեւոր Ճեմարանի սաների թիւը աճեց: Նոր եկեղեցիներ կառուցուեցին և օծուեցին, հին եկեղեցիներ վերանորոգուեցին, քրիստոնեական դաստիարակութեան բազմաթիւ ծրագրեր իրականացուեցին, Ս. Մեսրոպ Մաշտոցի անուամբ Դպրութեան Տուն բացուեց, Սփիւռքի հայութեան հետ յարաբերութիւնները առաւել ևս յառաջ գնացին, միջազգային և միջ-եկեղեցական յարաբերութիւնները նոր թափ ստացան, շինարարական գործունէութիւնը լայնօրէն ծալալուեց:

Բնականօրէն դեռ չա՛տ-չա՛տ անելիքներ կան մեր առաջ թէ՛ հայրենիքում և թէ՛ մեր եկեղեցու կեանքում: Կատարուածը դեռ շատ հեռու է լիովին բաւարար լինելուց:

Կարեւորն այն է որ բացւող Նոր Տարուայ սեմին մենք կարենանք

Հոգեպէ՛ս նորոգուել, կամքով ամրապնդուել, յուսահատութեան փորձութիւնը ի սպառ հեռու վանել և Հաւատաւոր կեցուածքով լծուել նոր աշխատանքի, նորանոր իրագործումների վճռակամութեամբ զինուած:

Բնականօրէն մեր ազգի և Եկեղեցու մէջ տարակարծութիւններ եղել են, այսօր էլ կան: Բայց տարակարծութիւնները կարող ենք անդրանցնել և նոյնիսկ դրական ոյժի վերածել եթէ գիտենանք ազգային և եկեղեցական միութեան և ամբողջականութեան և ազգի գերագոյն ընդհանրական շահերի գաղափարով շարժուել մեր մտածումների և գործերի մէջ: Եւ այդ բոլորի բանալին սէրն է «մէկզմէկու նայուածքի մէջ իւրաքանչիւրն իր դրախտը տեսնելու» Հայավայել ոճը: Մենք կարիքն ունենք առաւել ևս զօրաւիրք կանգնելու մեր Հայրենի պետութեանը և մեր մայր Եկեղեցուն, որպէսզի ուժեղանայ և զարգացման ճանապարհի վրայ յառաջադիմէ մեր ազգը:

Մի խօսքով՝ թող նոր Տարին նոր ու պայծառ Հորիզոններ բանայ մեր ազգի, Հայրենիքի և Եկեղեցու կեանքում: Թող խաղաղութիւնն ու արդարութիւնը տիրեն ողջ մարդկութեան կեանքում:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

31. 12. 1997

Ի Ս. Էջմիածին

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 3-ին նախագահական հատուկ ինքնաթիռով Ֆրանսիա մեկնեց Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ միասին, ներկա գտնվելու Շառլ Ազնավուրի կազմակերպած «Սուրբ Ծնունդը Հայաստանի երեխաների համար» բարեգործական համերգին:

Հունվարի 4-ին Վեհափառ Հայրապետը Փարիզի Ա. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցում քարոզեց իրնթացս Ա. Պատարագի, այնուհետև հանդիպեց Ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչների հետ, պատասխանեց Ֆրանսիացի և հայ լրագրողների հարցերին: Համերգի ընդմիջմանը Նորին Սրբությունը կարճատև զրույց ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ, իսկ երեկոյան մասնակցեց Փարիզի քաղաքապետարանում կազմակերպված ճաշկերույթին:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Վերադարձավ հունվարի 5-ին:

Հունվարի 14-20-ը Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական իր անդդամիկ այցը կատարեց Եգիպտոսի հայոց թեմ: Հովվապետական անդդամիկ այս այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետը պատարագեց և քարոզեց թեմի եկեղեցիներում, այցելեց համայնքի կրթա-մշակութային և հասարակական հաստատություններ: Նորին Սրբությունը Եգիպտոսում ունեցավ նաև մի շարք պաշտոնական հանդիպումներ երկրի պետական ղեկավարների ու հոգևոր կրոնապետների հետ, հունվարի 18-ին Կահիրեի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Ղպտի Ուղղափառ եկեղեցու պետ Շընուդա Գ Պատրիարքի հետ ստորագրեց Համատեղ հայտարարություն:

Ավարտելով հայրապետական այս այցելությունը, հունվարի 24-ին Գարեգին Ա Վեհափառը մեկնեց Գերմանիա՝ հովվապետական առաջին այցելությունը տալու Գերմանիայի հայոց թեմին:

Վեհափառ Հայրապետի՝ Եգիպտոս և Գերմանիա կատարած այս երկու այցելություններին հանգամանորեն կանդգադառնանք հաջորդ համարում:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ, ՓԱՐԻԶԻ ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ
ՊԱԼԱՏՈՒՄ (PALAS DES CONGRES),
ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԻՆ**

ՄԵԿԵՆՈՒՄ

Սույն թվականի հունվարի 3-ին, վաղ առավոտյան, նախագահական հատուկ ինքնաթիռով «Չվարթնոց» օդանավակայանից Ֆրանսիա մեկնեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Հայաստանի Հանրապետության նախագահ մեծարգո տիար Լևոն Տեր-Պետրոսյանը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Ս. Հոփիսիմե վանքի վանահայր Տ. Սովսես վրդ. Սովսիսյանը՝ որպես գավապանակիր: Իսկ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին ընկերակցում էին ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը, Երևանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, պաշտոնատար այլ անձինք:

Տեղական ժամանակով ժամը 17.00-ին օդանավը ժամանեց Փարիզ: «Օռլի» օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նազաշյանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահան Փափազյանը, Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան, Բելգիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Զիթեջյանը, Ֆրանսահայոց թեմական խորհրդի առենապետ տիար Բաֆֆի Բաքրջյանը, Ընդհանուր ժողովի առենապետ տիար Գեղամ Թորոսյանը, Փարիզի Հայոց Բարեգործական Միության նախագահ բժիշկ Էդուարդ Ադամյանը՝ տիկնոջ հետ, թեմական խորհրդի անդամներ, հոգևորականներ, մեծաթիվ ազգայիններ:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ. 4 ՀՈՒՆՎԱՐԻ, ԿԻՐԱԿԻ

Հունվարի 4-ի այգաբացն անսահման ուրախություն ու բերկրանք էր իր հետ բերել փարիզաբնակ հայ հավատավորի համար: Դեռ վաղ առավոտյան աշխույժն ու անսովոր տրամադրությունն էր իշխում Սուրբ Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցում, որ կառուցվել է 1904-1905

թվականներին՝ ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանի միջոցներով ու հավատավոր նվիրումով:

Ողջ հայությունը ի մի էր եկել՝ մասնակցելու մատուցվելիք եպիսկոպոսական Սուրբ Պատարագին և լսելու իրենց հոգևոր հոր՝ վեհափառ Հայրապետի պատգամը: Պատարագին էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի, Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նազաշյանը բարիգալստյան և շնորհակալության խոսքով դիմելով Ամենայն Հայոց Հայրապետին, նրան հրավիրեց իր հայրական օրհնությունները բաշխելու փարիզաբնակ ժողովրդին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ ՓԱՐԻՉԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի Հավատացյալ և Հավատարիմ Հայրդդեք.

Առաջին խոսքս այսօր Ձեզի չէ ուղղված, այլ դեպի երկինք կբարձրացնեմ՝ առ Աստված, և փառք կուտամ իրեն, որ այս տարվան՝ 1998 թվականի առաջին Պատարագին ես այստեղ եմ՝ ձեզի Հետ, Փարիզի Սուրբ Հովհաննես եկեղեցվո կամարներուն ներքև: Բոլորդ ալ տեղյակ եք, որ այս անգամ իմ գալը Հովվապետական այցելության նպատակ չունի: Այսօր Հատուկ միօրյա այցելությամբ եմ եկած՝ ի սեր, Հօգուտ և ի բարին մեր Հայաստանի՝ Մայր Հայրենիքի դպրոցական սերունդի բարվոք և առողջ դաստիարակության: Եկած եմ մեր Հայաստանի ազատ ու անկախ Հանրապետության Վսեմաշուք նախագահի Հետ միասին՝ Հովանավորելու այն ձեռնարկը, որ Ֆրանսահայ մեր զավակներեն տաղանդավոր արվեստագետ և մեծահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը, աստվածատուր իր ձայնի շնորհիվ և իր արվեստի միջոցով, կուզե բարիք ընծայել մեր Հայ դպրոցներուն Հայաստանի մեջ: Եկած եմ՝ Հովանավորելու այսօրվա այդ ձեռնարկը, Հայտնելու մեր Հայրական սերը և Հոգածությունը մեր աչքի լույսին պես եղող նոր սերունդին դաստիարակության Համար: Մեր աչքի բերն են մեր մանուկները:

ԱՀավաստիկ երեք տարիներն ի վեր կապրիմ Հայաստանի մեջ, այս երրորդ Հունվարն է կյանքիս մեջ, որ աչքերս բացի արևու լույսին մեր Հայաստանի Մայր Հողի վրա: Երեք տարիներու այս ընթացքին ես աչքով տեսա, կյանքով վկայեցի, թե որքա՞ն-որքա՞ն պետք ունի մեր ժողովուրդը Հոգևոր, բարոյական, կրոնական, մշակութային, ազգային բարեկարգության Հասարակական կյանքի մակարդակներուն մեջ, որքա՞ն պետք ունի մեր նոր սերունդին վերանորոգության, Հոգեկան վերառողջացման և ազգային ինքնության բարձրացման աստիճանի գիտակցության վերածաղկումին: Ուրիշ անգամ ըսած եմ, թե Հայաստանը չէ այսօր այն, ինչ որ էր տասը տարիներ առաջ: Թերևս տնտեսական տեսակետով այնքան պայծառ չէ, ինչպես տասը տարիներ առաջ: Ես բաղդատուություն ընելու իրավունք չունիմ և տվյալներ ալ չունիմ, բայց մեկ բան կա, որ տարբեր է այսօրվան Հայաստանին և նախորդ նախաանկախյան շրջանի Հայաստանին միջև. այն է, որ այսօր

քաղաքի»։ Բայց այս Նոր Արքան իր նորությունը անոր մեջ կտեսներ, որ այդ օրերու արքաներուն, Հերովդեսներուն, Հռոմի կայսրերուն չէր նմաներ, որոնք ժողովուրդը կշահագործեին, այսօր ծնող Արքան ժողովուրդին ծառայելու համար ծնավ. «Խաղաղութիւն ի վերայ երկրի, հաճութիւն ի մէջ մարդկան» (Ղուկ. Ա 14)։ Ահա՛վասիկ, հավատացյալ եղբայրներ՝ և քույրեր, թե ո՛ւր է խորհուրդը Քրիստոսի Մենդյան և Աստվածահայտնութեան։

Մենք ալ դարե՛ր-գարե՛ր առաջ ծնանք վերստին, և մեզի համար մեր ծննդավայրը եղավ Սուրբ Էջմիածինը՝ իբրև ազգ. իբրև պետություն։ Ինչպես Պաղեստինի Բեթղեհեմ քաղաքի մսուրին մեջ ծնավ Հիսուս, այնպես ալ մեր ազգը ծնավ իբրև քրիստոնյա ազգ այնտեղ, ուր Քրիստոս իջավ ոսկե մուրճը ձեռքին և պատռեց, փարդեց սանդարամետը՝ դժոխքը, այն վերածեց դրախտի։

Խորհուրդ մը կա մարդկային կյանքին մեջ։ Հոն, ուր միտքդ, տրամաբանությունդ չի հասնի, բայց Հոգիդ, միտքդ, ամբողջ անձդ այդ խորհուրդին շնորհիվ կհասնի։

Իրավամբ, հավատքի ներքին ընկալումը, գագուցությունը մեր ժողովուրդի մեջ կենդանի մնաց դարեր շարունակ։ Պատմությունը վկա. քանի՜-քանի՜ ուժեր եկան և ուզեցին Աստված-մարգ հարաբերությունը կտրել, մեզ երկինքեն անջատել, մեզ Հոգի վերածել, մեր խաչքարերը փոշիի վերածել։ Փառք Քեզի, Աստված, չհաջողվեց։ Մարդկային ականջները բազմաթիվ աստվածամերժ խոսքեր լսեցին, բայց Հոգիները մնացին անայլայլ, Հոգիներու մեջ հավատքը մնաց և ապրեց, հավատքին գիտակցությունը վկայեցավ։ Քանի՜ Հոգիներ, մեծ-մեծ փիլիսոփաներ պատմության ընթացքին ըսին, թե Աստված չկա։ Նիցշեն գրեց, որ եվրոպայի այս տաճարները Քրիստոսի գերեզմաններու պիտի վերածվեն։ Նիցշեն մեծ խորհող էր. բայց մարգարե չէր։ Քանի՜ ուրիշներ, Լենինեն սկսյալ, կրոնքը հալիչ է ըսին, կրոնքը խաբուսություն է, կրոնքը վախի տակ ըլլալու ազդեցություն է, ըսին և ըսին ու ըսին։ Իրենք գացին, չկան, բայց Աստված կա, կապրի։ Այսօր ես կզգամ և պարտավոր եմ իմ անկեղծ գագուցումը ձեզի հետ կիսել, որ ամբողջ աշխարհում կրոնքի նոր վերազարթոնք կա։ Եթե մենք ժամանակի նշանները կարդալ գիտենք, ապա կատարվելիքն էլ կհասկնանք։ Ինչպես կրսե Ղուկաս Ավետարանիչը, կրոնքի վերածնություն շարժում մը կա։ Այս տարվա օգոստոսին այս քաղաքին մեջ մեկ միլիոն երիտասարդ-երիտասարդուհիներ ի մի հավաքվեցան՝ քրիստոնեական հավատքով միացած։ Հռոմեն Պապը շարժեցավ, եկավ մինչև այստեղ։ Ասկե քանի մը օրեր առաջ, Գրաց քաղաքին մեջ 400-են մինչև 450 հազար երիտասարդներ հավաքվեցան, հաշվի չառին այս ցուրտ օդը, որպեսզի արտահայտեն իրենց քրիստոնեական մեծ հավատքը։ Նաև քրիստոնեութենեն դուրս, ուրիշ կրոնքներին մեջ ևս կրոնական վերաթնության սքանչելի շարժում կա, եթե գիտել գիտենք և ոչ թե միայն արտաքինապես տեսնել գիտենք։ Դիտել կնշանակե տեսածի մեջ բան նկատել և ոչ թե միայն տեսածը դուրսեն պատկերացնել։ Եթե մենք գիտենք այդ բոլոր երևույթները, այն ատեն մեր ազգին մեջ այսօր ես կտեսնեմ այդ Հոգևոր վերածնունդը մեր Հայաստանում։

Եվ այսօր, այս պահուն, երբ այստեղ եմ և պիտի ըլլայի բնականորեն Սուրբ Էջմիածին, քանի որ վաղը Ճրագալույցի երեկո է, թեև վաղը

անպայման Սուրբ Պատարագին այնտեղ պիտի ըլլամ: Հունվարի 6-ին ամբողջ Հայաստանի մեջ Ս. Պատարագը պիտի ձայնասփռվի և հեռատեսիլով ցուցադրվի: Ես Հիմա կպատկերացնեմ այն երիտասարդները, որոնք կկարդան մեր Գեորգյան Հոգևոր Ճեմարանի մեջ: Անոնցմե պիտի դուրս գան նոր սպասավորներ, Քրիստոսի՝ մեծ Սպասավորի պատկերը իրենց մեջ, որովհետև Քրիստոս չեկավ իբրև իշխող Արքա, այլ եկավ իբրև Հոգիներու Արքա՝ մարդոց ծառայելու:

Եթե այսօր ձեզմե մեկը ուզե ինձի Հարցում մը ընել և ըսել, թե ո՞րն է Հայաստանի առաջին կարիքը, պիտի պատասխանեմ՝ մարդը: Ինչպես օր մը Սուրբ Հովհաննես Ոսկեբերանին Հարցուցին, թե ո՞րն է քրիստոնեության մեջ առաջին առաքինությունը, պատասխանեց՝ խոնարհությունը: Իսկ երկրորդը՝ Հարցուցին: Դարձյալ Հնչեց նույն պատասխանը՝ խոնարհությունը, և ո՞րն է երրորդը՝ Հարցուցին: Նույն պատասխանը լսվեց այս անգամ ևս՝ խոնարհությունը: Ես ալ, եթե ինձի Հարցնեն, թե որո՞նք են առաջին, երկրորդ և երրորդ կարիքները Հայաստանի, երեք անգամ էլ նույն պատասխանը պիտի տամ՝ մարդն է, մարդն է, մարդը: Մարդը ստեղծվեց Աստուծո պատկերով, մարդը պայքարեց դարեր ի վեր, մարդը իր մեջ կկրե բազում ապրումներով Հարստացած ու դարերին հաղթած ոգին, այդ ոգու նորօրյա արտահայտիչը դարձյալ մարդն է: Այո, Հայաստանի ազատության, անկախության, ինքնիշխանության և ազգերու մեջ ինքնարժեքորման ատակ, կարող մարդ: Եվ ատոր Համար իմ փափագս է և իմ հորդորը, կոչը ձեզի, որ եթե ուզեք և վստահ եմ, որ ձեր մեջ բոլորն ալ հայու, քրիստոնյա հայու Հարազատ ապրումը ունին, անպայման պիտի ուզեն Մայր Հայրենիքին օգնել: Հետևաբար ձեր մասնակցությունը բերեք, ուժ տվեք այնպիսի ծրագիրներուն, որոնք մարդու կազմավորմանը կրնան օգտակար ըլլալ: Ատոր Համար իմ խնդրանքն է, որ ընտրել գիտնաք և նոր սերունդի դաստիարակության և Հայ ժողովուրդի Հայաստանաբնակ մեր Հայրենակիցներուն կարենաք ըսել՝ մենք ձեր տեղը ձեր երկիրը չենք կրնար շինել, բայց մենք ձեզի հետ միասին ձեզ աշխատակցելով պիտի շինենք միասնաբար այդ երկիրը, որովհետև այս խոսքս ես ձեզի կուղղեմ այն փորձառության իմաստության մեջ, որ ես ձեռք բերեցի այս երեք տարիներու ընթացքին, որ Հայաստանի ժողովուրդը ինքն իր ձեռքերով պետք է այլևս ինքնաբավ դառնա, որպեսզի ինքնավար դառնա: Անկախությունը դադափար չէ, պառլամենտ չէ, նախագահ չէ: Անկախությունը կյանք է, ժողովուրդը ինքն իրմե պիտի կախում ունենա և ո՛չ թե ուրիշնե կախված լինելու զգացում ունենա: Եվ մենք պետք է իմաստնաբար ծրագրենք, թե ինչով մեր ձեռքը դնենք այն ձեռքերու մեջ, որոնք աշխատել գիտեն, և աշխատանքը զորացնենք այնտեղի ձեռքերով, որպեսզի Հայաստանը ինքնաշեն, ինքնակերտ, ինքնաբավ և ինքնանկախ երկիր, ժողովուրդ և պետություն դառնա:

Ահավասիկ, բարեկամներս, Մենդյան տոնի առիթով, իմ խոսքը ձեզի, և կհավատամ, դա իմ խոսքը չէ, մեր Հայրենիքի, մեր Սուրբերու, մեր Հերոսներու, մեր նահատակներու խոսքին ամփոփումն է, խտացումն է, որովհետև իմ անձը շատ տկար է այդ մեծ խոսքին համար: Ես միայն մեկ անոթ մըն եմ՝ այդ խոսքը ձեզ փոխանցելու համար:

Եկեք դառնանք Համայնական Հայություն, ամբողջական Հայություն:

Եթե երեք բառերը՝ միությունը, եղբայրությունը և ներդաշնակ գործակցությունը այսօր մենք ընտրենք իբրև նշանաբան, կարծեմ ամենեն մեծ նվերը ըրած կրլյանք մեր Հայոց պատմությանը, այսօրվա պատմությանը: Դուք ձեր երեխաներուն նվերներ կուտաք Նոր Տարվան առիթով, Սուրբ Մենդյան առիթով: Աստված տվավ նվերներուն նվերը, դերագույն նվերը, անփոխարինելի նվերը՝ Ինքը զինքը, Աստված Ինքը Իրեն ընծա տվավ: Մենք ալ նորոգվենք Հոգիով և կարենանք այնպես ընել, որ մեր ապրումներեն, մեր զգացումներեն, մեր մտածումներեն, մեր քրտինքեն բաժին Հանենք այն Հայրենիքին, որի նվերն ենք մենք, այն Հայրենիքին, որի Հողի ձնունդն ենք մենք, այն Հայրենիքին, որի լեզվի խոսնակներն ենք մենք, ուր ալ լինենք այս աշխարհի չորս ծագերուն: Եթե կուզեք մեծ ըլլալ, Ավետարանի խոսքերը մեջ բերելով վերստին կասեմ, որ եղբք սպասավորը, ծառայողը ձեզմե վեր եղող արժեքին՝ Աստուծո, ազգի, մշակույթի, դպրոցի, Հայրենիքի: Դուք, որ որպես անձ կուզաք ու կերթաք, կարծեք երբեք եկած ու գացած չըլլաք, բայց երբ կրցաք ներդաշնակվիլ ամբողջության Հետ, ինչպես Աստված ներդաշնակվեցավ մարդկության Հետ, այն ատեն է, որ դուք պարտքը կատարած կրլյաք և Քրիստոսի Մենդյան տոնը իսկապես տոնած կրլյաք ձեր ինքնակրթությամբ, ձեր սիրով, զորությամբ, ձեր կապվածությամբ՝ Հանդեպ մեր Եկեղեցիին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Մայր Հայրենիքին ու անոր աղատ և անկախ Հանրապետությանը և այդ Հայրենիքեն ու ժողովուրդեն անբաժանելի մեր Արցախին և ողջ սփյուռքահայ ժողովուրդին Հավիտյանս Հավիտենից. ամեն:

Վեհափառ Հոր քարոզից հետո, Ս. Հաղորդություն ստացան ներկա մեծաթիվ հավատացյալ հայորդիները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Սուրբ և անմահ Պատարագից հետո, Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու առաջնորդարանում տեղի ունեցավ հանդիպում Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հետ, որին ներկա էին թեմական խորհրդի անդամները, հոգևորականներ, հանրահայտ «Մայրիկ» ֆիլմի հեղինակ Անրի Վերնյոր, «Հառաք» թերթի գլխավոր խմբագիր Արվիկ Միսաքյանը, մեծաթիվ ազգայիններ, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչներ:

Մտերմիկ պրույցի ընթացքում Նորին Սրբությունն ամենայն սիրով պատասխանեց ներկաներին հույսով հարցերին, որոնք առնչվում էին նորանկախացյալ Հայրենիքի առջև ծառացած տնտեսական, բարոյական, մշակութային խնդիրներին, Արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը, ինչպես նաև երիտասարդ սերնդի հոգևոր դաստիարակությանը:

Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ այսօր, աշխարհի որ ծագում էլ ապրելիս լինի հայը, ունի մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի և մեկ հոգս ու ցավ: Ժիշտ է, կախված բնակության վայրից, տարբեր են ապրելակերպը, կենցաղը, վարքն ու

բարձր, սակայն հայր, լինելով ավանդապահ, միշտ էլ քայլերու է քրիստոսավանդ պատվիրանների և լուսավորչապատասխան համատի շավիղներով, կերտելու է մեսրոպատառ պատմությամբ շաղախված իր նորօրյա արշալույսները:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱԳԵՏԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՅ ԱՃՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Քիչ ուշ նույն սրահում տեղի ունեցավ հակիրճ ճեպապրույց Նորին Սուրբ Օծության հետ, որը կապակերպել էր Փարիզի ԱՃՄ հավակաճ ուղիով կայանը: Զրույցը վարում էր ռադիոյի աշխատակցուհի Թադևոս վերիլյանը:

Պատասխանելով առաքաղրված հարցերին, Հայոց Հայրապետը մեկ անգամ ևս ունկնդիրներին ներկայացրեց իր այցելության նպատակը, որը ոչ թե հովվապետական է, ինչպես անցած տարվանը, այլ պարզապես բարոյական, այսինքն՝ ինքը Ֆրանսիայում է, որպեսզի բարոյապես սատար կանգնի այն գեղեցիկ ու վեհ նախաձեռնությանը, որ արդեն քանի օր է, անընդմեջ տեղի է ունենում Փարիզում, մեր հայրենակցի ջանքերով ու անմիջական մասնակցությամբ, իսկ արդյունքում շահելու է Հայաստան աշխարհում բնակվող մանուկը:

Ճեպապրույցի վերջում Նորին Սուրբ Օծությունը իր հայրական օրհնանքն ու խրատ-հորդորը փոխանցեց մանուկներին, ուր առանձնակի ասվում է.

«Մերելի մանուկներ, ձայնասփյուռի վրայեն ձեզի Հեռ երբ կհաղորդակցիմ, սիրտս կբրիտասարդանա, մանուկ կդառնամ ձեզի պես:

Այսօր մանուկների տոնն է, այսօր Աստված Ինքը մանկացավ, մանուկ դարձավ Բեթղեհեմում: Մենք էլ պիտի լինենք քրիստոնյա ազգ և մեր ազատ ու անկախ Նոր Հայրենիքի ապագան կերտենք: Դուք այդ ապագայի տեսիլքն եք, այդ Հանրապետությունը ի՞նչ պիտի անի առանց ձեզ: Ձեր շնորհքները, ձայնը, երաժշտությունը, գրականությունը, պարը, արվեստը թող միշտ բարիք բերեն մեր Հայրենիքին: Լավ սովորեցեք, Հայու պես վարվեցեք, ուր էլ լինեք՝ Հայաստանում, Ֆրանսիայում, թե մեկ ուրիշ երկրում: Թող Աստծու սերը ձեր մեջ լինի, որ դուք լինեք Հայ պարտեզի ամենահամեղ պտուղներն. ամեն»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՄԵՐԳԸ ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ (PALAS DES CONGRES) ՊԱՆԱՏՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին, տեղական ժամանակով ժամը 16.00-ին, Փարիզի Կոնգրեսների պալատում տեղի ունեցավ Շառլ Ալֆանուրի՝ Հայաստանի երեխաներին ի նպաստ եզրափակիչ համերգը, որին ներկա էր 3.600 հանդիսատես:

Ասեմք, որ այս համերգաշարն սկսվել էր դեռևս 1997 թվականի նոյեմբերի 4-ին, և մինչ այդ օրը տրված համերգներին ներկա էր գտնվել շուրջ 200.000 մարդ:

הנשיא אריאל שרון עם חברי ממשלת ישראל





ԱՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ՀԵՏ

Վերջին համերգին ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանյանը, Երևանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, Փարիզի քաղաքապետ Ժան Տիրերին, կինոռեժիսոր Անրի Վերնուրը, պատգամավոր Պատրիկ Դենջյանը, ինչպես նաև բարձրաստիճան այլ այրեր:

Մոտ երեք ժամ տևած համերգի ընթացքում Շառլ Ալֆանսուրը, իր նոր երգերի հետ մեկտեղ, կատարեց նաև արդեն հանրահայտ ստեղծագործությունները՝ «Բոհեմ»-ը, «Տարեք ինձ», «Ես ոչինչ չեմ մոռացել», «Դեռ երեկ», «Ես արդեն տեսնում եմ» և այլն: Ամենաքերով ընդունելության արժանացավ «Նրանք ընկան» երգը, որը պատմում է հայ ժողովրդի դժվարին օրերի մասին:

«Ալֆանսուրը՝ Հայաստանին» ասոցիացիայի հիմնադիր Շառլ Ալֆանսուրը իրեն տրված հարցին պատասխանեց, որ այդ համերգի ընթացքում հանգանակված միջոցները «կեռասպատկվեն Համաշխարհային բանկի կողմից» և կտրվեն «կարիքի մեջ գտնվող դպրոցներին, կարիքի մեջ գտնվող որբերին, խարխուլ դասարաններին և ծերանոցներին»:

Ուղիղ մեկ ամիս տևած համերգներն ավարտվեցին Հայաստանի դպրոցների օգտին կապակերպված երեկույթով և հանգանակությամբ:

ԿԱՐՃԱՏԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ՀԵՏ

Համերգի ընդմիջմանը Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը կարճատև զրույց ունեցավ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հետ: Բարեկամական մթնոլորտում Ֆրանսիայի նախագահը իր գոհունակությունն արտահայտեց հայազգի այն զավակներին, ովքեր ճակատագրի բերումով բնակություն են հաստատել Հայրենիքից հեռու, սակայն կարողացել են երկրորդ հայրենիք ընդունել Ֆրանսիական պետությունը, իրենց նպաստը բերել նրա տնտեսական ու հասարակական կյանքի զարգացմանը:

Իր հերթին Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց Ժակ Շիրակին՝ պետական իշխանությունների՝ հայ ժողովրդի նկատմամբ դրսևորած բարեկամական վերաբերմունքի համար՝ ընդգծելով մեր ազգային երբեք չիսմրող հատկանիշները՝ աշխատասիրությունը, նվիրվածությունը, հավատը գեղեցիկ ապագայի հանդեպ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱԵ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Երեկոյան ժամը 20.30-ին Փարիզի քաղաքապետարանում տրվեց պաշտոնական ճաշ, որին մասնակցում էր 400 մարդ: Ներկաների թվում էին Հայրենիքից ժամանած բարձրաստիճան հյուրերը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Լուիս Սիմոն-Մանուկյանը, Ազգային բարերարներ Տեր և Տիկին Հրայր

Հովնանյանները, Տեր և Տիկին Վալե Մանուկյանները, Փարիզի քաղաքապետ Ժան Տիբերին, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի խորհրդականը, հանրահայտ երգիչ Շառլ Ալենսփուրը, պաշտոնատար այլ անձինք, Ֆրանսիայում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ ազգայիններ:

Հընթաց պաշտոնական ճաշկերույթի, Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց մեծանուն երգչին՝ այդ գեղեցիկ ու ազգանվեր նախաձեռնության համար, և նրան պարգևատրեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Բարձր գնահատելով երգչի իմպրեսարիո (կապակերպիչ) Լևոն Սայանի նվիրումն ու հարապահպան գործունեությունը, ինչպես նաև Ալենսփուրի հաջողություններում ունեցած իր ներդրումը, Հայոց Հայրապետը նրան ևս պարգևատրեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

5 ՀՈՒՆՎԱՐԻ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Հունվարի 5-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.00-ին հրաժեշտ տալով հյուրընկալ Փարիզին, Հայոց Հայրապետը, հայաստանյան պատվիրակության հետ, վերադարձավ Մայր Հայրենիք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Օղի» օդանավակայանից Նորին Սուրբ Օծությանը ճանապարհեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաքնորդ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահան Փափալյանը, պաշտոնատար այլ անձինք, Ֆրանսահայոց թեմական խորհրդի անդամները, հոգևորականներ, մեծաթիվ ազգայիններ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, Նորին Սուրբ Օծությունն իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված՝ հերթական առաքելության բարեհաջող ավարտի, հայ ժողովրդի բարգավաճման և Հայ Առաքելական Եկեղեցու անսասանության համար:

ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏ

Վերջում ասենք, որ հունվարի 4-ին Շառլ Ալենսփուրի բարեգործական համերգից և նրա կապակերպած ճաշկերույթից, գոյացած ամբողջ գումարը, որ կապվում է շուրջ 950 հազար ԱՄՆ դոլար, տրամադրվելու Հայաստանի տասնմեկ մարզերում գործող հանրակրթական դպրոցներ, վերականգնմանն ու վերանորոգմանը:

Գումարը հանձնվելու է Սոցիալական ներդրումների հայկական հիմնադրամին (ASIF), որը, համաձայն Համաշխարհային բանկի վարկա-

յին ծրագրի, հիմնականում զբաղվում է Հայաստանի սոցիալական ենթակառուցվածքի վերականգնման աշխատանքներով:

Ասենք նաև, որ 950.000 դոլարից 200 հազարը հավաքվել է համերգի ժամանակ, իսկ 750 հազարը՝ ճաշկերույթի ընթացքում: Ամենամեծ նվիրատվությունները՝ 200 հազարական դոլար, կատարել են ազգային բարեգործներ Վաչե Մանուկյանը և Հրայր Հովնանյանը:

Հիշեցնենք, որ հիմնադրամը եռապատկելու է հավաքված գումարը: 1998 թվականի ընթացքում կվերականգնվի 40-50 դպրոց, իսկ շինարարական աշխատանքները կսկսվեն հենց հունվարին՝ «Այնավուրը» Հայաստանին» բարեգործական կազմակերպության հետ համատեղ նախագծերի ընտրություն կատարելուց հետո:

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 31-ի երեկոյան Մայր Աթոռի միաբանները, Գևորգյան Հոգևոր ձեմարանի սաները, դասախոսական ու տեսչական կազմը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, հավաքվել էին ձեմարանի հանդիսությունների նախկին դահլիճում, ռապսոդի միասնաբար դիմավորեն Նոր տարին:

Տնտեսական աղաթփի համատեղ արտասանությամբ բացվեց տարեմուտի հանդիսությունը: Աղաթփից անմիջապես հետո Գևորգյան ձեմարանի սաներից կազմված երգչախումբը, ղեկավարությամբ Ռ. Շարբաթյանի, կատարեց ձեմարանի հիմնը, ապա խոսք ասաց Գևորգյան Հոգևոր ձեմարանի տեսուչ Հայկազուն Ժ. Վարդապետ Նաջարյանը:

Այնուհետև երգչախումբը, ղեկավարությամբ Արթուր սրկ. Հայրապետյանի, կատարեց «Ո՛վ Զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական» շարականները: Հագեցաբար երգեցողությունից հետո միաբանների անուհից շնորհավորական խոսքով հանդես եկավ հոգեշնորհ Տ. Զարեհ արեղա Կաթաղյանը: Հավարտ այս ելույթի՝ երգչախումբը կատարեց «Փրկչին ծնունդը» զմայլիչ մեղեդին, որից հետո Արմեն Մարգարյանը արտասանեց Ներսես Վաղանկի «Էջմիածին» բանաստեղծությունը: Դասախոսների անուհից հանդես եկավ պր. Սուրեն Դանիելյանը, իսկ ուսանողների անուհից՝ Արթուր սրկ. Հայրապետյանը: Այնուհետև հնչեցին ավանդական ուրախ «կաղանդչեֆերը», ապա մեներգությամբ հանդես եկավ Տ. Իսահակ Բախան Մարգարյանը՝ կատարելով Կոմիտասի «Նրկինճն ամպիլ ա» երգը: Հետո տեղի ունեցավ վիճակահանություն, որի ավարտից հետո երգչախումբը կատարեց «Էջ Միածինն ի Հորե» շարականը: Հանդիսության վերջում դահլիճում տիրող խորհրդավոր լուսյան մեջ իր «րհնության խոսքը ներկաներին ուղղեց Վեհափառ Հայրապետը:

«Սիրելի՛ Հոգևոր եղբայրներ և շատ սիրելի սաներ Գևորգյան Հոգևոր ձեմարանի.

Այս իրիկուն ես ուզում եմ նախ իմ խոր գնահատանքը հայտնել Գևորգյան Հոգևոր ձեմարանի տեսուչ Հայկազուն Ժ. Վարդապետին և իր օգնականներին, որոնց ջանքերով կազմակերպվել էր այս երեկույթը:

Ես ողջունում եմ այսօր մեր եպիսկոպոսական դասին և միաբանության անդամներին: Այս երեկոյան հատուկ իմ ուրախության առիթներից մեկն այն է, որ թեմերի առաջնորդները նույնպես մեզ հետ են: Այս ուրախ պահին ես ողջունում եմ աշխարհական հանգամանքով, բայց Հոգով՝ եկեղեցուն կապված, մեր Մայր Աթոռին կապված Գերագույն Հոգևոր Խորհրդին և

դասախոսական կազմին: Դուք անվեղար միաբաններ եք: Կարևորը սքեմը չէ, սքեմը խորհրդանշն է, կարևորը հոգին է:

Սիրելի՛ եղբայրներ, եթե ուզում եք մեկ նշանաբան ընտրել առաջիկա 1998 թվականի համար, եկեք միասին ընտրենք հետևյալ նշանաբանը. «Ամեն պահ, որ տալիս է մեզ, օգտագործենք իր նպատակին: Աղոթքի պահին աղոթենք, դասի պահին դասով զբաղվենք, սերտողության պահին սերտենք, ճաշի պահին ճաշենք, զբոսանքի պահին զբոսանենք, մի խոսքով, կյանքի մեջ դասակարգում դնենք և ոչ չփոթ մի ընթացքի վերածենք այն»: Ես այս եմ սովորել օտար արևմտյան դեմքերից, առաջնորդող մտածողներից, որոնց հետ առնչություն եմ ունեցել: Նրանց խելացիությունը չէ, որ տպավորել է ինձ, այլ նրանց կյանքի դասավորումը: Իբրև պարզ մի օրինակ եմ ձեզ տալիս. վերցրեք միաչափ քարեր, նույն թվով, և դրեք մեկը մյուսի վրա, կտեսնեք, որ կառույց չի ստացվի: Ապա առանց դրանց թիվն ու չափը փոխելու՝ այս անգամ մտածումով և դասակարգումով քով քովի դրեք, կտեսնեք, որ կառույց դուրս կգա, իմաստ կստացվի: Կյանքն էլ բաղկացած է այս քարերից: Մեր կյանքի ամեն մի ժամը իր տեղն ունի. հանգստի ժամը՝ հանգստի համար, և մի խառնեք այն աշխատանքի ժամին: Իսկ աշխատանքի ժամն էլ լիովին արժեքրեք աշխատանքով: Հետևաբար, եկեք միասնաբար ասենք, որ 1998-ը կլինի մեզ համար կարգավորյալ աշխատանքի, նպատակալաց կյանքի մի տարի, որպեսզի մեր ներդրումը կատարենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս նվիրական, հավերժական հաստատության մեջ: Մաղթում եմ բոլորից լավագույնը 1998-ի համար: Թող ձեր կյանքը գալիք տարում ճարտարապետական նախագծով ընթանա, և դա կլինի ձեր նվերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին»:

ԱՐԱՐԱՏ ՍՐԿ. ԳԱՓՈՅԱՆ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

«Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ,
որոյ իշխանութիւն իւր եղեւ ի վերայ ուսոց իւրոց.
եւ անուն կոչեցաւ մեա՝ հրեշտակ մեծի խորհրդոյ,
սքանչելի խորհրդակից, Աստուած,
հօգօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին»:

«Հանգի մեզ համար մանուկ ծնվեց,
մի որդի տրվեց մեզ.
որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի.
նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ,
Սքանչելի խորհրդակից, Աստված, հօգոր իշխան,
Հայր հանդերձյալ աշխարհին»:

(ԵՍԱԹԻ Թ 6)

Ծուրջ երկու հազար տարի մարդկությունը նույն խոնարհությամբ ու ակնա-
ծանքով է ընդառաջ գնում Տիրոջ Ծննդյան փառաշուք օրվան, որ տարբեր ժամա-
նակներում յուրօրինակ դրսևորումներ է ունեցել, գեղեցիկ ու վեհ զգացումներ
պարգևել մարդուն, որոնց արգասիքները մեզ են ավանդվել կտավների, քանաս-
տեղծությունների, քանդակների, նաև փոքրիք, սակայն իմաստալից քարտզների
տեսքով: Մարդկության պատմության հետ փոփոխվում են Երկնառաք Վարդա-
պետի պատգամներին ընդառաջ գնալու, դրանք կյանքի ու իրականության
ճշմարտացիությամբ զգեստավորելու կերպերը, սակայն միշտ և հավիտյան նույնն
է ու հավերժի կնիքով դրոշմված՝ դեպի լույսը, սերը և կյանքի աղն ու ջուրը տանող
ուղին, որի առաջնորդը հենց Ինքն է՝ Հիսուս Քրիստոս:

«Երբ Աստուած իր ողորմութեամբ ընտանիքի մը զաւակ կը շնորէ, ո՞րն է այն
մայրը, որ իր քնքուշ նորածին մանկան առաջին սիրուն ժպիտի մէջ, անոր
գուգավատ նայումաճքին մէջ չպիտի ուզեր գուշակել փառալից ապագան: Եթէ
մէկը ըսեր իր զակին համար թէ մեծ պիտի ըլլայ, ո՞րն է այն մայրը որ չպիտի
հրճուեր եւ հաճոյք չպիտի զգար այդ խօսքերէն. եւ միթէ չպիտի՞ ուզեր
առաջուրճէ զաթղարուած տեսնել իր սրտի հատորին պսպղուն ճակատը
լուսապսակով մը եւ լաղթական դափնիով:

Կրնաք ըմբռնել հետեւաբար այն ուրախութիւնը, որ կը ցայտէր Ս. Կոյս
Մարիամի սրտէն, երբ Բեթղեհեմի կիսաքանդ այրին մէկ անկիւնը, մտորին մէջ
հազիւ հանգչեցուցած իր հրաշալի մանուկը՝ արդէն կը տեսնէր շրջապատուած
անմեղ հովիւներէ եւ Արեւելքի մոզերէ որոնք իրենց մատուցած նուէրներով իրենց
հիացումը եւ գոյգոյրանքը կը յայտնէին օծեալ մանկան», - գրում է Ղևոնդ
Եպիսկոպոս Դուրյանն իր «Քրիստոսի Ծնունդը» խորագիրը կրող քարոզում¹:

¹ Ղևոնդ Եպիսկոպոս Դուրեան, Պարզ քարոզներ, Փարիզ, 1927 թ.:

Հիրավի երկու հազար տարիների հետվից, այս տարվա հունվարի վեցին դարձյալ Մայր Տաճարում, ինչպես նաև Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում՝ ի Հայաստան, ի Արցախ և ի ասիոտոս աշխարհի, ի մի եկած հավատացյալների հոծ խմբերը, հրճաբան մատուցվող Սուրբ և անմահ Պատարագի, մերօրյա նվերը, կենդանի աղոթքի տեսքով, մորածին Փրկչի ոտքերի առջև դրեցին՝ մեկ անգամ ևս պատահալուելով իրենց դարաբույր խոնարհությունն ու նվիրումը Տիրոջ անեղծելի պատվիրաններին ու ավանդներին:

Սուրբ Ծննդյան Երազայույց Մայր Տաճարում

Հունվարի 5-ի երեկոն ակնածաճող ու երկյուղիվ դիմափորեց Մայր Տաճարում գտնվող յուրաքանչյուր համախառնյալ, որ եկել էր ներկա լինելու Երազայույցի Սուրբ Պատարագին, իր աղոթքն առաքելու դեպի Բարձրյալը, հայցելու սեր ու խաղաղություն:

Ս. Պատարագին ներկա էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Օրվա պատարագիչն ու քարոզիչսն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը:

Երեկոյան ժամերգությունից հետո, համաձայն նախնյաց ավանդի, ըմբերցվեցին Դամիել մարգարեի թղթերը: Հետընթերցման սկսվեց Սուրբ Պատարագը:

«Հայր մեր»-ից առաջ խոսված ոգեշունչ քարոզով, մեկ անգամ ևս հիշեցնելով օրվա խորիմ խորհուրդը, մեկնելով Երազայույցի մշտանորոգ իմաստը, Արքազան Հայրը ներկա հավատացյալներին կոչ արեց հավատարիմ մնալ Տիրոջ պատվիրաններին, քայլել հավատի ուղով և վառ պահել քրիստոնյայի նկարագիրը, որ առանձնակի է կարևորվում հատկապես վերազարթոնք ապրող մեր ժողովրդի այսօրվա կենցաղում, վարք ու բարքում:

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսավոր թափորը «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ ուղղվեց դեպի Վեհարան:

Ս. Ծննդյան Պատարագ

6 հունվարի. «Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի»:

Մայր Տաճարում մատուցվող եպիսկոպոսական Սուրբ և անմահ Պատարագին ներկա են մեծաթիվ հավատացյալներ, որ իրենց աղոթքով մեկ անգամ ևս, ասես, վերանորոգեցին իրենց ուխտը Տիրոջ հետ, վերապրեցին այն բերկրամբը, թե Բրիստոսի հրաշափառ Ծնունդը մարդկային պատմության այն եզակի երևույթն է, որով երկինքն ու երկիրը մեկտեղվեցին և մոր արշալույսով ողողեցին համայն մարդկությունը:

Օրվա պատարագիչն էր Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրույանը:

Ս. Պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ տիկնոջ հետ, Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքյանը՝ տիկնոջ հետ, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ

Հարությունյանը, Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Արմեն Սմբատյանը, գիտության և կրթության նախարար Արտաշես Պետրոսյանը, Սոցալ նախարար Հրանտ Հակոբյանը, Կրոնի գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը, Երևանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Հայաստանում Ռուսաստանի դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուտոկլո, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան, Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Կարոլա Մյուլլեր, Հոլանդիայի, Հայաստանում Իրանի իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Էսֆահանդի, Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Արմավիրի մարզպետ Սեդրակ Հարությունյանը, Էջմիածնի քաղաքապետ Երվանդ Աղվանյանը, Հայաստանում հավատարմագրված միջազգային, քարեսիրական կազմակերպությունների, ինչպես նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, քարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր:

Ընթացս մատուցվող Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ի մասնավորի մշելով, որ Աստված միշտ մեզ հետ է: Մենք ևս լինենք Նրա հետ՝ մեր քրիստոնեական հավատքի մոր վկայությունների դրսևորմամբ հանդերձ, քանզի այն ոչ թե պատմական երևույթ է մեզ համար, այլ կենդանի և գործուն ուժ՝ ներկայի ու ապագայի վառ տեսիլքով շաղախված /վեհափառ Հայրապետի Սուրբ Մենցյան պատգամը տե՛ս էջ 8/:

Ջրօրհների արարողություն՝ ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի

Հայրապետական պատգամից հետո, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց Ջրօրհնյաց մեծախորհուրդ արարողությունը, որ խորհրդանշում է մեր մարդացյալ Տիրոջ Հորդանանում մկրտվելը՝ Հովհաննես Մկրտչի ձեռամբ:

Ջրօրհների մասին Հայաստանյայց Եկեղեցու Կանոնագիրքը մեզ է ավանդում Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսի հետևյալ կանոն-հրահանգը. «Անհրաժեշտ է, որ Յայտնութեան օրը կատարուի ջրի օրհնութիւնը, ջրի վրայ պատշաճութեան և տեղի համաձայն ձեռք /միտոն/ կաթեցուի, աղօթք լինի և յիշատակուի Փրկչի Յորդանանում մկրտուելը»:

Սուրբ Գրային ընթերցվածներից և հատուկ աղոթասացությունից հետո, հանդիսավորապես, վերաբերումի ձևով, Սուրբ Խորան քերվեց Սրբալույս Մյուռոնով լի Մյուռոնաթափ Աղավնին: «Ով զարմանալի» տաղի երգեցողությունից հետո, Նորին Սուրբ Օծությունը, «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգեցողությամբ, Կենարար Մյուռոնը կաթեցոցեց ջրով աղեցուն երեք կաթսաների մեջ: Ապա «Պահպանիչ»-ի ժամանակ հանելով ջրի մեջ ընկղմած խաչը, այն տվեց օրվա խաչի կնքահորը:

Ջրօրհների արարողության ընթացքում հնչեց նաև «Այսօր ծայնն հայրական» տաճը, որ, ինչպես նախորդում, կրկին նկարագրվում է Հիսուս Գրիստոսի

Հորդանանում մկրտվելը, Սուրբ Հոգու աղավանակերպ էջքը, Հոր հաճելի ծայնը, որ վկայում է թե՛ «*Դա՛ է իմ սիրելի Որդին*»:

Ընդունված սովորույթի համաձայն, հավարտ Զբորհմեքի, ներկա հավատացյալները փոքրիկ սրվակներով օրհնված ջուրը տուն տարան այն խորին ու անմեկնելի հավատով, թե Տիրոջ ներկայությունն իր մեջ պարագրող այս հեղուկը շա՛տ ու շատ ցավեր է դարմանելու:

Աստվածահայտնության Ս. Պատարագի և Ս. Մկրտության արարողության ավարտից հետո, Վեհարամի ընդունելությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական հյուրասիրություն:

Արդ, Աստվածահայտնության Ս. Պատարագն ավարտվեց, սակայն Քրիստոսի Ծննդից ճառագող սիրով ու խաղաղությամբ յուրաքանչյուր հավատացյալ հայրողի պարտ է կառչել քրիստոնեական իր հավատքին և ավետարանական առաքելությանը, որպեսզի կարողանա ընթանալ մոր կյանքի ոչ այնքան հեզասահ, սակայն վաղանցուկ դժվարություններով լի ճամապարհով: Դեպի Հիսուս ունեցած մեր սիրով և ամեն Ս. Ծննդյան մեծաշուք տոնի վերակենսավորմամբ է, որ մորոգվում ենք մաև մենք՝ հավատացյալներս: Հեթանոսաց Առաքյալի բառերով իսկ առած. «*Եթե մեկը Քրիստոսի մեջ է, մա մոր արարած է. որովհետև հինն անցավ և հիմա ամեն ինչ մորոգվեց*» /Բ ԿՈՐՆԹ. Ե 17/: Եվ հենց այդ մորոգ հոգով էլ ամեն ոք իր փառաբանանքն առաքեց առ Բարձրյալը՝ իրեն շրջապատողներին փոխանցելով հրեշտակների քաղցրալուր ու մշտանորոգ ավետիսը.

«Քրիստոս ծնաւ եւ յաղտնեցաւ.

Օրհնեալ է յաղտնութիւնն Քրիստոսի»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Ամանորի և Սուրբ Ծննդյան հանդիսություններն այս տարի առավել մեծ շուք ու փառ էին ստացել: Երևանի Հայֆիլիարմոնիայի մեծ դահլիճում չէին մարում տոնածառի լույսերը, չէին լուում մանկական երգն ու ծիծաղը:

Այս տարի ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի նախարարության և Հայպետֆիլիարմոնիայի նախաձեռնությամբ, ինչպես նաև Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և հովանավորությամբ հունվարի 3-13-ը «Արամ Խաչատրյան» համերգասրահում ընթացան Ամանորի և Սուրբ Ծննդյան ուրախ և զվարճալի տոնական հանդեսները: Երեխաներին իրենց հրաշալի երգով ու պարով զվարճացրեցին հենց իրենց՝ երեխաները՝ փոքրիկ երգիչներն ու պարողները: Ծարունակ փոփոխվող համերգային ծրագրերին մասնակցում էին երեսուցից ավելի մանկական խմբեր, յուրաքանչյուր հանդեսին՝ 5-8 խումբ: Իհարկե, հանդեսի մշտական հյուրերն էին նաև Ձմեռ Պապն ու Ձյունամուշը, մանուկների սիրելի հեքիաթների հերոսները, այնքան ծիծաղաշարժ ծաղրածուները: Տոնական հանդեսներին իրենց գեղեցիկ կատարումներով մասնակցում էին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և կից գործող կիրակնօրյա վարժարանների շնորհալի սաները:

Այդ օրերին ավելի քան 25.000 երեխա հնարավորություն ունեցավ ներկա գտնվել իրենց իսկ հասակակիցների (30 մանկական խմբերի և անհատ կատարողների) պատրաստած համերգային ծրագրերին, ինչպես նաև ստացավ Ձմեռ Պապի կամ, ավելի ճիշտ՝ Սուրբ Նիկողայոսի նվերները:

Հունվարի 8-ին կայացած հերթական տոնական հանդեսին ներկա էին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ: Փոքրիկներին այնքան սիրող Հայոց Հայրապետը մեծ հաճույքով և ուրախությամբ դիտեց մանկական գեղեցիկ կատարումները, երեխաների հետ մեկտեղ ուրախ ծափող չուլիկներով դիմավորեց «Արծաթե բանալի», «Վաղորդյան կաթիլներ», «Արևիկ», ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության կենտրոնի ազգագրական պարերի ու ջութակահարների խմբերի և անհատ կատարողների ելույթները:

Ամանորի և Ս. Ծննդյան ուրախ ու տոնական հանդեսի վերջում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը շնորհավորեց երեխաների Նոր տարին և Սուրբ Ծննդը, ապա իր հայրական օրհնանքի ու քարեմատյանքի խոսքով պատգամեց ծաղկեցնել հայ մշակույթը, վերակենդանացնել եկեղեցական ու ազգային ավանդույթները.

«Սիրելի երեխաներ,

Դուք չեք կարող երևակայել, թե ես որքան ուրախ եմ այս պահին: Գիտե՞ք, ինչու եմ ուրախ: Ուրախ եմ, որովհետև դուք եք ուրախ: Ձեր ուրախությունը իմ ուրախությունն է, քանզի դուք մեր ազգի ծլարձակող

այն նոր սերունդն էք, որի աչքերի, խոսքերի, գործերի միջից տեսնում եմ մեր Հայրենիքի ապագան: Ապրե՛ք, երեխաներ, և հազա՛ր ապրեք: Իմ ասելիքը այսօր հետևյալն է:

Ես այս սրահը բազմաթիվ անգամներ եմ եղել, սակայն այս օրը ինձ համար առանձնահատուկ է: Այսօրվա սրահը ասես առանձնանում է մյուս անգամներից, քանզի այսօր դուք եք ծաղկեցնողը այն՝ ձեր ասմունքներով, երգերով, պարերով, նվագով:

Մենք այս օրերին տոնելու ենք Հիսուսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության մեծաշուք տոներ: Հետևաբար, մենք պետք է մեր ազգի ավանդությունները, շարականները, հոգևոր երգերը վերակենդանացնենք: Եվ դուք, երեխաներ, դո՛ւք է, որ դրանք պետք է ապրեցնեք:

Ամեն մի ազգ իր ավանդություններն ունի: Դուք այստեղ ներկայացրեցիք նաև այլ ազգերի պարերը և երգերը: Բնականաբար, մենք աշխարհում ենք ապրում, և ուրիշ ազգերի ավանդությունները հարգում ենք: Բայց մենք մե՛րը պետք է ծաղկեցնենք և ապրեցնենք, որպեսզի օտարներն էլ տեսնեն, թե հայը ի՜նչ ունի:

Այսուհետև, երեխանե՛ր, երեք չասեք շնորհավոր Սուրբ Ծնունդ և Ամանոր, այլ ասացե՛ք՝ շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: Մենք սիրում ենք օտար ազգերին իրենց երկրներում, իրենց ավանդությունների մեջ: Սակայն մենք Սուրբ Ծնունդը տոնում ենք Հունվարի 6-ին: Հետևաբար, սխալ է նախ Ս. Ծնունդը շնորհավորել, ապա Ամանորը:

Հիսուս շատ էր սիրում երեխաներին, և երբ մեծերը արգելում էին երեխաներին, որ իրեն մոտենան, նա հանդիմանում էր այդ մեծերին և ասում՝ «Թույլ տվեք մանուկներին գան ինձ մոտ» (Մարկ Ժ 14):

Պետք է ասեմ նաև, որ ես այսօր իմ բարձրագույն աստիճանի գնահատանքն եմ հայտնում մեր Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանը և անձնապես նախարարին, որ այս գաղափարը հղացավ: Շնորհակալություններ նաև նախարարի օգնականներին, Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնին և այն բոլոր կազմակերպություններին ու անձերին, որոնք իրենց մասնակցությունը ունեցան այս առիթով:

Թող Աստված զորացնի ձեզ, ամրացնի մեր Հանրապետությունը և ծաղկեցնի մեր մշակույթը. ամենք:

Ասեմք, որ Տոնակամ ծրագիրը Ռուսլարի 10-ից շարունակվեց մաս աղետի գոտում՝ Գյումրիում, Աշոցքում, Արթիկում, Ախուրյանում, Ամասիայում, Ամիում՝ ամամոռյա ուրախությունները կիսելով տեղաբնակ երեխաների հետ, նրանց ևս (շուրջ 2.000 երեխաների) համձնելով փոքրիկ աղոթագրքեր և նվերներ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ներկայացմամբ, բարձրորեն գնահատելով թեմի հոգևոր սպասավորներ Տ. Բարսեղ քնն. Ղազարյանի և Տ. Սարգիս քնն. Չափարյանի հոգևոր գործունեությունը, նրանց շնորհել է *Ավագության տիտղոս և պատիվ*, իսկ Տ. Վարդան քնն. Մկրտչյանին, Տ. Տիրայր քնն. Սահրադյանին, Տ. Նորայր քնն. Բաղդասարյանին, Տ. Ավետիս քնն. Դանիելյանին, Տ. Սերովբե քնն. Պետրոսյանին, Տ. Մամբրե քնն. Քեսաբյանին, Տ. Մյուռոն քնն. Արամյանին արտոնել է կրել *Ծաղկյա սև փիղոն*:

Գարեգին Սրբազանի ներկայացմամբ, Վեհափառ Հայրապետը քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհել թեմի քահանաներ Տ. Համազասպ քնն. Բաբուջյանին, Տ. Կորյուն քնն. Մարտիրոսյանին, Տ. Գառնիկ քնն. Կարապետյանին, Տ. Վահան քնն. Արամյանին և Տ. Տիրան քնն. Առուշանյանին:

A black and white photograph of a classical building facade, featuring large arches and columns. The image is used as a background for the title text.

ԿՐՈՆԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ
ՀԱՅԿԱԶՈՒՆ Մ. ՎՐԴ. ՆԱԶԱՐՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 հունվարի 1998 թ.)**

Երեկ, կեսգիշերին, Մայր Աթոռի միաբանությունը Գևորգյան Հոգևոր ձեռնարանի ուսանողությունը մուտք գործեցին այս եկեղեցի և աղոթեցին բոլորիս համար, որպեսզի մենք մեր նախնիների հավատով ամրանանք և կարողանանք 1998-ը հոգով ամրացած դիմավորել:

Այսօր տարվա առաջին օրն է, և այստեղ հավաքված ենք մեր Տիրոջ արյան հաղորդակցությամբ մեր ուխտը ամրացնելու, թե մենք, որպես քրիստոնյաներ, աղոթքով ենք սկսելու Նոր տարին, և այդ աղոթքը առաջին հերթին գոհարանական է: Փառք ենք տալիս Աստծուն, քանզի մենք Իր ստեղծագործություններն ենք: Մենք հավատում ենք, որ Նա մեզ շնորհներ է քաշխում, և դրանք պետք է միշտ օգտագործել, որպեսզի դրանց օգտագործման արդյունքում մենք զմեզ տեսնենք Լուստ որդիներ, Աստծո որդիներ:

Ամառնորս այս օրը ակամայից մտածել է տալիս, թե հին և նոր հասկացողությունը և կամ ընդհանրապես ժամանակը իրենից ինչ է ներկայացնում: Երբ մենք թերթում ենք Աստվածաշնչի էջերը, տեսնում ենք պատգամը, հատկապես «Ժողովող» գրքի, ուր ասվում է, թե ամեն պահ իր ժամանակն ունի: Եթե որևէ մի րան ցանկանում ենք անել, ապա այդ ճիշտ ժամանակին պետք է անենք: Այսօր, Նոր տարվա սեմին, որոշենք, որ գալիք տարին ժամանակի ճիշտ օգտագործմամբ արժևորենք:

Յուրաքանչյուր Նոր տարվան մենք մեկս մյուսին մվերներ ենք տալիս, սակայն եթե չկա սերը, հոգևոր ապրումը, հավատը, ապա դրանք արժեք չունեն: Մենք բոլորս միանման ստամոքս ունենք և եթե մի փոքր ավելի ուտենք, անհանգիստ կզգանք, իսկ եթե քարիք անելու տրամադրություն ունենք և եթե մեր ունեցած հացը պատրաստ ենք կիսել մեկ այլ չունեցող հոգևոր եղբոր հետ, այն ժամանակ այդ քարիքը մեր ուրախությունն է ավելացնում:

Հետևաբար, Նոր տարվան հոգևոր ապրումով մվիրվին է կարևորը, որն իրական քրիստոնեական կյանքն է: Այո, շատ կարևոր է դա հատկապես այսօրվա Հայաստանի համար: Եթե շուրջներս նայենք, կտեսնենք, թե որքա՞ն ընտանիքներ կան, որոնք Նոր տարվա սեմին խիստ նեղությունների մեջ են: Եվ մենք այսօր ձևակա՞նք աղոթեցինք բոլորի համար, որ Աստված նրանց էլ ծնող տա, որդին էլ հասնի, որբևայրուն էլ, աղքատին էլ, ֆաղցածին էլ: Աստուծո ձեռքը, սակայն, մենք ենք: Նրա միջոցները մենք՝ քրիստոնյաներս ենք, որ պետք է մեր մյուս եղբայրներին և քույրերին ձեռք երկարենք: Մենք մաղթում ենք այսօր ձեզ, որպես քրիստոնյաների, որպես Լուստ որդիների, որ այս առավոտը, այս պայծառ օրը սկիզբ լինի ամբողջ տարվա համար՝ նախ և առաջ խաղաղություն մաղթելով ամբողջ աշխարհին և հատկապես մեր փոքրիկ Հայաստան աշխարհին: Խաղաղության կարիքը մենք շատ ունենք: Խաղաղությունը, սակայն, կկայանա այն ժամանակ, եթե Աստուծո սերն ունենանք, եթե Աստուծո այդ սիրտ կաթիլները իջնեն մեր մեջ:

Մաղթում եմ ձեզ, որ հայ քրիստոնյաներ եք, ունենաք պարտավորության գիտակցություն: Քրիստոնյան միայն հայ եկեղեցականը չէ: Դուք ևս քրիստոնյա եք և մասնիկը Հայ եկեղեցու: 1700 տարիներից ավելի մենք քրիստոնեությունը

ազգայնացրել ենք: Հայ եկեղեցին Առաքելական է. չկա մեկ այլ եկեղեցի. որ Հայ Առաքելական կոչվի: Հայ Առաքելական եկեղեցին ծնունդ է առել հայ հողից, հայ արյունից և այն մեզ է պատկանում: Եվ մենք այն պետք է դիտենք որպես հարստություն և իմանանք նրա արժեքը և տեքը լինենք նրա:

Այսօր վերանորոգեցիք մեր ուխտը՝ հասկանալու, ըմբռնելու համար, թե ինչու է հայ ազգը ընդունել քրիստոնեությունը և դարձրել իրենք: 1700 տարվա նախապահը դուրսին չի եղել. նահատակություններ, խաչելություններ, գողգոթաներ, սակայն միշտ և միշտ լույսի հաղթանակին հավատարմվ է ընթացել: Եվ այսօր, 1998-ին, երրորդ հազարամյակի և 1700-ամյակի շեմին, ի՞նչ ձևով ենք ներկայանալու որպես Հայ Առաքելական եկեղեցի, տակավին ազգային կրոն ունենք այս երկրում: Եվ այդ հարցը պետք է դնի իր առջև և Ֆենի իր խղճի խորհում մեզանից յուրաքանչյուրը: Եթե չենք, այն ժամանակ կնշանակի, որ դավանանքի ենք մեր բոլոր սրբերին, դավանանք ենք մեր բոլոր նահատակներին: Եվ այժմ մենք իրավունք չունենք այդ անունը կրելու: Այդ կրոնը այդ դեպքում մեզ չի պատկանում: Քրիստոս, երբ իր առաքելությունը սկսեց, ընդամենը 12 Առաքյալներ ուներ, և հավատացյալների խումբը 100 հոգուց ավելի չէր: Այսօր ավելի շատ մարդիկ կան այստեղ, և մենք կարող ենք, որպես եկեղեցի, վերագտնել մեր արմատները, վերաբծեալորել մեր հավատքը, և, հավատացե՛ք, այդ հավատքը մեր ազգի համար, մեր հոգու համար միջնաբերդ է եղել և եանձնվել մեզ: Օտարները մույնիսկ եիմանում են մեր հավատով, սակայն մաշ պետք է մեր արժեքը ունենանք, որպեսզի տեսնենք, թե ո՞վ ենք մենք, ի՞նչ ենք մենք և այս Նոր տարվա սեմին ո՞ւր ենք գնում որպես հայ քրիստոնյաներ: Այսօր, ըստ ավանդության, սիրելի ժողովուրդ, «Հայրապետական մաղթանք» է տեղի ունենում, աղոթում ենք Վեհափառ Հոր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի արևշատության համար: Կաթողիկոսը իր ժողովրդի համար է ապրում, սակայն հավատացե՛ք, որ պաշտոնները որքան բարձրանում են, մանավանդ կրոնական և հոգևոր իմաստով, մեզանից յուրաքանչյուրը ավելի շատ աղոթքի կարիք է ունենում, մեր հավաքական աղոթքի կարիքն է ունենում:

Աղոթենք այսօր, որ Աստված երկար կյանք տա մեր Հայրապետին, Աստված երկար կյանք տա մեր բոլոր առաջնորդներին. մեր բոլոր գինվորյալ եկեղեցականներին: Նրանք մեր բոլորի հարազատ եղբայրներն են, ձեր որդիներն են: Դու՛ք եք նրանց ընծա տվել այս Սուրբ Սեղանին, դու՛ք եք նրանց նվիրել, որպեսզի նրանք ծառայեն այս Սուրբ Սեղանին, ձեզ, որպես հոգևոր առաջնորդներ: Եթե մեր մեջ թերություններ կան, նշանակում է, որ դու՛ք ձեր լավերից լավը չե՛ք նվիրել Աստծուն: Վերջին հաշվով եկեղեցին, եկեղեցականները հայելին են այն ժողովրդի, որի ծոցից են իրենք դուրս եկել: Մենք ձերն ենք, վերջին հաշվով: Եվ մենք մեր լավագույնը պետք է ընծայենք Աստծուն: Ես մաղթում եմ, որ այսօր, Նոր տարվա շեմին, որպես ժողովուրդ, որպես եկեղեցականներ և աշխարհականներ, միասնաբար և ուրախորեն դիմավորենք այս Նոր տարին և վերանորոգենք մեր ուխտը որպես Հայ Առաքելական եկեղեցու զավակներ նիշտ այնպես, ինչպես Գրիգոր Լուսավորիչը, նա, ով երկնքից Աստծու Որդուն իջեցրեց և այս հողը սրբացրեց, որ մենք այս սուրբ հողի վրա սրբորեն ապրենք որպես հարազատ զավակները Լուսավորչի և այդ օրվանից եկած բոլոր Հայրապետների՝ մինչև Գարեգին Ա Կաթողիկոսը: Եվ դրա համար մեր աղոթքները ոչ թե տարվա առաջին օրը միայն լինի, այլ ինչպես եկեղեցում կադրացվող գիշերային ժամերգության առաջին սաղմոսում է ասվում. «Տէր, եթե զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»: Եվ այս օրհնությունը թող լինի ոչ միայն սրտից բխող, այլ սրտից, հոգուց և ամբողջ մեր կյանքից. ամեն:

ՀԵՁԵՐՈՒՆ ԵՒ ԽՈՆԱՐՀՆԵՐՈՒՆ ՏՕՆԸ

Որքան փոքր է մարդ արարածը հոգեկան եւ բարոյական շնորհներով, ա՛յնքան հպարտ ու եսական է իր բնութեամբ:

Խոնարհութիւնը՝ ամենավսեմ, ամենագոր եւ ամենասուրբ յատկանիշն է ճշմարիտ սիրոյ: Պիսի խոնարհիս. որ բարձրանաս, պիտի ծառայես, որ թագաւորես. պիտի պայքարիս, որ հերոսանաս, ու պիտի ռոջակիզուիս յանուն ազգիդ ու հայրենիքիդ, որ անմահանաս:

Իսկական սէրը չունի եսական նկատումներ ու սահմանափակումներ: Խոնարհութիւնը կը տանի ինք՝ դէպի առանձն խոնարհութիւն:

Ամէն արժէք ու գեղեցկութիւն, որ բարոյական դրօշմ կը կրէ, ամրանիստ կը յենու խոնարհութեան վրայ:

Նրբ չես գիշիր խոնարհիլ, չես կրնար սիրել ու սիրուիլ:

Խոնարհութեան այս պատգամն է, որ կը ետդորդուի հեզ ու խոնարհ հոգիներուն՝ Մանուկ Յիսուսի Մտուրէն:

Փոքրոգի ու մեծամոլ մարդը կը հպարտանայ, եւ Բարձրեայն Աստուած երկինքէն երկիր կը խոնարհի, եւ այն աստիճան կը խոնարհի մտաւրին մէջ իր աստուածային ծնունդով, որ նւթապաշտ մարդիկ չեն կրնար ըմբռնել կատարուած երաշքը իրենց մթագնած գիտակցութեամբ:

Նրբ կը սպասես Մեսէա մը, կը սպասես անշուշտ ամենագոր մեծատէր մը, կ'ուզես տեսնել իր իշխանութեան շրջացիչ շքեղութիւնը, չես սպասեր տեսնել անգոր երեսիկ մը անասուններու շունչով ջերմացած մտաւրին մէջ:

Այսպէս կը մտածէ ու կը տրամաբանէ մարդկային տկար մտածողութիւնը, քայց՝ այսպէս չի մտածեր Նրկիմֆը, այսպէս չեն մտածեր բարեպաշտ հոգիները, ինչպէս իմաստուն մոգերը եւ բարեհոգի հովիւները, որոնք խորհաւաւտ կը ծնրադրեն խոնարհութեան մեծասխան խորհուրդին առջեւ:

Քրիստոնէական տօներուն արմատն է Փրկչին ծնունդը եւ յայտնութիւնը երկրի վրայ:

Դժբախտաբար նիւթական իտէալներէ հրապուրուած թերահաւատները երբեք պիտի չկրնան ըմբռնել մարմնացած Աստուծոյ պատմական աննախընթաց իրողութիւնը:

Նոր Արքային ծնունդով՝ հոգեւորապէս վերանորոգուած մարդը երկնադաշտէն մըն է երկրի վրայ, որ գլուխը չի ծոեր գետին, այլ կը քալէ ազատ մարդու վստահութեամբ, աչքերը տեսապէս երկինք յարած, ուր կը տեսնէ իր ազնուաշունչ տեսիլներուն եւ հեռաւոր յայտնուն նշանակէտը:

Շնորհատու Տէրը կը գօտեպնդէ մարդկային միտքն ու հոգին ազնուաշունչ իտէալներով, որ անոնց իրագործումով՝ իր կեանքին մէջ մի վայրկեանին տայ յաւերժութեան արժէք:

Յիսուսին ծնունդը պէտք չէ առիթ մը ըլլայ, որ շոայութեան մէջ իր իմաստէն պարտուի եւ բռնաբռնուի մոռացութեան տրուին հայրենի ժողովուրդին ստիպողական կարիքներն ու կարօտութիւնները:

Պէտք չէ կամովին անտեսուի եւ անտարբերութեամբ դիտուի ժողովուրդին համատարած զրկութիւնը:

Արեւը այնքան դիրքին չի կրնար հալեցնել սառը, որքան զոհողութիւնը կարող է չփայտնել անտարբերութեան մեղքը:

Որքան Աստուածահանդ եւ մարդահանդ պարտականութիւն մը կատարած կ'ըլլանք, երբ եկեղեցիէն դուրս կ'ելլենք Ս. Մենդեան օրհնութիւններով առեցնուի, փոխանակ ինքնաշարժը դէպի տուն ուղղելու, այցելենք ծանօթ հիւանդի մը, որ կը տառապի հիւանդանոցին մէջ, եւ ժպիտով ու մխիթարական խօսքերով իր ձեռքին մէջ դնենք նորածին Յիսուսի մարմինը խորհրդանշող ՄԱՍԸ:

Այս պիտի ըլլայ Մանուկ Յիսուսի ծննդեան ցնծութիւններէն ձեր ներգգացած երջանկութիւնը եւ ոչ թէ համագիշերային խրախնամեցնելէն ձեր կրած անցողական ոգեւորութիւնը:

Այս խորահաւատ զգացումով ազօթած ու ապրած են բոլոր ժամանակներու հայ բարեպաշտ սերունդները:

Անոնք այս փառացած աշխարհին մէջ երկնային կեանք ապրած ու հաւատացած են, որ գերեզմանէն սնդիկ կեանքը կը շարունակուի տարբեր աշխարհի մը մէջ, ուր Աստուծոյ հոգին կը նառաքայթէ եւ ուր Քրիստոս եւ բոլոր ժամանակներու արդարները կը վայելեն հոգեւոր կեանքին երանութիւնները:

Մարդկային բոլոր մեծ իմացականութիւնները հաւատացած են այս աստուածային անհերքելի ճշմարտութիւններուն եւ այդ հզօր եւ աւտոժով ստեղծագործած ու յաւերժութեան մէջ անմահացուցած են իրենց բարեհամբոյր հոգիները:

Դժբախտ են բոլոր անոնք, որ երկրի վրայ իրենց անփառունակ վախճանը կը տեսնեն ու կ'ապրին անասնական բնագոյով, բոլորովին բեկանած իրենց կապը յաւիտեանական կեանքէն:

Ամէն տարի, որ Փրկչին ծնունդը կուգայ ու կ'անցնի, հայ հաւատացեալը կը հաւատայ, որ իր սպառած կեանքը կը մօտեմայ յաւերժալոյս աշխարհին եւ ոչ թէ գերեզմանին:

Աստուածային ծրագրով կրնար Նորածին Արքան պալատի շքեղութեան մէջ ծնիլ եւ ունենալ անասուններու մտաւորին տեղ ռսկեծոյլ օրօրոց մը, բայց Աստուած ուզեց, որ իր Միածին զաւակը անշխանայ իր երկնային փառքերէն ու ներկայացայ մեղաւոր աշխարհին օրինակելի հեգութեամբ ու մանաւանդ օրինակելի... աղքատութեամբ:

Շատ մարդիկ կ'ընեն այսօր հոգիով հիւանդ ու չեմ գործաւար, երբ անոնք կ'անցնին Մանուկ Յիսուսի մտաւորին առջեւէն սառուցիկ անտարբերութեամբ, կարծես հասարակ երախայի մը օրօրոցը ըլլար:

Բայց մեզի համար, որ կը հաւատամք ու կ'աղօթենք, Փրկիչը մեզի հետ է օրուան բոլոր ժամերուն: Կը տեսնենք Զայն, որ կը փալէ մեր առջեւէն ու մենք ալ հաւատարմորէն կ'երթանք իր ետեւէն:

Ի՛նչ մեծ ուրախութիւն է ու ի՛նչ մեծ փառք անոնց համար, որ Փրկիչը ունին իրենց կեանքին ու նախատգրին ԱՌԱՋՆՈՐԴ:

Յիսուսի փառք նամբան զոհողութեան եւ ճշմարտութեան միակ լուսաւոր նամբան է, որ մեր հողեղէն կեանքը կը կապէ յաւիտեանական կեանքին հետ: Բոլոր միւս նամբաները, որ անասունները կը փայլեն, փռոտ ու փռոտ են, կը յանգին խաւարակուտ համգրտաններու:

Այսօր, Փառաց Արքային ծնունդով, կը բացուի կեանքին առջեւ նոր տեսիլներու, նոր հեռանկարներու, նոր եռփոփոցներու արշալոյսը:

Փրկչին յայտնութեան աննախադէպ իրողութեան մասին, դարերու ընթացքին

եղան ա՛յնքան շատ հարցումներ եւ ա՛յնքան շատ պատասխաններ տրուեցան, ու աակաւից փրկստանեալ կոչուած մարդիկ տարակուսանքով կը մօտենան ու կ'ընդունեն երկինքէն երկիր խոնարհած մարմնացած Աստուածորդւոյն ծնունդը:

Երկու հազար տարի առաջ նոր ու լուսաւոր Աստղ մը շողաց երկնքի ճակտին. հրեշտակներու տաղերգութեամբ աւետելով մարգարէներու նախագուշակած Մեսային գալուստը:

Ի՞նչ նշանակութիւն կրնան ունենալ այս եզական երեւոյթի մասին մարդկային շփոթ միտքերէ արտաբերուած ըացատրութիւնները, որոնք առաւելապէս հաւատով եիւանդ հոգիներու մէջ կասկածներ յարուցանելու քննաքնն ունին, քան թէ վերանորոգելու սպասաւորման խոտորած անոնց կեանքը:

Աւելի հոգեշահ պիտի չըլլա՞ր մեր ներքին մաքուր տեսողութիւնը ուղղել այդ ՄԵՄ ՈՒ ՍՔԱՆԶԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ, որ անեւնօրէն գրաւիչ է:

Պատահածը հասարակ դէպք մը չէ եւ ոչ ալ առասպելախառն պատմութիւն, որ աւանդօրէն ընդունինք, այլ ժամանակակից ականատեսներու վկայութեամբ արձանագրուած իրադարձութիւն է, որ առաջին անգամ ըլլալով աշխարհի պատմութեան մէջ երկիրն ու երկինքը կ'ողջագուրուին եւ սուրբ ուրախութիւններու փաղցրութեամբ կ'ողողեն արդարութեան եւ խաղաղութեան ծարաւի հոգիները:

Քրիստոս երբեք չ'անցաւ պատմութեան, չպատկանեցաւ միայն անցեալին, չեղաւ սոսկ իր ժամանակակիցներէն հռչակուած Աստուածորդին, այլ ապրեցաւ ու կ'ապրի այսօր մեզի հետ ու պիտի ապրի այնքան ժամանակ, որ իր հաւատարիմ հետեւորդները առկայծ կը պահեն իրենց հոգիին մէջ Բեթղեհէմի ԱՍՏՂ-ին շողարձակումը:

ՎԱՐԴԱՆ ՍԻՍԳ ՔԱՎԱՆԱՅ ՏԻԻԿԵՐԵԱՆ

**ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԴԱՑՎԱԾ
ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ***

Այսօր հրաւիրուած եմ փառաւոր այս հաւաքոյթին, օրուան տօնին առիթով, խօսելու ձեզի Քրիստոնեայ եկեղեցւոյ առաջնականութեան մասին, որ մեր եկեղեցւոյ պարագային, կ'արտայայտուի Առաջին Լուսաւորիչներու՝ Թադէոսի և Բարթողիմէոսի յիշատակութեամբ, զոր կը կատարենք այսօր:

Խօսելը եկեղեցւոյ առաջնականութեան և մեր եկեղեցւոյ առաջին լուսաւորիչներու մասին է:

Քրիստոսի Առաքելներու պարագային, պարզ պատկերացում մը ունենալու համար "առաքել" բառի ստացած յատուկ իմաստին, անհրաժեշտ է երթալ նախ եկեղեցւոյ պատմութեան սկիզբներուն, նրուսադէմի մէջ: Քրիստոսի Համարածումէն և Հոգեգալուստէն ետք, եկեղեցին առաքելներն են և անոնց շուրջ թուրքուած համայնքը: Եկեղեցիին կեդրոնն է նրուսադէմը: Տասնմէկին մէջ, Պետրոսը կը վայելէ մեծ հեղինակութիւն:

Պետեկոստէի օրը, Իր Տէրը երիցս ուրացող, բայց այժմ Ա. Հոգիով զօրացած Պետրոսն է, որ կը խօսի իր բով կեցած տասնմէկին անունով, որ կը բարձրացնէ իր ձայնը իր Տէրը խաչող երեսներուն դիմաց, յանդուգն և անայլալ բառերով: Ա. Հոգիի շնորհներով զօրացած, ան վկան է Քրիստոսի Յարութեան:

"Ժարդեցալ Պետրոս հանդերձ մեռաւանդին, ամբարձ զձայն իւր՝ եւ խաւեցաւ ընդ մոսա եւ ասէ...զՅիսուս Նազովրեցի...մատնեալ ի ձեռաց անօրինաց՝ քեռեալ ի փայտի սպանէք, զոր Աստուած յարոյց, լուծեալ զերկունս մահու..." (Գործքք Առաքելոց. Բ. 14-24):

Հիթանոսութենէն դարձած քրիստոնեաներու և հրէութենէն դարձած քրիստոնեաներու միջև ծագած հարցերու լուծումին համար, անոր մօտ է որ կուգայ Պօղոս, երբ, առաջին անգամ ան կ'այցելէ նրուսադէմ: Պետրոսը վճռական է. պէտք է կիրառել հրէական Ժաւնդական օրէնքը հիթանոսութենէն քրիստոնեացած հաւատացեալներուն պարագային, գործադրելով օրէնքի բոլոր պահանջները: Գաղատացւոց գրած թուղթին մէջ, Պօղոս ինք կը բացատրէ թէ իր դարձէն երեք տարիներ ետք, ինք գնաց Պետրոսի մօտ համաձայնութեան մը գալու համար օրինակաւորութեան հարցի շուրջ: *"Ապա յետ երկից ամաց եղի յերուսաղէմ տեսանել զՊետրոս. եւ եղէ առ նմա ատորս հինգետասան"*: Պօղոս կը շեշտէ անմիջապէս թէ *"Չայլ ոք յառաքելոցն անտի ոչ տեսի, բայց միայն զԹակովրոս. զեղբայրն Տեառն"* (Գղտ. Ա. 18-19):

Հիմնուելով այս և մանաւանդ Քրիստոսի այն խօսքին վրայ թէ *"դու ես վէմ և ի վերայ այդո վիմի շինեցից զեկեղեցի իմ"* (Մատթ. ԺԶ 18), Կաթողիկոս աստուածարանները և ընդհանրապէս արևմտեան պատմաբանները կը յայտարարեն Bertrand Halmann-ի եետ թէ Հրէութենէն քրիստոնեացած եկեղեցիին համար գերագոյն հեղինակութիւններն են առաջին առաքելները, իսկ հիթանոսութենէն դարձած եկեղեցիներուն համար՝ Ա. Պօղոսն է եկեղեցիին հեղինակութիւնը իր

* Կարդացվել է 1997 թ. նոյեմբերի 29-ին Վեհարանի հանդիսութեան ղեկավարութեան և Բարդուղիմէոս առաքելների տոնի առիթով կազմակերպված միջոցառման ժամանակ (տե՛ս «Էջմիածին» ԺԱ-ԺԲ, էջ 217-219):

կալուածի իւրում ի լերիցն Սիօնի առնթեր մատուան, որ ի վերայ գլխոյ Սրբոյն Յակովբայ Զերեթեան կանգնեցաւ ի Հեղինեայ դշտոյէ Հայոց”:

Այս եղելութիւններուն, Հայր Դուկաս Իննինեան իր “Հնայնութիւն Հայաստանի” գիրքին մէջ կ’աւելցնէ եետեւեալը. “Ի վերայ գերեզմանաց երկուց Յակոբեանց առաքելոցս շինեցաւ վանք հռչակաւոր ի սկզբան չորրորդի դարուն ի հրամանէ Տրդատայ մեծին արքային Հայոց՝ յանուն Սրբոց Յակոբեանց. և է սեպհական ազգիս հայոց միցչե ցայսօր”:

Տարակոյտ վեր է որ Քրիստոնեայ եկեղեցիի պատմական առաքելականութիւնը կը սկսի Յակոբոս Տեառնեղոյայր առաքելէն և ոչ թէ Պետրոս առաքելէն, որ այդ տարիներուն իր քացակալութեամբ կը փայլէր Նրուսադէմի մէջ:

Նրուսադէմի գիտնական Էամայնէին կողմէ ընդունուած պատմական ճշմարտութիւն է, որ այսօրուան Ա. Յակոբեանց Մայր Տաճարը Հեթում Բ. Կիլիկիոյ Թագաւորի կողմէ վերակառուցուած եկեղեցիին՝ կը գտնուի հռն, ուր կար Յակոբոս Տեառնեղոյս տունը, առաջին և երկարատեւ հաւատալից Քրիստոսի առաքելութիւնը, ձերբորոն և փոքր համայնէին, ուր գնաց Պօղոս հանդիպելու Էամար եկեղեցիի պետին:

Այստեղ կը յառաջանայ մի հարց՝ կապուած առաքելականութեան հետ. Յակոբոս Տեառնեղոյայրը առաքել չէ՞ր քայց հակառակ անոր եղաւ եկեղեցւոյ պետ, ձեռնադրութիւնը ստանալէ ետք առաքելակերէն: Հետեւաբար, կրճա՞նք ըսել թէ առաքելականութիւնը անկախ է նուիրապետական հանգամանքէն, կամ տեսնել այդ երևոյթին մէջ այլ կարգաւորութիւն մը, այն որ եկեղեցիին առաքելականութիւնը հիմնադրումին մէջ է եկեղեցիներու և ոչ թէ զանոց կառավարելու իշխանութեան մէջ: Այլ խօսքով, առաքելականութիւնը բարոյական իշխանութիւն է, զրանց ճշմարտութեան անխախտ պահելու և տարածելու իշխանութիւնը:

Այդ է որ կը հասկնանք երբ Հաւատամքի վերջաւորութեան կ’ըսենք Հաւատամք և ի մի միայն յընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի:

Աստուածաբանութեան մէջ, առաքելական մակդիրը գործածուած է երբեք տարբեր իմաստներով.

ա. եկեղեցին առաքելական է իբրև աւանդապահը առաքելական ուսուցումին.

բ. եկեղեցին առաքելական է իր վարչական իշխանութեամբ.

գ. եկեղեցին առաքելական է իր քահանայական իշխանութեամբ:

Հաւատամքի վերջին մասը որ կը վերաբերի եկեղեցիի յատկանքներուն, հայե-րէն խմբագրութեան մէջ, որ կը գործածուի ժամերգութեան և խորհրդակատարութիւններու ընթացքին, տարբեր է Արևմուտքի մէջ գործածուածէն. անոնք ունին.

և ի մի, սուրբ, յընդհանրական և առաքելական եկեղեցի: Տողին սկիզբը կը քացակալի “հաւատամք” բառը: Բանածը կը վերջանայ ըսելով.

Խոստովանիմք մի մկրտութիւն, ի թողութիւն մեղաց:

Այն ունիմք ի յարութիւն մեռելոց,

և ի կեանս յաւիտեանական: **Ամէն:**

Հայ եկեղեցիի հաճեցանքը կ’ըսէ.

Հաւատամք և ի մի միայն յընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստան յաւիտենից, հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանս յաւիտեանական:

Առաջինին մէջ, այսինքն արևմտեան եկեղեցիներու հաւատամքին մէջ, յիշուած են եկեղեցիի չորս հիմնական յատկանքները, որոնցմէ ետք՝ մկրտութիւնը, յարութեան յոյսը և յաւիտեանական կեանքի ակնկալութիւնը: Մեր եկեղեցիին մէջ գործածուող Հաւատամքին մէջ կը յիշուի չորս յատկանքները, տարբեր շարա-յարութեամբ մը, որ կը սկսի եկեղեցիի մէկութեամբ և կը շարունակուի յիշելով ընդհանրականութիւնը, առաքելականութիւնը և սրբութիւնը, տալով այն տպաւորութիւնը թէ եկեղեցւոյ սրբութիւնն է միւս յատկանքներուն պսակը: Արևմտեան

Եկեղեցիներում մօտ, շարքը կը սկսի նայն մէկութենէն, որուն կը յաջորդէ սրբութիւնը, ընդհանրականութիւնը և կ'եզրակացուի առաքելականութեամբ: Պատահականութիւնն թէ դիտաւորութիւն, դժուար է ըսել: Սակայն պարզ է որ միմէյն այսօր, Հոռմի եկեղեցին, երբ կ'ըսէ եկեղեցի, կ'ըսէ Ս. Պետրոս առաքելականութիւն և երբ կ'ըսէ առաքելականութիւն, և երբ կ'ըսէ Ս. Պետրոս կ'ըսէ պապականութիւն և երբ կ'ըսէ պապականութիւն, կ'ըսէ անսխալականութիւն և երբ անսխալականութիւնը կը պահէ ինքզինքին, անխուսափելիօրէն կը ստիպուի դուրս հանել Քրիստոսի եկեղեցիէն միւս բոլոր եկեղեցիները:

Թէ Քրիստոս իր առաքելներուն տուաւ իշխանութիւններ, անուրանալի է: Դիմենք Աւետարաններուն, անգամ մը ևս կարդալու համար թէ Յիսուս ինչպէս ընտրեց տասներկուք և ինչ իշխանութիւններ տուաւ անոնց:

Մար. Ժ. 2-4 կը յիշուի տասներկուք՝ գոյգ գոյգ

և առաքելոցն երկուսասանիցն՝ էին անուանք այստիկ:

Առաջին՝ Սիմովն անուանեալ Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա:

Յակովբոս Զեբեդեայ, և Յովհաննէս եղբայր նորա.

Փիլիպպոս, և Բարթողոմէոս.

Թովմաս և Մատթէոս մաքաւար.

Յակովբոս Ալփիեայ, և Դաւիթոս՝ որ անուանեցան Թադէոս

Սիմովն կանանացի և Յուդա Իսկարիօթացի, որ և մատնեացն զնա:

Մրկ. Գ. 16-18-ի մէջ կան տարբերութիւններ: Այստեղ կարծէք թէ շարքը կազմուած է նկատի ունենալով իւրաքանչիւրի մօտիկութիւնը Յիսուսի: Կը սկսի Պետրոսի անունով, անուն մը զոր տուած է իրեն նայն ինքն Յիսուս, փոխանակ անոր բուն անունին, որ է Սիմոն: Կը ետևէն Յակոբ և Յովհաննէս, որոնց անունին մեր Տէրը կցեց «Որդիք Որոտման» կոչումը: Իսկ Սիմոնի եղբոր՝ Անդրէասի անունը կը յիշուի չորրորդ տեղը, որուն կը ետևէ Փիլիպպոս և Բարթողոմէոս գոյգը և կը շարունակուի յաջորդ գոյգով՝ Թովմաս և Մատթէոս, ապա՝ Յակովբոս Ալփիեայ և զԹադէոս, աւարտելու համար Սիմովն կանանացի անուններով:

Ղկս. Զ. 13 - ինքն մէջ յիշուած ցանկին սկիզբը կը գտնենք յատկանշական խօսք մը կոչեաց գաշակերտսն իւր և ընտրեաց ի նոցանէ երկուտասանս. զորս եւ առաքեալս անուանեաց:

Գործք Առաքելոցի մէջ, Ղուկաս կը սկսի իր գիրքը նայն յիշատակութեամբ՝

1 Զբանն Առաջին զոր արարի վասն ամենայնի, ո՛ր Թեոփիլէ, զոր սկսաւ Յիսուս անել և ուսուցանել.

2 մինչեւ Հաւրեմ պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, զորս ընտրեացն եւ վերացաւ:

Արդէն Մատթէոս անունները տալէ առաջ, այսպէս գրած էր.

1 և կոչեցեալ առ ինքն գերկառասանեսին աշակերտսն իւր, եւ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս (Ժ 1):

1 և եղ անուն Սիմովնի՝ Պետրոսի. 17 * և Յակովբոս Զեբեդեայ՝ և Յովհաննէս եղբայրն Յակովբայ՝ եղ նոցա անուանս Բանեդեոս, որ է՝ Որդիք Որոտման, 18 * և զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթողոմէոս, և զՄատթէոս զմաքաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս Ալփիեայ և զԹադէոս և զՍիմովն կանանացի:

2 Ղկս. Զ. 19

և իբրեւ այդ եղեւ՝ կոչեաց գաշակերտսն իւր, և ընտրեաց ի նոցանէ երկուտասանս. զորս և առաքեալս անուանեաց: ԶՍիմովն՝ զոր և Պետրոսն անուանեաց, և զԱնդրէաս զեղբայր նորին և զՅակովբոս, և զՅոհաննէս, և զՓիլիպպոս, և զԲարթողոմէոս, և զՄատթէոս, և զԹովմաս, և զՅակովբոս Ալփիեայ, և զՍիմովն՝ զկոչեցեալսն նախանալոյց, և զՅուդայ Յակովբայ և զՅուդա իսկարիօթացի՝ որ եղեւ իսկ մատնիչ:

Այս առթիւ, երեքին մօտ նոյն բառերը կը գործածուին, նախ՝ Կոչեց իր աշակերտները, ապա՝ ընտրեց երկուտասանը և իշխանութիւն տուաւ անոնց, իշխանութիւն՝ մաքրելու մարդիկը չարի ներգործութենէն և իրենց ախտերէն: Նախ կոչեց բաւորին և շատերէն ընտրեց քիչերը: Յետոյ՝ Մատթէոս կ'ըսէ. առաքեաց զնոսա, որմէ յետոյ՝ պատուիրեաց նոցա: Առաջինը, որ արմատն է «առաքեալ» բառին կը նշէ անոնց ընկիւի գործին բնոյթը. իսկ երկրորդը՝ իրենց մէջ արթնցող նոր մարդուն բնոյթը: Գործը ֆարգութիւնն է, իսկ նոր անճանարութեան բնոյթը՝ ամբողջական նուիրումն: Ճրի առէք և ճրի տուք այս է անոնց տրուած տեղումնական երաւեանքը: Կոչուած և ընտրուած առաքեալը ան է, որ կը հրաւիրուի ի սկզբանէ և կ'ընտրուի յորովայնէ, ինչպէս կ'ըսէ շարականը, ամբողջական նուիրումով շարունակելու համար մարմնացեալ Աստուծոյ գործը այս երկրի վրայ:

Յովհաննէս Աւետարանին մէջ միայն, չկայ տասներկուի ընտրութեան պատմութիւնը և ցանկը. սակայն կայ գեղեցիկ պատմութիւնը Քրիստոսի երևումին Տիրբերոյ ծովուն եզերքը, իր յարութենէն ետք, որպէսզի ծուկերու որսորդութեան երաշխով յայտնուի առաքեալներու խումբի մը: Սիմոն Պետրոս, Թովմաս՝ «անուանեալն երկուորեակ» և Նաթանայէլ՝ «որ ի Կանայ Գալիլիացուց և որդիքն Ջերեթեայ» (որպէսզի չլիշէ ինք իր անունը) և այլք աշակերտաց անտի երկու՝:

Այս երևումէն յետոյ, կը սկսի Յիսուս եարցնել Պետրոսի երեք անգամ եթէ «սիրե՞ս զիս», որպէսզի բնորոշէ առաքելութիւնը, որուն կոչումն էր ինքը Պետրոս, ըլլալ բարի եովուր, որ զանճ իւր դէն ի վերայ ոչխարաց: Աստե՛ք են առաքեալին յատկանիշները, ընտրեալ և կոչեցեալ ըլլալ, և նուիրուիլ, իբրեւ եովու բարի իրեն յանձնուած հօտի հոգածութեան՝ ամբողջական նուիրումով: Որքա՛ն հեռու ետակնոտ իմաստէն, որ կը տրուի այսօր «պետրոսականութեան»:

Տասներկուէն ետք, երբ եկեղեցին սկսաւ ընգրկել ոչ-երէաններ, Պօղոս առաքեալի ֆարգութեամբ, «առաքեալ» հասկացողութիւնը ընդարձակուեցաւ և սկսաւ ընդգրկել եկեղեցարանական սկզբունքներ, առաջիւ առնելու եամար սխալ ուսուցումներու տարածումին: Առաքեալը եղաւ նաև ուսուցանող:

Բ. Կորնթ. Գ. 4 *Յոյս մի այսպիսի ունիմք ի ձեռն Քրիստոսի առ Աստուած. իբր ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրեւ ի մէնք. այլ բաւականութիւնն մեր՝ յԱստուծոյն է, որ եւ բաւականս արար զմեզ՝ պաշտանեաց նորոց կտակարանացս, ոչ գրող, այլ հոգով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ:*

Յիսուս արգէն ըսած էր իր առաքեալներուն. Մատթ. ԻԸ. 18 «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. Որպէս առաքեաց զիս Հայր եւ ես առաքեմ զմեզ: Գնացէ՛ք այստե՛հ եւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հոր՝ եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Յիսուս փոխանցած էր նաև իր առաքեալներուն ֆախանայական իշխանութիւնը.

Յովհ. Ի. 21 *Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց, փշեաց ի նոսա՝ եւ ասէ. Առէ՛ք Հոգի Սուրբ. եթէ ունեք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա. եւ եթէ զուրուք՝ ունիցիք, կալեալ լիցի»:*

Հոգեգալուստէն ետք, առաքեալները ունին իրենց տրուած իշխանութեան գիտակցութիւնը և անով զօրացած կը կատարեն իրենց առաքելութիւնը ամենայն իմաստութեամբ, կը կանգնին ամբողջ աշխարհին դիմաց և կը խօսին ինչ որ տրուած է իրենց Ս. Հոգիէն: Անոնք պատրաստ են հրաժարելու կեանքէն, ետատարիմ մնալու եամար իրենց յանձնուած առաքելութեան:

Առաքեալը՝ անտարանիչ է քանին նշմարտութեան, իր մէջ գոյացած այն փոքաշատութենէն որ Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնն է իրեն.

Գղտ. Ա. 11 *Ցուցանեմ ձեզ եղբարք զԱնտարանն, որ անտարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ. քանզի եւ ոչ ես ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յումեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի:*

Պօղոսի բացատրութեամբ, ինք առաքեալ է, որովհետեւ կոչուած է ըլլալու առաքեալ և զատորոշումով՝ Աստուծոյ բարի լուրը անտելու իր ֆարգութեամբ.

Հով. Ա. 1 “կոչեցեալ առաքեալ, որոշեալ յԱւետարանն Աստուծոյ”:
 Աստուծոյ կոչմէ կոչեցեալներէն էին երկու այն առաքեալները, որոնց տօները կը
 կատարեմք այսօր: Եթէ վերադառնանք երեք համեմատական Աւետարաններուն,
 անոնց անունները կը գտնենք երկոտասանից ցանկերուն մէջ:

Մատթէոսի ցանկին մէջ՝ Թադէոսը կոչուած է Ղերբէոս, իսկ Մարկոսի
 Աւետարանին մէջ՝ Թադէոս, միջոցաւ Ղուկասի մօտ՝ Յուդայ Յակովբայ:
 Երկու պարագաներու, երբ Մարկոս կը գրէ Յակովբոս Ալփեայ և Ղուկաս՝
 զՅուդայ Յակովբայ, ըսել կ'ուզեն Յակոբ որդի Ալփեայ և Յուդա որդի Յակոբայ:
 Վերջինիս մասին, տեսնա՞ք թէ Մատթէոս կուտայ այլ անուն մը Ղերբէոս, սակայն
 յիշելով, որ ան անուանեցաւ Թադէոս:

Ուրեմն տասնմէկերորդ առաքեալի մասին, որ եղած է Հայոց խոսքին
 առաքեալը ունի՞նք հօր անունը՝ Յակոբ և երկու անուններ. Յակոբի որդին՝ Յուդա
 և Թադէոս, որու նախկին անունն էր Ղերբէոս:

Յուդա-Թովմաս Յակոբեանը, որ կայ նաև Յովհաննու Աւետարանին մէջ (ԺԱ.
 18), երկուորեակ եղբայրը Թադէոսի, կ'երևի Առաքելոց կանոններուն մէջ իբրև
 ուղարկուած ի Հնդկից և ամենայն գաւառք որ շուրջ զնովար եւ, մինչև ի ծովն
 վերջին, նոյն կանոններուն մէջ՝ անոր երկուորեակ եղբորը կը սահմանուի Ուրհա և
 ամենայն քաղաքք որ շուրջ զնովար, Մծբին և Արաքք և սահմանակիցք
 Միջագետաց, Հայք և ամենայն հիւսիսի և հարաւ:

Նոյն կանոններուն մէջ, ան կը յիշատակուի իբրև մի յերկոտասան առաքելոցն:
 Փաստաւոր Քիւզանդացի պատմիչը, կաթողիկոսներու յաջորդականութեան
 սկիզբը կը նշէ Թադէոս Առաքեալը, իբրև եիմնադիրը Կաթողիկոսական Աթոռին,
 զոր կ'որակէ Թադէական Աթոռ:

Սովորէ Հայկականքի մէջ (Սովորք, հտ. Ը. 11) կը յիշատակուի “Արտազ
 գաւառի Շաւարշան գիւղ ուր էին հովոց գետինք թագաւորացն Հայոց:
 Սանատրուկ, Սանդուխտ և այլն: Սամուէլ իշխան, Զարմանդուխտ”: Կը հետևեալ
 այս յիշատակութենէն, թէ այնտեղ քաղաքն էր և նահատակուած է Հայոց
 Կաթողիկոսութեան եիմնադիր Թադէոս առաքեալ, որուն պատճառով Աթոռը
 կոչուած է նաև Արտազի Աթոռ:

Թադէոս առաքեալի մասին գիտենք թէ ան նախ քաղաքն Կապադովկիայ և
 ձեռնադրեց այնտեղ Թեոփիլոսը և անկէ մտաւ Հայաստան: Լուսաւորիչը ըլլաւ
 եակառակ ճամբան, ձեռնադրուած ըլլալու համար առաքեալի յաջորդներէն:

Գրիգոր Տաթևացին կը գրէ հետևեալը. “Կենսարուխ սուրբ Աւետարանն
 զԹադէոս առաքեալն մեր յերկոտասանիցն ասէ. Ղերբէոս որ անուանեցաւ
 Թադէոս... յոմանք հօթանասնիցն ասեն, զի հօթանասուն աշակերտացն գլուխ և
 վարդապետ էր (Տաթ., Գիրք Հարցմանց 549): Ուրեմն Տաթևացին կը պատասխանէ
 անոնց, որոնք Աւետարաններու քաջայայտ վկայութեան կը հակադրուին Թադէոսը
 նկատելով հօթանասնիցէն մին և ոչ երկոտասաններէն, թէ Թադէոս էր նաև
 “հօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ”:

Բարթողիմէոսի մասին հարց չկար, մինչև որ երատարակուեցաւ Ս. Գրոց
 “Էկիւմենիք” քարգմանութիւնը: Համեմատական երեք Աւետարաններուն մէջ՝
 տասներկուի շարքին յիշուած է Բարթողիմէոս առաքեալը, Փիլիպպոսի անունին
 հետ շաղկապուած՝ վեցերորդ անունը: Ըստ եկեղեցական հնագոյն աւանդութեան,
 Բարթողիմէոս կը նշանակայ Յովհաննու Աւետարանին մէջ յիշուած Նաթանայէի
 հետ: Մինչև այսօր, Կամա գիւղին մէջ, Նազարէթի մօտ, ցոյց կը տրուի անոր
 Գերեզմանը և տունին տեղը, որոնց վրայ կանգնած են Լատինական և Օրիենտալ
 եկեղեցիներ: Հոն կուգան քաղաքի ուխտաւորներ, յարգելու համար յիշատակը
 Առաքեալին, որու մասին Յովհաննէս Աւետարանիչ կը գրէ.

“Գտանէ Փիլիպպոս զՆաթանաէլ, եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս
 յարէնսն, եւ մարգարէքն՝ գտաք զՅիսուս գորդի Յովսեփայ ի Նազարեթ: Ասէ
 ցնա Նաթանաէլ. Իսկ ի Նազարեթ՝ մա՞րք ինչ իցէ քաղաղ իմիջ լինել: Ասէ ցնա
 Փիլիպպոս. Եկ եւ տես: Իբրեւ ետես Յիսուս զՆաթանաէլ զի գայր առ նա, ասէ

վասն նորա. Ահա արդարեւ Խորալէլացի, յորում նենգութիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նաթանաէլ. Ուստի՝ ճանաչես զիս: Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնա. Մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեցնալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզննոյն, տեսի զքեզ: (Յովհ. Ա. 45): Ս. Գրոց ֆրանսերէն լեզուով եղած թարգմանութեան մէջ, որուն պատրաստութեան մասնակցեցաւ գիտնականներու "էկլիմենիֆ" խումբ մը, էջատակին գրուած է Նաթանաէլի մասին. "Որոշ աւանդութիւններ նշանացուցած են զայն Բարթողիմէոսի, սակայն անհիմն կերպով": Զարմանալի հակասութիւն նոյն Աւետարանին մէջ գրուածին (Յովհ. ԺԱ. 2): Յիսուս, իր յարութեանցն հետ, որպէսզի ձուկերու որսորդութեան հրաշքով յայտնուի առաքեալներու խումբի մը, կ'երևի խումբի մը՝ Տիրեբիոյ լինին եզերքը: Յովհաննէս Աւետարանիչը կը յիշէ. "Միմոն Պետրոս, Թովմաս՝ "անուանեալն երկուորեակ" և Նաթանաէլ "որ ի կանալ Գալիլիացոց և որդիքն Զեբեթեայ և այլք աշակերտաց անտի երկու": Տասներկուէլն մէջ, Կանանացի աշակերտը Բարթողիմէոսն է և անոր համար է որ եկեղեցւոյ աւանդութիւնը նշանացուցած է երկու անունները Բարթողիմէոսի անձին մէջ:

Այսօրուան տօնակատարութեամբ, մենք չենք կրնար զսպել մեր հպարտութեան արդար զգացումը որ Աստուծոյ "փոքրիկ հօտը" հովուած են երկու Առաքեալներ և թէ անոնց արեան աղբիւրէն հոսած է քրիստոնէական մեր եւաւտփը: Սակայն, երբ կը հպարտանանք միայն, կը մեղաճեմք անոնց արեան դէմ, որովհետեւ այդ արիւնը կենդանի աղբիւր կը մնայ այն ատեն միայն, երբ առաքելականութիւնը հասկնանք մեռն իբրեւ պարտաւորութիւն մը, դրուած մեր ուսերուն, որ շարունակենք մաքուր պահել յարութեան յոյսը, անխախտ պահել մեր հաւատարմութիւնը առաքելական Ս. Աթոռին, կենսունակութեան նոր թափ մը տալ մեր քաղաքեան և քարձր պահել Ս. Խաչը՝ դրօշը մեր փրկութեան:



ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

ԱՎԵՏԱՐԱՆՁԻ ՀԱՆԳԻՍՏԸ

/ընթերցվում է Ա. Հովհաննես Առաքյալի տոնին/

Նրանք, Հովհաննեսը եղբայրների հետ էր՝ մեծ ուրախությամբ ի Տեր:
Եվ մի օր, քանզի Կիրակի էր, և բոլոր եղբայրները հավաքվել էին նրա մոտ.
սկսեց նրանց հետ այսպես խոսել.

Իմ եղբայրներ ու ծառայակիցներ և Տիրոջ արքայության ծառանգակիցներ ու
հաղորդակիցներ. գիտե՛ք, թե Աստված ձեզ որքա՛ն գործություն տվեց իմ միջոցով,
որքա՛ն նշաններ, որքա՛ն երաշխներ, որքա՛ն շնորհներ, ինչպիսի՛ վարդա-
պետություններ, վերակացություններ, անդորրություններ, սպասավորություններ,
փառք, հավատ, միաբանություն, ծիրան, պարգևներ:

Քանի՛-քանի՛ անգամ ձեր աչքերով տեսա՛մ ձեզ տրվածները, որոնք չեն երևում
այս աչքերին և լսելի չեն լինում այս ականջներին:
Արդ, եստատուվեցե՛մ Նրա մեջ՝ երջելով Նրան ձեր բոլոր գործերում: Գիտե՛ք, թե
մատակարարության յարերուդը, որ եղավ մարդկանց մեջ, Տերն ի՞նչ պատճառով
կատարեց:

Եղբայրներ, ինչը Տերն է ազաչում ձեզ իմ միջոցով և մաղթում լինել-մնալ
առանց թշնամացի, առանց նեղության, առանց անառակության:

Քանզի գիտի թշնամություններ ժառանգելու մասին, որ ձեզանից են:
Գիտի և անարգությունը: Գիտի նաև՝ նեղությունը: Գիտի նաև անառա-
կությունը՝ իր սուրբ պատվիրաններին ձեր կողմից ականջալուր չլինելու մեջ:

Արդ, թող չտրտմի ձեզանից քարերարն Աստված, գթածը, ողորմածը, սուրբը,
հստակը, անբառը, աննյութը, միակը, մեկը, անփոփոխը, ստույգը, աննեղը,
անցասումը, Ով վեր է բոլոր ասելի ու իմանալի անուններից՝ իմ Աստվածը Հիսուս:

Եվ արդ, թող ուրախ լինի մեր բարի կրոնավորությամբ, թող խնդա մեր սուրբ
կյանքով, թող հանգչի մեր պարկեշտ վարքի մեջ, թող անհոգ լինի մեր ժուժկա-
լությամբ, թող հանույժ գգա մեր միաբանությամբ, թող ծպտա մեր
զգաստությամբ, թող բերկրի իր նկատմամբ ունեցած մեր սիրով:

Այժմ այս մասին եմ խոսում ձեզ հետ, եղբայրներ, փութալով դեպի ձեր
տաղիկ՝ արդեն իսկ ի Տեր կատարյալ գործը:

Քանզի ուրիշ ի՞նչ ունեմ ձեզ ասելու. ունեմ ձեր Աստծո գրավականը. ունեմ
Նրա քարեքարության տուրքը. ունեմ Նրա անհրաժեշտ գալուստը:

Որովհետև եթե այլևս չմեղանչեմ, այն, որ անգիտությամբ կզործեմ, Աստված
կթողնի ձեզ. ապա եթե և Նրան նախախելուց ու Նրանից ողորմություն գտնելուց
հետո նույն ձևով վարվեմ, առաջինները ևս կհաշվվեն ձեզ, և Նրանից
ողորմություն չեմ ընդունի:

Եվ նրանց սա ասելով՝ այսպես աղոթքի կանգնեց.

Ո՛ր, որ Քո հյուսմամբ հյուսեցիր այս պսակը, Հիսուս:

Ո՛ր, որ այս քաղցում ծաղիկներին գողեցիր Քո անբառամեղի ծաղկը:

Ո՛ր, որ սերմանեցիր Քո այս կեանքար խոսքերը:

Ո՛ր, որ միայն խնամակալն ես Քո ծառաների և բժիշկ, որ ձրի ես բժշկում:

Ո՛ր, որ միայն Դու ես քարերար և անամրադարձաց:

Ո՛ր, որ միայն Դու ես ողորմած և մարդասեր:

Ո՛ր, որ միայն Դու ես փրկիչ և արդար:

Ո՛ր, որ միշտ ամենքի մեջ ես և ամեն ինչի՝ մերձ, Աստված իմ Հիսուս. Դու Քո
պարգևներով ծածկիր ամենքին, որոնք Քեզ վրա են հույս դնում:

Ո՛ր, որ ամենուրեք գիտես մեր չարախոսի մեհենայություններն ու
քրոնությունները:

եվ ապա հաց խնդրեց ու այսպես գոհացավ:

Ի՞նչ օրհնություն, կամ ի՞նչ պատարագ, կամ ի՞նչ գոհություն մատուցե՞նք հացը բեկանելուց, այլ միայն Քեզ անվանե՞նք Հիսուս Քրիստոս:

Փառավորում եմք, Տեր, Հոր ասած Քո անունը:

Փառավորում եմք Քո դուռն մուտքը:

Փառավորում եմք հարությունը, որ Քեզանով ցույց տրվեց մեզ:

Փառավորում եմք Քո ճանապարհը, փառավորում եմք Քո սերմը, խոսքը, շնորհը, հավատը, աղը, անհաս մարգարիտը, զանձը, արորը, ուռկանը, մեծությունը, որ մեզ համար մարդու որդի կոչվեցիր, ճշմարտությունը, հանգիստը, գիտությունը, գործությունը, պատվիրանը, համարձակությունը, ազատությունը, դեպի Քեզ փախուստը:

Որովհետև Դու ես, Տեր, անմահության արմատը, անապականության աղբյուրը և հավիտյանների հիմքը՝ այլ ամենը մեզ համար անվանվելով:

Որպեսզի մե՞նք, Քեզ այսպես կոչելով, իմանանք Քո մեծությունը /որն անտես է մեզանից այս ժամանակում և տեսանելի է միայն սրբերին/ ու միայն Քո մեջ կերպարանված մարդուն:

Եվ բեկանելով հացը՝ կարկանդակ ցրանք և յուրաքանչյուր եղբոր վրա աղոթք ասելով, որպեսզի արժանի լինեն Տիրոջ շնորհներից ու սուրբ գոհությանը, նույնպես և ինքը ճաշակելով ու ասելով, թե՛ և ինձ թող բաժին լինի ձեզ հետ, և խաղաղություն ձեզ, իմ սիրելիներ:

Եվ ասում է Պառլամենտը, վերջում էլ հետ եղբայրներիցդ երկուսին՝ երկու կթոցներով ու քրիչներով հանդերձ, և եկ իմ ետևից:

Եվ Պառլամենտը առանց հապաղելու արեց, ինչ իրեն հրամայեց Աստծո ծառա Հովհաննեսը:

Եվ երանելի Հովհաննեսը, ելնելով տնից, գնում էր դռների առջևով՝ հրամայելով բազմությանը, որ մեկուսանան իրենից:

Եվ հասնելով մեր մի եղբոր շիրիմին, ասաց պատանիներին. փորեցե՛ք, որդյակներ: Եվ նրանք փորում էին:

Իսկ նա նրանց ստիպում էր և ասում, ավելի խոր թող լինի փորածդ:

Եվ նա նրանց փորելու ժամանակ նրանց հետ կենաց խառն էր խառնում և հորդորում տնից իր հետ եկածներին, համոզում ու հաստատում էր նրանց Տիրոջ մեծության մեջ և աղոթում քուրդից յուրաքանչյուրի վրա:

Իսկ մե՞նք ամենևին ոչինչ չէինք իմանում:

Եվ երբ պատանիները շուրջանակի ավարտեցին փորվածքը, ինչպես և նա էր կամենում, մերկանում էր երանելին հանդերձները, որ հագել էր, և իբրև մի անկողին տարածում փորվածքի խորության մեջ, և միայն նափորում մնալով, իր ձեռքերը բարձրացրեց դեպի վեր և այսպես աղոթքի կանգնեց:

Ո՛ր, որ ընտրեցիր մեզ հեթանոսների առաքելության:

Ո՛ր, որ մեզ աշխարհ ուղարկեցիր, Աստված:

Ո՛ր, որ Քեզ ցույց տվեցիր Քո մարգարեների միջոցով:

Ո՛ր, որ երբեք չդադարեցիր, այլ միշտ փրկեցիր կորուսյալին:

Ո՛ր, որ բոլոր բնությունների միջոցով Քեզ ճանաչեցիր:

Ո՛ր, որ անգամ անասուններին փրկեցիր:

Ո՛ր, որ անապատ ու վայրենի հոգուն զգո՞ն ու հանդարտ դարձրեցիր:

Ո՛ր, որ նրան՝ ծարավածին, Քո խոսքով հենց Քեզ տվեցիր:

Ո՛ր, որ նրան՝ մեռյալին, արագ հայտնվեցիր:

Ո՛ր, որ նրան՝ անօրհնության մեջ ընկղմվածին, արագ օրե՞նք ցույց տվեցիր:

Ո՛ր, որ նրան՝ ամբողջովին սատանայից հեռվածին, փրկիչ ընծայվեցիր:

Ո՛ր, որ հաղթեցիր Քեզ ապավինածների հակառակորդին:

Ո՛ր, որ նրան Քո ձեռքը տվեցիր և նրան հարություն տվեցիր դժգոհներից:

Ո՛ր, որ չթողեցիր նրան մարմնի մեջ կրոնավորել:

Ո՛ր, որ ցույց տվեցիր նրան իր թշնամունք:

Ո՛ր, որ գիտությունը սուրբ դարձրեցիր, Աստված իմ Հիսուս:

Ո՛ր, որ Հայրն ես նրանց, ովքեր երկինքների վրա են, և Աստված՝ երկրավորների

համար:

Ո՛ր, որ եթերականոնների օրենքն էս և օդայինների ընթացքը, երկրավորների պահպանող ու անդհդաշինների երկյալը, ընդունիր և Քո Հովհաննեսի հոգին, որը թերևս արժանի է համարվում Քո կողմից:

Ո՛ր, որ ինձ մինչև այս ժամանակը անմեղձ պահեցիր կամանք խառնակութունից:

Ո՛ր, որ և իմ նայելը կին մարդու վրա ծանր համարեցիր:

Ո՛ր, որ ժամանակավոր պատրանքներից փրկեցիր ինձ և դեպի մշտնջենավորները առաջնորդեցիր:

Ո՛ր, որ քաժանցիք ինձ մարմնավոր աղտեղի մուտքությունից:

Ո՛ր, որ զերծ պահեցիր դառն մահվանից և միայն Քո մեջ հաստատեցիր:

Ո՛ր, որ իմ հոգու ծածուկ ախտը սանձեցիր և նրա հայտնի գործերը խափանեցիր:

Ո՛ր, որ նեղեցիր ու հալածեցիր իմ մեջ եղած խռովարարին:

Ո՛ր, որ դեպի Քեզ իմ նախապարհը անբիծ հաստատեցիր:

Ո՛ր, որ իմ շավիղները դեպի Քեզ առանց սայթափելու պահեցիր:

Ո՛ր, որ դեպի Քեզ ունեցած իմ հավատը աներկմիտ պահեցիր:

Ո՛ր, որ Քո սուրբ գիտությունն ինձ սանձեցիր:

Ո՛ր, որ հատուցում ես յուրաքանչյուր արժանավոր գործի վարձը:

Ո՛ր, որ իմ հոգում դրեցիր ոչ մի ստացված՝ Քեզանցից ավելի պատվական

չհամարել:

Եվ արդ, Տեր իմ Հիսուս Քրիստոս, Քեզանցից ընդունած մատակարարությունը կատարեցի, ինձ արժանի արա Քո հանգստյանը Քո ողորմությունը շնորհելով ինձ, որն անփախուստ է և անհատ փրկություն:

Եվ իմ՝ Քեզ մոտ գալու ժամանակ թող ընկրկի հուրը, թող վանվի խավարը, թող տկարացա վիշտը, թող խամրի հեղուր, թող հանգի գեհեներ, թող ամաչեն չարի երեշտակները, թող երկնչեն դեկերը, թող ընդարմանա իշխանները, թող ընկնվեն զորությունները, թող կանգնեն աջակողմյանները, թող չմնան ձախակողմյանները, թող պապանձվի բռնաարկուն, թող զարեռնի սատանան, թող տոչորվի նրա սրտմտությունը, թող սուզվի նրա մոլորությունը, թող պատկառեն նրա տանջարանները, թող չարչարվեն նրա մանուկները, թող տկարացան նրա հարձակումները և թող տարակուսեն նրա բոլոր արմատները:

Եվ ինձ տուր ժերասիր ու անքոնադատ ավարտելի դեպի Քեզ իմ նախապարհը, վերցնել այն, ինչ խոստացար նրանց, ովքեր սրբությամբ ծառայեցին Քեզ և պարկեշտությամբ սիրեցին Քեզ:

Եվ ապա կնքելով իրեն ու ասելով, քե՛հու եղիր ինձ կես, Տեր իմ Հիսուս Քրիստոս, ընկողմանեց փոսի՝ մեջ, որտեղ հանդերձը տարածեց:

Եվ ասաց՝ խաղաղություն ձեզ, իմ եղբայրներ:

Եվ մինչդեռ ռաբաի էինք ու լաց էինք լինում, ավանդեց իր հոգին Քրիստոսի երանելի առաքյալն ու ավետարանիչը՝ Հովհաննես, ի փառս Ամենասուրբ Նորրորդության, որն օրհնյալ է հավիտյանս. ամեն:

Աշխարհաբարի վերածննդ

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱԳԱՀՅԱՆԸ

/Ճաշոց, վաղարշապատ, 1872, էջ 755-758/

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅՈՒ ԶՐՕՐՀՆՅԱՑ ԱՂՈԹՔԸ*

Օրինելով ես, Տեր Աստված ամենակալ, ամեն ինչում հզոր և սփանչեալագործ, որ ոչնչից և անկազմ, խավար անդունդներից ստեղծեցիր երկինքը, երկիրն ու ծովը, և Քու Հոգին շրջում էր ջրերի վրա:

Որ ասացիր՝ Քող լինի լույս, և համասփյուռ լույս եղավ, իսկ ակնարկովդ երկնքից վերև գտնվող ջրերը՝ գտնվեցին: Տարածեցիր երկնքի հաստատության վրա ջրեղեն կամարը և նրանց միջից ճառագայթել տվեցիր արեգակին, լուսնին ու աստղերին: Այս երեղենները ընթանում են ջրերի միջով և չեն շիջանում, քանզի Քեզ համար ամեն ինչ ենթարկվում է:

Դրեցիր երկրի հիմքերը ծովի վրա՝ պատրաստելով գետեր, ջրերը հավաքվեցին ծովում, և ցամաքը երևաց ողջ բուսականությամբ: Ծովը երկնեց, և մեծամեծ կետերն ու մանր ձկները նրանից առաջացան, իսկ տարատեսակ թռչունները՝ օդային վերին շերտերում: Երկիրը ծնեց կենդանի անասուններին և վայրենի գազաններին: Եղեմից աղբյուրներ բխեցրիր և գետերի քառակի քաժանումով երկրի չորս կողմը [ջրով] պատեցիր: Դու երկրի եռոյց ստեղծեցիր մարդուն և Քո ամենասուրբ փշմամբ կենդանություն տվեցիր և արևելում ընծայեցիր եղեմի պարտեզը՝ ամբողջ աշխարհը հնազանդեցնելով նրան: Իսկ նա օծի խաբեության պատճառով, որ իբրև մի տղայի խաբեց նրան և մատուցեց գիտության ծառի պտուղը, փառհից մերկանալով, կարկատուն տերևով պարուրված՝ արտաքսվեց դրախտից:

Սակայն Դու չանտեսեցիր Քո ծառային, այլ, գթալով նրա ժառանգներին, Քեզ ծառա վերցրիր Սեթին ու Ենովֆին, որոնք հանելի եղան Քեզ: Ենովֆին տեղափոխեցիր անմահություն և ամբարշտացած² Կայենին իր գավակներով տեղատարափ անձրևով ջնջեցիր, իսկ արդար Նոյին խաչանշան տապանով փրկեցիր ջրեղեղեղից: Նրա տասներորդ [սերնդից] պահպանեցիր Աբրահամին, որի եետ ուխտ եաստատեցիր՝ հանելով նրա գավակին եգիպտացիների երկրից: Մովսեսի գավազանով Կարմիր ծովը պատռեցիր և Իսրայելին անցկացրիր, իսկ այն գոռոզ փարավոնին ծովի ալեկոծությամբ կորստյան մատնեցիր, Քո ժողովրդին եղիմում տասներկու աղբյուրների ու յոթանասուն արմավենիների մոտ հանգստություն պարգևեցիր³, ցույց տալով նրանց Քո փառքի գործությունը: Եվ Սինա լեռան վրա մահախլապատ ամպերով և երացալտ փայլատակմամբ ու ահավորագուշ փողերով նրան լուսավոր պատգամներ տվեցիր մեծն Մովսեսի միջոցով: Երկնքից տեղացող հացով ու ֆաղցր մանանյով կերակրեցիր բյուրքյուրերի: Անջրդի պապաժից աղբյուր բխեցրիր և հագեցրեցիր ծարաված ժողովրդին: Հեսուի օրերում սփանչեալագործեցիր՝ Քո օրհնադիր երամանով

* Թարգմանությունը կատարվել է ըստ 1987թ. նրուսաղեմի հրատարակության «Հաշոց»-ի բնագրի:

¹ Բարսեղի ճառում «Եռուֆո որ ի վերու քան զերկինսն» և համանման մի շարք այլ արտահայտությունների աղբյուրը Աստվածաշնչի ՄՆՆԴ. Ա 7 հատվածն է: Համաձայն նրանով պայմանավորված աշխարհընկալման, երկնային մթնոլորտը մի տարածուն ծածկոց էր, որը քաժանում էր իրենից վերև և ներքև գտնվող ջրերը: Անձրևների տեղումը կապված էր այս ծածկոցի պատուհնի եետ:

² ամբարիշտ - քարույգ՝ Աստվածապաշտությունից հեռացած:

³ Տե՛ս Թվոց ԼԳ 9:

արգելելով Հորդանանի [հոսքը] և անցկացնելով սուրբ Տապանակը: Պատվիրեցիր ֆահաճանքի կանգնած տեղից տասներկու ֆար վերցնելով՝ կանգնեցնել Գաղգա-
ղայում, որոնք մինչև այսօր կան՝ իբրև վկա Քո երաշխի:

Հորդանանի հոսանուտ ջուրը ֆարակույտի նման կարծրացրիր և Երիփոխի ֆարե պարիսպը ջրի նման թափեցիր ու փլեցիր Քո խոսքով: Հետևե՛ց՝ անշարժացնելով արեգակն ու լուսինը՝ վանեց-ռչնչացրեց իր թշնամիներին և Իսրայելի որդիների սեփականությունը դարձրեց այն երկիրը, որտեղից ընտանեկան կաթն ու մեղրը: Բազում ուրիշ բարեգործություններ արեցիր մարդկային ազգի համար, իսկ օրերի լրումից հետո հայրական ծոցիցդ Քո Միածին Որդուն առաքեցիր, որ եկավ ու Սուրբ Կույսից մարմին զգեցավ և ելավ այն մոլորվածի համար, որին թշնամին հանեց կյանքի պարտեզից և չար գազանի նման հետապնդելով՝ մահարեք թույլներով վիրավորեց տեսակ-տեսակ ախտերով և ամայի ճանապարհներին ու դաշտերին ցիր ու ցան արեց:

Իսկ Քո բարերար Միածինը ֆաղցրածայն բարբառելով՝ ասաց. «Եկեք ինձ մոտ, ո՛վ բոլոր աշխատածներ ու բեռնավորվածներ, և ես կհանգստացնեմ ձեզ ֆաղցր լծով ու փոքր բեռով»⁴:

Ապա իր բարերարության շնորհով բոլորին համախմբելով՝ տարավ Հորդանան գետի մոտ և տեսավ ջրերի մեջ բնավորված առեղի վիշապին, որ կամենում էր կլանել մարդկանց, իսկ Հորդանանի հորդափոս ալիքները հանդարտ կանգնել էին⁵, ինչպես ասում է Հորը:

Իսկ Միածին Որդիդ ինձն իսկ իր մեծ գործությամբ ջրերի մեջ գարշապարներով ոտնակոխ անելով, թշվառացրեց այն մեծ գազանին, ըստ կանխասաց մարգարեի, թե Դու վիշապի գլուխը շախշախեցիր ջրերի վրա⁶:

Այնտե՛ղ Դու հայտնեցիր Քո Աստվածությունը: Հայր Աստված ծայնեց. «Դա է իմ սիրելի որդին», իսկ լուսափայլ Հոգիդ աղավակներա իջավ: Ուստի և առաջընթաց կարողանալ՝ Հովհաննես Մկրտիչը, մատնացույց արեց. «Ահա Աստծու Գառը, որ բռնում է աշխարհի մեղքը»⁷:

Ապա ամենքին հրամայեց ջուրը մտնել, ոտնակոխել թշնամու գործությունը և, բալորին լվանալով մեղքերի ախտից, նորափեսուր գարդարեց և կնից խաչանիշ դրոշմով՝ լինելու համար մի հոտ և մի հովիվ, առանձնացրեց իր Սուրբ Կաթողիկե եկեղեցու գավիթներում:

Մարգարեներով ամրացրեց, առաքյալներով պարսպեց, մարտիրոսներով պսակագգեստ դարձրեց, ավետարանական խոսքերով զվարնացրեց, որպեսզի ամենքը խաղաղության մեջ վայելեն:

Երիտասարդներն ու կույսերը, ծերերն ու մանուկները, ամեն ոք ցնծությամբ և ուրախությամբ գոհություն պետք է մատուցեն Աստծուն, քանզի այսօր աստվածային ու երկնային, սուրբ և պատվական է այս տոնը, և Սուրբ Հոգու աստվածային ճառագայթների լույսը այսօր ծագեց պայծառացած աշխարհում:

Այսօ՛ր Աստված մաքրեց ջրերը, լուսավորեց մարդկանց և երկնայիններ դարձրեց:

4 Տե՛ս Հեսու 9:

5 Տե՛ս Մատթեոս ԺԱ 29:

6 Տե՛ս Հոբ Խ 23:

7 Տե՛ս Սաղմ. 24 13:

8 Տե՛ս Հովհ. Ա 29:

Այսօր երկիրը համապատասխանաբար նոր երկինք եղավ, քանզի Աստուծո՛ր Որդին երկրի վրա երևաց և մարդկանց հետ շրջեց և գալով Հորդանան գետի մոտ՝ սրբեց ջրերը և ջրի սրբությանը ու հազու կենդանությանը լուսավորեց մարդկանց:

Այսօր Աստվածային Երրորդությունը երկրի վրա երևաց, և մարդը երկիրը լի է նրա փառով:

Հայրը երկնքից վկայեց. «Դա է իմ սիրելի որդին, որին տվեցի հաճությունս»⁹, իսկ Սուրբ Հոգին աղավանհեցա՛յ իշով նրա վրա:

Այսօր՝ աճմարմին գործերի վերին գործությունները երկրի վրա սպասավորեցին մեր Քրիստոս Աստծուն, իսկ երկնքում փառաբանություն մատուցեցին Հորը:

Այսօր, ո՛վ Քրիստոսի հավատացյալ նոր ժողովուրդ, եկե՛ք ցնծա՛նք և այս երկնային ու սուրբ տունը հրեշտակների հետ տոնենք:

Այսօր մեզ հասավ լուսավոր այս տոնի ժամանակը, և հրեշտակները մարդկանց հետ տոնում են, իսկ Սրբոց դասերը բազմապատկում են այս օրվա արժեքը:

Այսօր Սուրբ Հոգին էր շնորհներով սրբեց ջրերը՝ աջակցելով (Որդուն):

Այսօր երկինքը շնորհների ցողը ցնծությանը վերացողեց, և այսօր անշեշ արեգակը ծագեց ամբողջ աշխարհը լույսով ողողելով:

Այսօր լուսինը մեծ լույսով ծագեց՝ և նրա հետ աշխարհն է պայծառացում:

Այսօր լուսազգեստ լուսատուները ուժգին փայլատակմամբ տեղեկեցրեց քարեխնամեցին:

Այսօր աստվածային ամպերը և երկնային ցողերը մարդկանց վերացողեցին:

Այսօր ծովերն ու ջրերի ժողովումները տարածվեցին Տիրոջ ոտների առջև:

Այսօր անհրեալությամբ երևաց, և անտեսանելի տեսանելի դարձավ, որպեսզի մեզ էրեքն տեսնողներ դառնի:

Այսօր Աննդն էր լինելության մեջ խորհրդով հաստատվեց:

Այսօր՝ անխոնարհելի գլուխը էր ծառայի առջև խնամարեց, որպեսզի մեզ (մեղքի) ծառայությունից ազատի:

Այսօր լեռներից ծառայեցնելու համար խոնարհեցրեց, գետերը ծով դարձրեց, և ջրերի ամբողջ բնաշխարհը օրհնվեց ու սրբվեց:

Այսօր առաջընթաց մարգարեն կանգնեց նրա առջև, ով թառնաց աշխարհի մեղքերը:

Այսօր նահատամարտի մեջ՝ մտավ պատերազմների մեջ հզորը, որպեսզի ընկղմի հակառակորդ վիշապին:

Այսօր (Աստվածորդին) կամովին եկավ և ամբողջովին լուսավորեց նրանց, ովքեր նրա առջև կանգնելու փափագ ունեին:

Այսօր մարգարեն, կանգնելով խմբագործողի¹⁰ առջև, դողալով տեսավ Աստծուն՝ եկած մարդկանց մոտ:

Այսօր Աստվածաշունչը բռնեց գլխին, անեղ ու հրակեզ Աստված մոտեցավ, որպեսզի խափանի ապականության տարածումը:

Այսօր ծառան երկյուղածությանը կանգնեց Տիրոջ առջև, քանզի Աստված եկել էր աշխարհ:

Այսօր տեղացին Սուրբ Հոգու շնորհները, և բոլոր արարածները դրանով լցվեցին:

⁹ Տե՛ս Մարկոս Ա 11:

¹⁰ Խմբագործող - ամենքի արարիչ, ստեղծող, Աստված:

Այսօր մեղեքից ազատը եռօրարար աշխարհն առավ իր խնամակալության տակ:

Այսօր ծովի աղետամ ջրերը փաղցրահամի վերածվեցին մեր Մեծն Աստծու կողմից:

Այսօր սնունդ և ունայն կուտեքը ծախողվեցին ու ասպարեզից վերացան. իսկ մարդկային բնությունը, ազատվելով մեղքի ծառայությունից, եամարձակություն ստացավ:

Այսօր Աստծու երևալուն պես աշխարհի մառախուղը սրվեց ու մաքրվեց:

Այսօր ջրերը աշխարհի փրկության միջոց եղան:

Այսօր Աստծու հայտնվելով բոլոր արարածները հառազաթազգեստ երևացին:

Այսօր դրախտը բացվեց մեր այս բնության առջև, և մարդիկ արդարությամբ գնեցին հավիտենական կյանքում:

Այսօր, եին տրամությունից վերափոխվելով, որպես նոր Իսրայել փրկվեցին:

Այսօր Աստծու արհայությունը ծառանգեցին, զի Տիրոջ արհայությունը վախճան չունի:

Այսօր մենք ևս գոչելով աղաղակում ենք ու ասում. «Մեծ ես Դու, Ով Տեր, և սփռեցի ես Քո գործերը, և ոչ ոք խոսում այնքան լեցուն չէ՝ օրհնելու համար Քո հրաշքերը, փառքի Քո ամենակարող գործությամբ ստանձնել ես բոլոր արարածների խնամակալությունը և նախախնամությամբ կարգավորում ես աշխարհը»:

Դու չորս տարբերից ստեղծեցիր աշխարհը և չորս եղանակներով տարվա ամբողջությունը պսակեցիր:

Քեզից դողում են իմանալի՝ գորությունները, արեգակն է Քեզ օրհնում, լուսինը փառավորում է Քեզ, աստղերի բոլորը Քեզ են բարբառում, լույսը Քեզ է հնազանդվում, Քեզից անդունդներն են սարսում և աղբյուրները Քեզ են ծառայում:

Դու տարածեցիր երկինքը իբրև կամար և կառուցեցիր երկիրը՝ հաստատելով ջրերի վրա: Դու պատրաստեցիր ծովը ավազով, Դու կենդանությանը օդը լցրիր, ահեղ ես Դու, և ո՞վ կարող է Քո առջև կանգնել:

Հրեշտակային գորությունները Քեզ օրհնում են, և հրեշտակների դասերը՝ եկրպագում: Վեցթևյան սերույթները վեր բարձրանալով՝ Քո անմատույց լույսով են պարփակվում-ծածկվում, փառքի Դու ես Աստված՝ լինելով անպարագրելի¹¹, անհառելի ու անպատմելի:

Եկար երկիր, ծառայի կերպարանք առար՝ լինելով մարդու նման և նրա կերպարանքով, փառքի, Ո՛վ մարդասեր Տեր, Քո բազում գթությանը չէիր կարող հանդուրժել՝ տեսնելով մարդկային ազգին բանասարկուից բռնադատված, այլ եկար և փրկեցիր մեզ:

Խոստովանում ենք Քո շնորհները, փառքում ենք Քո ողորմությունները, չենք քաֆցնում Քո քարեգործությունը:

Մեր արարածական բնության սերունդներին ազատեցիր, կուսական արգանդը սրբեցիր Քո անհառելի Մեղեքի շնորհով:

Բոլոր արարածները օրհնում են Քեզ, հայտնված Բանդ Աստված, փառքի Դու, Աստված, երկրի վրա երևացիր և մարդկանց մեջ շրջեցիր:

11 Իմանալի - աննյութական, հոգեղեն:

12 Անպարագրելի - անսահման, անձիր:

Դու ես Հորդանանի հոսանքը սրբեցիր՝ երկնից առաքելով Քո Սուրբ Հոգին, և նրանում բնավորված վիշապի գլուխը ջախջախեցիր:

Իսկ այժմ աղաչում եմք Քեզ, Ով մարդասեր Տեր, առաքիլ Սուրբ Հոգիդ այս ջրերի վրա և օրհնիր ու սրբիր սա և սրան Հորդանանի շնորհը տուր՝ դարձնելով օրհնության աղբյուր, անապականության պարգև, մեղքերի ջնջում, հիվանդների բժշկություն, գարնունների վիշապների խորտակում, ախտաժանեների¹³ առողջություն, անհաղթելի թվացող [չար] ուժերին հակառակորդ՝ լցված հրեշտակային գործությամբ:

Քանզի Դու ես, Տեր Աստված, որ անապատում դառնահամ ջրերը Մովսեսի գավազանի միջոցով փոխարկեցիր և Քո ծարավ ժողովրդին արբեցրիր:

Դու ես, որ Նդիայի միջոցով երով ու ջրով Իսրայելին ազատեցիր Բաբելոնի ծառայությունից:

Դու ես, որ դառն ու անպիտիկ այն ջրերը Նդիսի ժամանակ աղով գործածելի դարձրիր, իսկ ամուլ ժողովրդին բժշկեցիր:

Այժմ հենց Դու ինքդ, Ով Տեր, Սուրբ Հոգուդ միջոցով մոտեցիր մեզ և օրհնիր այս ջուրը, որպեսզի սա ոչ միայն դառնա միջոց տների շնություն, հիվանդների բժշկություն, հոգիների և մարմինների փրկության համար, այլև օգտակար լինի ցանկացած կարիքի համար, քանզի Դու ռդորմած և մարդասեր Աստված ես:

Թող փախչեն սրանից (ջրից) այն անձինք, ովքեր Քո ծառաների դեմ չարք են խորհում: Քո մեծ, փառավորյալ ու սքանչելի անվանքն եմք դիմում, Ով Տեր, և Քեզ՝ Հորդ, Որդուդ և Սուրբ Հոգուդ մոուցում եմք օրհնություն և փառք, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Աստված Կենդանի, որ էն և ես և էդ, որ անսկիզբն լինելով և Ասվածային իշխանությամբ պատմառ դառնալով բոլոր էակներին, բոլորին գոյություն պարգևեցիր և ամեն ինչ ստեղծեցիր:

Ով Աստված, ստեղծիչ ամենայնի, որ ջրերի վրա փայլելով, հայտնեցիր Քո Սուրբ և Կենդանարար Հոգին, իսկ Հորդանան գետում՝ գործությունդ ու փառք:

Նախակարապետն ու մարգարեն, տեսնելով աղավաղ կերպարանքով Քո էակից Սուրբ Հոգուն, աղաղակեց՝ ասելով Քո մասին. «Ահա գառն Աստծու, որ քառում է աշխարհի մեղքը»:

Որ ընթացար ջրերի վրայով և սրբեցիր այն Քո սուրբ տոնահեռներով, իսկ այժմ, Ով Տեր Աստված մեր, օրհնի՛ր այս ջրերը՝ ծառայեցնելով այն Քո ծառաների մաքրության համար: Վանի՛ր սրանից բոլոր վնասակար ու չար բաներն ու ախտերը և սատանայի ամբողջ բռնությունը: Նաև հաստատի՛ր սրա մեջ ամենագոր Սուրբ Հոգուդ շնորհները՝ բժշկություն, առողջություն և Ամենաչարի դեմ հաղթության կարողություն:

Եվ մենք ամենքս սրանով թող արժանանանք Քո օգնությանը և Քո ընդունելությանը, բժշկությանդ, օրհնությանդ ու սրբությանդ և անդադար պիտի փառավորեմք Հորդ, Որդուն և Սուրբ Հոգուն՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԳՐԱԲԱՐԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝
ԱՐՇԱԿ ԱՐԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

¹³ Ախտաժան - հիվանդ, ախտահարված:

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՍ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ

Կյանքի զգալաբանությունները հաղթահարելու համար մենք հաճախ կարիքն ենք զգում այնպիսի անձնավորությունների, որոնք մեզ համար կլինեն առաջնորդ, ուղեցույց, ծնող, հայր, հովանավոր, խոստովանահայր: Թե ինչպիսի անուն կտա այդպիսի անձնավորությանը մեզանից յուրաքանչյուրը՝ ինքը դիտի, սակայն առանց այդ հովանավոր անձի ապրելը գրեթե անհնար է: Այսպես, թեև մենք դիտենք մաքուր կյանքով ապրելու սկզբունքները, սակայն կարիքն ունենք տեսնելու, որպեսզի կարողանանք կյանքի կոչել մեր գիտեցածը: Աչքի գիտությունը շատ ավելի մեծ է, քան մաքիւնը: Ըստ այսմ՝ Աստված պետք է մարմնանար, որպեսզի մարդը տեսներ, և երբ Տիրոջը տեսնողները ժամանակ առ ժամանակ տարբեր պատճառներով հեռանում էին կյանքից, որդեցիին դրին հանձնել աչքի փորձառությունը: Աստված էլ իր հերթին Հիսուս Քրիստոսի կյանքը դրեց տարբեր անձնավորությունների մեջ, որպեսզի մարդիկ նրանց տեսնելով չկորցնեն փրկության գիտակցությունը: Այդպիսի անձնավորությունները կոչվեցին Սրբեր: Նրանք են Եկեղեցու սյուները, որոնցից մեկն էլ Սուրբ Եփրեմ Խուրի Ասորին է: Զորորդ դարի լուսատուներից մեկն էր նա, որը վայելում էր Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի խնամակալությունը: Ապրել և գործել է 306-373 թվականներին: Մծբնի Հայրապետը շուտով նրան է հանձնում քաղաքի նշանավոր դպրանոցի տնօրենությունը: 363 թվականին պարսիկները գրավում են քաղաքը, և Սուրբ Եփրեմ Ասորին, քնակչության հոծ բազմության հետ մեկտեղ, գաղթում է Եգիպտոս, ուր դասավանդել է Պարսից դպրոցը՝ ում: Որոշ շրջան նա անց է կացնում տեղի լեռներում: 370 թվականին ճանապարհ է ընկնում դեպի Կապադոկիայի Կեսարիա՝ հանդիպելու Սուրբ Բարսեղ Կեսարացու հետ: Հյուրամեծար Կեսարիայի Հայրապետը նրան սարկավազ է ձեռնադրում: Իրեն այդ կոչմանը անարժան համարող Սուրբ Եփրեմը վերադառնում է Եգիպտոս: Գիտենք, որ իր կյանքի վերջին շրջանում նա, Սուրբ Գրիգոր Լուսավորչի նման, տրվել է մենակեցությանը և ճշմունքություններին:

Աստվածային իմաստության անհուն փափագով նա կարողացավ քրիստոնյա Եկեղեցուն ընծայել իր մեկնությունների անգնահատելի ընտրանին: Գրել է Հին և Նոր Կտակարանների մեկնություններ, հայտնի է իր ճառերով, ներդրողներով, քարոզներով: Նրա թողած մատենագրական գրեթե ամբողջ ժառանգությունը պահպանվել է հայկական հնագույն թարգմանություններում:

Սուրբ Եփրեմ Ասորուց ավելի հաճախ ոչ թե դավանանքի բուրմունքն ենք առնում, այլ աղոթքի անուշահոտությունը: Այդպիսի աղոթքների թվին են պատկանում նրա «Զորաւոր» կոչված աղոթքների շարքը¹, ինչպես նաև «Յորդորակ ապաշխարութեան» գրքուկը: Այս փոքրիկ գրքուկի երկու հրատարակությունից ենք մենք ոգտվել առաջին՝ 1837 թվականին Օրթոդոքս Ռեֆորմացիոն ընդհանուր հոգևորականությանը անվամբ աղոթագրքից, որի մեջ գրված է, որ գիրքը մինչ այդ տպված է եղել, երկրորդը՝ Վազարչապատում, 1889 թվականին: Այսօր մեզ առիթ է ընձեռվել այն արևելահայերեն թարգմանությամբ ներկայացնելու Հայ Եկեղեցու «Հոգևոր ինչպես նշված է առաջին օրինակում: Եփրեմ Ասորու անգնահատելի աղոթությունը այս աղոթամատյանով մեզ

¹ Տե՛ս «Գոմեմոր», Գ, էջ 151:

հնարավորություն է տալիս լսելու Տիրոջ ժայնը, որը մեզ համար ապաշխարության կոչ պետք է հանդիսանա: Կարծես Հիսուս ինքը կանգնած լինի մեր առջև, նա եկել է մեզ մխիթարելու, մեղքերի ծանրության տակ կքածներին ապաշխարության քաղցր ճանապարհը ցույց տալու: Աստված մեկ աղերսում է, մեկ՝ սպառնում: «սա մեզ համար անհասկանալի է, սակայն սերն է, որ ամեն ինչ հասկանալի է դարձնում: Հասկանում ենք, որ իր սպառնալիքը մեր փրկության համար է, ինչպես նաև՝ աղերսը: Եվ այս ամենից դիտակցում ենք, որ Աստված մարդու համար պատրաստ է ամեն ինչի, ինչպես նաև մարդը պետք է պատրաստվի որոշակի զոհաբերությունների՝ մոռաց գործնելով ապաշխարության դռներից ներս:»

ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐՈՒ ՎԱՐՔԸ*

Տիեզերքի սուրբ հայրն ու Վարդապետ Եփրեմը այսպիսի պանծալի գովումներում է հիշատակվում Սուրբ Հովհան Ոսկեբերանի կողմից: «Այն մեծ Եփրեմ Ասորին թմրածներին զարթուցիչ, տառապյալներին՝ մխիթարիչ, երիտասարդներին՝ հրահանգ ու խրատ, միայնակացներին՝ հայելի, ապաշխարողներին առաջնորդ, տեղ և նիզակ հերձվածողների աչքում, հյուրընկալ առաքյալների և բնակարան ու օթեան Սուրբ Հոգուն: Իսկ Սուրբ Գրիգոր Նյուսացին, որ ներբողական ճառով դրեց մեծ Եփրեմի պատմությունը, ասում է, թե նրա գովքը և վարքի էությունը այս է. «Գործնականն ու տեսականը, որոնց հետևում են առաքինության մասերը. հավատք, հույս, սեր, առ Աստված բարեպաշտություն, խոկում աստվածային տառերի մասին, հոգու և մարմնի մաքրություն, արտասուքի ամենօրյա հորդում, առանձնակեցություն, տեղի հաճախակի փոփոխում, փախուստ չարից, անդադար վարդապետում, անձանձրույթ աղոթք, անսահման պաշտ և տքնություն՝ դեսնախառնությունում ու խստամբերությունում հանդերձ, կամավոր աղքատություն՝ աննկարագրելի խոնարհությունում, գերմարդկային գործազթություն և աստվածային նախանձախնդրություն աստվածապաշտության և կրոնի դեմ բորբոքվածների նկատմամբ: Եվ, պարզապես, ամեն ինչ, որոնցով մարդը ներկայացնում է Ասածո պատկերը՝ Այսպիսի բաներով է զարդարված մեր գովասանքների հայրը»:

Արդ, մեր ասած սքանչելի Եփրեմ Խուրի Ասորին, ասորերեն «քոռե», արաբերեն «խառի» կամ «առի», այսինքն «վերծանող» կամ «ընթերցող», ասորի ծնողների որդի էր՝ Նրա հայրը Մծբին քաղաքից էր, մայրը՝ Ամիգից, ինքը Եղեսիայում է ծնվել և Մծբինում մեծացել: Մնվել է Կոստանդիանոս Մեծ կայսեր թագավորության սկզբում և ապրել մինչև Թեոդոս Մեծի գահակալության սկիզբը (306-373 թթ.):

Թե ինչպիսի՞ մեկն էր, հայտնեց Աստված նախագուշակ տեսիլքով, երբ Եփրեմի պատանեկության ժամանակ երեացել է նրա ծնողներին, իսկ ուրիշներն ասում են, թե հենց իրեն՝ Եփրեմին է երեացել, և հայանի է, որ նրա պատանեկության ժամանակ է եղել իսկ Նյուսացին այսպես է գրում: «Պատմվում է, թե ինքն իր մասին հետևյալն է ասում. «Պատանեկության ժամանակ մի գաղտնի խոր-

* Աուրբ Եփրեմ Խուրի Ասորու ներկայացվող վարքը վերաշարադրված է համաձայն Հ. Մկրտիչ Ավգերյանի «Լիակատար Վարք սրբոց» 1810 թ. և Շենորհ արքեպ. Գալուստյանի «Համաքրիստոնեական սուրբեր» գրքի:

հուրդ պատահեց ինձ հետ, քանի որ թվում էր ինձ, թե իմ լեզվից ծնում էր մի պողպալից որթի ընձյուղ և այնքան էր ծափալվում, մինչև երկրի երեսը լցնելը, եվ երկնքի բոլոր թռչունները դալիս և ուտում էին նրա պտուղներից, բայց ընձյուղը, ինչքան էլ թռչունները պոկում էին նրա պտուղներից, ավելի ողկուղալից էր դառնում»:

Այլ տեսիլք էլ էր եղել նրա մասին, ինչպես բոլորն են պատմում, մի անապատականի կողմից, որը Նյուսացին այսպես է ներկայացնում. «Վկայեց և մի կորոժաքիթ մարդ, թե՛ մի տեսիլք տեսա Եփրեմի հետ կապված. Հրեշտակները բաղձությունները երկնքից իջնելով մի մատյան ունեին իրենց ձեռքերի մեջ, դրված ներսից ու դրսից, և նրանք միմյանց ասում էին. Ո՞վ կկարողանա վերցնել այս մատյանը՝ նրանցից մեկն ասում էր, թե՛ ժամանակի երևելիներից այս մեկը, ուրիշը՝ այն մեկը, և նրանք ձայն լսեցին, որ ասում էր. Դրանք, որ ասում էք, սրբեր են, սրբեր և Աստծո պաշտոնյաներ, սակայն այդ գիրքը չեն կարող առնել իրենց ձեռքերի վրա: Այնուհետև նրանք էլ միաբանվեցին երկնավոր ձայնին և ասացին. Ոչ ոք չի կարող վերցնել այդ մատյանը, բայց միայն Եփրեմ Ասորին. Հետո այդ անձնավորութունը տեսավ, որ երկնավոր Հրեշտակները տվեցին այն Եփրեմին, կամ ինչպես ուրիշներն են ասում՝ Հրեշտակը գիրքը գցեց Եփրեմի բերանի մեջ և նա կուլ տվեց այն, որից հետո նրա բերանից աղբյուրի նման Սուրբ Հոգու շնորհներ ըխեցին»:

Իսկ երանելիի դարձի օրինակն անբարո կյանքից դեպի ղգապտության և կրոնավորության լավագույն կյանքը ճոխ ձևով պատմվում է նրա կողմից իր խոստովանության և ինքնաձգվածան գրքերում, որը և ավելի պարզ ձևով պատմեց եղբայրների առջև նրանց օգտակարության համար.

- Մինչ մանուկ էի, ասում է, անհանդարտ բարձով, ուղարկվել էի իմ ծնողների կողմից քաղաքից դուրս ծառայության, և մի նրին՝ տեսա Հղի՝ ծննդաբերելու մոտ, որը արածում էր տնտառում. Եվ նրա հետևից ընկնելով քարաձուլությամբ քնեցի դեպի անտառի ներսի կողմն ու այնքան հարվածեցի անասունին և այս ու այն կողմ ստիպեցի վազել, մինչև կիսամեռ ընկավ դեսոնին, իսկ գիշերվա մեջ զագաններին կերակուր դարձավ. Երբ երինջի աղքատ տերը հարցնում էր ինձ, թե՛ արդյոք տեսե՞ր ես որևէ տեղ նրան, ես պատասխանի փոխարեն վատաբանեցի նրան չարաչար խոսքերով:

Այնպիսի մի ամիս և կրկին գործով ուղարկվեցի քաղաքի արվարձաններից մեկը. Բայց երկնքի տակ շրջելու պատճառով չկարողացա տուն վերադառնալ, որովհետև օրը տարաժամել էր. Այդուեղի Հովիվները ստիպեցին ինձ իջևանել նրանց հետ անտառում. Եվ ահա, գիշերվա մեջ գայլերը կամ վայրի գազանները ոչխարների հանգստանալու ժամանակ հոշոտեցին և ցիր ու ցան արեցին նրանց, Երբ հովիվներն արթնացան, բռնեցին ինձ և սացին.

-Ո՞վ արեց այդ վնասը, ի՞նչ ոչ դու, որովհետև միաբանվեցիր գողերի հետ, թույլ տալով, որ մեր ոչխարները դողանան:

Ես երգվեցի նրանց առջև, որ մեղավոր չեմ, սակայն նրանք չհավատացին իմ խոսքերին, այլ կապեցին և տարան-մատնեցին քաղաքի դատավորի ձեռքը. Այնուհետև ինձ բանտ գցեցին, որտեղ երկու բանտարկյալներ կային, մեկը որպես մարդասպան, իսկ մյուսը՝ շնացող. Բանտում նրանց հետ մնացի մի շաբաթ (ըստ ոմանց՝ քառասուն օր). Գիշերային քնի ժամանակ տեսա, թե ինչպես ինձ մոտ եկավ մի գեղեցկադեմ երիտասարդ և խոնարհաբար ինձ ասաց.

-Եփրեմ, ինչո՞ւ ես դու այս բանտում:

Եվ երբ վախեցա նրա դեմքից՝ ասաց.

-Մի՛ երկնչիր, այլ պատմիր քո բանտարկության պատճառը:

Ես պատմեցի նրան, ինչ որ եղել էր, ու ասացի.

«Անպարտ եմ ես, Տե՛ր, և հովիվների անիրավ զրպարտանքով եմ այս կապանքների մեջ»:

Իսկ նա ժպտաց՝ ասելով.

«Գիտեմ, որ անպարտ ես այդ բանից, բայց գիտեմ և այն, թե ինչ արեցիր, այն աղքատի, երինջի հետ: Եվ արդ, հասկացի՛ր, որ Աստծո առաջ անիրավություն չկա, այլ Տիրոջ դատաստանները մեծ խորություն ունեն: Այդ կտեսնես և այն մարդկանց վրա, որոնք քեզ հետ բանտում են: Հարցրու նրանցից և կհասկանաս: Այս ասելով տեսիլքով հայտնված երիտասարդը անհետացավ»:

Իսկ ես օրը բացվելուն հետ հարցրեցի պատժվածներին իրենց կրած տառապանքի մասին: Նրանք ասացին.

«Սուստ վկայություն մեզ բանտ գցեցին»:

Եվ իրապես նրանք չէին գործել այն հանցանքները, որի համար բռնվել էին, Ասացի նրանց.

«Արդյոք առաջ չե՞ք գործել այլ հանցանքներ»:

Այն ժամանակ նա, որ որսկես մարդասպան էր բռնված՝ ասաց.

«Այս գիտեմ, որ օրեր առաջ տեսել եմ մեկին, որի ընկերը նրան չարությամբ կամրջից գցեց գետի մեջ, իսկ ես կարող էի օգնել նրան ու ազատել, սակայն զանց առա»:

Իսկ մյուսն ասաց.

«Հիշում եմ և ես իմ հանցանքը, որ գործեցի երկու տարի առաջ, երբ երկու եղբայրներ ցանկանում էին իրենց քրոջը զրկել ծնողական ժառանգությունից: Նրանք խոստացան ինձ տալ Հիսուս դահլիճան, որպեսզի վկայեմ, թե նրանց քույրը պոռնկացել է: Եվ ես սուստ վկայեցի, որի պատճառով մեծ անիրավություն եղավ»:

Հարցրին և նրանք ինձանից, և ես նույնպես պատմեցի նրանց իմ առաջին հանցանքը: Այդ բանից հետո դատավորը քննեց նրանց երկուսին ու ազատեց, իսկ ես բանտում միայնակ մնացի քառասուն օրեր, մինչև եկան երեք այլ հանցավորներ և սրանց էլ երեսուն օր բանտակից եղա: Այդ ընթացքում, քնի ժամանակ ինձ երևաց երիտասարդը, որին առաջին տեսիլքում տեսել էի, և ասաց ինձ.

«Իմացի՛ր, թե ովքե՛ր են քո երեք պատժակիցները: Արդ, ուշադիր եղիր սրանց նկատմամբ կատարված Աստծո դատաստանին, որովհետև երկուսը նրանցից այն եղբայրներն են, ովքեր չարախոսեցին իրենց քրոջ դեմ՝ նրան ժառանգությունից զրկելով, իսկ երրորդը նա է, որ իր ընկերոջը գցեց գետը և մի ուրիշին էլ սպանեց»:

Երբ զարթնեցի, հարցրեցի բանտարկվածներին իրենց հանցանքների մասին, և նրանք պատմեցին ինձ իրենց արածները, իսկ ես իմը՝ նրանց, Եվ ասացի.

«Աստված մեկն է, որը սքանչելի գործեր է կատարում»:

Մենք սկսեցինք լացել՝ սպասելով ավարտին: Երբ դատավորները նրանց քննեցին, մահվան դատալծիկ կայացրին. կտրեցին երկու եղբայրներից ամեն մեկի աջ ձեռքը, որից հետո կախաղան հանեցին, իսկ երրորդին կտրեցին երկու ձեռքերը և նրան էլ կախեցին: Այնուհետև դահլիճները ինձ էլ տարան ատյան: Հանելով ինձանից իմ հանդերձները, ցնցոտիներ հագցրին ու այդպես մերկ կանգնեցրին դատավորի առջև, իսկ ես դառնապես լացում և աղաչում էի Աստծուն՝ ասելով.

«Տե՛ր Ամենակալ, փրկիր ինձ վտանգի վշտից և ես կլինեմ միայնակաց, որպեսզի արժանի լինեմ քեզ ծառայելու»:

Երբ դատավորը հրամայեց ինձ կապել չորս կողմից և հարվածել

արջառաջիւմ², նրան ասացին, որ ինձ պահի առաջնի ալ օրվա համար, քանի որ ճաշի ժամն էր Այդպես չլիցալակալ ինձ բանտ նստեցրին և թողեցին ևս քսանհինգ օր Այնուհետև երրորդ անգամ երևաց ինձ տեսիլք ու ասաց-

-Հասկացա՞ր Աստոծո արդար դատաւարութիւնը:

Ես արտասովորից ալքերով պատասխանեցի-

-Այո՛, Տէ՛ր, սակայն խնդրում եմ քեզ, որովհետև երեք անգամ ինձ այցելու-թյան արժանացրիր, ազատի՛ր ինձ, որպէսզի արժանի լինեմ ծառայելու Աստծուն և դառնալու կրօնավոր:

Իսկ նա ժպտալով ասաց-

-Պետք է, որ դու զգոն լինեիր և բանտ չմտնեիր, արդ, դու քո ստահակութիւնով ես մտել բանտ, իսկ ես ի՞նչ կարող եմ անել քեզ, բայց մի՛ երկնչիր, շուտով ազատութիւն կ'իյնի քեզ:

Այս խոսքերից հետո անցան հինգ օրեր, և եկավ այլ դատաւոր, որը ճանաչում էր իմ ծնողներին: Նա ութերորդ օրը քննելով ամբաստանութիւնը, որ իմ հանդեպ էր, արձակեց ինչպէս անպարտ: Այնուհետև նույն ժամում իսկ լեռ բարձրացա՝ վանական հայրերի մոտ՝ կամենալով դառնալ կրօնավոր:

Երանելի Եփրեմը պատմեց ի լուր եղբայրների՝ այս ամենը, որոնք այլ հանգամանքներով հանդերձ ընթերցում ենք նրա գրքերում:

Ըստ վկայութիւնների ինքը՝ Եփրեմը, պատանեկութիւն ժամանակ է մկրտվել Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի կողմից, որին աշակերտեց նրա ամբողջ կյանքում և որի հետ էլ մասնակցեց Նիկիայի Սուրբ ժողովին, սակայն հայրերի թվում չհամարվեց, քանի որ Սուրբ Հակոբի պաշտօնյան էր միայն և նույնիսկ սարկավազ չէր: Իսկ ծերը, որին աշակերտեց առաջին անգամ Մծբնի լեռնե-րում, կամ Սուրբ Մարուգեն էր, կամ՝ նրա գործակիցներից մեկը: Ասորիները Սուրբ Եփրեմի աղոթքներին են ընծայում Մծբն քաղաքի սբանչիկ ազատումը Շապուհ արքայից, որի մասին գրված է Սուրբ Հակոբի վարքի մեջ:

Բանսարկուն նախանձելով Սուրբ Եփրեմի առաջադիմութիւնը, չար զրպարտութիւն բերեց նրա վրա, քանզի ոմն համանուն Եփրեմ, որը սարկավազապետ կամ եկեղեցապան էր Մծբնում չարի գործիք դառնալով մի իշխանի դատեր հետ, շնանալով այսպիսի խոսքեր դրեց նրա բերանում, որ երբ իմանա նրա հայրը, ասի, թե Եփրեմ՝ Խուրին, այսինքն՝ ընթերցողը գործեց այս չարիքը ինձ հետ: Եվ նա արեց նրա անօրեն խորհրդի համաձայն: Այս բանը լսելով Սուրբ Հակոբ եպիսկոպոսը մեծապես խռովվեց, մանավանդ որ միշտ հոգով տեսնում էր, ինչ որ լինում էր, սակայն այս խորհուրդը ծածկվեց նրանից, որի համար սկսեց մեղադրել նրան, իսկ Եփրեմը իր խոնարհութիւն պատճառով հանձն առավ հանդիմանութիւնն ու ապայախաբութիւնը, որից հետո Սուրբ Հակոբն իմացավ նրա անմեղութիւնը: Տերն այսպես հայտնեց.

Երբ աղջկիկ ծննդաբերեց, աղջկա հայրը վերցրեց երեքօրյա մանկանը և բերեց եկեղեցի՝ Եփրեմի մօտ, ու ասաց.

-Վերցրու քո որդուն և տար՝ պահիր:

Երբ որով պարզամիտներ այս բանը տեսան՝ դայթակղվեցին, իսկ Սուրբը Աստծո հոգով ընթանալով, վերացնելու համար դայթակղութիւնը, վերցրեց երեխային իր գիրկն ու եկեղեցու առջև կանգնելով ասաց նրան.

-Մանուկ, քեզ եմ ասում, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, բաց քո բերանն ու ասա, թե ո՞վ է քո հայրը:

² Արջառաջիւմ-արջառի ջիւ, ցլի խիստ շորացած ջիւ, որը ոգտագործում են պանահարելուց:

Այնուհետև բացվեց երեխայի քերանը, պատասխան տվեց բարձր ժայռով ուսաց.

«Եփրեմն է իմ հայրը, բայց ոչ նա, ով գրկել է ինձ:

Այս վկայությունը տալով մանուկը մահացավ: Այն ժամանակ աղջկա հայրը առաջնալով ծնկի եկավ Սրբի ոտքերի առաջ և թողություն էր խնդրում նրանից բոլորի հետ հանդերձ, իսկ նա խոնարհություն մարմնավորեց օրհնում էր, ամենին ինքն օրհն է մեկի հանցանքը չհիշելով: Այս ամենից հետո սարկավազապետը քաղաքի փախավ, որովհետև հայտնի դարձավ նրա անզգամությունը, որը խոստովանեց և աղջիկը: Երբ վախճանվեց Սուրբ Հակոբը, բոլոր առաքինություններով ու արդարություններով վերափոխվելով Քրիստոսի մոտ, խիստ տրամեց Սուրբ Եփրեմը: Նա քահանաների դասերով, սաղմոսներով ու օրհնություններով դրեց նրա մարմինը իր արժանավոր տեղում, իսկ երբ Հուլիանոսի մահից հետո խաղաղություն եղավ Հուլիանի և պարսիկների միջև, նրա հաջորդ Հովհաննոս կայսրը դալով Մծբին քաղաք, Հրամայեց ընտելիներին հեռանալ քաղաքից, Երբ հեռացան, քաղաքը տվեց պարսիկների ձեռքը, քանզի ուխտ և դաշինք էր կնքել պարսից արքայի հետ: Այն ժամանակ երանելի Եփրեմը գնաց Ամիգ քաղաք և մնաց այնտեղ մի տարի, որից հետո եկավ Եդեսիա՝ մտածելով, որ այնտեղ մնա մինչև իր օրերի վերջը: Քաղաք մտնելով, երբ նա գետի մի ճայրում էր, որը Դալման է կոչվում, տեսավ այնտեղ կանանց, որոնք շորեր էին լվանում: Եվ մեկը նրանցից (որին Նյուսացիներն պոռնիկ է անվանում) անդադար նրան էր նայում: Սուրբը սասանեց նրան և ասաց.

«Ձեռք ամառում, գետինն նայելու փոխարեն ինձ ես նայում:

Նա պատասխան տվեց ու ասաց.

«Դու պետք է գետինն նայես, որից որ ես, իսկ ես պետք է քեզ նայեմ, որովհետև քեզնից եմ վերցված:

Երբ այս լսեց, զարմացավ խորագետ օձի նման իմաստուն կնոջ վրա և ասաց իր մտքում. «Եթե այս քաղաքի կանայք այսպես իմաստուն են, ինչքան ազնվի տղամարդիկ: Ապա հանգրվանեց անմիտ մարդկանց մոտ, որպեսզի շահի նրանց և քանի որ ձեռագործության արվեստին չէր տիրապետում, գնաց մի բաղնիքապանի մոտ և աշխատեց նրա մոտ, որտեղից էլ կերակրվում էր և առավուտից իրիկուն ուժ որ պատահեր, Աստծո խոսքն էր խոսում, որով շատերին Աստծու ճանապարհի վրա կանգնեցրեց:

Մի պոռնիկ կին պատահանից ներքև նայեց և, տեսնելով Եփրեմին, ասաց նրան.

«Առեղա՛, ինչպիսի կերակուր կցանկանաս, որպեսզի քեզ համար բերեմ:

«Երեք կտոր քար և մի քիչ ցեխ, որպեսզի ձեփեմ պատուհանդ»՝ ասաց Եփրեմը:

«Արի՛ ինձ հետ մերձեցիր»՝ ասաց լիրբ կինը:

Իսկ Եփրեմը պատասխանեց.

«Արի՛ Հրապարակում մերձեցնանք:

«Մի՞թե ամոթ չէ»՝ ասաց կինը:

«Եթե պարտավոր եմք մարդկանցից ամաչել, որքան առավել ես պետք է Աստծուց ամաչեմք, որը գիտե մարդկանց գաղտնիքները:

Այն ժամանակ պոռնիկ կինը զղջաց Սրբի խոսքերից և թողեց իր մեղավոր գործը և կուսանաց վանք մտավ: Այս բանը մյուսների հետ պատմում է և Նյուսացիները:

Երբ եղեսպցիներին մեջ հայտնի դարձավ Սրբի անունը, փախավ մոտակա անապատը և այնտեղ ճգնություն, աղոթքով և պաշտով էր ապրում: Աստծո հո-

գով ընթերցելով աստվածային գրերը Երանելի Եփրեմը գնաց նաև Եգիպտոսի Սկիտե անապատ, ուր սուրբ Հայրերն էին բնակվում: Այստեղ մի դատարկ խուց գտնելով բնակվեց այնտեղ իր Թարգմանի հետ, մինչև Աստված Նրան շնորհ տվեց Հայրերի հետ խոսել եգիպտացիների լեզվով: Նա մեծ ժուռկալությամբ մնաց այնտեղ ութ տարի, աշխատելով և գրելով շատ աղոթքներ ու հոգևոր մատյաններ՝ իր մոտ եկածներին շահելով աստվածային իմաստությունով: Շատերին հեթանոսությունից և Արիստի աղանդից դարձի բերեց՝ հայածանք և նեղություն հեղելով ճշմարտության թշնամիներից, ինչպես նաև բժշկության հրաշքներ կատարելով հիվանդների և դիմահարների վրա, իսկ երբ հայտնի դարձավ նրա առաքինությունը, խույս տվեց Եգիպտոսից և ճանապարհ ընկավ գնալու և տեսնելու Սուրբ Բարսեղ Մեծ Հայրապետին, որը կապաղովկիայի Կեսարիայից էր, որի մասին ծավալուն կերպով գրում են բոլոր մատենագիրները:

Պետք է նաև լսել Սուրբ Եփրեմի խոսքերը, որ խոնարհաբար ասում է Սուրբ Բարսեղի մասին.

«Տիրոջ ողորմության գթությունը եղավ իմ վրա մի քաղաքում,՝ ասում է նա,՝ և մի ժայռ լսեցի, որ ասում էր ինձ՝ արի՛, Եփրեմ, և կեր իմաստներն ու խորհուրդները, իսկ ես երկմտանքի մեջ ընկնելով ասում եմ՝ որտեղի՞ց ուտեմ, Տե՛ր իմ, Նա ինձ ասաց. «Ահա իմ տանը մեծաշեն ու պայծառ անոթ կա, որը կերակուր կմատակարարի քեզ:» Զարմանալով խոսքերի վրա, վեր կացա և գնացի Բարձրյալի տաճար, կամաց մտա նրա սրահը և կարոտով մուտքից նայելով սրբություն սրբոցի մոտ տեսա ընտրյալ անոթին՝ կանգնած ժողովրդի առաջ: Տեսա նրանում աճած հոգու տաճարը և նրա մեծ խնամքը որբերի ու այրիների նկատմամբ: Այնտեղ տեսա գետի նմանվող արտասուքների հոսանքներ, ինչպես նաև կենաց գեղձը, որը իր ոսկեղեն ճառագայթները սփռում էր ամենուրեք: Տեսա և հենց իրեն՝ հովվին, որ հոգու թևերով վեր էր բարձրանում մեզ համար աղոթելու և հյուսելու խոսքի գեղեցիկ թելեր՝ նրանից բխած տեսա Պողոսի վարդապետությունը, Ավետարանի օրհնքներն ու ահավոր խորհուրդը:

Խոսքերը վերջացնելու ժամանակ, Սուրբ Հոգու հայտնությունամբ նա իմացավ, որ ես այնտեղ եմ, անմիջապես հոգ տարավ իր մոտ կանչելու ինձ՝ նվաճտիս, Հարցնում էր ինձ Թարգմանի միջոցով և ասում.

«Դո՛ւ ես Եփրեմը, որ գեղեցիկ գլուխդ խոնարհեցրել ես փրկչական խոսքին լծակից լինելու»:

Պատասխանեցի, թե՛ ես եմ Եփրեմը, երկնավոր ընթացքից կտրված: Ապա ողջունեց ինձ սուրբ համբույրով և բարիքներով լի սեղան պատրաստեց՝ իր հոգուն հավատարիմ ճաշակով ու իմաստությամբ: Ոչ թե ապականացու խորտիկներով, այլ անմահական իմաստությամբ լի:

Այսպես է հայտնում Սուրբ Եփրեմը իր եղբոր առաքինությունները՝ ծանկելով իրենը, ինչպես ուրիշներն էլ գրում են նույն Եփրեմի և Բարսեղի վարքերը՝ հայտնեց և Բարսեղ Մեծը Եփրեմի առաքինությունները: Նախ Սուրբ Բարսեղն ասում է Երանելի Եփրեմ ծերին.

«Բարի եկար, անապատի հայր, բարի եկար, որ բազմացրիր անապատում Քրիստոսի աշակերտներին՝ հալածելով գեներին: Ո՛ւմ համար արդյոք այսքան չարչարվեցիր, կամ ո՛ւմ տեսնելու եկար՝ մեղավոր մարդու Թող Աստված վարձատրի քեզ քո չարչարանքի փոխարեն»:

Եվ քաղում խոսքերից հետո ասաց Սուրբ Բարսեղը Եփրեմ Ասորուն.

«Ասա ինձ, հայր սուրբ, ինչո՞ւ դու, որ ասորի ես, հունարեն լզիտես և իմ քարոզելու ժամանակ եռակի գովեցիր»:

Եփրեմն ասաց.

Սուրբ Հոգուն էի գովում, որ խոսում էր քո բերանից:

Ծնկի եկավ Սուրբ Բարսեղը նրա առջև և ասաց.

«Թողություն տուր ինձ: Եվ ո՞վ կարող է ինձ թույլ տալ լինել Եփրեմ, իսկ քեզ, եթե Հանձն առնես՝ Բարսեղ, Եվ արդ, խնդրում եմ քեզ, սիրելի եղբայր, մի զրկիր մեզ աստվածային պարգևիցդ, որ Աստված շնորհեց քեզ, այլ ուրախացրու մեզ քո վարդապետությամբ:

Ասաց Եփրեմը Բարսեղ մեծին.

«Ես էլ խնդրելու բան ունեմ քեզանից:

Նա պատասխանեց.

«Հրամայիր, ինչ որ պետք է քեզ, քանի որ քո պարտապանն եմ, առավել ևս քո կրած շարժարանքների համար:

Սուրբ Եփրեմն ասաց.

«Գիտեմ քեզ, Աստծո սրբիդ, որ ինչ էլ որ խնդրես Աստծուց, կտա քեզ: Արդ, աղոթիր Տիրոջը, որպեսզի ինձ հունարեն խոսելու շնորհ տա:

Սուրբ Բարսեղն ասաց.

«Արի՛, իմ պատվական հայր, միասին խնդրենք Տիրոջից, և նա կկատարի քո կամքը, որովհետև դրված է. «Իր երկյուղածների կամքը Տերը կատարում է և նրանց աղոթքներին լսում ... Աստծո համար անհնարին բան չկա»:

Աղոթքի կանգնելուց հետո ասաց Բարսեղ Մեծը Եփրեմ Ասորուն.

«Ինչո՞ւ չես ընդունում քահանայության ձեռնադրություն, քանի որ լավ վա՛յն լում է քեզ:

Պատասխան տվեց Եփրեմը թարգմանի միջոցով.

«Որովհետև մեղավոր եմ, ո՞վ սուրբ հայր:

Ասաց սուրբ եպիսկոպոսը.

«Երանի թե ես քո չափ մեղավոր լինեի:

Այնուհետև ծնկի եկավ Սուրբ Եփրեմը, և Բարսեղ Մեծը, իր ձեռքը դնելով նրա վրա, ընթերցեց սարկավագության աղոթքը, իսկ հետո ասաց նրան.

«Հրամայիր, կանգնիր:

Երբ կանգնեց, գորացավ նրա լեզուն և հունարեն էր խոսում:

«Անդելավո՛ւ, սուսո՛ն, էլ է՛խսո՛ն քե տիաֆիլոքսո՛ն իմաս, այսինքն՝ ընկալ, կեցո՛ւ և ողորմեա՛ւ և պահեա՛ւ զմեզ...»

Այսպես խոսեց նա շատ բաներ, ինչպես մեկը հույն սարկավագներից: Եվ զարմացել էին բոլորը, ովքեր լսեցին այս բանը, որից հետո համարձակորեն խոսում էր հունարեն լեզվով, մինչև ոմանք կարծեցին, թե որոշ բաներ էլ հունարեն գրել գիտի:

Այդ ժամանակ Սուրբ Բարսեղը ընտանի խոսակցությամբ սկսեց պարտավորեցնել երանելի Եփրեմին քահանայության համար, որի պատճառով և ոմանց մոտ տարածվել է այն կարծիքը, թե քահանա էլ է ձեռնադրվել, սակայն պատմությունն ասում է, թե ազաչեց Եփրեմը Բարսեղին և ասաց.

«Մի՛ բռնադատիր ինձ, որովհետև արժանի չեմ դրան:

Եվ այսպես հոգեւոր սիրով բերկրելով միմյանց հետ, հույժ ուրախացան: Միասին երկու շաբաթ մնալով խոսեցին Աստվածաշնչից, և Սուրբ Բարսեղը շատ բաներ սովորեց Սուրբ Եփրեմ Ասորուց, առավելապես Սուրբ Գրքի եբրայական ավանդության մասին, որից ոչնչով չի տարբերվում ասորերեն տարբերակը: «Վեցօրեհից» գրքի մեջ Սուրբ Եփրեմ Ասորին նշում է, թե ինչպես նա սովորեց. «Աստծո հոգի՛ն շքում էր ջրերի վրա»³ խոսքերի իմաստը, նա Սուրբ Հոգու.

³ Ծննդ. Ա 2:

ՅՈՐՈՐԱԿ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ ՍՐԱՌՈՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐԻՈՑ

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ ՀՈՐՈՐԱԿԸ

1. Ասէ երանելի մարգարէն Եզեկի-
էլ: «Անաւրէնն եթէ դարձցի յանաւրէ-
նութեանց իւրոց զոր արար, եւ արաս-
ցէ արդարութիւն եւ ողորմութիւն, կե-
լով կեցցէ՝ եւ մի՛ մեռցի: Ամենայն
յանցանք իւր զոր յանցեալ իցէ, եւ ան-
աւրէնութիւնք իւր զոր անաւրինեալ
իցէ, մի՛ յիշեսցին, այլ ողորմութեամբ
իւրով զոր արար. կեցցէ՜, վասն որոյ
զբազմաւք զանց արարեալ փութաս-
ցուք Հասանել յընչաւէտ Հաւր առաւ
Որդին. որոյ անունն կեանք է եւ Լույս
եւ Փրկիչ. յոր Հաւատացաք յոր մկր-
տեցաք եւ լուսավորուցաք: Որ ի Հաւրէ
անու, եւ գիւրան զգեցուցանէ-
զփառան զոր ետուր ինձ, ետու յոցա-
մը զձեռանէ կաշիս զիւրոց, առ Հայր
մուծանէ. կամ ի՞մ գի ուր Ես իցեմ, եւ
սոքա ընդիս իցեն: Որ լանջակից եւ չը-
կախառն Հաւր կացուցանէ: զի որպէս
դու իս՝ եւ Ես ի քեզ. եւ սոքա ընդ իս
եւ ընդ քեզ ի մէջ իցեն: Ո՛վ սքանչե-
լեացն. ո՛վ երջանիկ աւետեացն. ո՛վ ան-
չափ մարդասիրութեանն. Մատթէոս
երեկ մաքսաւոր կողոպտիչ անողորմ,
այսաւր ելեալ յերկինս բազմի: Պետրոս
ուրացող քրիստոսի, այսաւր դահ ի
վեր անցեալ փառաւք փառաւորի:
Պաւլոս՝ Հայհոյիչ եւ Հալածիչ եկեղեցի-
ւոյ, այսաւր յանճառելիսն մտեալ՝ առ
աստուած Հանգչի: Ընդէ՞ր անապա-
նիմք, արի՛ք փութացցուք առ այնպի-
սի ողորմած տէրն. մի՛ յապաղեսցուք,
մի՛ Հեղգասցուք. Եթէ՛ զբազում աշ-
խարհաւք եւ զգաւառաւք պիտոյ Հր-
անցանել, առաւել՝ փութալի էր երա-
գեալ անկանել առաջի Նորա դթու-
թեանն՝ եւ անչափ մարդասիրութեան:

2 Այլ նորա ծանուցեալ զհեղաու-
թիւնս մեր՝ եւ զանփութալի ծուլու-
թիւնս, առ դուրս եկեալ՝ առ սեամս
մատուցեալ, ձայնէ առ մեզ եւ կոչէ
ուժգին. Եկա՛յք առիս ամենայն վա-
սակեալք եւ բռնաւորք, եւ Ես Հան-
գուցից զձեզ վարանեալք եւ ձանձ-
րացեալք դալի՛ք Հանգիստ անձանց
ձերոց. զի լուծ իմ քաղցր է, եւ բռն իմ
փոքրողի: Ո՛չ եմ պահանջող, ո՛չ կշ-
տամբիչ, ո՛չ յանդիմանիչ. միայն զլե-
զուդ շարժեալ եւ խոստովանեալ զոր

1. Երանելի Եզեկիել Մարգարեն
ասում է. «Անօրինը եթէ Հրաժարվի իր
գործած անօրինություններից, որ
արեց, և արդարությունն ու ողորմու-
թյունն անի, ապրելով կապրի և չի մեռ-
նի իր բոլոր Հանցանքները, որ գործել
է, և բոլոր անօրինությունները, որ ան-
օրինացել է, չեն Հիշվի, այլ իր կատա-
րած ողորմությամբ կապրի»¹. Այդ
պատճառով շատ բաներ պահեց առնելով
շտապում ենք Հասնել բազմազան ձոր
առաւ Որդուն, ում անունը կյանք է և
Լույս և Փրկիչ, ում Հավատացինք մկր-
տվեցինք և լուսավորվեցինք: Որ վեր-
ցնում է Հորից և յուրայիններին է
զգեստավորում. «Փառքը, որ տվեցիր
ինձ, տվեցի նրանց»². Որ յուրայիննե-
րին ձեռքից բռնելով Հոր մոտ է մաց-
նում. «Ծանկանում եմ, որ ուր Ես եմ,
այնպես և սրանք ինձ Հետ լինեն»³. Որ
Հորը գրկախառն ու լանջակից է կար-
գում. «Որովհետեւ ինչպես դու, Հայր,
իմ մեջ, և Ես քո մեջ, և սրանք իմ և քո
մեջ լինեն»⁴. Ո՛վ սքանչելիքներ, ո՛վ
երջանիկ ավետումներ, ո՛վ անչափ
մարդասիրություն. Մատթեոսը երեկ
անողորմ կողոպտիչ մաքսավոր էր, այ-
սօր բարձրացած երկնքում է բազմեր
Պետրոսը՝ Գրիստոսին ուրացող, այսօր
գահին բազմած փառքով է փառավոր-
վում: Պողոսը՝ եկեղեցու Հայհոյող ու
Հալածող, այսօր անպատմելի բարձ-
ունքները մուտք գործած Ասածո մոտ
է Հանգրվանել ինչու՞ն ենք Հապաղում,
եկեք շտապենք դեպի այդպիսի ողոր-
մած Տերը, չղանդաղենք, ոչ էլ ծուլա-
նանք. Եթե շատ երկրներով ու դավա-
ներով պետք էր անցնել, [այսպէ՛] առա-
վել. պետք է շտապել ընկնելու Նրա
գթութեան և մարդասիրութեան առջև:

2 Իսկ Նա, տեղեկանալով մեր անհո-
գութեան ու անփութ ծուլութեան մա-
սին, դռների առջև դալով, շեմին մո-
տենալով, ձայնում է մեզ և ուժգին
կանչում. Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգ-
նածներ ու բռնավորվածներ, և Ես

¹ Հմմտ. Եզեկ. ԺԸ 21-22;

² Հմմտ. Հովհ. ԺԵ 22;

³ Հմմտ. Հովհ. ԺԵ 24;

⁴ Հմմտ. Հովհ. ԺԵ 22-23;

գործեցեր. բեռն իմ փոքրոգի է թեթեւ, անաշխատ, գոր եթէ կամ իցիս՝ դիւրաւ տանիցիս, իսկ դու ընդէ՛ր տարակուսիս եւ դանդաղիս եւ վախժախես, որ պէս թէ ի մեծամեծ տանջանս ես մտանել, եւ կամ ի նեղութիւնս եւ ի վտանգս, եւ ոչ գաս յուղղութիւն. Դարձեալ նախեցեալ ի տկարութիւնս մեր՝ զամենապետութիւն իւր ցուցանէ՞ եւ հարցանէ՞. «Զի՞նչ կամիս, ո՛ւմ բաղձաս. հիւանդ ես, ճարար բժիշկ եմ Եւ. ո՛չ է պիտոյ բժիշկ ողջոց՝ ալլ հիւանդաց՝ մեր բժշկեմ, չպահանջեմ ինչ ի քէն հոյս միայն գոեցի, Ո՛չ առ վաճառականս առաքեմ, ո՛չ ինչս ծախել, ո՛չ յալլմէ աղերսել. մուտ ի սենեակ սրտի քո, բժի ինձ արտասուս որչափ եւ ձեռնհաս իցես. եթէ մի կաթ իցէ՞ բաւական է մկրտել զքեզ երկրորդ անգամ, եւ յառաջին փառսն հասուցանել Եթէ մեղաւոր ես, ողորմած եմ Եւ. ո՛չ եկի կոչել զարդարս ալլ զմեղաւորս յապաշխարութիւն. Որք առիս դարձան՝ ո՛չ ամաչեցին. եւ ո՛չ ոք ի նոցանէ կորեալ բայց միայն թիւրեալքն ի ճշմարտութենէ. Զմեղաւորն միով բանի արարացուցի. զպոռնիկն իւրով արտասուօքն սրբեցի. զբժշկութիւնն եւ գողորմութիւնն պարզեցի ամենեցուն. Պետրոսի՛ ուրացողին զիս երիցս անգամ, դառնապէս արտասուացն ողորմեցայ. առիս կոչեցի եւ ի կարգի առաքելութեան պահեցի. Զիս ձաղանաւք ի խաչին դատապարտեցին. արարածք ողբալին եւ սարսէին. Ես վասն խաչահանողացն աղաթս առնէի. Նոքա բարկութեամբ եւ սրտմտութեամբ զգլուխս իւրեանց շարժէին. Ես քաղցրութեամբ եւ ողորմութեամբ թողութիւն խոստանալի. Եւ ապա զինչ կատարուան. զամենայն Հեթանոսս ողորմութեամբ կոչեցի յորդէգրութիւն. ածի դաւադրութիւն ոչխարսն ի գաւիթ սրբութեան իմոյ. եւ եղեւ մի հաւաք եւ մի հովիւ. Ես նոյն եմ եւ ոչ փոփոխիմ, երեկ եւ այսաւր, նոյն եւ յաւիտեան:

կհանգստացնեմ ձեզ⁵, տարակուսաներ եւ ձանձրացաներ, ձեր անձերին հանգիստ կգտնեք, որովհետեւ իմ լուծը քաղցր է եւ իմ բեռը՝ թեթեւ⁶, Ո՛չ պահանջող եմ, ո՛չ կշտամող, ո՛չ հանդիմանող Միայն լեզուդ շարժիր եւ խոստովանիր, ինչ որ գործեցիր: Իմ բեռը շատ թեթեւ է, դուրին, որ եթե կամենաս՝ հեշտութեամբ կտանես: Իսկ դու ինչո՞ւ ես երկմտում, դանդաղում ու վախժախում, կարծես թե մեծամեծ տանջանքների մեջ ես մտնելու եւ կամ նեղութեան ու վտանգների եւ չես պաշիս ուղղութեան, կրկին մեր տկարութիւններին նախելով, ամեն ինչի վրա ունեցած իր իշխանութիւնն է ցույց տալիս եւ հարցնում. «Ի՞նչ ես կամենում, ո՛ւմ ես ցանկանում, հիւանդ ես, ճարար բժիշկ եմ Եւ, առողջներին բժիշկ պետք է՞, ալլ հիւանդներին՝ Զրի եմ բժշկում, չեմ պահանջում քեզանից ոչինչ, բայց միայն դեղը. Վաճառականների մոտ չեմ ուղարկում, ո՛չ ունեցվածքդ վաճառել, ո՛չ ուրիշից աղերսել. մտքի քո սրտի սենյակը, արտասուք բեր ինձ համար, որքան որ կարողանաս, թե մի կաթիլ կլինի, բավական է երկրորդ անգամ քեզ մկրտելու եւ առաջին փառքին հասցնելու համար: Թե մեղավոր ես, ողորմած եմ Եւ. չեկա կանչելու արդարներին, ալլ մեղավորներին՝ ապաշխարութեան. Ովքեր ինձ դարձան՝ չամաչեցին, եւ ոչ դե նրանցից չկորալ. բայց միայն ճշմարտութիւնից շեղվածները. Մաքսավորին մի խոսքով արդարացրեցի՝ Պոռնիկին իր արտասուքներով սրբեցի¹⁰, Բժշկութիւն եւ ողորմութիւն պարգեցի բոլորին. Պետրոսի՛ ինձ երեք անգամ ուրացողի դառնապէս արցունքների ողորմեցի, զեպի ինձ կանչեցի եւ առաքելութեան կարգի մեջ պահեցի, ինձ ձաղկելով խաչի վրա դատապարտեցին, [ոչ ուր] արարածները ողբում եւ սարսում էին, [իսկ] Ես խաչը հանողների համար աղոթք էի անում: Նրանք բարկութեամբ ու սրտմտութեամբ իրենց գլուխներն էին շար-

⁵ Մատթ. ԺԱ 28;

⁶ Մատթ. ԺԱ 30;

⁷ Մարկ. Բ 17;

⁸ Հմմտ. Մատթ. Բ 13;

⁹ Հմմտ. Ղուկ. ԺԲ 1-10;

¹⁰ Հմմտ. Ղուկ. Ի 36-50;

3 Ծարաւի եւ՝ մի՛ դանդաղիր, ես եմ աղբիւրն կենաց քաղցրաբուլիս եւ անուշաճաշակ. եթէ ոք ծարաւի ինչ՝ եկեսցէ առ իս եւ արբցէ. եւ որք արբցեն՝ մի՛ ծարաւեսցին յաւիտեան. այլեւ դետք յորովայնէ՛ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան. Բաղցեալ ես՝ մի՛ լքանիր, ես եմ հացն կենաց ի յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ ի հացէս յայսմանէ՛ կեցցէ յաւիտեան. Մերկացար՝ ո՛վ մեղաւոր, ես եմ պատմուճան քեզ եւ վերարկու. միայն ի չարեացդ հեռացիր, եւ ես ազուցից քեզ գտաւիին հանդերձն. զի որք ի Բրիստոս մկրտեցարուք՝ զքրիստոս զգեցեալ էք. եթէ կարաւացար կաշկաց, ես զգեցուցից քեզ կաշկէս յաւազոյնս, որով կոխեսցես զաւճս եւ զկարիճս՝ եւ զամենայն զաւրուութիւնս թնամուլոյն. եթէ ծառայ գտար մեղացն, ես ազատեմ զքեզ. զի ամենայն որ մեղս գործէ՝ ծառայ է մեղացն. իսկ եթէ որդին աստուծոյ ազատեսցէ զձեզ, ճշմարիտ ազատք լինիցիք՝

4 Ով մեղաւոր՝ խորշի՛ս յիմ յահեղ եւ ի հրատեսիլ զաւրութենէս. մի՛ երկնչիր, չեմ ատար. ազգական եմ քո, որդի եմ Դաւթի, թոռն եմ Աբրահամու. խաւսակից եւ մարմնակից եմ քեզ. եւ ապա զի՛նչ կամիցիս՝ ի պատրաստի կամ՝ ասա՛ ինձ. զոր իջ բարի կամիցիս վասն քո, դու ազգ արա, եւ ես կատարեմ անպապդ. քանզի ո՛չ եկի պաշտաւն առնուլ այլ պաշտել, եւ տալ զանձն իմ փրկանս փոխանակ բազմաց. Զի՛նչ կամիս զի արարից քեզ ասա ինձ. ո՛չ հրաժարիմ, զի սովոր եմ առնել. եթէ զմատնիին զիս ի մա՛հ զոտսն լուացի եւ ո՛չ տաղտկացայ. ապա ո՞ր լափ առաւել զքոյդ եւս զիմոյ խոստովանողիդ զգլուխս եւ զոտսդ լուացից առանց դանդաղանաց. ո՛չ յայլ ինչ իրաց մաքրեմ, այլ ի մեղաց սրբեմ՝ եւ վերստին մաքրեմ. Դու չիթ մի յարտասուաց հեղ ի կոնքս, եւ ես քան զհոսանն Յորդանանու յորդագոյն հեղում

ժում, [իսկ] ես քաղցրությամբ ու ողորմությամբ թողությունն էի խոստանում. Եվ Հետո Ինչ կատարվեց. որ յոր Հեթանոսներին ողորմությամբ կանչեցի որդեգրութեան, օտարոտի ոչ խարնեղին իմ սրբութեան զավիթը բերեցի, և եղավ մի հոս ու մի հովիվ. Ես նույնն եմ և չեմ փոփոխվում, երեկ և այսօր, նույնն եմ հավիտյան¹¹.

3 Թե ծարավ ես՝ մի՛ դանդաղիր, ես եմ քաղցրաբուլիս եւ անուշաճաշակ կյանքի աղբուրը. Եթե որեւէ մեկը ծարավ է, թող զա ինձ մոտ և հագնեա, իսկ ովքեր հագնեան, չեն ծարավի հավիտյան, այլ և նրա որովայնից կենդանութեան ջրերի գետեր կհոսեն¹². Քաղցած ես մի՛ հուսալքիր, ես եմ կենաց Հացը՝ երկնքից իջած, եթե որեւէ մեկը ուտի այս հացից, հավիտյան կապրի¹³. Մերկացար՝, ով մեղաւոր, ես եմ քեզ համար վերարկու և պատմուճան. Միայն չարիքներիցդ հեռացիր, և ես կհագցնեմ քեզ առաջին պատմուճանը, քանզի ովքեր ի Բրիստոս մկրտվեցին՝ Բրիստոսով են զգեստաւորված. Եթե կոշիկներ կարիք ես գտում, ես քեզ կհագցնեմ յավազոյն կոշիկներ, որոնցով կճգմես օձերին և կարիճներին և թնամուլ քոյր զորութիւններին. Եթե մեղքին ծառա պանվեցիր, ես կազատեմ քեզ, քանզի նա, ով մեղք է գործում, ծառա է մեղքին, իսկ եթե Աստծո Որդին ազատի ձեզ, ճշմարիտ ազատներ կլինեք՝

4 Ով մեղավոր, խուսափում ես իմ ահեղ և հրատեսիլ զորութիւնից. մի՛ երկնչիր, օտար չեմ, քո ազգականն եմ, որդին եմ Դաւթի, թոռն Աբրահամի, խոսակից եւ մարմնակից եմ քեզ. իսկ թե Ինչ ես կամենում, պատրաստ եմ ես, ասա՛ ինձ. ինչ որ քո բարի կցանկանաս դու քեզ համար, ազգարարի՛ր [ինձ], իսկ ես կկատարեմ անհապաղ. որովհետեւ չեկա ծառայեցնելու, այլ ծառայելու, և շատերի փոխարեն իմ անձը որպէս փրկանք տալու¹⁴. Ինչ ես կամենում, որ կատարեմ քեզ համար, ասա՛ ինձ, չեմ հրաժարվի, որովհետեւ սովոր եմ կատարելու. Եթե ինձ մահվան մատնողի ոտքերը լվացի և

11 Եբր. ԺԳ 8;

12 Հմմտ. Հովհ. Դ 13;

13 Հմմտ. Հովհ. Զ 50-52;

14 Հմմտ. Մրկ. Ժ 45;

ի ջեզ զշնորհս, եւ քան զառաջին մկրտութիւն պայծառագոյն յուսաւորեցից, Ով մեղաւոր յաճախ մեղար, զապարացար, երկեանք ի ջննողէս. մի կապիր զխոստովանութիւնդ, եւ Եսարձակեմ զիմ բարերարութիւնս. որպէս Պետրոսին սահմանեցի զչափն, դարձեալ ջեզ սահմանեմ, կամի՛ս որ հաշտվիմ ընդ ջեզ. դու մեկնեաց ի քո չար սովորութենէդ, եւ Ես մեկնիմ յիմ սրտմտութենէս Դու հարց վասն մեղաց քոց զեաւթն անգամ թողութիւն, եւ Ես պատասխանեցից ջեզ զեաւթանանեկին եաւթն՝ զոր ջեզ շնորհեմ թողութիւն. զի գոր ինչ ելանէ ընդ չորթութիւնս իմ գայն ո՛չ ստեցից. ջննեալ զչափդ, իմացիր զթիւդ եւ զհամարդ, եւ մի տրանջիր զտանուտեանէս կամի՛ս զի թողից զպարտս քո, չեմ ժլատ առատ եմ, ընչաւէտ հաւր՝ մեծատուն որդի. չտոկոսեմ զպարտապանդ, չպահանջեմ զպարտսն, չարեանեմ խեղդ. դու միայն յանձին կալ եւ խոստովանեա՛լ գոր գործեցեր, եւ Ես չորեքհարիւր եւ իննսուն քանքար թողում ջեզ. եւ ուրախ արձակեցից զքեզ:

5 Ով մեղաւոր՝ ընդէ՛ր փախչիս յինչն, վասն զի բազումս մեղար. եկ առիս ո՛րդեակ իմ որդմեկի՛ գի ո՛չ բարկանամ եւ ո՛չ մեղադրեմ. վասն զի իմ ես արարած, իմ ես պատկեր, իմ նմանութիւն, նաւարատ ձեռաց իմոց ստեղծուած. եւ նորին աղաքաւ խնայեմ՝ եւ ո՛չ եղծանեմ զպատկերդ, ո՛չ խանգարեմ զստեղծուածդ, ո՛չ ապականեմ զնմանութիւնդ. վասն զի որդմած եմ եւ զթած, երկայնամիտ եւ բազում որդմ. Ոչ դժուարին ինչ խնդրեմ ի քէն, եւ դու զի՛ տարակուսիս. միայն դարձ առիս, եւ Ես դարձայց առ ջեզ. միայն յապաշխարգութիւն փութա՛մ միայն խոստովանեց զմեղդ. միայն մեղա՛յ ասա տնկանելով առաջի իմ, եւ Ես փառաւք պատուեցից զքեզ. Արդ՝ եկ առիս, եւ մի՛ ամաչեր. քանցի չյալանեմ զմեղդ. չանգոսնեմ զգործողդ. չյանդիմանեմ զմեղաւորդ. չքերեմ յե-

նեղվեցի, ապա որքան առաւել ջեզ՝ ինձ խոստովանողիդ գլուխն ու ոտքերը կլվանամ առանց հապաղման. Այլ որքանից չեմ մաքրի, բայց մեղքից կարծեմ՝ վերստին մաքրելով. Դու մի կաթիր արցունք թափիր կոնքի մեջ, եւ Ես Հորդանանի հոսանքներից առաւել Հորդառատ շնորհներ կհեղեմ ջեզ վրա եւ առաջին մկրտութիւնից էլ ավելի պայծառագոյն կյուսավորեմ. Ով մեղաւոր, հաճախ մեղք գործեցիր, ապականվեցի՛ր, վախեցա՛ր. ջննողիցս Մի՛ կապիր խոստովանութիւնդ, եւ Ես կարձակեմ իմ բարերարութիւնը, ինչպես Պետրոսին չափ սահմանեցի, այնպես էլ ջեզ եմ սահմանում. Թանկանում ես, որ հաշտվեմ ջեզ հետ, [ուրեմն] Հրաժարվի՛ր քո չար սովորութիւնիցդ, իսկ Ես կհրաժարվեմ իմ սրտմտութիւնից. Դու քո մեղքերի համար յոթ անգամ թողութիւն խնդրիր, եւ Ես կպատասխանեմ ջեզ յոթանասունյոթ անգամ, որ ջեզ թողութիւն եմ շնորհում, որովհետեւ ինչ որ դուքս է ելում իմ չորթներից, սուտ է՛: Զանաչի՛ր չափդ, իմացի՛ր տարիքդ ու վիճակդ եւ մի՛ տրտնալ տանտիրոջիցս. Թանկանում ես, որ թողնեմ քո պարտքերդ, ժլատ չեմ, առատաձեռն եմ, ունեւոր Հոր մեծատուն Որդին եմ, տոկոս չեմ դնում պարտապանիդ վրա, չեմ պահանջում պարտքերդ, չեմ գցում խեղվածիդ. Դու միայն հանձն առ ու խոստովանիր, ինչ որ գործել ես, եւ Ես չորս հարյուր իննսուն քանքարների կթողնեմ ջեզ ուրախութիւնք արձակելով:

5 Ով մեղաւոր, ինչո՞ւ ես փախչում ինձանից, քանի որ չատ մեղքեր գործեցիր. Արի՛ ինձ մոտ, որդյակ իմ ողորմելի, որովհետեւ չեմ բարկանաւ եւ չեմ մեղադրի, քանի որ իմ ստեղծածն ես, իմ պատկերն ես, իմ նմանութիւնը, իմ անարատ ձեռքերի գործը. Եվ նույն պատճառով կխնայեմ եւ չեմ աղաւաղի պատկերդ, չեմ արաւազորի արարվածների, չեմ ապականի նմանութիւնդ, քանի որ որդմած եմ եւ զթած, համբերատար ու բազում որդմ. Դժվար բան չեմ խնդում ջեզանից, բայց դու ինչո՞ւ ես տարակուսում. միայն դարձիր զեպի ինձ, եւ Ես կառանամ դեպի ջեզ, միայն չտալիր ապաշխարութիւն, միայն մեղքերդ խոստովանիր, միայն մեղա՛յ ասա ընկնելով իմ առջև, իսկ Ես փառքով կառաւելեմ ջեզ. Արդ՝ արի՛ ինձ մոտ եւ մի՛ ամաչիր, քանի որ չեմ հայանում մեղքերդ, չեմ արհա-

րես զխայտառակութիւնդ. չի չեմ գրագծութիւն չարեացդ. չմեղադրեմ չիբացելումդ. այլ ողորմիմ յանցաւորիդ. այլ գթամ ի կողոպտեալդ. այլ կենդանացուցանեմ գմեռեալդ. Մի տրամեցուցաներ զԱրարիչս թո անդարձութեամբ. մի՛ պատճառեր զպատճառեալս. մի՛ ապաշխորճ առնել զիմ մարդասիրութիւնս. մի՛ խանգարել զիմ արարչութիւն. մի՛ արտաքս պահել զիս յիմ առանձնդ. մի՛ զրկել զիս յիմ քնակութենէդ. մի՛ կողոպտել յիմ ստացուածոյդ. մի՛ թափուր թողուր զիս յիմ գանձէդ. որ ո՛չ եթէ այլ իրաւք ստացայ զքեզ, այլ զարիւնս իմ ետու գին, եւ այնու ստացայ զքեզ. եւ եթէ Հայիս ինձ որ սուղ ունիմ ի վերայ կորսեալսն թո, զզջկանաս ի չարեաց թոց. եւ այնպէս եարաւի եմ թո փրկութեանդ, որպէս եղջերու ի յաղթերս լուրցի:

6. Ո՛վ մեղաւոր շնորհեա՛ ինձ զոր ինչ խնդրեմն ի քէն. Տո՛ւր ինձ զոր կամիմն՝ զապաշխարութիւնս. Տո՛ւր ինձ զոր սիրեմն՝ զզղջումնս. Տո՛ւր ինձ զոր ցանկամն՝ զկաթ մի արտասուաց. Տո՛ւր ինձ զոր փափաքեմն՝ զհառաչ մի ի խորոց սրտէ. Տո՛ւր ինձ զոր բերկրիմն՝ զախրութիւն կերպարանացդ. Տո՛ւր ինձ զոր խրախանամն՝ զհամբարձումն՝ ձեռացդ. եւ դատաւանմունք մատանցդ. Տո՛ւր ինձ զոր ցնծամն զքանիւ խոստովանիլն. եւ եւս սերովբէից եւ բերովբէից հաւասար բարձրացուցից զքեզ. իսկ արդ ասա՛ ինձ. զի՞նչ վնաս արարի քեզ՝ որ այսքան ի սուղ եւ ի լաց պահես զԱրարիչս թո՛ չարեացդ անդարձութեամբ. վասն այն՝ զի յոչ դոյն ի դոյածի. զի յանկենդանեաց զքեզ որոշեցի. զի յանսանց բաժանեցի. զի մարդ արարչագործեցի. զի յիմ նմանութիւնս ստեղծի. զի ձեռաւքս յարիւնեցի. զի պատկերակից ինձ անուանեցի. զի բանականութեամբ պատուեցի. զի իմաստութեամբ զարդարեցի. զի բազմազան հանճարովք փարթամացուցի. զի ազգի ազգի արհեստիւք ճոխացուցի. զի իշխանութեամբ մեծացուցի. զի ի վերայ ամենայնի կացուցի. Զի գերկինքն լուսաւորաւքն, եւ զաւղղ թռչնովք, զծով լողակաւք, եւ գերկիր ամենայն կենդանեաւք, անկովք եւ բուսովք ի վայել-

մարհում չարչարվողիդ. չեմ հանդիմանում մեղավորիդ, խայտառակութիւնդ երեսով չեմ տալիս, չարիքներդ բազմութիւնդ չեմ հիշում, չեմ մեղադրում թշվառացածիդ, այլ ողորմում եմ հանցաւորիդ, գթում կողոպտվածիդ, կենդանացնում մեռածիդ. Մի՛ տրամեցրու Արարչիս թո անդարձութեամբ, մեղքի պատճառ մի՛ եղիր, ապաշխորճ մի՛ դարձրու իմ մարդասիրութիւնդ, մի՛ խանգարիր իմ արարչութիւնդ, ինձ իմ առանձնիցդ դուրս մի՛ պահիր, մի՛ զրկիր ինձ իմ քնակութիւնիցդ, մի՛ կողոպտիր իմ ստացվածքիցդ, ինձ իմ գանձիցդ մի՛ թող ամայի, քանզի այլ բանով չստացա քեզ, բայց իմ արիւնք որպէս գին տվեցի եւ նրանով ստացա քեզ. եւ՛ եթէ նայես ինձ, որ սուղ ունեմ թո կորստյան համար, կզղջաս թո չարիքներից. եւս այնպէս ծարավ եմ թո փրկութեանդ, ինչպէս եղջերուն՝ ջրերի աղբյուրներին:

6. Ո՛վ մեղավոր, շնորհի՛ր ինձ, ինչ որ խնդրում եմ քեզանից, տո՛ւր ինձ, ինչ որ կամենում եմ՝ ապաշխարութիւն. Տո՛ւր ինձ, ինչ սիրում եմ՝ զղջում. Տո՛ւր ինձ, ինչ ցանկանում եմ՝ մի կաթիլ արտասուք. Տո՛ւր ինձ, ինչ փափագում եմ՝ հառաչանք սրտի խորքից. Տո՛ւր ինձ, որով բերկրում եմ՝ կերպարանքիդ տխրութիւնդ. Տո՛ւր ինձ, որով ուրախանում եմ՝ ձեռքերիդ վեր բարձրացումը եւ մատներիդ առատանումները. Տո՛ւր ինձ, ինչով որ ցնծում եմ՝ խոսքով խոստովանելը, եւ եւս սերովբեներին ու բերովբեներին հավասար կրթարացնեմ քեզ. իսկ արդ, ասա՛ ինձ, ի՞նչ վնաս տվեցի քեզ, որ այսքան սգի ու լացի մեջ ես պահում թո Արարչին՝ չարիքներիդ անդարձութեամբ. Այն բանի համար, որ ոչնչից գոյութեան կոչեցի, որ անկենդան իրերից՝ քեզ զառեցի, անասուններից բաժանեցի, մարդ արարչագործեցի, որ իմ նմանութեամբ ստեղծեցի, ձեռքերովս արարեցի, ինձ պատկերակից անվանեցի, որ բանականութեամբ պատկեցի, իմաստութեամբ զարդարեցի, բազում հանճարեղ փարթամացրի, որ տեսակ-տեսակ արհեստներով ճոխացրեցի, իշխանութեամբ մեծացրեցի, որ ամենքի վրա կարգեցի. երկիրքը լուսաւորեցրով եւ օդը թռչուններով, ծովը՝ ձկներով եւ երկիրն ամեն տեսակ կենդանիներով, անուններով ու բույսերով ի վայելչութիւն եւ ի հնազանդու-

չութիւն եւ ի Հնազանդութիւն քեզ ետու. եւ այժմ ի վերայ այս բոստանամ կենա յաւիտենականս, եւ արքայութիւն երկնից:

7. Արդ, հարցանեմ զքեզ քաղցրութեամբ ո՞վ մեղաւոր եւ ո՞չ խստութեամբ. ա՞յն ասա՝ ինձ այժմ, վնասապարտ եմ քո՝ եթէ երախտաւոր. Եթէ արդարութեամբ խաւսիս, ոչ եմ վնասապարտ քեզ՝ այլ երախտաւոր. իսկ եթէ երախտաւոր ապա ընդէ՞ր միաբանեալ ես ընդ թշնամւոյն իմոյ սատանայի. եւ խոցես զիս լեարդս իմ ամենայն աւուր քառասայր սրով, իմացի՛ր եւ գիտեա՛ զի սուր մեղաց մեղաւորին առաւել խոցէ զիս եւ վիրաւորէ՛ ջան զբացումն կողից իմոց՝ յոր խոցեցայ գեղարդեամբն ի վերայ խաչին. Սաստկազին կսկծեցուցանէ քան զհարումն բեւեռացն ի խաչհանողացն՝ ի ձեռս եւ ի յոտս Ուժգին մորմուռեցուցանէ զիս սուր մեղաց մեղաւորին՝ քան զհարումն փուշ պսակին ի գագաթն գլխոյս, որ կսկծեցոյց ի յսկր եւ յուղեղ. Առաւելապէս դառնացուցանէ զճաշակելիս եւ զքիմս իմ դառնութիւն եւ գարշահոտութիւն մեղաց մեղաւորին, քան զլեղին եւ զքացախն զոր արբի ի վերայ խաչին: Գիտեմ զի զազգս խաչահանողաց իմոց յորժամ տեսանես՝ ատես զնոսա եւ անարգես, այլ եւ կամիս մահու սպանանել, զի զՏէրս քո ի խաչ հանին. եւ դու անմտութեամբ յամենայն աւուր զգործս նոցա գործես՝ իս չարաչար մեղանչելով: Արդ դադարեմ ի չարեացի՝ եւ ե՛կ ի զղլումն սիրելի որդեակ իմ. զի մի զբաժակ դառնութեանն զոր արբուցանելոց եմ նոցա՝ եւ քեզ լամբիցեմ:

8. Ո՞վ դասք մեղաւորաց ասացէ՞ք ինձ. զի՞նչ չար արարի Սա մարդոյ, որ այդքան երեսս էք չըջեալ ի քաղցրաբարոյ արարչէս ձերմէ՞ որպէս ի թշնամւոյ: Ո՞չ ապաքէն մարդն էր՝ որ կոխեաց զհրամանս արարչին՝ եւ ցանկացաւ աստուածանալոյ. եւ Սա փոխանակ նորա մարդ եղէ, եւ մարդն աստուածացուցի: Ո՞չ մարդն էր՝ որ մերձեցաւ ի ծառն. եւ Սա ի փայտ խաչին զիս բարձրացուցի: Ո՞չ մարդն էր՝ որ ոտիւքն ընթացաւ. եւ Սա զբեւեռն յոտս ընկալալ: Ո՞չ մարդն էր՝ որ ձգեաց զձեռն իւր ի ծառն. եւ Սա ի խաչին տարածեցի: Ո՞չ մարդն էր՝ որ քաղցրացաւ ի պտղոյն. եւ Սա զքացախն եւ զլեղին արբի: Ո՞չ մարդն էր՝ որ հաւանեցաւ կողածնին՝

թյուն քեզ տվեցի: Իսկ այժմ այսքանի վրա խոստանում եմ հավիտենական կյանքն ու երկնքի արքայությունը:

7. Արդ, քաղցրութեամբ եմ հարցնում քեզ, ո՞վ մեղավոր, և ոչ խստութեամբ, ասա ինձ այժմ, վնասակար եղա քեզ [համար], թե՞ օգտակար. Եթե արդարութեամբ խոսես, վնասակար չեղա քեզ, այլ օգտակար, իսկ թե՞ օգտակար, ապա ինչո՞ւ ես միաբանվել իմ թշնամի սատանայի հետ և քառասայրի սրով ամեն օր խոցում ես ինձ լյարդիս միջով, իմացի՛ր ու հասկացի՛ր, որ մեղավորի մեղքերի սուրբ ավելի է խոցում ինձ և վիրավորում, քան իմ կողերիս բացումը, որ խոցվեցի զեղարդով խաչի վրա: [Այն] սաստկապես կսկծեցնում է [ինձ], քան ձեռքերիս ու ոտքերիս խաչ հանողների գամբերի հարվածները: Մեղավորի մեղքերի սուրն ինձ [ավելի] ուժգին է մորմուքեցնում, քան փչե պսակի մխրճումը գլխիս մեջ, որ ցավեցրեց մինչև ոսկորս և ուղեղս: Մեղավորի մեղքերի դառնությունն ու գարշահոտությունը ավելի է դառնացնում իմ ճաշակելիքն ու քիմքը, քան լեղին և քացախը, որ համեսեցի խաչի վրա: Գիտեմ, որ ինձ խաչը հանող ազգի մարդկանց երբ տեսնում ես, ատում ես նրանց ու անարդում, այլև ցանկանում ես սպանել, քանզի քո Տիրոջը խաչեցին, իսկ դու անմտութեամբ ամեն օր նրանց գործերն ես կատարում՝ իմ հանդեպ չարաչար մեղանչելով: Արդ, դադարի՛ր չարիքներիցդ և զղջման արի, սիրելի որդյակ իմ, որպեսզի դառնության բաժակը, որով արբեցնելու եմ նրանց, քեզ էլ չմատուցեմ:

8. Ո՞վ մեղավորների խմբեր, ասացե՞ք ինձ, ի՞նչ չար բան արեցի Սա մարդուն, որ այդպես երես եք չըջել ձեր քաղցրաբարոյ Արարչից, ինչպես թշնամուց: Մի՞թե մարդը չէր, որ խախտեց Արարչի հրամանը ցանկանալով աստվածանալ¹⁵, իսկ Սա նրա փոխարեն մարդ եղա և մարդուն աստվածացրեցի: Մի՞թե մարդը չէր, որ մերձեցավ ծառին, իսկ Սա փայտ խաչին ինձ բարձրացրեցի: Մի՞թե մարդը չէր, որ ոտքն ընթացավ¹⁵ ընթացալ ծառի ուղղութեամբ, իսկ Սա մեխը ոտքերիս

եւ եկեր ի պտղոյն. եւ Ես զկողս իմ վասն նորա ի խաչին բացի Մ'չ մարդն էր՝ որ զգործս անիծից գործեաց. եւ Ես վասն նորա կոչեցայ անէծք. Մ'չ մարդն էր՝ որ ոչ սաց մեղայ. եւ Ես զէլիէլին ի խաչին առ Հայր գոչեցի Մ'չ մարդն էր՝ որ մահու դատապարտեցաւ. եւ Ես ի խաչին զմահ յանձն առի Եւ դուք՝ մեղաւորք, ի յայսքան բարերար արարչէս ձերմէ երեսս դարձուցանէք. որ քաղցրութեամբ աղաչեմ զձեզ դալ ի զղջումն եւ յապաշխարութիւն՝ եւ առնուլ զթողութիւն:

ոնդունեցի Մի'թե մարդը չէր, որ իր ձեռքը երկարեց գեպի ծառը, իսկ Ես իմ ձեռքերը խաչի վրա տարածեցի: Մի'թե մարդը չէր, որ քաղցրացա՞յ պտղից, իսկ Ես քացախն ու լեղին ճաշակեցի¹⁶. Մի'թե մարդը չէր, որ հաւանեց կողածնին և կերա՞յ պտղից, իսկ Ես իմ կողը խաչի վրա նրա համար բացեցի¹⁷. Մի'թե մարդը չէր, որ անեծքի գործեր գործեց, իսկ Ես նրա համար անեծք կոչվեցի: Մի'թե մարդը չէր, որ չսաց մեղա, իսկ Ես Վիլի, էլիէլ խաչի վրա առ Հայր գոչեցի¹⁸. Մի'թե մարդը չէր, որ մահվան դատապարտվեց, իսկ Ես խաչի վրա մահը հանձն առաւ. Եւ դուք՝ մեղավորներ, ձեր յայսքան բարերար Արարչից երեսս եք դարձնում, որ քաղցրութեամբ աղաչում եմ ձեզ դալու զղջման և ապաշխարութեան թողութիւնն ստանալու:

9. Մ'չ մեղաւոր՝ տամ զդատաստան իմ ի ձեռս քո, եւ դու արա՛ ինձ իրաւունս. եթէ Ես ո'չ սիրեցի զքեզ՝ ապա եւ դու յիրաւի՛ առես զիս. եւ եթէ սիրեցի, դու ընդէ՛ր յինչն ի բաց փախչիս, իսկ եթէ ասիցես ընդ միտս, եթէ ո'չ կատարեալ սիրեցեր զիս. Մանիւր զի ո'չ է ճշմարիտ կարծիքդ. զի Ես զաշխարհս բոլոր լրիւ իւրով վասն քո ստեղծի. զդրախտն վասն քո յաւրինեցի. զերկնից արքայութիւն վասն քո պատրաստեցի. զտեղի անկելոց Հրեշտակացն քեզ թողի ժառանգել. միայն դու դարձիր ի մեղաց քոց, եւ Ես բերից զքեզ զի տեսցես եւ վայելեացես ընդ Հրեշտակս իմ. Տե՛ս՝ զի վասն քո յերկնից ի յերկիր խոնարհեցայ, Աստուածս մարդ եղէ եւ Տէրս ծառայ վասն քո յատենի կացի իբր զչարագործ. ի Հրէից դատապարտեցայ. ի Պիղատոսէ՛ զանահարեցայ. ի Հերովդէ՛ն կատակեալ արհամարհեցայ. վասն քո ի զինուորացն ձաղեցայ. ի ծառայիցն ապտակեցայ. ի քահանայիցն թուք յերեսս ընկալայ ի ժողովորդէն նախատեցայ վասն քո զիայն իմ ուսովս բարձր՝ եւ հանի ի Գողգոթա. վասն սիրոյ քոյ Հայրոյեցայ, թշնամանեցայ, եւ խաչեցայ վասն քո բեւեռաւք պնդեցայ. տիգաւ խոցեցայ. պսակ ի փշոց ընկալայ. քացախ եւ լեղի արբի. քղամիդ նախատանաց զգեցայ, զաստուածային դուխս խոնարհեցուցի, զհոգիս ի ձեռն Հաւր աւանդեցի վասն քո ի մարդկանէ պատեցայ. մարմնով ի գերեզման իջի, հոգւով ի դժոխս գնացի՝ եւ զարգելեալ հոգիսն ազա-

9. Մ'չ մեղավոր, քեզ եմ տալիս իմ դատաստանը, և դու արդարութիւն գործիր իմ հանդեպ. եթե Ես չսիրեցի քեզ, ուրեմն՝ դու իրավացիորեն ես ինձ առում, իսկ թե սիրեցի, դու ինչո՞ւ ես ինձանից փախչում, իսկ եթե ասես մտքումդ, թե կատարելապէս չսիրեցիր ինձ, իմացիր, որ ճշմարիտ չէ կարծիքդ, քանզի Ես այս աշխարհն իր ամբողջութեամբ քեզ համար ստեղծեցի, դրախտը քեզ համար հորինեցի, երկնքի արքայութիւնը քեզ համար պատրաստեցի, անկյալ Հրեշտակների տեղը քեզ ժառանգութիւն տվեցի, միայն դու դարձիր քո մեղքերից, և Ես կառավորողքիմ քեզ, որպէսզի տեսնես և վայելես իմ Հրեշտակների հետ. Տե՛ս, որ քեզ համար երկնքից երկիր խոնարհվեցի, Աստվածս մարդ եղաւ և Տե՛րս՝ ծառայ համար ատյանում կանգնեցի ինչպէս չարագործ¹⁹. Հրեաների կողմից դատապարտվեցի²⁰, Պիղատոսի կողմից զանաւարվեցի²¹, Հերովդէսի կողմից ծաղկեցի՝ արհամարհվելով²². Բեզ համար զինվորներից ձաղվեցի, ծառաներից ապտակ կրեցի, քա-

¹⁶ Հմմտ. Մատթ. ԻԵ 48-49;

¹⁷ Հմմտ. Հովհ. ԺԲ 32-35;

¹⁸ Հմմտ. Մատթ. ԻԵ 46-47;

¹⁹ Հմմտ. Ղուկ. ԻԲ 66-71;

²⁰ Հմմտ. Ղուկ. ԻԳ 13-25;

²¹ Հմմտ. Մկր. ԺԵ 15;

²² Հմմտ. Ղուկ. ԻԳ 8-12;

տեպի՝ ի յերրորդ առուր յարեալ՝ եւ զքեզ յարուցի ի մեռելութենէ մեզաց։

10. Ո՛վ մեղաւոր՝ տե՛ս թէ ո՛րչափ սիրով սիրեցի զքեզ՝ զի յորժամ վասն քո զմահն կրեցի յիս ի խաչին, Հայր իմ սարկանայր, եւ Հոգին Սուրբ տրամէր վասն ստեղծանելոյ զմարդն։ Զի՛նչ ասացից զդասուց հրեշտակաց, թէ ո՛ր պիտի սուգ անհնարին եղեւ ի միջի նոցա. քանզի կիզէր ի կսկծոյն երկինքն երկնաւորաւքն, յորժամ տեսին զստեղծիչս իւրեանց ի խաչին մահացեալ եւ թէ ո՛րպէս արարածք ամենայն սուգ առեալ ողբային անմխիթար, յորժամ տեսին զԱրարիչս իւրեանց մերակցեալ ի խաչին, եւ զմահ յանձն առեալ Զի արեգակն եւ յուսինն Հանդերձ ամենայն աստեղաւք մերկանային զլոյս իւրեանց, եւ զխաւար զգնուին. եւ երկիրս ի Հիմանց սասանէր եւ դողայր. վէ՛մք պատահէին. եւ վարդաօյր տա՛նարին ի յերկուս ծուէնս ցելոյր, եւ մեռեալքն մարմնով ո՛չ կարացին Հանդուրժել, այլ ի գերեզմանացն յարուցեալ ողբային ընդ արարածոց՝ եւ վկայէին վասն յարութեան իմոյ։

11. Գիտե՛ս արդեաւք, թէ ի գիշերին յորում ըմբռնեցալ, որքան սուգ եւ արամութիւն կայր ի մէջ սիրեցեալ աշակերտաց իմոց. եւ տես զաստիճութիւն արամութեան սուրբ առաքելոցն, Զի մինչդեռ ո՛չ էին կայեալ գինուորքն զվարդազօտս իւրեանց, նոքա ո՛չ կարէին ի բաց ունել զայս, այլ ի խստութենէ տխրութեանցն անկանէին ի քուն որպէս գթմբբեալս. իսկ նա մեկնէի ի նոցանէ իբրեւ քարընկէց մի, եւ առ Հայր աղաւթէի Ապաքէն մարդ յորժամ մահու երկիրդ կրէ, քրտունքն ջուր է որ հոսի. իսկ նա վասն սիրոյ քոյ

Հանաների կողմից թուք առա երեսիս, ժողովորդի կողմից նախատվեցի. Գեղ Համար խաչն ուսովս բարձրացրի եւ Հանեցի Գողգոթա, քո սիրտ Համար Հայհովեցի, թշնամի Համարվեցի եւ խաչվեցի. Գեղ Համար գամերով ամրացվեցի, տեղով խոցվեցի, փշերից պսակ կրեցի, քացախ ու լեղի ըմպեցի. նախատինքի քղամիդ Հազա, աստվածային դուխս խոնարհեցրի, հոգիս Հոր ձեռքն ավանդեցի. Գեղ Համար մարդկանց կողմից պատանքվեցի, մարմնով դերձման իջա, հոգով դժոխք զնացի եւ արգելափակված հոգիներին ազատեցի, երրորդ օրը Հարություն առնելով քեզ էլ Հարություն ավեցի մեղքի մեռելությունից։

10. Ո՛վ մեղավոր, տես, թե ի՛նչ չափի սիրով սիրեցի քեզ, որովհետեւ երբ քեզ Համար մահն էի կրում խաչի վրա, Հայրն իմ մորմոգում էր, իսկ Հոգին Սուրբ տրամում էր մարդուն ստեղծելու Համար, իսկ ի՛նչ ասեմ հրեշտակների դասերի մասին, թե ինչպիսի անհնարին սուգ էր տիրում նրանց մեջ, քանզի կսկծից կիզվում էր երկինքը երկնավորներով [հանդերձ], երբ տեսան իրենց ստեղծողին խաչի վրա մահացած, կամ ինչպես բոլոր արարածներն անմխիթար սգալով ողբում էին, երբ տեսան իրենց Արարիչն խաչի վրա մերկացած եւ մահը Հանձն առած. Քանզի արեգակն ու յուսինը բոլոր աստղերով Հանդերձ մերկանում էին իրենց յուսից եւ խավարն էին Հազնայում. Երկիրը Հիմքից սասանվում ու դողում էր, ժայռերը ճեղքվում էին, եւ տաճարի վարդաօլբը երկու մասի էր բաժանվում. Մարմնով մեռածներն էլ չկարողացան Հանդուրժել, այլ գերեզմաններից վեր կենալով ողբում էին արարածների հետ՝ վկայելով իմ Հարության մասին։

11. Գիտե՛ս արդյոք, որ այն գիշերը, երբ բռնվեցի, որքան սուգ եւ տրամություն կար իմ սիրելի աշակերտների մեջ. Եվ տես Սուրբ Առաքյալների տրամության սաստիճությունը, որովհետեւ քանիդեռ չէին բռնել գինվորներն իրենց վարդապետին, նրանք չէին կարողանում բաց պահել իրենց աչքերը, այլ տխրության խստությունից ընկ մեջ էին ընկնում, ինչպես թմրածներ, իսկ նա հեռացել էի նրանցից մի քաթընկուց հեռավորությամբ եւ Հորն էի աղոթում, իրոք, երբ մարդը մահու երկյուղ է կրում, քրտինքը ջրի նման է

ա՛յնքան թոյլ ետու երկիրդինի յաստուածացեալ մարմինս իմ, որ քրտուռնքն իմ արիւնսխառն կայսակնացեալ եւ վտակ վտակ իջնէին ընդ ճակատս իմ. եւ մարմին իմ յահագին երկիրդէն սասանէր եւ դողայր յուսից մինչեւ ցգլուխս. եւ կայի անկեալ երես ի գետին եւ ուժգին գոյժամբ առ Հայր աղաւթէի, եթէ հնար է անցցէ քաժակս այս յինչէն:

12 Ո՛վ մեղաւոր՝ իմացի՛ր թէ ո՛րչափ սիրեցի զքեզ՝ զի յորժամ հրէայքն պաշարեցին զիս սուսեբաւք եւ քրաւք ջահւիւք եւ յապտեբաւք, ո՛չ կարէին ճանաչել զիս՝ Վասն զի ա՛յնքան ծարաւիք էին արեան իմոյ, զի որք անծանաթ էին զինչէն՝ եւ ո՛չ էին տեսեալ գաքանչելիքն իմ, զնոսա առաքեցին. զի մի՛ գուցէ ողորմեացին եւ փախուցեն, եւ ո՛չ ըմբռնեցին իսկ Սա հարցի քաղցր ժայնիւ՝ զո՞ խնդրէք. եւ նոքա ասեն՝ զթիսուս. ասացի՛ ես եմ. եւ նոքա յահէ իմ մէջ զդեռնի հարան. եւ Սա գթացեալ յարուցի զնոսա. իսկ նոքա ո՛չ ողորմեցան ինձ. Եւհար Պետրոս արով, եւ ի քաց եհան զուսկն ծառայի քահանայապետին. իսկ Սա զսուրն Պետրոսի արգելեալ յետս դարձուցի. եւ զհատեալ ուսկն առեալ եղի ի տեղին, եւ բժշկեցի. եւ ո՛չ այսու գթացան յիս:

13 Եւ զինչ ասացի զանողորմ բարուց նոցա. զի թէ անդամալոյծն՝ որ անկեալ կայր ի սրահին Բեդհեգդայ գեբեսուն եւ ութ մ. որ ա՛յնքան տէր ո՛չ ունէր՝ զի երբ ջուրքն յուղէին, մուծանէին զնա յաւազանն զի բժշկեցի. մինչ այլքն վաղմղաղակի ընդ յուղել ջրոյն իջնէին, եւ բժշկեալ զնային, իսկ տեսեալ իմ գտառապանս անդամալոյծին՝ գթացայ նմա եւ ողորմեցայ. եւ բժշկեալ ողջացուցի. դարձեալ տեսի ի տաճարին՝ եւ պատուիրեցի ասելով. այլ մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ եւս չար ինչ լինիցի քեզ, իսկ ի գիշերին յայնմ իկ մինչդեռ զինուորքն կային ի բացեալ՝ եւ ո՛չ էին մերձեցեալ յիս, անդամալոյծն այն վասն զի ճանաչէր զիս յորմէհեաէ բժշկեալ էի, իսկոյն փութացեալ ի թոհիս՝ եհաս առաջի իմ. եւ զառաջին ապտակն նա՝ եհար յերեսս իմ. եւ Սա ինչ ո՛չ արարի նմա, վասն զի մարդասէր եմ այլ եւ ի զղջանալն նորա արքայութեան իմոյ արժանացուցի զնա: Արդ եթէ դա՛ զայս գործեաց առիս. ապա անծանոթ հրէայքն եւ զի-

հոսում, իսկ Սա քո սիրո համար երկյուղն ա՛յնքան մոտեցրի իմ աստվածացած մարմնիս, որ քրտնէքն արյունսխառն էր հորդում եւ վտակ առ վտակ իջնում ճակատովս իսկ մարմինս իր մամոզը հոսթյամբ՝ ուսից մինչեւ գլուխս, սոսկալի երկյուղից սասանվում ու դողում էր, և [Սա] ընկել էի երեսով գետին եւ ուժգին գոյժամբ Հորն էի աղոթում՝ թե հնարավոր է, հեռացրու այս քաժակն ինձանից²³:

12 Ո՛վ մեղաւոր, իմացի՛ր, թե որչափ սիրեցի քեզ, քանզի երբ հրեաները սուսեբաներով ու բրիչներով, ջահերով ու յապտեբաներով պաշարեցին ինձ, չէին կարողանում ինձ ճանաչել, որովհետեւ ա՛յնքան ծարաւ էին իմ արյանը, որ ովքեր չէին ճանաչում ինձ և չէին տեսել իմ սքանչելիքները, նրանց էին ուղարկել, որպէսզի թերեւս չողորմեն և չազատեն ինձ՝ չբռնելով, իսկ Սա հարցրեցի քաղցր ժայնով՝ ո՛ւմ եք փնտրում: Նրանք ասացին՝ Հիսուսին, ասացի՛ Սա եմ, իսկ նրանք իմ ահից գետին ընկան: Սա գթալով կանգնեցրի նրանց, իսկ նրանք չողորմեցին ինձ: Հարվածեց Պետրոսը սրով և կտրեց քահանայապետի ծառայի ականջը, իսկ Սա արգելելով ետ դարձրի Պետրոսի սուրը և կտրված ականջը դրեցի իր տեղն ու բժշկեցի: Եվ սրանից հետո էլ չգթացին ինձ²⁴:

13 Եվ ի՞նչ ասեմ նրանց անողորմ բարքերի մասին, որովհետեւ թեև անդամալոյծ, որ Բեդհեգդայի սրահում երեսունութ մարի ընկած էր, որը ա՛յնքան անտէր էր, որպէսզի երբ ջրերը չարժեէին, մտցնեին նրան աժազանի մեջ, որ բժշկվի, մինչ ուրիշներն անմիջապէս ջրերի շարժման ժամանակ իջնում էին և բժշկված գնում: Իսկ Սա տեսնելով անդամալոյծին տառապանքը՝ գթացի նրան և ողորմեցի, բժշկելով առողջացրի, դարձյալ տեսա տաճարում և պատուիրեցի ասելով. «Այլևս մի՛ մեղանչիր, որպէսզի ուրիշ չար բան չլինի քեզ»²⁵, իսկ այն գիշերը, քանի դեռ զինվորները հեռու էին ու չէին մոտեցել ինձ, անդամալոյծս այն րանի համար, որ բժշկվելուց հետո ճանաչում էր ինձ, իսկույն շտապեց թոյնելով, հասաւ ինձ և առաջին ապտակը նա

23 Հմմտ. Դուկ. ԻԲ 39-46;

24 Հմմտ. Լուկ. ԺԼ 4-12;

25 Հմմտ. Լուկ. Ե 1-15;

նուրբ զինչ արարին ինձ ի գիշերին յայնմիկ եւ վասն սիրոյ մեղաւորիդ համբերեցի այսքանեացս եւ դու յայսպիսի բարի Արարչէս երես դարձուցանես, եւ զիս ի սուգ դառնութեան պահես:

Երեսիս, իսկ Ես ոչինչ չարեցի նրան, որովհետեւ մարդասեր եմ: Այլ եւրա զղջալու հետ իմ արքայութեան արժանացրեցի նրան: Արդ, եթե ես այսպէս վարչեց ինձ հետ, ապա անձնոթ հրեաներն ու զինվորներն ինչ արեցին ինձ այն գիշեր: Մեղավորիդ սիրո համար այսքան չարիքներին՝ համբերեցի, իսկ դու այսպիսի բարի Արարչիցս երես ես դարձնում եւ ինձ դառնութեան սգի մեջ ես պահում:

14 Ո՛վ մեղաւոր տե՛ս զսէր իմ ի վերայ քո՝ զի յորժամ ըմբռնեցին զիս, թողան զիս միայն աշակերտքն իմ՝ եւ ինքեանք փախան: Դառնա մի էր եւ զայլքն բազումք: Ոչխարս մի էր՝ եւ գազանքն յոյովք: Որոշմ մի էր՝ եւ արեանարուքն յաճախ՝ անմեղս յանապատի մի էր՝ եւ շանբարոյ որսաւորքն յողմք: Եղնս պարարակ մի էր՝ եւ գինաւորքն շաք՝ արդար աղաւնիս մի էր՝ եւ վայրենի թռչունքն բազումք: Ողջախոհ տատարակս մի էր՝ եւ սեւաթորմի ագռաւքն բազմեբամք: Եւ թէ զինչ գործեցին յայնժամ ընդիս՝ ասացից եւ զայն. Նախ մեղկացուցին զանկար պատմութեանն իմ, եւ ապա հանին զպարեգաւան իմ՝ բացին զգլուխ իմ, եւ կապեցին զձեռս իմ ի թիկանց կուտէ՝ արկին չուան ի պարանոցս իմ, եւ սկսան տանել: Եւ թէ ո՞րպէս, յուր եւ զայն. Նոքա որք յառաջմէ էին՝ քարչէին ի վերայ՝ երեսեացս, եւ որք զինչ ձաղկէին՝ զթիկունս: Որք ի յայմէ՝ ապտակէին զձեռաւորս, եւ որք ի ձախմէ՝ թքայից առնէին գերեսս: Որք ի բացեալ՝ հող արկանէին զգլխովս, եւ որք ի հեռուամասն զբարձեալ՝ հայհոյէին եւ անարգէին: Որք սակաւ մեքմ՝ ապանէին եւ կատակեալ ծաղր առնէին նախատանաւք: Կէսք փութով արշաւէին աւետատու յապարանս քահանայապետիցն: Եւ ապա զինչ իրորեւ լուան յաւեանաւորացն, փութանակի ձայն արձակեցին առ միմեանս՝ եթէ կապեալ են զԹիսուս եւ բերեն կապանաւք, եկա՛յք փութացո՛ւք ընդ առաջ նորա: Իսկ ո՞վ ոք էր յառաջ եկելոց բազմութենէն՝ որ ոչ եհար զիս. ո՞վ ոք էր որ ոչ ապտակեաց զիս. ո՞վ ոք էր որ ոչ ձաղեաց զիս. ո՞վ ոք էր որ ոչ եթուք յերեսս իմ. ո՞վ ոք էր որ ոչ կւփահարեաց զգլուխս իմ. ո՞վ ոք էր որ ոչ բռնցի եհար զպարանոց իմ. ո՞վ ոք էր որ ոչ բրաւք հարկանէր զթիկունս իմ: Ո՛վ ոք էր որ ոչ թշնամանեաց զիս բանիւ, կամ ոչ անարգեաց, կամ ոչ նախատեաց, կամ

14 Ո՛վ մեղավոր, տե՛ս իմ սերը քո նկատմամբ, որովհետեւ երբ բռնեցին ինձ, իմ աշակերտները ինձ մենակ թողեցին եւ իրենք փախան: Գառը միակն էր, իսկ զայլերը բազում, ոչխարը միակն էր, գազանները՝ շատ, որոշմ միակն էր, արյունարբուները՝ անապակաս, անապատի անմեղս վիակն էր, շնաբարո որսացողները՝ հողնաքանակ, պարարտ եգս միակն էր, իսկ մորթողները՝ բոլոր, արդար աղաւնիս միակն էր, իսկ վայրի թռչունները՝ բազմաթիւ, ողջախոհ տատարակս միակն էր, իսկ սեւաթույր ագռաւները՝ բազմեբամ: Եվ թե ինչ արեցին այնժամ ինձ հետ, կասեմ եւ այն. Նախ մեղկացրին ինձ իմ անզոր պատմութեանից, ապա հանեցին պարեգոս, բացեցին գլուխս, ձեռքերս կապեցին թիկունքի կողմից, պարանոցեցին պարանոցովս, այնուհետեւ սկսեցին ինձ տանել, իսկ թե ինչպէս, լսի՛ր եւ այն. Նրանք, որ առաջից էին, երեսիս էին խփում, իսկ ովքեր ետեւից՝ թիկունքից էին ձաղկում, որոնք աջից ծնոտիս էին ապտակում, ովքեր ձախից՝ թքում էին երեսիս, ովքեր մի կողմի վրա էին, հող էին լցնում գլխիս, իսկ ովքեր հեռու էին, բարձր ձայնով հայհոյում ու անարգում էին, ովքեր մի քիչ մոտ էին, այսպէսնում ու կատակում էին՝ նախատիքով ծաղր անելով: Ոմանք շտապում էին քահանայապետերի ապարանք, ինչպէս ավետիս տվողներ: Իսկ հետո ի՞նչ, երբ լսեցին ավետիս տվողներից, անմիջապէս հաղորդեցին միմյանց, թե կապել են Հիսուսին եւ բերում են կապանքներով, եկե՛ք, չտապեք Նրան ընդառաջ, իսկ ո՞վ էր, որ մոտ եկած բազմութունից չհարվածեց ինձ, Ո՛վ էր, որ չապտակեց ինձ, ո՞վ էր, որ չձաղկեց ինձ, ո՞վ էր, որ չթքեց իմ երեսին, ո՞վ էր, որ չբռնեցաւ եհարեց գլխիս, ո՞վ էր, որ բրիչներով չհարվածեց թիկունքիս Ո՛վ էր, որ չթշնամացավ ինձ հետ խոսքով, կամ չանարգեց, կամ չնախա-

ո՛չ արհամարհանց, կամ ո՛չ կատակեաց, կամ ո՛չ ծաղր արար, մինչև Նասուցին յապարանս կայիսփայ եւ Աննայի եւ Սա վասն սիրոյ քո զայս ամենայն կրեցի եւ դու առես զիս, եւ զմեզս սիրես:

15. Ապա եթէ ասեմ զոր ինչ արարին ընդիս, յորժամ յապարանան մուծին կայիսփայ եւ Աննային, զարհուրիս ի խելս. Ասացին՝ ո՛չ անիրաւարար դատիմք մեք զՅիսուս, այլ աւրինաք եւ դատաստանաւ. եղին առեան, եւ նստան քահանայապետքն Հանդերձ ծերոջք կացուցին սուտ վկայք. թէ Հակառակ Աստուծոյ է. թէ խափանիչ աւրինաց է. թէ լուծիչ շաբաթու է. թէ քակիչ տաճարի է. թէ Հայկոյիչ Աստուծոյ է. թէ զաւանդս ծերոց արհամարհէ. եւ այլ եւս բազումս: Եւ այնուհետեւ սկսան աղաղակ բառնալ եւ ասել՝ ոմանք թէ մահապարտ է, ոմանք թէ ի խաչ Հանել արժան է. այլք պատառէին զՀանդերձս՝ թէ Հարադործ է. եւ Սա տարեալ Համբերէի ամենայնի վասն մեղաւորիդ: Եւ անտի Հանել առարան ի տունն Աննայի, անտի յապարանս Պիղատոսի, անտի յիջեանս Հերովդէի, անտի զարձեալ յապարանս Պիղատոսի եւ զգիշերն ամենայն ո՛չ ետուն Հանգիստ ակնս թաւթափի մի, այլ չընծացուցանէին յապարանից յապարանս: Եւ թէ որչափ ծաղր եւ նախատինս եւ անարդանս եւ չարչարանս անցուցանէին ի գլուխս իմ զգիշերն ամենայն ի տարուբեր առնելն զայնոսիկ թողում, զի ո՛չ կարես տանել:

16. Եւ զի՞մոք լիցի քան զայն առաւել սէր՝ որ զքեզ սիրեցի, զի եւ ո՛չ մաւր իմոյ Մարիամու ողորմեցայ. Յորժամ տեսանէր մայր իմ զՄիածին Որդի իւր զարարիչս երկնի եւ երկրի ի վերայ խաչին մերկացեալ՝ եւ զմարմին իմ արիւնընուշտ ներկեալ՝ բւեռաւք պնդեալ՝ զկողս Հերձեալ՝ զերեսս իմ այլազունեալ՝ զգլուխս խոնարհեցուցեալ՝ զողբիս աւանդեալ Արդ՝ կարէ՞ ոք ի մարդկանէ կամ ի Հրեշտակաց իմանալ, թէ ո՞րքան սուգ ունէր նա. ո՞րքան կսկծէր. ո՞րքան այրէր սրտիւ. ո՞րքան մորմոքէր. ո՞րքան խարչատէր. ո՞րքան վառէր. ո՞րքան սգայր. ո՞րքան Հեծեծէր. ո՞րքան Հառաչէր. ո՞րքան տխրէր. ո՞րքան խռովէր. ո՞րքան աագնապէր. ո՞րքան յողուց Հանէր. Ո՞րպիսի ողբայր. ո՞րպիսի արտասուս Հողոյր. ո՞րպիսի երգս եղանակէր. ո՞րպիսի ձայնս արձակէր. ո՞րպիսի բանս բարբառէր. Զի՞մոք գիրկս խաչին արկա-

տեց, կամ չարհամարհեց, կամ չկատակեց, կամ չծաղրեց, մինչև Նասուցին կայիսփայ եւ Աննայի ապարանքը: Եվ այս ամենը քո սիրոյ Համար կրեցի, իսկ դու ատում ես ինձ և մեղքն ես սիրում:

15. Իսկ եթե ասեմ, թե ինչ արեցին ինձ Հետո, երբ կայիսփայի ու Աննայի ապարանքը մտցրեցին, կզարհուրան լսելուց. Ասացին՝ անիրավարար չենք դատում Հիսուսին, այլ օրենքով ու դատաստանով: Աստան կազմեցին և նստեցին քահանայապետերը ծերերով Հանդերձ, ներկայացրեցին սուտ վկաների, իբր Աստուծոյ Հակառակ է, թե օրենքը խափանող է, թե շաբաթը խախտող է, թե տաճարը քանդող է, թե Աստուծոյ Հայհոյող է, թե ծերերի ավանդը արհամարհում է և այլ շատ բաներ: Այնուհետև սկսեցին աղաղակել ու ասել, ոմանք թե մահապարտ է, ոմանք՝ թե խաչ Հանելու արժանի է, ոմանք Հանդերձներն էին պատում: Թե չարագործ է, եվ Սա մեղավորիդ Համար Համբերում էի ամեն ինչի²⁶, եվ այդտեղից Հանելով տարան Աննայի տուն, այնուհետև Պիղատոսի ապարանք, այնտեղից՝ Հերովդեսի իջեանատուն, այնտեղից՝ կրկին Պիղատոսի առջև: Ամբողջ գիշեր Հանգիստ չտվեցին աչքերիս, այլ տանում էին ապարանքից ապարանք: Եվ թե որքան ծաղր ու նախատինք, անարդանք ու չարարանք անցկացրին գլխովս, ամբողջ գիշեր տանելիքերելով, դրանք թողնում եմ, քանզի չես կարող գիմանար:

16. Եվ ինչպե՞ս կարող է այն բանից ավելի մեծ սեր լինել, որ քեզ սիրեցի, քանզի և իմ մայր Մարիամին չողորմեցի. Երբ իմ մայրը տեսնում էր ինձ իր Միածին Որդուն, երկնքի և երկրի Արարչին խաչի վրա մերկացած, մարմինս արյունաշողախ ներկված, մեխերով դամված, կողս Հերձված, երեսս գունաթափ, գլուխս խոնարհեցրած, Հողիս ավանդած: Արդ, կարո՞ղ է որեւէ մեկը մարդկանցից կամ Հրեշտակներից Հասկանալ, թե որքան սուգ ունեւր նա, որքան էր կսկծում, որքան այրվում սրտով, որքան մորմոքում, որքան տոչորվում, որքան էր վառվում, որքան էր սգում, որքան Հեծեծում, որքան Հառաչում, որքան տխրում, որքան խռովվում, որքան տագնապում, որքան Հողաց Հանում: Ինչպես

նէր. գիա՞րդ գրագողին իւր ձգէր առ իս, եւ ո՛չ հասանէր. գիա՞րդ յերկիր անկա-
նէր. գիա՞րդ Հոգ զգլխովն տալը. գի-
ա՞րդ կականէր. գիա՞րդ թախանձէր-
գիա՞րդ խանդաղատէր ընդդէմ Միաձ-
նիս իւրոյ մահացելոյ. գիա՞րդ գերկնա-
յին զաւրան ի յողբս խոնարհեցուցա-
նէր. գիա՞րդ զըզգալի տըրաժան յար-
աատուս շարժէր. գիա՞րդ զիւղաբեր կա-
նայան ընդ ինքեան յերկիր ընկենոյր.
Արդ ի ժամուն յայնմ իկ՝ մայրն իմ որ
զայսպիսի կակծիս կրէր, միռեա՞լ էր,
եթէ կենդանի. յարթուութեա՞ն էր, եթէ
յերազի. ի զգաստութեա՞ն էր, եթէ ի
թմբութեան. եւ այսքան աղետից
մար իմոյ Ես ո՛չ ողորմեցայ վասն քո,
եւ դու երեսս չըլես յինէն եւ ի թշնամ-
ւոյն կողմն դառնաս:

17. Ո՛վ մեղաւոր իմա՛ որ այժմ
քաղցրութեամբ կոչեմ զքեզ յապաշ-
խարութիւն, եւ դու ո՛չ լսես ինձ. եթէ
յանգղջութեանդ մեռանիցիս, մի՛ այն-
քան երկնչիւր ի բազմութենէ մեղաց
քոց՝ որքան իմ երախտեացս եւ ի չար-
չարանաց. զի քան զմեղաց քոց հատու-
ցումն՝ հազարապատիկ տանջելոց եմ
զքեզ ի հնոցի Հրոյն որ արհամարհեցեր
զյարձարանս իմ, եւ ունայնացուցեր
զմարդեղութիւնս իմ, եւ ի դուր հաներ
զիշումն իմ յերկնից յերկիր որ վասն
քո Չարչարանքն իմ զոր կրեցի վասն
մեղաւորաց, այն պարտք է ի վերայ
մեղաւորաց. զի թէ ապաշխարու-
թեամբ ոչ վճարեսցեն զպարտս չարչա-
րանաց իմոց եւ առցեն թողութիւն, ի
դատաստանի իմում զմեղաց իւրեանց
հատուցումն ա՛յն չափով եմ տալոց՝
որքան դործեցին. իսկ զպարտ չարչա-
րանաց իմոց հարիւրապատիկ զի ար-
համարհեցին:

18. Ո՛վ մեղաւոր ասա՛ ինձ զի՛նչ
վնաս տեսեր լԱրարիչս քո Քրիստոսէ,
որ այսքան առես զիս. կամ զի՛նչ բա-
րութիւն տեսեր ի սատանայէ, որ այդ-
քան սիրես, եւ զկամս նորա կատարես,
քո զագիր դործովդ. Եթէ ունկն մատու-
ցանես ինձ, ահա՛ այժմ զսատանայի
բարութիւն ցուցանեմ քեզ զոր արար.
Ո՛չ սատանայ էր՝ որ զմայր քո խա-

էր ողորում, ինչպիսի արտասուքներ հե-
ղում, ինչպիսի երգեր էր երգում, ինչ-
պիսի ձայներ արձակում, ինչպիսի
խոսքեր բարբառում, ինչո՞ւ էր գրկա-
րաց դեպի խաչը գցում իրեն, ինչո՞ւ էր
բազուկները ձգում դեպի ինձ և չէր
հասնում, ինչո՞ւ էր դեռնին ընկնում,
ինչո՞ւ էր Հոգը զլխով տալիս, ինչո՞ւ էր
ողորում, ինչո՞ւ էր թախանձում, ինչո՞ւ
էր խանդաղատում իր մահացած Միա-
ձնիս առջև, ինչո՞ւ էր երկնային զոր-
քերին ողբի մեջ խոնարհեցնում, ին-
չո՞ւ էր զգալի ախարածներին արտաս-
վելու մղում, ինչո՞ւ էր յուղաբեր կա-
նանց իր հետ գետնաթափալ դարձնում.
Արդ, այն ժամանակ իմ մայրը, որ այս-
պիսի կակծի էր կրում, մեռա՞ծ էր, թե
կենդանի, արթութեա՞ն մեջ էր, թե
երազի, զգաստութեա՞ն մեջ էր, թե թմ-
բութեան. Եվ իմ մոր կրած այսքան
դժբախտութիւններին Ես չողորմեցի
քո համար, իսկ դու երեսս ես դարձնում
ինձանից և թշնամու կողմն ես դառ-
նում:

17. Ո՛վ մեղաւոր, հսկացի՛ր, որ
այժմ քաղցրութեամբ եմ քեզ կանչում
ապաշխարութեան, և դու չես լսում
ինձ. Եթե անգղջութեան մեջ մեռնես,
մի՛ երկնչիւր այնքան քո մեղքերի բազ-
մութիւնից, որքան իմ երախտեանե-
րից ու չարչարանքներից, որովհետեւ
քո մեղքերի հատուցումից հազարա-
պատիկ անգամ ափելի տանջելու եմ
քեզ հնոցի կրակի մեջ, որ արհամարհե-
ցիր իմ չարչարանքները, ունայնաց-
րիւր իմ մարդեղութիւնը և իզուր
դարձրիր իմ էջըը երկնքի երկիր,
որը քեզ համար էր իմ չարչարանքնե-
րը, որ կրեցի մեղաւորների համար,
պարտք է նրանց վրա, որովհետեւ եթե
ապաշխարութեամբ չվճարեն իմ չար-
չարանքների պարտքերը և թողու-
թիւն ստանան, իմ դատաստանի ժա-
մանակ իրենց մեղքերի հատուցումն
այն չափով եմ տալու, որքան գործե-
ցին, իսկ իմ չարչարանքների պարտքը՝
հարիւրապատիկ ափելի, որովհետեւ
արհամարհեցին:

18. Ո՛վ մեղաւոր, ասա՛ ինձ, ի՛նչ
վնաս տեսար քո Արարիչ Քրիստոսից,
որ այսքան ատում ես ինձ, կամ ի՛նչ
բարութիւն տեսար սատանայից, որ
այդքան սիրում ես և նրա կամքն ես
կատարում քո զագիր գործովդ. Եթե
լսես ինձ, ահա՛ այժմ սատանայի բարու-
թիւնը ցույց կտամ քեզ, թե ի՛նչ
արեց. Սատանան չէ՞ր, որ քո մորն օձով

քնաց աւժիւն, եւ նովաւ զհայր քո Ադամ: Ո՛ր սատանայ էր՝ որ ետ ուտել հաւը քում զպտուղն: Ո՛ր սատանայ էր՝ որ մերկացոյց ի լուսեղէն պատմուհանաց: Ո՛ր սատանայ էր՝ որ փախոյց յերեսաց Աստուծոյ, եւ թաքոյց ի ներքոյ թզենուոյն: Ո՛ր սատանայ էր՝ որ ի ներքոյ անխժիցն Աստուծոյ մատնեաց զհայր քո եւ զմայր: Ո՛ր սատանայ էր՝ որ ետ արտաքսել յաստուածալայնելուէ դրախտէն անմահութեան, եւ դրաւեաց ի ներքոյ մահու: Ո՛ր սատանայ էր՝ որ զամս ինն հարիւր կսկծեցոյց ընդդէմ անմահական դրախտին սասակադին արտասուաւք: Ո՛ր սատանայ էր՝ որ զպաշտառութիւն լուսեղէն պատմուհանին հաւը քո՝ ի մաշկեղէն հանդերձ փոխարկեաց: Ո՛ր սատանայ էր՝ որ զանաշխատ վայելումն ի պտղոց դրախտին ի քրառնք երեսաց դարձոյց վարդ: Ո՛ր սատանայ էր՝ որ զրկեաց ի հրեշտակական աճմանէն՝ եւ արժանացոյց անասնական աճման, եւ այն՝ ցաւաւք եւ տրտմութեամբ: Ո՛ր սատանայ էր՝ որ զհոգին հաւը քո ճոճնդովք իւրովքն զամս Հինգ ազգար ի դժոխս արդեւեալ ազանաց, մինչեւ ես գթացեալ ողորմեցայ, եւ եկեալ խաչիւն ազատեցի: Արդ՝ եթէ ընդ նախնի հայրն քո Ադամ զայս արար, ընդ քեզ ապա զինչ կամի արեմի՝ որ այդքան սիրեա զսատանայ, եւ դու միտ դիր, զի եւ զգոյն սասցից:

19. Ո՛ր մեղաւոր՝ կամի զքեզ սատանայ ջնջել ի Հաւը Աստուծոյ որդեգրութենէ: Կամի որդուի ի Հոգւոյն Սրբոյ բնակութենէ: Կամի բաժանել զքեզ յՈրդւոյն Աստուծոյ եղբայրութենէ: Կամի զքաղցր սէրն Աստուծոյ Հաւը՝ որ զՄիածինս ետ վասն քո ի մահ, ի յատելութիւն փոխել: Կամի զերթեւեկութիւն Հոգւոյն սրբոյ՝ ի քէն արդելու: Կամի յաստուածային անճառ շնորհաց վայելչութենէն զրկել: Կամի զախրական տաճարդ Հիմնադասակ քակել: Կամի զԱրարչին իմաստութեանն յաւրինուած պատկերդ՝ ի յերկիր կոխել: Կամի զցանկալի արկղի երրորդութեանն՝ չարաչար մեղաւք եղծանել: Եւ այլն ի կարգին:

20. Ո՛ր մեղաւոր՝ որ սիրեազ զսատանայ, տես զցանկութիւն դորա վասն քո. Յանկայ սատանայ զաւաղանին շնորհն զոր ընկալար ի Հոգւոյն Սրբոյ՝ ի քէն եղծանել: Յանկայ զմկրտութեան

խաբեց եւ նրանով էլ՝ քո հայր Ադամին: Սատանան չէ՛ր, որ քո հորը պտուղն ուտել ւովեց: Սատանան չէ՛ր, որ [քեզ] մերկացրեց լուսեղէն պատմուհաններին: Սատանան չէ՛ր, որ փախցրեց Աստծո առջևից եւ թաքցրեց թզենու տակ, սատանան չէ՛ր, որ Աստծո անեծքին մատնեց քո հորն ու մորը: Սատանան չէ՛ր, որ աստվածալայնելու անմահութեան դրախտից արտաքսել ւովեց եւ մտցրեց մահվան իշխանութեան տակ: Սատանան չէ՛ր, որ սասակադին արտասուքով ինք հարյուր տարի կսկծեցրեց անմահական դրախտի առջև: Սատանան չէ՛ր, որ քո հոր լուսեղէն պատմուհանի պայծառութիւնը մաշկեղէն հանդերձի փոխեց: Սատանան չէ՛ր, որ դրախտի պտուղներինց առանց չարչարանքի վայելումը երեսի քրտինքով վաստակելու վերածեց: Սատանան չէ՛ր, որ զրկեց հրեշտակական ընթացքից եւ արժանացրեց անասնական աճման ու այն էլ՝ ցաւով եւ տրտմութեամբ: Սատանան չէ՛ր, որ քո հոր հոգին, իր սերունդներով, Հինգ հազար տարի դժոխքում արդելված պահեց, մինչեւ ես գթալով ողորմեցի եւ զալով՝ խաչով ազատեցի: Արդ, եթէ [Սատանան] քո նախահայր Ադամի հետ այս արեց, ապա քեզ հետ ինչպե՞ս կվարվի, որ այդքան սիրում ես նրան, եվ դու մտածիր, որովհետեւ քո մասին պիտի ասեմ:

19. Ո՛ր մեղաւոր, սատանան ցանկանում է քեզ ջնջել Հայր Աստծո որդեգրութեանից, կամենում է հեռացնել Սուրբ Հոգու բնակութիւնից, կամենում է քեզ բաժանել Աստծո Որդու եղբայրութեանից, կամենում է Հայր Աստծո քաղցր սերը, որ Միածինս քեզ համար մահվան մատնեց, ատելութեան փոխել, կամենում է քեզ զրկել Սուրբ Հոգու հետ հաղորդակցվելուց, կամենում է աստվածային անճառ շնորհների վայելչութեանից զրկել, կամենում է ատրուական տաճարդ Հիմնադասակ քանդել, կամենում է Արարչի իմաստութեամբ ստեղծված պատկերդ գետնակոխ անել, կամենում է երրորդութեան ցանկալի կերպարդ չարաչար մեղքերովդ եղծանել, եւ այլ բաներ ըստ կարգի:

20. Ո՛ր մեղաւոր, որ սիրում ես սատանային, տես դրա ցանկութեանը քո հանգեպ. Սատանան ցանկանում է աշխարհի շնորհը, որ ընդունեցիր Սուրբ Հոգուց, ապականել, ցանկանում

լուսապայծառ պատմուհանն զոր զգեցար՝ մերկացուցանել ծանկայ ի կենարար մարմնոյ եւ յարենէ իմմէ սովա՝ մահ զքեզ սառակել ծանկայ զերկնային հարսանեաց հանդերձ աղտեղացուցանել ծանկայ զյապտեր կուսութեան քո շիջուցանել ծանկայ զբացեալ դրունս առագաստի երկնաւոր փեսայիս ընդդէմ քո փակել ծանկայ զվայելուէ տունկդ աղենական դրախտին յարմատոց խելի ծանկայ զուռնդ գեղեցիկ՝ որ հաստատեալ ես ի ճշմարիտ որթս Յիսուս՝ սրով հատանել ծանկայ զանթառամ ծաղիկդ Արարչին խորշակաւ մեղաց թառամել եւ այլն ի կարգին:

21. Ո՛վ մեղաւոր՝ փորձեա՛ եւ զչարիւն սատանայի՛ որ սիրեադ զեւ Ջշարի՛ սատանայ՝ եթէ է՛ մեղացդ քոց զՋշարի՛ Ջշարի՛ յորժամ զգործեցեալ յանցանքդ խոստովանեսցիս: Ջշարի՛ յորժամ մեղայ ասելով առ Տէր՝ քո դարձցիս: Ջշարի՛ յորժամ անկեալ յերկիր՝ առ իս արտասուաւք պարտաւոր վերաւորի դառնապէս՝ յորժամ յինէն զթողութիւն մեղաց քոց ընկալցիս: Նախանձի՛ բորբոքմամբ Հրոյ՛ յորժամ զՏէրս քո ապաշխարութեամբ վերստին ի հոգիդ քո ընդունիցիս: Տոյորի՛ կակնմամբ յորժամ յԱրարչս քո պատուաւք մեծարիցիս: Տաղնապի՛ մեծաւ տանջանաւք՝ յորժամ անթարչամ բրաբիռնաւք պայծառացիս: Կատաղի՛ բարկութեամբ չարաչար յորժամ երկնային փառաւքս իմ պսակեսցիս: Մահանայ՛ չարութեամբ՝ յորժամ անվախճան կենաւք ընդ Հրեշտակս իմ պարառեալ յարքայութեանս երկնից բերկրութեամբ չրճուեսցիս:

22 Տե՛ս ո՛վ մեղաւոր, որ սիրես զսատանայ՝ եւ կատարես զկամս նորա, եթէ՛ զինչ խոստանայ քեզ: խոստանայ քեզ սատանայ բարութիւն՝ զանդունդս անդնդոց: խոստանայ քեզ վայելչութիւն՝ զգողեցեալ եւ շարաւալից՝ զառադտակալի եւ զազրակի տեսութիւն կերպարանաց իւրոց, որ դառնագոյն է քան զհուր գեհնին: խոստանայ քեզ զպարակցութիւն ժանտատեսիլ եւ զարշատեսիլ դասուցն դիւաց: խոստանայ քեզ հանգիստ՝ զկաթնայս անդնդային եռանդիցն, եւ զգողս Հրաբորբոք տապականին: խոստանայ քեզ պատմուհան՝ զխաւարն արտառքին, որ է թանձր եւ շաւշափելի ուր լալ աչաց է՝ եւ կրճել ատամանց: խոստանայ քեզ սեղան զծո-

է մկրտութեան լուսապայծառ պատմուհանը, որով զգեստավորվեցիր, մերկացնել, ցանկանում է իմ կենարար մարմնից ու արյունից սովամահ անեալ զքեզ սպանել, ցանկանում է երկնային հարսանիքի հանդերձ աղտեղացնել, ցանկանում է քո կուսութեան լապտերը հանգցնել, ցանկանում է երկնաւոր փեսայիս առագաստի բացված դռները քո դիմաց փակել, ցանկանում է աղենական դրախտի վայելուէ տունկդ արմատախիլ անել, ցանկանում է գեղեցիկ ոստղ, որ հաստատված ես ճշմարիտ Որբ Հիսուսին վրա, սրով կտրել, ցանկանում է Արարչի անթառամ ծաղիկդ մեղքերի խորշակներով թառամեցնել, եւ այլ բաներ ըստ կարգի:

21. Ո՛վ մեղավոր, փորձիր եւ սատանայի չարանալը, որ սիրում ես նրան, նշարանալ սատանան, եթե քո դործած մեղքերից զղջաս: Կշարանա, երբ գործած հանցանքներդ խոստովանես: Կշարանա, երբ մեղա՞ս ասելով քո Տիրոջը դառնալ: Կշարանա, երբ զետեսատարած արտասպագին աղաչես ինձ: Կվիրավորվի դառնապէս, երբ ինձանից քո մեղքերի թողութիւնը ստանաս: Կնախանձի բորբոքված կրակի նման, երբ ինձ՝ քո Տիրոջն, ապաշխարութեամբ վերստին քո հոգու մեջ ընդունես: Կտոյորվի կակնի՞նով, երբ ինձանից՝ Արարչից, պատիվներով մեծարվես: Կտաղնապի մեծ տանջանքով, երբ անթառամ բրաբիռներով պայծառանալ: Գարաչար բարկութեամբ կկատաղի, երբ իմ երկնային փառքով պսակվես: Կմահանա չարութեամբ, երբ անվախճան կյանքով իմ Հրեշտակների հետ պարտնած երկնքի արքայութեան մեջ բերկրութեամբ չրճես:

22 Տե՛ս, ո՛վ մեղավոր, որ սիրում ես սատանային եւ նրա կամքն ես կատարում, թե ինչ է խոստանում քեզ: խոստանում է քեզ [որպես] բարութիւն՝ անդունդների անդունդը: խոստանում է քեզ [որպես] վայելչութիւն՝ իր բորտացած եւ թարախակալած կերպարանքի տաղտկալի եւ զազրելի տեսութիւնը, որ ավելի դառն է, քան գեհնի հուրը: Դիւերի խմբերի դարձատեսիլ ու ժանտատեսիլ պարակցութիւնն է խոստանում քեզ: խոստանում է քեզ որպես հանգիստ՝ անդնդային բորբոքումների կաթնան եւ Հրաբորբոք տապակումների զոգը: Քեզ պատմուհան է խոստանում արտաքին խաղարը, որը թանձր է ու չոշափելի, որտեղ աչքերի

ցա լայնութեան յատակացն դժոխոց՝ խոստանալ քեզ զինչիք՝ զորդունքն անքուն եւ զվիրապէսն ահագին՝ Հրեղէն ծովուն խոստանալ քեզ կերակուր զկայս քրայից հայոցացն սարսուծելի իջնոցն խոստանալ քեզ ըմպելի՝ զսարսափելի հոսանս Հրեղէն գետոցն խոստանալ քեզ լապտերք՝ զցոլմունս շանթից հրաքորոքք փայլատակման կայծականցն թող զտարտարոսն եւ զայլսն ամենայն՝ զոր խոստանալ սատանայ իւրոց սիրողացն եւ կամարարացն

23. Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՛ր գերախտիս Արարչիս քո ոչ իմանաւ զի սատանայ յամենայն աւուր մահուանդ սպասէ, զի ի մեղս մեռցիս եւ Ծա աներեւոյթ զարուծեամբ իմով կիզեմ միշտ որպէս հրով եւ Հրեշտակք իմ հարկանեն զնա Հրեղէն սրով եւ ի բաց փախուցանեն ի քէն, զի մի՛ մահու վնասեացէ քեզ, Զիւ՛մէ չարն զի Ծա մարգանէր եմ եւ երկնչի՛ եթէ մարդ մեղաւոր կենդանի մնալովն յանկարծակի զղջացի, եւ ողորմութիւն գտցէ ի ձեռս աստուծոյ, եւ ելանիցէ յինքենէ, Ապա ընդէ՛ր ի բաց փախչիս ի քաղցր Քրիստոսէս ճումմէ, որ Հրեշտակք անդադար տեսանելով՝ ո՛չ յազենան ի քաղցրութենէ իմմէ՝ զի՛նչ չար կամիմ քեզ, որ այդպէս հրաժարիս յինէն, վասն այն՝ զի զմոլորեալք խնդրեմ, զի զկորուսեալդ գտանեմ, զի զվիրաւորեալդ սփոփեմ, զի զհաւատեալդ բժշկեմ, զի զընկզմեալդ վերաբերեմ, զի զտարաբերեալք ի հոգմոց Հանգուցանեմ, զի զծփեալդ ի յանցաց խոռովութեանց՝ ի նաւահանգիստն անեմ:

24. Ո՛վ մեղաւոր՝ ի մի՛տ առ թէ՛ զինչ կամիմ քեզ առնել եւ սիրեա՛ զիս որ սիրեցի զքեզ, եւ սիրեմ զքեզ, եւ սիրելոց եմ զքեզ, կամիմ ի հիւանդութենէդ բժշկել զքեզ, կամիմ ի մեռելութենէ մեղացդ յարուցանել, կամիմ յանփարատելի սղոյդ հանել, կամիմ ի դառն տրամութենէդ մխիթարել, կամիմ ի սասանիկ վերացդ բժշկել, կամիմ ի չար տառապանացդ գերծուցանել, կամիմ ի տոռանց կապանաց մեղացդ արձակել, կամիմ ի ծառայութենէ չարեացդ ազատել, Ո՛վ մեղաւոր՝ ծանի՛ր եթէ՛ անյիշաչար Տէրս քո զինչ խորհիմ

լացն է եւ ատամների կրճտոցը, խոստանում է քեզ որպէս սեղան՝ դժոխքի հատակներ լայնության ծոցը, Որպէս զոհ խոստանում է քեզ անքուն որդերին եւ Հրեղեն ծովի վիրապներին, Սարսուծելի իջմամբ քուրայի լմել լուծվող հատակին նստած՝ Հայոցները քեզ որպէս կերակուր է խոստանում, Հրեղեն դետերի սարսափելի հոսանքները՝ ըմպելիք, Քեզ լապտերներ է խոստանում կայծակների հրաքորոք փայլատակումների ցոլացող շանթերը, Թող տարտարոսն ու մնացած այն ամենը, ինչ որ խոստանում է սատանան իրեն սիրողներին եւ կամակատարներին:

23. Ո՛վ մեղավոր, ինչո՞ւ իմ Արարչիս երախտիքները չես հասկանում, որովհետեւ սատանան ամեն ուր մահվանդ է սպասում, որպէսզի մեղքի մեջ մեռնես, եւ Ծա իմ աներեւոյթ զորությամբ կրակի նման միշտ այրում եմ նրան, իսկ իմ Հրեշտակներն էլ հարվածում են Հրեղեն սրով եւ հեռացնում քեզանից, որպէսզի մահացու կերպով չվնասի քեզ, Չարք զիտի, որ Ծա մարգանս եմ, եւ երկնչում է, որ կարող է մեղավոր մարդը կենդանի մնալով՝ Հանկարծակի զղջա ու ողորմություն դառն (Աստուծոց եւ ազատի իրենից, Ուրեմն ինչո՞ւ ես փախում քո քաղցր Քրիստոսիցս, որ (նույնիսկ) Հրեշտակներն անդադար տեսնելով չեն հազեցնում իմ քաղցրությունից, Ի՛նչ չար բան եմ կամենում քեզ, որ այդպէս հրաժարվում ես ինձանից, Այն պատճառով, որ մոլորվածիդ եմ փնտրում, որ կորածիդ եմ գտնում, վիրավորվածիդ սփոփում, վնասվածիդ բժշկում, որ ընկղմվածիդ քարձրացնում եմ, որ հոգմից տարուբերվողիդ հանգստացնում եմ, որ խոռվության ալիքներից ծփացողիդ նավահանգի՛ստ եմ բերում:

24. Ո՛վ մեղավոր, մտածի՛ր, թե՛ ի՛նչ եմ կամենում քեզ առնել, եւ սիրի՛ր ինձ, որ սիրեցի քեզ եւ սիրում եմ քեզ եւ սիրելու եմ քեզ, Ծանկանում եմ հիվանդությունիցդ բժշկել քեզ: Ծանկանում եմ մեղքերիդ մեռելությունից հարություն տալ, ցանկանում եմ անփարատելի սղիցդ հանել, ցանկանում եմ դառն տրամությունիցդ մխիթարել, սաստիկ վերքերիցդ բժշկել, չար տառապանքներիցդ զերծ պահել, ցանկանում եմ մեղքերիդ կապանքների շղթաներից արձակել, չարիքներիդ ծառայությունից ազատել, Ո՛վ մեղա-

քեզ. Որոհւիմ զի անձամբ իմով եկեալ զանդուսեցի խոցուածս հոգւոյդ քո տե- սից. Որոհւիմ զի զգարչութիւնս դորա ձեռաւք իմովք լուացից. Որոհւիմ զի զաղտեսութիւն դորա դաստառակաւ իմով սրբեցից. Որոհւիմ զի զենիեալ փթութիւն դորա կտրեցից. Որոհւիմ զի զթարախն ի հոգիդ քո բռնեալ քամե- ցից. Որոհւիմ զի զարտասուս իմ աս- տուածային ի վերայ ազտեղութեան հոգւոյդ աղբիւրաբար հեղից. Որոհւիմ զի զբազմութիւն ամենայն չարեաց դորա ջնջեալ մաքրեցից. եւ յառաջին փառսն հասուցից. միայն զղջացի՞ր ի չարեաց քոց եւ դադարեա՞ւ. ի՞նչստովա- նեա՞ւ գլանցանս քո՞ եւ աստ մեզայ. եւ Ես ջնջեմ զբազմութիւն մեղաց քոց. թէպէտ եւ կարի սաստիկ Ես մեղու- ցեալ:

25. Ո՛վ դասք արդարոց հաւատա- րիմ ծառայք իմ, մի՛ զարմանայք ընդ անոխակալ Փրկիչս ձեր, եթէ՛ զիս որդ ալքան խանդաղատիս Տէրդ մեր եւ Արարիչդ ի վերայ մեղաւորաց. Արդ՝ մի՞տ դի՞ք, զի ասեմ ձեզ զսէր իմ՝ զոր ունիմ ի վերայ մեղաւորաց. Երամք ինունց դասուց հրեշտակացն՝ որոց թիւք բազմութեան անթուելիք են ի մարդկանէ եւ անգիտելիք, այնքան հրաքուն էութիւնքն եւ լուսապսակ բազմութիւնքն, յորժամ տեսնեն զսաստիկ սուգ իմ՝ զոր սգամ ի վերայ միոյ անդարձ մեղաւորի, ամենեքեանս առ հասարակ մեծաւ դողութեամբ ջա- նան մխիթարել զիս. եւ ո՛չ կարեն սա- կաւ մի՛հանդարտեցուցանել զսուգ իմ. զի վասն այնորիկ զմա՛հ խաչի յանձն առի, զի մի՛ ոք երբէք կորիցէ՛ Այլեւ զունդք ամենայն արդարոցն՝ որք կան առիս յարքայութեանս իմում, զոգան ողբալով առաջի իմ. եւ ո՛չ բաւեն փոքր մի փարատել զտրամութիւնս իմ:

26. Լո՛ւր եւ զայլ ահաւորս որ պատ- մեմ քեզ. Զի մայրս իմ Աստուածածին յորժամ տեսանէ զիս ի յայսքան տա- րակուսանս, ի ծունկս՝ անկակի առաջի իմ. եւ զստինսն բացեալ որով դիցի, ողբալով աղաղակէ՛ եւ զմատուանս տա- տանէ՛ ասելով. Վճիռեակ իմ Միածին, մի՞թէ՛ ո՛չ էր բաւական վիրտն այն եւ տրամութիւն՝ զոր կրեցեր յաշխարհի ի հրէիցն եւ ի խաչահանողացն, եւ զեռ եւս արտմի՛ս. Ընդէ՛ր ո՛չ ողորմիս մաւրս քո լալագին, եւ ո՛չ հանդարտիս

վոր, իմացի՛ր, թե՛ Ես՝ քո անհիշաչար Տերս, ինչ եմ մտածում քո մասին. Մտածում եմ, որ անձամբ գամ է հո- գուդ անբուժելի խոցերդ տեսնեմ. Մտածում եմ, որ դրանց զարչություն- ները իմ ձեռքերով լվանամ, աղտեղու- թյունները իմ դաստառակով սրբեմ, նեխած փտածութիւնը կտրեմ. Մտա- ծում եմ, որ քո հոգում բուն դրած թա- րախը քամեմ. Մտածում եմ, որ իմ աս- տվածային արտասուքը հոգուդ աղտե- ղության վրա աղբաւրաբար հեղեմ. Մտածում եմ, որ դրանց չարիքների բազմութիւնը ջնջելով մաքրեմ է առաջին փառքին հասցնեմ, միայն թե՛ զղջա քո [գործած] չարիքներից եւ դա- դարի՛ր [այլեւ գործելուց] ի՞նչստովա- նի՛ր քո հանցանքները եւ աստ մեղա՛ւ, եւ Ես կ՛ջնջեմ քո մեղքերի բազմութիւն- քը, թեպէտեւ խիստ մեղավոր ես:

25. Ո՛վ արդարների դասեր²⁷ եւ իմ հավատարիմ ծառաներ, մի՛ զարմացեք ձեր անոխակալ Փրկիչս վրա, թե՛ ինչ- յո՞ւս ես այսքան թախանձում, Տերդ մեր եւ Արարիչդ, մեղավորներիս հա- մար. Արդ, մտածե՛ք, որովհետեւ ձեզ իմ սերն եմ ցուլց տալիս, որ ունեմ մեղա- վորների հանդեպ. ինչ դաս հրեշտակ- ների խմբերը, որոնք բազմութիւնս թիվն անթվելի ու անիմանալի է մարդկանց կողմից, այնքան հրաքուն էութիւնները եւ լուսապսակ բազմու- թյունները, երբ տեսնում են իմ սաղ- տիկ սուգը, իմ սգում եմ մի անդարձ մեղավորի համար, բոլորն առհասա- րակ, մեծ երկյուղով փորձում են մխի- թարել ինձ եւ չեն կարողանում գեթ մի փոքր հանդարտեցնել իմ սուգը, որովհետեւ նրա համար խաչելությամբ մահը հանձն առա, որպեսզի որեւէ մեկը երբեք չկորչի. Այլեւ բոլոր արդարների զնդերը, որոնք ինձ մոտ են, արքայու- թյան մեջ, դողում են իմ առաջ ողբա- լով եւ չեն կարողանում մի փոքր իսկ փարատել իմ տրամութիւնը:

26. Լսի՛ր նաև ուրիշ զարհուրելի բաներ, որ պիտի պատմեմ քեզ. իմ մայրը՝ Աստվածածինը, երբ տեսնում է ինձ այսքան տարակուսանքների մեջ, ծունկի է զալիս իմ առջև եւ, ստիճենե- րը բացելով, որոնցով սնվեցի, ողբալով աղաղակում է, մասները շարժում է ասելով. Վճիռչա՛կ իմ Միածին, մի՞թե՛

27 Դաս - խումբ, շարք, դաս է սովորում հա- յու, երբ առաինանկարգում է տեղի ունենում ըստ խմբերի:

սակաւ մի ի տիրութենէդ, Ո՛ր էր բաւական մաւրս տառապելոյ կսկիծն այն եւ մորմոգնումն, յորժամ տեսի զՄիածինդ իմ ի խաչին, արիւնաներկ մարմնով մահացեալ եւ դեռեւս հրով կիզեմ գսիրաս իմ սուգ ունելովդ: Եւ այսու ամենայնիւ ընաւ ո՛չ գայ ի սիրտ իմ ուրախութիւն, որքան տեսանեմ զանդարձ մեղաւորն արտաքս ելեալ ի դաւթէ, եւ հեռացեալ ի հաւատէ իմմէ, եւ անկեալ ի ձեռս սատանայի վասն զի այնքան կսկծի սիրտ իմ՝ եւ տրամի հոգի իմ ի վերայ միոյ պնդարձ մեղաւորի, որ երկինս երկնաւորաւք, եւ երկիրդ երկրաւորաւք, եւ ծով ամենայն լրիւ իւրով իբրեւ յոչինչ համարին յաչս իմ:

27. Եւ մի՛ գարմանար ընդ այսքան աղէկիզելոյ իմ ի վերայ մեղաւորաց, եանիւր ո՛վ մարդ, զի յորժամ տնկես զբարունակ մի, եւ յեա երրորդ ամի աշխատութեան քո եթէ ո՛չ տացէ պտուղ քեզ՝ վիրաւորիս դու ընդ այն իսկ եթէ չորասցի, սգաս մեծաւ տրամութեամբ, թէ ի գուր աշխատեցայ դերիս ամս, եւ ջանն իմ կորեաւ: Ապա զիս՝ ո՛ր էս ո՛չ տրամեցայ ի վերայ մեղաւորին, որ վասն նորա յերկնից ի յերկիր իջի, ի կուսէ մարմինն առի, Աստուածս մարդ եղէ, եւ Տէրս՝ ծառայ: զամս երեսուն եւ երեք ի յերկրի լըջեցայ: Կենարար վարդապետութեամբս ի լսելիս մեղաւորաց միշտ քարոզեցի, սաստուածային նշանաւքս զբազումս բժշկեցի, ազգի ազգի չարչարանս եւ նախատինս կրեցի: Ի խաչին բարձրացայ: զարիւնս իմ գին ետու, եւ ի գերողէն առեալ փրկեցի: Արդ այս ամենայն չարչարանացս իմց պտուղ՝ փրկութիւն մեղաւորին է, իսկ եթէ մեղաւորն ի մեզս մեռանիցի, պտուղ չարչարանաց իմոց կորնչի եւ Ես ի խոր խոցոտիմ եւ վիրաւորիմ: զի ունայն եղեւ տնաւրէնութիւն իմ վասն նորա իսկ յորժամ մեղաւորն գղջանայ ի մեղաց իւրոց եւ գայ յուղղութիւն, ուրախանամ Ես եւ ցնծամ: յայնժամ ցնեայ ընդիս Հայրն իմ եւ Հոգին Սուրբ: Ուրախանան եւ ամենայն Հրեշտակք իմ: Հրեռնին ամենայն գունդք արդարոց, եւ ցնծացեալ բերանս մայր իմ Թագուհի: Եւ ի միասին պար առեալ տաւնախմբութիւն մեծ կատարեն յերկինս առա-

հերիք լէր այն վիշտն ու տրամալթյունը, որ կրեցիր աշխարհում հրեաներից ու խաչ հանողներից և դեռեւս տրամումն ես ինչու չես ողորմում քո լաւագին մորը և տիրութիւնիցդ չես հանդարտւում մի փոքր իսկ Բազմական չէ՞ր մորս տառապանքի ու մորմոգնման այն կսկիծը, երբ տեսա իմ Միածինդ խաչի վրա արյունաներկ մարմնով մահացած և դեռեւս սգալովդ հրախեղ ես անում իմ սիրտը: Եվ այս ամենի պատճառով իմ սիրտը ընալ չի ուրախանում, ինչքան որ տեսնում եմ անդարձ մեղավորին դուրս եկած գազթից և հեռացած իմ հոտից ու ընկած սատանայի ձեռքը: Բանգի այնքան է կսկծում սիրտս ու տրամում հոգիս մի անդարձ մեղավորի համար, որ երկինքը երկնավորներով և երկիրը երկրավորներով ու ծովն իր ամբողջութեամբ իբրեւ ոչինչ է համարվում իմ աչքում:

27. Եվ մի գարմացիր մեղավորների համար իմ այսքան աղէկիզելոյս համար: Իմացիր, ո՛վ մարդ, որ երբ անկում ես մի շիվ, և քո աշխատանքից երեք տարի հետո պտուղ չի տալիս քեզ, վիրավորվում ես այդ բանից, բայց եթէ չորանա, մեծ արամութեամբ սգում ես, թե՛ իդուր աշխատեցի երեք տարի, և կորով իմ ջանքը իսկ ինչպե՞ս չտրամեմ մեղավորի վրա, ուր նրա համար երկնքից երկիր իջա, հոլխից մարմին առաւ, Աստվածս մարդ եղաւ և Տէրս՝ ծառա, երեսունեքեք տարի երկրում լըջեցի, կենարար վարդապետութեամբս մեղավորների ականջներին միշտ քարոզեցի, սաստուածային նշաններով շատերին բժշկեցի, տեսակտեսակ չարչարաններ ու նախատինքներ կրեցի, խաչը բարձրացաւ, արյունս որպես գին ավեցի և գերողից ազատելով փրկեցի: Արդ, իմ այս բոլոր չարչարաններին պատուք մեղավորի փրկութիւնն է, իսկ եթէ մեղավորն մեղքի մեջ է մեռնում, ապա իմ չարչարանքների պտուղը կորչում է, և Ես խորապես խոցվում ու վիրավորվում եմ, որովհետեւ անխառն եղալ իմ տնօրինութիւնը նրա համար: Իսկ երբ մեղավորը զղջա իր մեղքերից և ուղղվի, կուրախանամ Ես ու կցնծամ: Այն ժամանակ կցնծան ինձ հետ իմ Հայրն ու Սուրբ Հոգին: Կուրախանան և իմ բոլոր Հրեշտակները, կհրճվեն արդարեւորի բոլոր գնդերը, և ցնծալով կբերկրի իմ Թագուհի մայրը, ու միասին պար բռնած մեծ տոնախմբութիւն կկատա-

լի իմ. վասն զի պտուղ չարչարանաց իմոց ոչ կորեաւ:

28. Ո՛վ մեղաւոր՝ սիրեա՛մ զիս որ սիրեմա՛ս զքեզ. հրաւիրեա՛մ զիս առ քեզ դարձալիս հրեշտակաց եւ հրեշտակապետաց, եւ զցանկալիս արդարոց. ո՛չ զարշիմ ի հողեղէն յարկացդ. չտաղաւամ յաղջառութենէդ. չխոտեմ զան՝ մաքրութիւնդ: Մաքրեա՛մ զառաքատ սրտիդ. ջանա՛մ բուրել հոտ անուշութեան զաղաւթս. պատրաստեմ՝ սեղան սվարսդ. պարգեւեմ՝ գինի զողորմութիւնդ. սփռեմ՝ պատառակալ զխոստովանութիւնդ. փթթեմ՝ վարդ զսէրդ. ա՛րկ բազմակալ՝ զապաշխարութիւնդ. յարեմ՝ զտառանդի մատանցդ առաջի իմ ի քնարահարութիւն. կոչեմ՝ զսուրբս քեզ ի քարեխաւսութիւն՝ եւ ինձ հիւրամեծար. բաւական է ճաշդ. առա՛տ է սեղանդ. պայծա՛տ է կոչումդ. Եւ եթէ ախորժեալ, զՀայր իմ ընդիս անեմ. Ես եւ Հայր իմ եկեսցուք, եւ աւթեալսս առ քեզ արասցուք: Զայս ա՛յսպէս արասցես, եւ զիս երախտաւոր առաջի Հայր իմոյ կացուցես. զի խորհուրդ զայստեան իմոյ յաշխար ո՛չ ունայն երեւեսցիս ալլ ծանիցի մարդկայինն բնութիւն առաւել քան զհրեշտակաց եւ զհրեշտակապետաց. Եւ խրախացեալ Հայր իմ աւրհնեսցէ զքեզ բերանովն իւրով յաւրհնութիւնս՝ որ ո՛չ անցանէ. եւ պատրաստեսցէ քեզ գործդ ի վեր քան զոնկութիւնս հրեշտակաց. ուր Եսն եմ՝ անդ եւ պաշտանեայն իմ եղիցի. եւ կեանքն ձեր ծածկեալ են ինեւ առ Աստուած Եւս ի միւսանդամ զայստեան իմոյ՝ զաւրհնեայն ի հաւրէ իմ. մէ՛ջ մերձեցուցից առ Հայրն իմ, եւ ասացից. «Ահաւասիկ ես եւ մանկունք իմ զորս ետուր ցիս»:

29. Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՛ր ո՛չ երկնչիս յանդ զաւրութիւնէ իմմէ՛, որ ո՛չ զաս յուղջութիւն, մինչ սիրով եւ քաղցրութեամբ կոչեմ զքեզ յապաշխարութիւն: Ծանի՛ր զի ի հայեին իմ՝ երկիր ի հիմանէ դոգայ, եւ լերինք որպէս զմոմ հալին, եւ ծովք իբրեւ զխուռ չորանան, եւ դժոխք յեւս խորագոյն անդունդս ընկզմի. Եւ զիա՛րդ ո՛չ զարհուրիս, զի զաւրութիւն իմ զհողմ զհուր հատանէ՛ կամ թէ՛ որպէ՛ս ո՛չ սոսկաս, զի անճառ բնութիւնք ահեղակեալից հաշեալ տապալին ի հրակիզմանէ փայլատականց ահաւորութեան իմոյ. կամ զիա՛րդ ո՛չ սարսափիս, զի սերովքէք եւ քերովքէք

րեն երկնքում իմ առջեւ, որովհետեւ իմ չարչարանքների պտուղը չկորավ:

28. Ո՛վ մեղաւոր, սիրի՛ր ինձ, որ սիրում եմ քեզ, Հրավիրի՛ր ինձ քեզ մոտ՝ հրեշտակների և հրեշտակապետների բաղձալիս, արդարների ցանկալիս: Զեմ զգվում հոգեղեն օթևանիցդ, չեմ ժանձրանում աղքատութիւնիցդ, չեմ անգոհում անմաքրութիւնդ: Մաքրի՛ր սրտիդ առաքատը, փորձի՛ր բուրել աղութքի անուշութեան հոտը. վարքդ սեղան սարքիւր. որպես գինի ողորմութիւնդ պարգեհիւր, որպես սփռոց խոստովանութիւնդ տարածի՛ր, որպէս վարդ սերդ թող փթթի, որպէս ճրագ ապաշխարութիւնդ դի՛ր, տառնաղյա՛մ: 28 մատենդ իմ առաջ լարիք քնարահարութեան համար, կանչի՛ր սրբերին քեզ համար քարեխոսելու և ինձ մեծարելու: Բավական է ճաշդ, առատ է սեղանդ, պայծառ է կոչումդ: Եվ եթե ցանկանաս, իմ Հորն ինձ հետ կրեմեմ. Ես և Հայրս կգանք. և օթևաններ կպատրաստենք քեզ մոտ: Այս ալսպես կանես և ինձ իմ Հոր առջև երախտաւոր կկանգնեցնես, որպեսզի եւ իմ աշխարհ զայստեան խորհուրդը ունայն չերեւա, ալլ հասկացվի, որ մարդկային բնութիւնն առավել է, քան հրեշտակներն ու հրեշտակապետները: Եվ իմ Հայրը ուրախանալով կօրհնի իր անանց օրհնութիւնամբ. Եվ քեզ համար աեղ կպատրաստի հրեշտակների քնակատեղից էլ վեր. «Որտեղ Ես եմ, այնտեղ և իմ պաշտոնյանները կլինեն»:

29. Ո՛վ մեղաւոր, ինչպե՛ս չես երկնչում իմ ահեղ գորութիւններից և չես ուղղվում, մինչդեռ սիրով և քաղցրութեամբ կանչում եմ քեզ ապաշխարութեան, իմացի՛ր, որ իմ հայացքից երկիրը հիմքից դողում է և լեռները ինչպես մոմ հալվում են, ծովերը հարդի նման չորանում են, դժոխքը հեղցով անդունդների մեջ է ընկզմվում: Եվ ինչպե՛ս չես զարհուրում, քանզի իմ

28 Տաւր աղեղ ունեցող, ինչպիսին էր Դավիթ մարգարէի քնարը:

29 Հմտա. Հովհ. ԺԲ 26;

30 Հմտա. Ես. Ը 18;

ծածկեն զդէմս իւրեանց բողանիւթ թեւաւք յահարկութենէ իմմէ: Եւ զի՝ ա՛րդ ո՛չ դողաս, զի թէ կայր Հնար փախստեան, ո՛չ կարէր կալ երկինք առաջի իմ: Նա՛ եւ ամենայն տարրական անասակք, եւ երկիր լրիւ իւրով, Հանդերձ անդնդային հաստատութեամբն Հեղոյր յայլեւս անհուն խորութիւն յերկիւղէ իմմէ: Եւ կամ ո՛րպէս ո՛չ սասանիս, զի թէ երկինք երկնից ունէր եւս տեղի թաքստեան, ո՛չ Հանդուրժէր կալ ի ներքոյ պատուանդանի ոտից իմոց ի յահէ իմմէ: Եւ կամ զի՛ ա՛րդ ո՛չ պակնուս, զի եթէ դոյր Հնար ծածկութեան, ամենայն բանակք անմահից դիմեալ անկանէին ի նա, եւ թաքնէին յերկիւղալի արփիափայլ ճառագայթից իմոց: Եւ վասն այն ներեմ քեզ, զի մի կորիցես գլաւաւեանական կորուստն: Եւ ի զդ՝ լուսն եկեալ փրկեացիս ի Հրոյ գահէնին: Եւ դու արժամարհես զԱրարիչս քո, եւ ո՛չ երկնչիս եւ դողաս ի յահեղ զաւրութենէ իմմէ:

30. Ո՛վ մեղաւոր՝ մինչդեռ Ես քաղցրութեամբ խաւսիմ ընդ քեզ, երկնչիւր լինէն, ողորմեաց քեզ, զի եթէ ի Հրեշտակս իմ ո՛չ խնայեցի, որ ընդդէմ իմ Հպարտացան, այլ ի յերկնից ի յանդուներս իջուցի բարկութեամբ իմով: Եւ առ Նոյի՛ որ յաճախեցան ի պոռնկութիւնս, զայնքան րազմութիւն մարդկան առ հասարակ ջրհեղեղաւն Հեղձուցի ԶՍողոմ եւ Գոմոօր՝ որ արտաքոյ բնութեան զչարիսն գործէին, երկնատեղաց բողովն կիզեալ մաշեցի: Զգորոզն փարաւոն՝ որ խտացաւ ընդդէմ իմ, բազմութեամբ գաւարաց իւրոց ի ծովն Կարմիր ընկղմեցի: Զկորցիւնսն եւ զաբխիոնեանքն՝ որ զքահանայութիւն իմ բռնութեամբ յափշտակել կամէին, գերկու Հարիւր եւ յիսունսն ի Հրոյ բուրվառացն այրեցի: Եւ զբանական Աբիրոնի՛ գերկիր պատառեալ յանդուներս ընկղմեցի: Զերիբով, որ ընդդէմ իմ թշնամի դարձաւ, զպարիսպ նորա որպէս զլուր Հեղի: Եւ զբնակիչս

զորութիւնը փոթորիկն ու բոցը դա՛գարեցնում է: Կամ ինչպե՞ս չես ստակում, որովհետեւ ահեղակերպ անճառ բնութիւնները Հալվելով տապալկվում են իմ ահեղ կերպարանքից բխող Հրակեղ փայլատակումների ահաբեկութիւնից: Ինչպե՞ս չես սարսափում, երբ սերովբեներն ու քերովբեները իրենց դեմքերը բողանալով թևերով ծածկում են իմ ահաբեկութիւնից: Ինչպե՞ս չես դողում, քանզի եթե փախուստի Հնարավորութիւն լիներ, չէր կարողանա երկինքն իմ առջև կանգնել: Նա, ինչպես բոլոր տարրերը իրենց տեսակներով, երկիրն իսր ամբողջութեամբ անդնդային հաստատութեամբ Հանդերձ, իմ երկիւղից թափվում է անհուն խորութեան մեջ: Կամ ինչպե՞ս չես սասանվում, որովհետեւ եթե երկինքները երկինքը թաքնվելու տեղ ունենար, իմ ահից չէր Համարձակվի իմ ուղեքի պատվանդանի տակ մնալու: Եվ ինչպե՞ս չես ապշում, որովհետեւ եթե Հնարավոր լիներ ծածկվելու, անմահների բոլոր բանակները շարժվելով կընկնէին այնտեղ եւ կթաքնվէին իմ երկիւղալի արփիափայլ ճառագայթներից: Եվ նրա Համար եմ ներում քեզ, որպեսզի չկորչես Հալիւտեանական կորստով, այլ զղջալով փրկվես գահէնի Հրից, իսկ դու արժամարհում ես քո Արարչին եւ չես երկնչում ու դողում իմ ահեղ զորութիւնից:

30. Ո՛վ մեղավոր, մինչդեռ Ես քաղցրութեամբ խոսում եմ քեզ Հետ, երկնչիւր ինձանից՝ ողորմիր քեզ, քանզի եթե լխնայեցի իմ Հրեշտակներին, որ իմ դեմ Հպարտացան, այլ իմ բարկութեամբ երկնքից անդուներն իջեցրի, ինչպես նաեւ Նոյի ժամանակ, որ ընկան պոռնկութեան մեջ, այդքան մարդկանց ջրհեղեղով խեղդեցի: 31. Սողոմն ու Գոմոօրը, որ բնականից գուրս չարիքներ էին գործում, երկնահորդ բոցով վառելով վերացրեցի: 32. Իմ դեմ Հպարտացող գոռոզ փարավոնին իր գործերի բազմութեամբ Կարմիր ծովում խորտակեցի: 33. Կորիւսաներին ու աբիրոնյաններին, որոնք իմ քահանայութիւնը բռնութեամբ հափշտակել էին ցանկանում, երկու Հարիւր Հի-

31 Հմմտ. Մենդ. 2 1-8; Է 1-24;

32 Հմմտ. Մենդ. ԺԹ 1-29;

33 Հմմտ. Մենդ. ԺԴ;

նորա ի սուր սուսերի մաշեցի ձեռամբ ծառային իմոյ Յեսուայի Զգաւոսն Սենեքարիմայ արքային Ասորեստանեայց որ Հայհոյեաց զանուն իմ Սուրբ, զհարիւր եւ ութսուն եւ հինգ Հազարսն ի դուռն քաղաքին իմոյ Երուսաղէմի ի յական թաւթափին ի մէջ գիւնդին՝ ետու Հրաման Հրեշտակի իմոյ, զի սատակեաց զնոսա Հրեղէն սրով իսկ արդ՝ ով է որ Հակառակ կամաց իմոց գործէ, եւ ո՛չ չարաչար պատուհասի. նո՛յն Աստուածն եմ, եթէ ի բազումս ո՛չ խնայեցի, նոյնպէս եւ ի միւր. Եթէ քաղցրութեան ձայն իմոյ ո՛չ լուիցես, եւ զղջաացից ի մեղաց եւ դարձցիս, Հարիւրապատիկ եւս զքեզ առաւել տանջեցոց եմ քան զնոսա ի գեհեան Հրոյն. որպէս ասացի, թէ՛ «Դիւրագո՛յն լիցի յաւուրն դատաստանի սողոմայեցւոց եւ գոմորացւոց քան քաղաքիս այսմ իկն»:

31. Ապա եթէ ասիցես ընդիս, Տէ՛ր իմ՝ այսուհետեւ եւ ես սարսիմ եւ դոգամ մեծաւ երկնայիւ յանդ զաւրուութենէ քումմէ, որպէս եւ ամենայն արարածք. բայց զի՞նչ արարից, քանզի տարակուսիմ ի բազմութենէ մեղաց իմոց, եթէ գիա՞րդ ողորմեսցիս եւ թողուցուս ինձ իսկ արդ՝ ի միւս առ զանունս իմ, եւ ուրախ լեր. եւ մի՛ տարակուսիր ընդ բազմութիւն մեղաց քոց, Անուն իմ ողորմած է. անուն իմ Երկայնամիտ է. անուն իմ Բազումողորմ է. անուն իմ Անոխակալ է. անուն իմ Անյիշաչար է. անուն իմ Քաղցր է. անուն իմ Ամենաբարի է. անուն իմ Մարդասէր է. Անուն իմ Թփիչ Հիւանդաց է. անուն իմ Յարութիւն անկեցոց է. անուն իմ Կեանք մահացեցոց է. անուն իմ Լոյս խաւարեցոց է. Անուն իմ Փրկիչ գերեցոց է. անուն իմ Նորոգիչ հնացեցոց է. անուն իմ Փախչ մոլորեցոց է, եւ այլն ի կարգին: Եւ դու ընդէ՛ր տարակուսիս ի բազմութենէ մեղաց քոց:

32. Եւ որովհետեւ խոստացար ինձ, թէ՛ այսուհետեւ եւ ես երկնչիմ ի Քրիստոսէջ իմմէ, եւ տարակուսեց քո վասն շատութեան մեղացդ էր. նմանպէս եւ նա այսուհետեւ յաւելում զսէրն իմ, զգութն իմ եւ զողորմութիւն իմ ի վերայ քո. եւ խրատ տամ քեզ՝ եթէ զինչ

սուն Հոգու բուրվանքերի կրակով այրեցի, իսկ Աթիրոնի բանակը երկիրը պատռելով անդունդներում խորտակեցի³⁴, իմ դեմ թշնամացած Երեբովի պարիսպը ջրի նման թափեցի եւ նրա բնակիչներին սուսերի սրով կոտորեցի իմ ծառա Հեռուի ձեռքով³⁵, Ասորեստանի արքա Սենեքերիմի զորքը, որ Հայհոյեց իմ Սուրբ անունը, Երուսաղեմ քաղաքի դռան առջև, Հարյուր ութսունհինգ Հազար հոգու, մի ականթարթում, գիշերվա մեջ, Հրամայեցի իմ Հրեշտակին, որ ռպանի նրանց Հրեղեն սրով³⁶, իսկ արդ, ով է, որ իմ կամքին Հակառակ է գործում եւ չարաչար չի պատուհասվում. Նույն Աստվածն եմ, եթէ չառեցին չխնայեցի, նույնպէս եւ մեկիւր Եթէ իմ ձայնի քաղցրութիւնը լին լսում եւ լին զղում մեղքերից ու դարձի գալիս, գեհեանի Հրի մեջ Հարյուրապատիկ առավել քեզ եմ տանջելու, քան նրանց ինչպես ասացի, թէ՛ «Ավելի հեշտ կլինի դատաստանի օրը սողոմացիների եւ գոմորացիների Համար, քան այս քաղաքի Համար»³⁷:

31. Իսկ եթէ ասես ինձ. «Տէ՛ր իմ, այսուհետեւ ես մեծ երկնայւղով կտարսեմ ու կղողամ Քո անեղ գորութիւնից, ինչպէս եւ բոլոր արարածները, բայց ի՞նչ անեմ, քանզի տարակուսանքի մեջ եմ իմ մեղքերի բազմութիւնից, թե ինչպե՞ս կողորմես եւ թողութիւն կտաս ինձ: Իսկ արդ, մտապահի՛ր իմ անունը, ուրախացիր եւ մի՛ տարակուսիր՝ քո մեղքերի բազմութիւնից. իմ անունը Ողորմած է, իմ անունը Երկայնամիտ է, Բազումողորմ է, Անոխակալ է, Անհիշաչար է, Քաղցր է, Ամենաբարի է, Մարդասէր է, իմ անունը Հիվանդների Թփիչ է, Ընկածների՝ Հարութիւն է, մեռածներին Կյանք է, խավարյալներին Լոյս է, Անունս իմ գերեզմաններին Փրկող է, Հնացածներին Նորոգող է, մոլորվածներին Փանոջ է, եւ միւսներն ըստ կարգի Արդ, դու ինչո՞ւ ես տարակուսում քո մեղքերի բազմութիւնից»:

32. Եվ որովհետեւ ինձ խոստացար,

34 Հմմտ. Թվոց 22;

35 Հմմտ. Հեռու 21

36 Հմմտ. Բ Մատթ. Ը 19-20;

37 Հմմտ. Մատթ. 23 15;

արասցես դու Ո՛վ մեղաւոր՝ միայն զայս արասցես, զի հրաժարեսցիս ի հնազանդութենէ չար կամացն սատանայի, եւ հետացիս ի պիղծ գործոցդ սովորութենէ. եկեալի՛ր ի զղլումն որպէս զՂամէք. ասա՛ առ Հայր թո՛ մեղայ, որպէս զանառակ որդին. խոստովանեալ գրադմութիւն մեղաց թոց, որպէս զմարգարէն Դաւիթ. ապաշխարեալ զանաւրէնութիւնս թո որպէս զՄանասէ. աղաթեա՛ առ Տէր, ասելով՝ Աստուած քաւեա՛ գիս զմեղաւորս, որպէս զմաքսաւորն. արտասուեա՛ զլանցանս թո, որպէս զՊետրոս. դադարեաց ի չար գործոց թոց, որպէս զկիրն պոռնիկ. ասա՛ յիշեալ զիս յարքայութեան զուժ, որպէս զաւագակն, եւ տես եթէ՛ զինչ արարից ամենազաւր Տէրս թո զքաղմութիւն մեղաց թոց:

33. Ո՛վ մեղաւոր՝ եթէ ի տուր եւ յառ շնչոյդ գեաւթանասնեկին եաւթն եւ մեղուցեալ. եւ թէ՛ անթիւ են չարիք թո քան զաստեղս երկնից. կամ անհամար է անաւրէնութիւն թո քան զալիս ծովու. եւ կամ շատ է քան զաւագս որ ընդ ոլորտս տիեզերաց. եւ թէ՛ յաճախ քան զշիրթս անձրեւաց. կամ թաղում քան զմանրամաղ փոշիս՝ որք տարուբերին ընդ աւդս համատարած. Եւ թէ՛ մեծ եւ ծանր իցէ չարիք թո քան զամենայն լեռինս որ յերեսս երկրի. Եւ թէ՛ անաւրէնութիւնդ թո բարձրացեալ իցէ քան զերկինս, կամ խոնարհեալ դասանիցի քան զանդունդս, եւ կամ լայնացեալ քան զոլորտս նագաց երկրի, կամ տարածեալ անդր քան զշրջանս եթերական ալթոց. Արդ՝ եթէ՛ մեղք թո եւ չարիք ըստ այսմ չափոյս իցէ որ ասացի, ի զղջանալդ թո քան զթարթիւ աչացդ, եւ քան զտուրեւառութիւն շնչոյդ, քան զարագութիւն նշուլից արեգական, եւ քան զերեւումն կայծական որ ի յաւադ, եւ քան զմտացդ ընթացումն, առաւել՝ եւս թիւրապատիկ քան զարագութիւն սոցա քաւութիւն շնորհեմ ամենայն բազմութեան մեղաց թոց. քանզի ամենակարող Արարիչ եմ՝ եւ ոչ կարաւորմ ժամանակաց ի քաւութիւն մեղաց. Եւ որպէս պղպշակ լըոյ՝ ի յառնելն այնքան խոտազին հողմոյ մինչ

թե՛ այսուհետեւ եւ ես կերկնչեմ իմ Քրիստոսիցդ, իսկ տարակուսանքդ մեղքերիդ շատության պատճառով էր. նմանապես եւ այսուհետեւ կապեալացնեմ սերս, գութս ու ողորմութիւնս եւ կիրառեմ, թե՛ ինչ պիտի անես, որպեսզի հրաժարվես սատանայի չար կամքին հնազանդվելուց եւ հեռանաս պիղծ գործերիդ սովորութիւնից եւ զղջաս ինչպես Ղամէք³⁸, Ասա՛ թո Հորդ՝ մեղա՛, ինչպես անառակ որդին³⁹, խոստովանիր թո մեղքերի բազմութիւնն, ինչպես Դաւիթ մարգարեն⁴⁰, ապաշխարիր թո անօրենութիւններն, ինչպես Մանասեն⁴¹, աղոթիր Տիրոջն ասելով. «Աստված, ներիր ինձ՝ մեղավորին»⁴², ինչպես մաքսավորն [ասաց], լացիր թո հանցանքները, ինչպես Պետրոսը⁴³, հրաժարվիր թո չար գործերից, ինչպես պոռնիկ կիրն. Ասա՛ «Կիրն ինձ՝ Բոարքայության մեղք»⁴⁴, ինչպես ավագակն [ասաց] եւ տես, թե՛ Ամենազոր Տերս ինչ կանեմ թո մեղքերի բազմությանը:

33. Ո՛վ մեղավոր, եթե արտաշնչելու եւ ներշնչելու ընթացքում յոթանասունյոթ անգամ ես մեղանչել, կամ թե երկնքի աստղերից էլ անթիւ են թո չարիքները, կամ ծովի ալիքներից անհամար են թո անօրենութիւնները, տիեզերքում եղած ավազից էլ շատ, կամ հաճախակի, քան շիրթն անձրեւի, առավել, քան մանրամաղ փոշիները, որոնք տարուբերում են օդում տարածված. Եվ եթե՛ մեծ ու ծանր է թո գործած չարիքը թուր լեռներից, կամ թե՛ թո անօրենութիւնները բարձրացել են երկնքներից, խոնարհվել անդունդներից, կամ լայնացած են, քան երկրի ծագերը, տարածված եթերային օդի շրջաններից էլ այն կողմ. Արդ, եթե՛ թո մեղքերն ու չարիքներն այսքան են, որ ասացի, ապա թո զղջալու. ժամանակ ակնթարթից առավել, շնչել-արտաշնչելուց, արեգակի ճառա-

38 Հմմտ. Մտնդ. Դ 23-24;

39 Հմմտ. Ղուկ. ԺԵ 11-32;

40 Հմմտ. Բ Թագ. ԺԲ 13-14;

41 Հմմտ. Բ Մնաց. ԼԳ 1-17;

42 Ղուկ. ԺԸ 13;

43 Հմմտ. Ղուկ. ԻԲ 62;

44 Հմմտ. Ղուկ. ԻԳ 42-43;

ցի գծառու ի յարմատոց խլիցէ, եւ զաշտարակս քակիցէ, որքան կարիցէ զդէմ ունեւ, այսպէս եւ մեղք ամենայն տինգերաց ի զղջնայն իւրեանց, բիւրապատիկ առաւել ոչ կարեն զդէմ ունել իմոյ ամենակարող զարուսթեանս:

Հայթնեւրի արագութիւնից, օդի մեջ երեւացող կայնակի երեւումից ու մտքիդ ընթացքից բոլորապատիկ եւ առավել արագութեամբ քորոյոր մեղքերի բազմութեանը քաղութիւն կշնորհեմ, քանզի ամենակարող Արարիչ եմ եւ մեղքերի քաղութեան համար ժամանակի կարիք չունեմ: Եվ ինչպես ջրի պղպշիկ, խիստ հոգմ բարձրանալու ժամանակ մինչ ծառը արմատախիլ է լինում, աշտարակը քանդվում է, որքան կարող է դիմադրել, այսպես էլ ամբողջ տինգերքի մեղքերը իրենց զղջման պահին բոլորապատիկ առավել եւս չեն կարող կանգնել իմ ամենակարող զորութեան հանդեպ:

34. Մի մեղաւոր՝ իմա՛ զի դու մարդ ես չափաւոր. եւ մեղքդ քո թէպէտ բազում թուիս քեզ, սակայն եւ այն է չափաւոր ըստ նմանութեան քո. այսպէս իմա՛, զի Ես Աստուած եմ անչափ՝ նմանապէս ըստ իմում անչափութեանս եւ ողորմութիւն իմ է անչափ Արդ՝ դու յորժամ զչափաւոր մեղք քո՝ ի ձեռն խոստովանութեան ի մէջ իմ անչափ ծովացեալ ողորմութեանս ձգիցես. այնպէս չիջանի գիւրաւ, որպէս փոքր մի կայծ առեալ ի մէջ համատարած ծովուն ձգիցես Արդ՝ որպէս ազգի ազգի են ճանապարհք մեղացն. նոյնպէս եւ զանազանք են դեղք ազախարութեանս Քանզի ոմանք խորհով եւ մոխրով արդարացան, ոմանք լալով եւ արտասոււաք զՏէրն հաշտեցուցին. ոմանք միայն պահաւք եւ աղաւթիւք ապրեցան. ոմանք ողորմութեամբ զողորմութիւն գտին յինչեւ Ոմանք մարդասիրութեամբ եւ տկարագունիցն ծառայելով, ոմանք գետնախշտութեամբ, ոմանք խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ թողութիւն մեղաց ընկալանս. Եւ դու ի սոցանէ՛ ա՛ռ զմինն, որ Հեշտ թուի քեզ եւ թեթեւ. եւ այնու կարող ես բժշկել զամենայն Հիւանդութիւնս մեղաց քոց: Մի թուով ամաց եւ կամ քաղում ժամանակաց, այլ միայն ուղիղ դարձիւ եւ ճշմարիտ սրտիւ ի չարեացն Հեռացեալ, կարող ես արդարաւոր

35. Վասն որոյ եւ դու փութա՛ զի յառաջ քան զինն քո յաշխարհէ զինչ եւ կարողասցիս՝ առաքեսցես յերկինս: Եթէ աղաւթս հանդերձ արտասոււաք. եթէ տքնութիւն մաքուր. եթէ սաղմոսներգութիւն ապաշխարանաց. եթէ ժուժկալութիւն հանդերձ խոնարհութեամբ. եթէ Հրաժարումս յերկրայնոց

34. Մի մեղավոր, իմացի՛ր, որ դու չափավոր մարդ ես, եւ քո մեղքերը թեպետեւ քեզ չատ են թվում, սակայն նրանք էլ քո նման չափավոր են: Այսպես, իմացի՛ր, որ Ես անչափ Աստված եմ, եւ իմ անչափութեան նման ողորմութիւնս էլ անչափ է: Արդ, երբ դու քո չափավոր մեղքը խոստովանութեան միջոցով իմ անչափ ծովացած ողորմութեան մեջ զգես, այնպես հեշտութեամբ կմարի, ինչպես համատարած ծովի մեջ զգված մի փոքր կայծու: Արդ, ինչպես որ տեսնուտես եւ մեղքի ճանապարհները, նույնպես եւ քաղմագան են ազախարութեան դեղերը: Քանզի ոմանք քուրճով ու մոխրով արդարացան, ոմանք լացով ու արտասուքով Տիրոջը հաշտեցրին, ոմանք միայն պահեցով ու աղոթքով ապրեցին, ոմանք ողորմութեամբ ողորմութիւն գտան ինձանից: Ոմանք մարդասիրութեամբ եւ տկարագուններին ծառայելով, ոմանք գետնախշտութեամբ, ոմանք խոնարհութեամբ ու հնազանդութեամբ մեղքերի թողութիւն ստացան: Եվ դու սրանցից մեկը վերցրու, որը Հեշտ ու թեթեւ կթվա քեզ համար, եւ նրանով կկարողանաս բժշկել քո մեղքերի ամբողջ Հիվանդութիւնը: Մի թե տարիներ թվով կամ երկար ժամանակով, այլ միայն ուղիղ դարձով եւ ճշմարիտ սրտով չարիքներից հեռանալով կկարողանաս արդարանալ:

35. Որի համար եւ դու չտապի՛ր, որդեսդի առաջ, քան աշխարհից ենելը, ինչ-որ կարող ես՝ առաքես երկինք. կամ աղոթքներ՝ արտասուքով հանդերձ, կամ մաքուր տքնութիւն, կամ ապաշխարանայն ազգութներգութիւն, կամ ժուժկալութիւն՝ խոնարհութեամբ հանդերձ, կամ Հրաժարում եր-

իրացս. եթէ սէր անկեղծաւոր. եթէ փափաքումն Քրիստոսի. եթէ պաշէ կամ ողորմութիւն. եթէ յառաջագոյն ի սոցանէ առաքեսցես, վստահացիր զի ի հանգիստ ես գալոց եւ վայելելոց. ապա թէ ոչ՝ երկիւղ կայ ի միջի:

36. Զայս ամենայն լսելով եւ իմանալով՝ զինչ կամիք պատրաստել պատասխանի Աստուծոյ. յորժամ զազերս ողորջանաց եւ զգութ անյիշաբարութեան առաջի արկեալ, ամենայնի զինքն դէն՝ պարտական պարտեաց մերոց. ի գութ եւ ի գորով մտեալ՝ դարձեալ փարի զմեաւք աղաչէ, պաղապէ, խնամարկէ, խանդաղատի, պարգեւս խոստանայ, որպէս հայր ի վերայ մեր աղէ՛խարշի: Եւ առաւել քան զչարիսն անցուցանէ զխնամսն, որպէս ի սարսուռացեալ որդիսն է տեսնել. զի ի գիրկս առեալ գոռեն, համբուրեն, զերեսն ի վերայ դնեն, խանդաղատական ձայնիւ գորովեն, զբարբառն եղանակեն, զծափս հարկանեն. ամենայնիւ հնարին զհաշտութիւն մանկանն, զի զլայն եւ զհեկեկալն խափանեսցեն: Թէպէտ եւ նոքա խաղապտեալ զերեսն ալար անդր դարձուցանեն, լեզուազարեն, զերեսն մարզեն. սակայն եւ ոչինչ յայնցանէ ցասուցանեն զծնողսն. այլեւ պարգեւս տան մանկանն զախորժականս իւր, խաղալիկս, անաւթս պատուականս. եթէ բեկանէ՝ չցաւին. եթէ կորուսանէ՝ չտրամին. միայն թէ ի հաշտութիւն տեսանիցեն զիլեալ զմանուկն: Զայս եւ առաւել քան զսոյն ցուցանեն մեզ գութք աստուածային խնամոցն. զորոյ եւ զփորձ առեալ հոգեբաղոյն Դաւթի զսաստիկ սիրոյն Աստուծոյ առ մարդիկ՝ սաէ: Վորպէս զթալ հայր ի վերայ որդւոց իւրոց, զթալ եւ Տէր յերկիւզածս իւրը:

37. Նա՛ եւս առաւել զանչափական եւ զանեզրական սիրոյն իւրոյ զանպատմելի եւ զանիմանալի բոցանս ինքնապատու արարեալ ի ձեռն Դուկաս աւետարանչին աւանդէ մեզ՝ ասելով. «Ո՛ր ի ձէնջ որդի՛ որ խնդրեսցէ ի հարէ իւրմէ հաց, մի թէ քառ տացէ նմա. կամ թէ խնդրեսցէ ձուկս, մի՛ թէ աւճ տացէ նմա. իսկ եթէ դուք որ չարքդ էք, գիտէք զպարգեւս բարիս ալ որդւոց ձերոց: ո՛րչափ առաւել եւս Հայրն ձեր երկնաւոր տացէ ձեզ զանճառ եւ զանբաւ ուրախութիւնն»:

կրային բաներից, սեր անկեղծափոր, քաղձանք ի Քրիստոս, կամ պաշէ, կամ ողորմութիւն. եթէ քեզանից առաջ սրանցից առաքես, վստահ եղիր, որ դեպի հանգիստն ես գալու ու վայելելու, իսկ եթէ ոչ՝ երկուղ կայ մեջը:

36. Այս ամենը լսելով ու իմանալով, ի՞նչ պատասխան եք պատրաստում Աստուծու, երբ թախանձանքների աղերսը եւ անհիշաբարութեան դուրսը իր առաջ դնելով ամեն ինչում իրեն է մեր պարտքերի դիմաց պարտական համարում: Գթութեան ու գորովանքի մեջ մտնելով դարձյալ փարվում է մեզ, աղաչում է, պաղատում է, խնամարկում է, գուրգուրում է, պարգևներ է խոստանում, ինչպես հայր մղկտում է մեր վրա. եվ առավել, քան չարիքներն են, խնամք է ցուցաբերում, ինչպես սարսափահար զավակների մեջ ենք տեսնում: [որոնց ծնողները] գրկներն առած դգովում են, համբուրում են, երես են տալիս, գուրգուրալից ձայնով փաղաքշում են, մանկանման ձայնում, ծափ են զարկում, ամեն ինչով հաշտութիւն են փնտրում մանկան հետ, որպեսզի լացն ու հեկեկանքը խափանեն, թեպէտեւ երեխաները երեսները այս ու այն կողմ են դարձնում, լեզվազարում են, երեսները ճանկոտում են, սակայն եւ այդ ամենից ոչինչ չի դայրացնում ծնողներին, այլեւ մանկանը պարգևում են իր ցանկացածը խաղալիքներ, պատվական անոթներ, եթէ անգամ կոտորվի, ցավ չեն զգում, եթէ կորի՛ չեն տրամի, միայն թէ մանկանը հանդարտված տեսնեն: Սրանք եւ առավել քան սրանք մեզ ցույց են տալիս աստվածային խնամքի գութը, որի փորձն առնելով հոգեբաղոյ Դավիթը, [զովերդելով] Աստծո սաստիկ սերը մարդկանց հանդեպ, ասում է. «Ինչպես գթառատ է հայրը իր որդիների վրա, գթառատ է և Տերը իր երկուղածներին հանդեպ»⁴⁵:

37. Նա առավել եւս իր սիրո անչափ ու անեզր, անպատմելի ու անիմանալի զգովանքները ինքնապատում ձեռով, Դուկաս ալետարանչի ձեռքով ստեղծելով, ալմանդում է մեզ՝ ասելով. «Զե՛ք զանից ո՞վ է այն որդին, որ իր հորից հաց է խնդրում, մի՛ թէ քար կտանրան, կամ եթէ ձուկ խնդրի, մի՛ թէ օձ կտանրան: Իսկ եթէ դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որչափ եւս առավել ձեր երկ-

38. Տեսէ՛ք որպիսի գեղեցիկ են պարգեւը սիրոյ նորա առ իւր արարածս. եթէ ախորժէք եւ դուք՝ լինի՛ք որդիք սիրոյ նորա, որ կայ Հանապազ յողորմել եւ ի թողել զգազանացեալ բնութիւնս մարդկային. Արդ՝ միթէ՛ քան զվէ՛մս ապառա՛մ իցեմք, որ դեղաւք քրքրեալ թուլանան, եւ սրով աշին ի պէտս գործոց. Եւ եթէ երկաթ, եւ զայն եւս հուր հալէ. եւ անաթս պիտանացուս ի ճարտարացն գործին. Եւ եթէ գազան, եւ այն ձեռնդնել եղեալ՝ եւ հարկադրեալ պապանձեալ կան ի դրուսն թագաւորաց, առ ի պատրաստ ի ծառայութիւն եւ ի հնազանդութիւն նոցա. Զչարամտութիւն վիշապաց՝ եւ զցասկոտ բարս թիւնաւոր աւժից ի հնազանդութիւն անեն բանք ողորձական թողչի ճարտարի. եւ ընդելական ընտանութեամբ առ միմեանս ճարակեն. Եւ արդ՝ ասուն եւ խաւսուն եւ իմացական բնութիւն մարդկան զի՛ա՛րդ ո՛չ գէթ նմանի նոցա՝ թողուլ զանգաճութիւնն եւ կեալ. Եւ այն զի պատգամք սաղմոսերգողին կշտամբալ յանդիմանէ, եւ տարեալ մերձ առ աւան եւ քարքս եւ կարիքս կացուցանէ ասելով. Սրտատու՛թիւն նոցա ըստ նմանութեան աւժի, որպէս իժի քարբի, զի խցեալ է զականջս իւր. զի մի՛ լուիցէ նա զձայն թողչի ճարտարի, եւ մի՛ առցէ զգեղ ի դեղատունէ իմաստնոյ.

39. Բայց դու ո՛վ մեղաւոր, նմանեա՛ մարդարէին Դաւթի՝ որպէս ասէ Գիր. Վի՛թէ որ անկանիցի ո՛չ յառնիցէ, որպէս եւ աստ տեսաք զի կատարեաց մարդարէն. անկաւ ի ձեռն ցանկութեան, եւ յարեալ ի ձեռն ապաշխարութեան. աչաւքն մեղաւ, շնաց եւ սպան. լեզուան քաւեաց, զի խոստովանեցաւ եւ ապրեցաւ խոստովանութիւնն թե՛ թեւացուցանէ զճանրութիւն մեղաց. խոստովանութիւն զդէզս մեղաց հոսէ իբրեւ զփռչի խոստովանութիւն զբարոյս փշոց մեղաց ալէ իբրեւ զհուր. խոստովանութիւն ուսել ելանէ՛ զանաւթն ժանկակիր իբրեւ զոսկի պայծառագոյն գործէ. եւ որ անդղջ մնացէ՛ ո՛չ սրբեցցի խոստովանութիւն է՝ որ նովաւ ապաշխարութիւն զաւրանայ. եւ առանց նորա որչափ եւ գործի՛

նազոր Հայրը ձեզ [որպես] բարիքներ կտա անհառ ու անբաժ ուրախութիւնը»⁴⁶.

38 Տեսէ՛ք, թե ինչպես գեղեցիկ են նրա սիրո պարգևները իր ստեղծածներին հանդեպ, եթե ցանկանաք, դուք եւ կլինեք նրա սիրո որդիները, քանզի նա միշտ ամոքում է մեղմում է մարդկային գազանացած բնութիւնը. Արդ, մի թե ապառաժներից էլ քարացել ենք, որոնք դեղերով քայքայվելով թուլանում են եւ սրով տաշվում գործի համար. կամ ինչպես երկաթ, թե եւ նրան էլ կրակն է հայեցնում եւ պիտանի անութներ է դարձնում վարպետների աշխատանքի համար. կամ որպէս դազան, շնայած եւ նրանք ձեռնասուն լինելով, հարկադրված պապանձված են թագավորների դռների առաջ՝ պատրաստ նրանց ծառայելու եւ հնազանդվելու. Վիշապների ցարամտութիւնը եւ թունաւոր օձերի ցասկոտ քրքրերը հնազանդում են ճարտար թողչի գայթակղի խոսքերին, եւ սովորական ընտանութեամբ միմյանց են վարակում. Եվ արդ, մարդկային ասուն եւ խոսուն ու իմացական բնութիւնը ինչպես չի նմանվում նրանց՝ թողնելով անգլամտութիւնն ու [մաքուր կյանքով] ապրելով. Եվ սաղմոսերգողի պատգամները կշտամբելով հանդիմանում են՝ տանելով օձերի, վիշապների ու կարիճների մոտ եւ ասելով. «Նրանց սրտամտութիւնը օձին է նման, ինչպես վիշապ օձի, որովհետեւ փակել է իր ականջները, որպեսզի նա չլսի ձայնը ճարտար օձահմայի ու չընդունի դեղն իմաստուն բժշկից»⁴⁷.

39. Բայց դու, ո՛վ մեղաւոր, նմանվիր Դաւիթ մարդարեին, ինչպես ասում է Սուրբ Գիրքը. Վի՛թե նա, ով ընկնի, չի բարձրանալու»⁴⁸, ինչպես եւ այստեղ տեսաք՝ մարդարեի կողմից կատարված, ընկալ ցանկության ձեռքով եւ կանգնեց ապաշխարության ձեռքով, աչքով մեղանչեց, շնացավ ու մեռավ, իսկ լեզվով քաղեց, քանզի խոստովանեց եւ կենդանացավ. խոստովանութիւնն է թեթեւացնում մեղքերի՝ ծանրութիւնը. խոստովանութիւնը մեղքերի դեգերը հոսեցնում է փո-

46 Հմմտ. Դուդ. ԺԼ 11-13;

47 Հմմտ. Սղ. ՄԷ 6-7;

48 Հմմտ. Երեմ. Ը 4;

տկարանայ յաւիտեան, խոստովանութիւն՝ զղջման դուռն, ապաշխարութեան սկիզբն, գլուխ արիութեան առաքինութեան, զէն յաղթողին, մեղաց վաճան, խոստովանութիւն ապաշխարութեան առիթ, ապաշխարելոց պարիսպ, գլորելոց կանգնումն, դրդունցելոց դաւազան, շացելոց ցուպ, խոստովանութիւն ազտեղութեան մեղաց սրբող, անմաքրից մաքրաւոր, ի տանջանանց ազատող, գեհնի ահուն փարատող, խոստովանութիւն երկնից բացող, առաջի Տեառն մրժանաւոր, ապաշխարողաց հաւաքաւոր, մեղաւորաց յապաշխարութիւն հրաւիրող, մոլորելոց կոչող, ի քաղաք երկնաւոր առաջնորդող, խոստովանութիւն՝ խաւարելոց լոյս, որք աչս ունին՝ ճառագայթ, մանկանց դաստիարակ, անյուսից աւերինակ յուտոյ, խոստովանութիւն եկեղեցւոյ զարդ, քահանայից քարոզ, գործողաց պսակ, մանկանց առաքաստի զգեստ, եւ հարսանեաց մտին բացաւոր, խոստովանութիւն՝ ի դրանց մահու փրկող, աստուածային սեղանոյն հրաւիրող, մարմնոյ Տեառն ջամբեցող, պատուական արեանն արուցանող եւ տրտմեցելոց ուրախացուցանող, խոստովանութիւն՝ ապաշխարութեան դուռն, յանցանաց քաւիչ, ընդունողաց զնա մաքրիչ, թագաւորաց պիտանի, աղքատաց ընդունելի, խոստովանութիւն՝ մեծամեծաց եւ անանկաց պատուարան, պոռնկաց քաւարան, աւազակաց պաշտպանարան, խոստովանութիւն՝ բանաւոր մեղուաց հաւաքող, քաղցր գործոց վաստակող, դառնութեան քաղցրացուցանող, եւ ամենայն առաքինութեանց զարգարող, եւ արդ՝ ո՞րպէս կարացից գովել զխոստովանութիւն, զի ո՞ր յանցանք իցէ՞ առանց սորա թէ՛ բիրապապիկ առաքինութիւնս գործեցին, ոչինչ աւգտին, եթէ պահես, եթէ աղաւթես, եթէ հնչիս, եթէ ողորմութիւն առնես, եթէ զամենայն առաքինութիւնս գործես, չէ՞ հնար քեզ առանց սորա զյանցանս քաւել՝ եւ թողութիւն գտանել:

չու նման, խոստովանութիւնը մեղքերի փշերի խուրձը այրում է ինչպէս կրակ, խոստովանութիւնը որսեղից որ ելնում է՝ մանգակի անոթը ոսկու նման պայծառաբույն է դարձնում, իսկ ով որ անգեղ⁴⁹ կմնա՝ չի՛ սրբվի: խոստովանութիւնը է, որ ապաշխարութիւնը գործանում է և առանց նրա որքան էլ որ գործի, կտկարանա հավիտյան, խոստովանութիւնը զղջման դուռն է, ապաշխարութիւն սկիզբը, արիութիւն առաքինութիւն, գլուխը, հաղթողի զենքը, մեղքերի վաճանք, խոստովանութիւնը ապաշխարութիւն առիթ է, ապաշխարողների պարիսպ, գլորվողների կանգնումը, երեքացողներին՝ գովապահ, կուրացածներին՝ ցուպ, խոստովանութիւնը մեղքերի ազտեղութիւն սրբողն է, անմաքուրներին՝ մաքրողը, տանջանքներից ազատողը, գեհնի ահը փարատողը, խոստովանութիւնը երկնիքը բացողն է, Տիրոջ առջեւ կանգնեցնողը, ապաշխարողներին հովաքողը, մեղավորներին ապաշխարութիւն հրաւիրողը, մոլորվածներին կանչողը, երկնավոր քաղաք առաջնորդողը: խոստովանութիւնը խափարյալներին լույս է, ովքեր աչք ունեն՝ ճառագայթ, մանուկների դաստիարակ, անհույսներին՝ հույսի օրինակ, խոստովանութիւնը եկեղեցու զարդն է, քահանաների քարոզը, չարչարվողների պսակը, կույսների առաքատի զգեստը և հարսանիքի մուտքը բացողը, խոստովանութիւնը մահվան դռնից փրկողն է, աստվածային սեղանին հրաւիրողը, Տիրոջ մարմինը առաքողը, պատվական արյամբ արեցնողը և տրամածներին ուրախացնողը, խոստովանութիւնը ապաշխարութիւն դուռն է, հանցանքների քավողը, նրան ընդունողներին՝ մաքրողը, թագավորներին՝ օգտակար, աղքատներին՝ ընդունելի, խոստովանութիւնը մեծատունների և անտունների պատուարանն է, պոռնիկների քավարանը, ավազակների պաշտպանարանը, խոստովանութիւնը բանական մեղուների հովաքողն է, քաղցր գործերի վաստակողը, դառնութիւնը քաղցրացնողը և բոլոր առաքինութիւնները՝ զարդարողը, ինչպէս կարող եմ գովել խոստովանութիւնը, քանզի որսեղ որ հանցանք կա, առանց

40. Դու ո՛վ մեղաւոր, որչափ կարողութիւն է քո մարտիր ընդդէմ սովորական մեղացն քոց մեծաւ աղաւթիւք եւ կոչեա՛ լքեղ ի բարեխաւսութիւն գոհաս սրբոց հրեշտակաց, եւ զամենայն սուրբս եւ զարդարս, մանաւանդ զսուրբ Աստուածածինն, եւս առաւել զՔրիստոսի սուրբ չարչարանսն. եւ աղաղակեա՛ առ Հայր անդադար՝ զի ողորմեսցի քեզ. եւ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ տացէ՛ քեզ կարողութիւն ընդդէմանալ մեղացն եւ եթէ պատահեսցի՛ զի յաղթիցիս որպէս զմարդ տկար, դու ի նոյն դարձեալ կանգնեա՛. եւ որչափ անկանիս, այնչափ արագապէս փութա՛ կանգնիլ. եւ Աստուած այնպէս ընկալցի զքեզ, իբրեւ թէ քնաւ չիցես անկեալ. Զի թէ հանդերձ ինչ ի ցեխս անկանիցի՛ ալտեղանայ. եւ յորժամ աւճառաւք մաքրի՛ ոչ թուի խոտան յաչս զգեցողին. որչափ եւս առաւել հոգին որ անկեալ է ի մեզս՝ եւ յառնէ անդրէն, խոտան ոչ երեւեսցի առաջի Աստուծոյ. զի նա կարի՛ առաւել սիրէ զազգս մարդկան՝ քան այր քո զհանդերձս իւր. Եւ տե՛ս զանչափ սէր նորա՛ որ վասն մեր մարգացաւ, եւ մեռաւ մարմնով անմահն Աստուած. եւ ո՛չ թէ սիրէ միայն՝ այլեւ բառնալ ի վերայ ուսոց իւրոց խնդալով Արդ որ ոք ունիցի ականջս լսելոյ լուիցէ՛, եւ իմանայցէ՛, եւ վայելեսցէ ի բարութեանցն պարգեւաց ի ձեռն խոստովանութեան եւ ապաշխարութեան, որ փառաւք պսակէ՛, եւ ի գահոյս հանգուցանէ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր Որում ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից, ամէն:

խոստովանության, եթե՛ հազարապատիկ առաքինություններ գործեն, ոչինչ չեն շահի Եթե՛ պահք պահես, աղոթես, ճգնես, ողորմություն տաս կամ բոլոր առաքինություններն էլ կատարես, [միևնույն է], հնարավոր չէ քեզ առանց սրա հանցանքները քաղել եւ թողություն գտնել:

40. Դու, ո՛վ մեղավոր, ինչքան կարողություն ունես, սաստիկ աղոթքներով մարտնչիր քո սովորական մեղքերի դեմ եւ քեզ բարեխոսության կանչիր սուրբ հրեշտակների դասերին, բոլոր սրբերին ու արդարներիին, մանավանդ սուրբ Աստվածածինն եւ առավելապէս Քրիստոսի՝ սուրբ չարչարանները, եւ անդադար աղաղակիր Հորը, որպէսզի ողորմի քեզ ու Սուրբ Հոգու՝ ձեռքով կարողություն տա դիմակայելու մեղքերին. Եվ եթե՛ պատահի, որ Հաղթվես ինչպես մի տկար մարդ, դու կրկին նույնի մեջ մնա. Եվ ինչքան ընկնես, այնքան արագ կերպով շտապիր կանգնելու, եւ Աստված այնպէս կընդունի քեզ, ինչպէս եթե՛ քնով ընկած չլինեիր, քանզի եթե՛ որեւէ զգեստ ցեխի մեջ է ընկնում՝ աղանդաւում է, իսկ եթե՛ օճառով մաքրվում է, հազնոդի աչքին անպետք չի թվում, որչափ առաւել եւ հոգին, որ ընկած է մեղքի մեջ եւ դուրս է գալիս այնտեղից, այն անպետք չի երևում Աստծո առջև, քանզի նա ավելի շատ է սիրում մարդկանց, քան որեւէ մարդ՝ իր հանդերձներու. Եվ տես՝ նրա անչափ սերը, որ անմահ Աստված մեզ համար մարդացավ եւ մեռավ մարմնով. Եվ ոչ միայն սիրում է, այլ ցնծալով վերցնում է իր ուսերի վրայ Արդ, ով ականջ ունի լսելու, թո՛ղ լսի ու հասկանա, վայելի խոստովանության ու ապաշխարության միջոցով պարգևների բարություններին, որ փառքով է պսակում եւ գահին է նստեցնում մեր Տէր Հիսուս Քրիստոսի մոտ Որին Հոր եւ Սուրբ Հոգու հետ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Ստաջարանը, Եփրեմ Ասորու
վարդի վերաշարադրանքը
և Հորդորակի քարգմանությունը՝
ՎԱՀՄԱՆ ՍՐԿ. ՉԱԶԱՐԳԱՆԻ

ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՆՇԽԱՐՆԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՅՈՒ ՀՈՐԻ ԵՎ ԴԱՆԻԵԼԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հայ միջնադարյան մատենագրության մեծամուց աշխատավորներից է այս հեղինակը: Ապրել և գործել է Ը դարում /+735/, թողել աստվածաբանական բավական պատկանողի ժառանգություն¹, որի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում մեկնաբանականը: Նա ոչ միայն հեղինակել, այլև, ուսումնագիտական նպատակներից ելնելով, հումարենից թարգմանել է Ելից, Ղևտացվոց, Հորի², ինչպես երևում է, խմբագիր մեկնությունների, որոնց երբեմնի գոյության մասին ձեռագիր մատյանները պահպանել են սոսկ ամորոշ ակնարկներ: Բարեբախտաբար ամենակուլ ժամանակի ճիրաններից ձեռքագատվել է մեզ են հասել Ստեփանոս Սյունեցու Քառավետարանի³, Արարածոց⁴, Հորի, Դանիելի և Եզեկիելի ամբողջական և հատվածական մեկնությունները: Հիշված միավորներից ամբողջական են միայն առաջինն ու վերջինը:

Հորի և Դանիելի մեկնություններից մեզ հասել են լույ առանձին հատվածներ, որոնց պահպանվել են զանազան ժողովածուներում: Հայ միջնադարի մեկնողական գրականության մեջ այս երկերի վայելած հեղինակության մասին է վկայում այն իրողությունը, որ դրանք օգտագործվել են վարդապետ Արևելցու Դանիելի և վանական վարդապետի Հորի մեկնության մեջ: Հորի մեկնության պահպանված հատվածը վերջից թերի մի ընդօրինակության հիման վրա հրատարակել է Ռ. Ք. վրդ. Չրաքյանը Խիքեոս Երուսաղեմացու Հորի մեկնության հայերեն թարգմանության հրատարակության հավելվածում⁵:

Այժմ ներկայացվող բնագիրը կազմել ենք հիմք ընդունելով Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1981 ձեռագիրը /Բ/, ուր նյութը /թ. 208ա-209ա/ ամբողջական է: Այն համեմատված է տպագրի /Բ/ հետ:

Դանիելի մեկնության Ա միավորն անտիպ է: Այն հրատարակվում է մեզ հայտնի միակ ընդօրինակության հիման վրա, համաձայն Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1007 ձեռագրի /թ. 174ա- 177ա/: Մեկնության Բ միավորը քաղված է վարդապետ Արևելցու Դանիելի մարգարեության խմբագիր մեկնություններից⁶:

¹Տե՛ս Մ. վրդ. Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, Բեդրուք, 1958, նույնի՝ մշտումներ եւ յաւելումաճք Ստեփանոս Իմաստասէր Սիւնեցոյ կենսագրութեան եւ գրութեանց մասին, «Հանդէս ամսօրեայ», 1966, էջ 438-459, նաև՝ Ն. արք. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 112-115:

²«Խիքիոսի երիցու Երուսաղեմացոյ Մեկնութիւն Յորայ», աշխատ. Ռ. Բէրոքէ վրդ. Չրաքեան, Վեճեռիկ, 1913, ներածություն:

³Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն Չորից Ավետարանչաց, աշխատ. Գարեգին Կաթողիկոս Հովսէփյանի, Երևան, 1993:

⁴Մ. վրդ. Գրիգորեան, Տորայայտ հատումաճ մը Ստեփանոս Սիւնեցոյ Արարածոց մեկնութեան, «Հանդէս ամսօրեայ», 1964, էջ 132-142:

⁵Տե՛ս Եճթ. 2, էջ 302-310 տողատակ:

⁶«Արդիւնաւոր եւ սուրբ վարդապետին վարդաճայ սակաւ իմչ վաստակ ի սուրբն Դանիէլ», տե՛ս «Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից, արարեալ երանելոյն Ներսիսի Լամբրոնացոյ...», Կ. Պոլիս, 1825, էջ 260:

Ստորև ներկայացնում ենք օգտագործված ձեռագրերի համառոտ նկարագրությունը:

Թիվ 1007

Դառընտիր: Ժամանակ՝ ԺԱ-ԺԲ դդ: Վայր՝ Հոռոմայր /¹/: Գրիչ՝ Առաքել: Ստազող՝ Հովհաննես ըմն: Թերթ՝ 466: Նյութ՝ թուղթ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 25: Բնագիրը՝ թ. 174ա-177ա: Բնագրական առանձնահատկություններ՝ բառավերջին յ -ի բացակայություն /Նաբուգոդոնոսորա, մոցա, զսա, բայց՝ ի վերայ/:

Թիվ 1081

Ժողովածու: Ժամանակ՝ ԺԴ դ.: Գրիչ՝ Կյուրակոն, Հովհաննես, Մուխթիկ: Թերթ՝ 259: Նյութ՝ թուղթ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18-29: Բնագիրը՝ թ. 208ա-208ա⁷: Բնագրական առանձնահատկություններ՝ յ կիսաձայնի բացակայություն, բառավերջին յ -ի բացակայություն: «Հրեշտակ» բառի երկձև գրություն՝ «հրշտակ»: Վերջինս ավելի հաճախ հանդիպում է հնագույն ձեռագրերում⁷:

ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԿԻԶԲՆ ՅՈՐԱՅ

«Այդ մի էր¹ յԱսիտ աշխարհի, որում անուն էր Յոր^{1*}»:

Յազգէն Աքրահամու էր երանելի մահատակն՝ երրորդ կամ չորրորդ Յեսաույ, եղել ի ժամանակս Մովսեսի, քանզի թելետու էր Մովսէս հիմեքորդ ի Յակոբայ, սակայն յաղագս բազմակեցութեան իւրոյ Յոր եհաս ի ժամանակս Մովսէսի, թուի թէ եւ յելս որդւոցն Իսրայելի յեփայտոսէ: Այդ՝ յաղագս ազգահամարութեան եւ ժամանակացն: Իսկ յաղագս շարագրելոյ զմահատակութիւն սորա ոմանք զՄովսէս մարգարէ ասեն, թէ գրեաց զպատմութիւն Յորայ, եւ այլք թէ՝ Սողոմոն գրեաց, եւ այլք դարձեալ յեզրէ ասեն, որ զամենայն զՀիմ կտակարանսն յետ գերութեան ասանդեաց ժողովրդեանց², նոյնպէս եւ զՅորայն: Իսկ ինձ կարծի Սողոմոնի³ գոյ, վասն զի նկարագիրդ առականն է, որպէս եւ ամենայն շարագիրքն Սողոմոնի: Եւ այլք դարձեալ զԵրեմիաէ ասեն, թէ գրեաց, իսկ զՄովսէս եւ զԵրեմիա եւ զԵզր ոչ գտանեն նկարագրով այսու վարեալ⁴, բայց թէ մոցա է եւ թէ⁵ այլոյ ուրուք՝ ոչ է հարկ գիտել, այլ զայս գիտենք, զի աստուածագգեստ^{5ա} արանց գրեալ է զպատմութիւնս. ապա թէ ոչ ուստի՞ յիշեր առաքեալն զմահատակութիւն⁶ սորա⁷, որ ասէ. «Զմարբերութիւն Յորայ լուարուք եւ զկատարումն Տեառն տեսէք²»: Եւ եզեկիւ է ի մարգարէանայն յիշեաց ընդ Նոյի եւ ընդ Դանիէլի. «Ազգ մի, ասէ, յորոյ վերայ ածեն եւ զայս ինչ չարիս: Թէ եւ եմ ի միջի մոցա Յոր եւ Նոյ եւ Դանիէլ զանձինս իւրեանց միայն ապրեցուցեն³»: Բայց զգերեզմանն Յորայ այժմ յԱրաբիա ցուցանեն, եւ զտեղին, յորում նստէր ի հարուածսն:

«Եւ էր այն Յոր ճշմարիտ^{4*}». վասն ոչ գտանելոյ ի մեա ստութիւն, «աստուածապաշտ», քանզի հմարաւոր է լինել «արդար, ամարատ», որպէս բազումք եղեն ի հեթանոսաց, այլ ոչ՝ «աստուածապաշտ»:

«Եւ իբրեւ եղել ար այս, եւ ահա եկին հրեշտակք Աստուծոյ կալ առաջի Տեառն. եկն եւ սատանայ ընդ մոսա^{5*}»:

⁷ Ձեռագրերի նկարագրություններն ըստ «Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», Հտ. Ա, կազմեցիմ Օ. Եզանյանը, Ա. Զեյթունյան, Փ. Ամթարյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մանգակյանյանի, Երևան, 1965, էջ 457, 689-690:

Աստուած անտեսանելի է բնութեամբ, ամորալ եւ անքանակ եւ տեղեւ ոչ պարփակի, այլ՝ առ լսմանայն⁸ եւ հույ լսմանեսեւան ի սուրբսն, որպէս պարտ է տանել նոցա՝ եւ յաճութիւնս, ըստ նոցին արժանեացն: Եւ հրամա՛ն սրբոցն անճառ ծայմիւն, այսիմցն՝ գիտութեամբ սպասաւորել հաճոցն⁹ իւրոց, որպէս առնէին եւ առնեն հրեշտակը ու մարդիկ՝ մմանը մարգարէիցն եւ առաքելոցն: Իսկ չարին հրաման տալ ամի թոյլ տալն, զի առանց այսմ անհմար է նոցա գործել ինչ կամ վնասել զոք հոգւով կամ մարմնով: Գալ, ասի, ընդ հրշտակս առաջի Տեառն, վասն զի ոչ է տեղի տեսանելի կամ անտեսանելի, որ թագչի¹⁰ ի նմանէն եւ ի մախախնամական գիտութէն Աստուծոյ: Արդ, թէպէտ¹¹ ի վեոճագոյն¹² տեղիսն ոչ ելամէ, ուր հրեշտակքն եւ քերովքէն¹³ եւ սերովքէն¹⁴, սակայն յորում տեղոջ եւ է, ոչ կարէ թագչել յաստուածային տեսութմէն:

«Առաջի Տեառն» ասի զալ եւ դեգերել մնալ. թերեւ թոյլ տացէ փորձութիւնս անել ի վերայ մարդկան, զի թերեւ փորձանալ կարասցէ վրիպեցուցանել եւ ընկնոյ յաստուածաշարութմէ: Արդ, կամէր կորուսանել գերանելին փորձանալ, եւ ոչ կարաց, վասն զի ոչ էր թողացուցեալ յԱստուծոյ¹⁵: Գիտէր եւ ամենագետն զխորհուրդս չարին. հրաման ետ անել ի վերայ Յոբայ զփորձութիւն, զի ցուցի հանդէս նահատակին: Եւ գիտացեալ բանարկոյն, թէ թոյլ ետ մա փորձել զՅոբ՝ փորձեաց զնա նախ արտաքին ստացուածովն¹⁶. Կորստեամբ ուստերացն եւ յուստերացն եւ ապա՝ մարմնույն զանազան եւ զագիր չարչարանալոցն: Եւ զայս սմեմայն այսպէս իմասցուք, զոր այլապէս ձեւացոյց չարագիւտն վասն մերոյ իմանալոյ. զալն հրեշտակաց առաջի Տեառն, եւ սատանայի ընդ նոսա, եւ խաւսելն Աստուծոյ ընդ սատանայի եւ որ ինչ ի կարգին է¹⁷:

1* Յոբ Ա 1:

2* Յակ. Ե 11:

3* Եզեկ. ԺԴ 14:

4* Յոբ Ա 1:

5* Յոբ Ա 6:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1. Ե էր լսած եւ ի պարարտ յերկրէ յԱսիտ...: 2. Ե ժողովրդեան: 3. Ե Սողոմոն: 4. Ե վարել: 5. Ե ու փխ. եւ: 5ա. Ե աստուածասգեստ: 6. Ե նահատակութիւնս: 7. Ե նորա: 8. Ե ամենիսեան /այսպէս և այլոյ/: 9. Ե հաճոցն: 10. Ե թագչի /այսպէս և այլոյ/: 11. Ե թէ դարձեալ փխ. թէպէտ: 12. Ե վերստեղն: 13-14. Ե քերովքէն եւ սերովքէն: 15. Ե Աստուծոյ: 16. Ե ստացուածալոցն: 17. Ե չիք...պէս ձեւացոյց...եւ որ ինչ ի կարգին է:

ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ ՀՈՒԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԻԶԲԸ

«Օսիդ քաղաքում մի մարդ կար, որի անունը Հոր էր» /Հոր Ա 1/:

Երանելի մահատալը Աբրահամի ազգատոհմից էր, Եսայի երդորդ կամ չորրորդ /սերնդից/: Ապրել է Մովսեսի ժամանակներում, որովհետև, թեպետև Մովսեսը Հակոբի հիմնադրող /սերնդից/ էր, սակայն Հորը իր երկարակեցությամբ ապրեց մինչև Մովսեսի ժամանակները, կարծվում է, թե մույնիսկ մինչ իսրայելի որդիների՝ Եգիպտոսից դուրս գալը: Այսինքն՝ /Հորի/ ազգաբաժնությանը և /ապրած/ ժամանակի մասին:

Իսկ սրա սխրամքի պատմությանը քարադրումը ոմանք վերագրում են Մովսես մարգարեին, ոմանք Սողոմոնին, և ուրիշներ էլ Եզրին, ով գերությունից հետո /գրավոր ձևով/ ժողովրդին ավանդեց ամբողջ Հիմ կտակարանը, ինչպես մահ Հորի /պատմությունը/: Իսկ ես կարծում եմ՝ Սողոմոնն է /գրել/, որովհետև մկարագիրը առական է, ինչպես և Սողոմոնի բոլոր գրվածքները:

Դարձյալ, ոմանք Երեմիային են վերագրում, իսկ /ես/ այս /գիրքը/ մկարագրով մոտ չեմ գտնում Մովսեսի, Երեմիայի և Եզրի /գրվածքներին/:

Բայց մրանցն է, թե այլ մեկինը՝ պարտադիր չէ իմանալը, սակայն միայն այս գիտեմք, որ այս պատմությունը գրված է աստվածազգեստ մարդկանց¹ կողմից, այնպես որտեղից էր առաքյալը հիշում մրա սխրագործությունը, որ ասում է. «Լսել եք Հորի համբերության մասին և տեսել, ինչ որ Տերը մրան հատուցեց վերջում» /Հակ. Ե 11/:

Նաև Եզեկիելը մարգարեանալիս՝ Նոյի և Դանիելի հետ /մեմանալես/ հիշեց /Հորին/. «Մի ազգ, որի վրա բերեմ ինչ որ չարիքներ, մրա մեք լինեմ Նոյը, Հորը և Դանիելը, միայն իրենք են փրկվելու» /Եզեկ. ԺԴ 14/:

Իսկ Հորի գերեզմանը և տեղը, ուր մատում էր հարվածների ժամանակ՝ այժմ Արաբիայում են ցույց տալիս:

«Եվ Հորը ճշմարտախոս մարդ էր, /անարատ, արդար և աստվածապաշտ» /Հոր Ա 1/:

Որովհետև մրանում ստությունն չէր գտնվում: «Աստվածապաշտ»՝ քանի որ հմարավոր է լինել «արդար», «անարատ», ինչպես եղան հեթանոսներից շատերը, բայց ոչ՝ «աստվածապաշտ»:

«Եվ մի օր անա Աստծու հրեշտակները եկան կանգնեցին Տիրոջ առաջ. մրանց հետ սատանան էլ եկավ» /Հոր Ա 6/:

Աստված քնությանը անդեդգրկելի է, անստեղծ, անհամբելի, և տեղով չի պարփակվում, այլ ամենքի մեք է, առավել ևս՝ բոլոր սրբերի, ինչպես վալել է մրանց՝ կրել և անմաքուր մարդկանց մեք՝ ըստ մրանց արժանիքների:

Եվ անճառ ծայնով, այսինքն՝ գիտությամբ հրամայում է սպասավորել իր կամքին, ինչպես անում էին և անում են հրեշտակներն ու մարդիկ՝ մարգարեների և առաքյալների մեմանքը:

Իսկ չարին հրաման տալ ասում է «թույլ տալուն», որովհետև առանց սրա /չարը/ անկարող է մի բան գործել կամ մեկին վնասել՝ հոգով կամ մարմնով:

«Հրեշտակների հետ, - ասվում է, - եկավ Տիրոջ առաջ» /հմտ. Հոր Ա 6/:

Չկա տեսանելի և անտեսանելի տեղ, որ թաքնվի Նրանից և Աստծու մախախմանական գիտությունից: Արդ, թեպետև ավելի բարձր տեղ չի ելնում, ուր հրեշտակները, քերովքներն ու սերովքներն են, սակայն ինչ տեղում որ է, չի կարող թաքնվել Աստծու տեսողությունից: Ասվում է. «Եկավ տիրոջ առաջ, դեզերեց և մնաց», թերևս թույլ տա մարդկանց փորձությանը ենթարկել, միգուցե

փորձություններով կամենում է երամելում կորստյամ մատնել, և չկարողացավ.
որովհետև Աստծուց թույլ չէր տրված:

Ամենագետը գիտեր չարի խորհուրդները. հրամամ տվեց՝ Հորի վրա
փորձությունը բերել, որպեսզի հայտնի դարձնի Օսհատակի համբերությունը:
Բանասարկում գիտնալով, որ իրեն թույլ տրվեց փորձության եմթարկել Հորի՞,
ճախ մրամ փորձեց արտաքին ունեցվածքի՝ դուստրերի և որդիների կորստյամբ, և
ապա մարմնի զամազամ և զազիր չարչարանքներով:

Արդ, այս ամենն այսպես պետք է իմամանք. հրեշտակների և մրամց հետ
սատանայի գալը Աստծու առաջ, սատանայի հետ Աստծու խոսելը և այն, ինչ
գրված է, որն այլ կերպ մեմգափոխեց չարագյուտ սատանան մեզ շեղելու
մպատակով:

Թարգմանությունը ՎԻԳԵՆ ԴՊԻՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ
Գևորգյան Հոգևոր Ընթարան, Զ լսարան

Ա

ՏԵՍԻԼ ԴԱՆԻԷԼԻ՝ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

«Ես՝ Դանիել տեսանէի Դ (չորրորդ) ճողմը լերկնից»՝ հրամանաւ Աստուծոյ, «քախէին գծով մեծ»⁸ զաշխարհս, որ է «ծով մեծ եւ անդոյրը»⁹ եւ այլն:

«Չորր մեծամեծ գազամք ելանէին ի նմանէ այլակերպս ի միմեանց»¹⁰ (չորր թագաւորը յարիցեն ի վերայ երկրի, առցեն զթագաւորութիւն Բարձրելոյն)¹¹: «Գազամ» կոչեն Գիրք թագաւորաց, մանաւանդ Տէրն գրոց Աստուած, որ նախ քան զՔրիստոսի գալուստն երեւեցան «թագավորք»¹² զընթանական ասէ եւ ոչ զմասնաւորս, որ տեղեաց տեղեաց իշխանք եղեն յոլովք: Ա (առաջին) երազ նաբուգոդոնոսորա. «Պատկերն մեծ եւ տեսիլ ահագին յոյժ գլուխ յոսկո»¹³ վասն զի «գլուխ» թագավորական է եւ ոսկին՝ նոյնպէս, վասն զի թագաւորն գլուխ է իշխանութեանց: «Գլուխն ոսկի»՝ բարելացոց թագաւորութիւն եւ առաջին թագաւոր Բաբելոնացի Բաբելոն: Յայլորեք թագաւոր ոչ նստաւ յառաջ քան զնա: Իսկ «Բաբելոն» «խառնակութիւն» թարգմանի, զի անդ խառնակեցան լեզուքն, զոր Հայր ցՈրդին ասէ եւ ցՀոգին. «Եկայք իջցուք եւ խառնակեցուք զլեզուս նոցա»¹⁴: վասն այսորիկ մարգարեն յարգեաց, պատուեաց զթագաւորութիւն նոցա: Իսկ Քրիստոս գլուխ ամենայն արարածոց, զոր առակողն ասէ, թէ՝ «Իմաստնոյն աչքն ի գլուխն է»¹⁵: Եւ Քրիստոս, գլուխ եկեղեցւոյ¹⁶, որպէս ասաց Սենեքարիմ արքա Բաբելոնացոց. «Ոչ գիտես՝ զիարդ կալան հարքն իմ զամենայն երկիրն ասորոց եւ բաբելացոց»¹⁷:

«Առաջին գազամն իբրեւ զմատակ առիւծ թեւավոր» յաղագս վերամբարձեալ զարութեան: «Եւ թեւքն նորա որպէս զարծուոյ»¹⁸. զի Եզեկիլ թագաւորն որպէս զարծուի կոչեաց զբաբելացոց թագաւորն, որպէս ասաց Տէրն. «Ասա առ Իսրայէլ արծուի մեծաթեւ՝ լի ճիրանաք եւ տարած տարածեալ թեւաք եկն ի բարձրութիւն Լիբանոս, եւ խորտակեաց զմայրս մայրիցն եւ տարաւ ի Բաբելոն»¹⁹: Եւ երկուս ի միմեանց յարեաց առիւծ եւ արծուի, զի որպէս առիւծ թագաւորական է ի չորքոտանիս, նոյնպէս եւ արծուի՝ ի թռչունս:

⁸ Դան. է 2

⁹ Սղմ. ԺԳ 25

¹⁰ Դան. է 3

¹¹ Հմմտ. Դան. է 17-18

¹² Դան. Բ 44

¹³ «Քեռագրուս» Դ (չորրորդ):

¹⁴ Դան. Բ 31-32

¹⁵ Մցմդ. ԺԱ 7

¹⁶ Ժող. Բ 14

¹⁷ Կող. Ա 18

¹⁸ Բ Մնաց. ԼԲ 13

¹⁹ Դան. է 4

²⁰ Տես Եզեկ. ԺԷ 1-4

«Եւ երկրորդ գագանն մամ արշոյ»²⁰ նուագադոյն թագաւորութիւն, որ է թագաւորութիւն Պարսից եւ Մարաց եւ Իլամացոց, որպէս «տեսիլ Նաբուգոդոնոսորա թիկունքն եւ լանջքն, բազուկքն եւ ձեռքն արծուիք»²¹, որ է թագաւորութիւն Պարսից եւ Մարաց եւ Իլամացոց:

«Եւ կողք Գ (երիս) ի բերան մորա»²². «Եւ միմն քան զմիան բարձրագոյն»²³, վասն զի Պարսից թագաւորութիւն գաւրագոյն է, քան զՄարացն եւ Իլամացոցն, քանզի յառաջագոյն Մարք ընդ Կիւրոսիւ էին եւ Իլամացիք ընդ Դարեհիւ: Եւ յորժամ տիրեաց Կիւրոս Պարսից, Դարեհ ի մի ժողովեաց զԲ (երկու) իշխանութիւն: Գիրք աստուածայինք այսպես մեզ աւանդեցին. «Եւ երրորդ գագանն իբրեւ զինծ»²⁴. զՄակեդոնացոց զԱղէքսանդր մամնեցոյցանէ ընձու արագութեամ, որ ընդ յամենայն աշխարհս ընթանալով մմա ելոյծ զՊարսից թագաւորութիւն եւ յինքն գրաւեաց:

«Եւ մէջքն եւ բարձքն պղնձիք»*. Եգիպտացոց եւ Մակեդոնացոցն, եւ ինքնակալն Աղէքսանդրոս:

«Դ (չորք) թեռ թռչնոց ի վերա մորա», զի իբրեւ զթռչունս սրընթաց եղեւ ընդ Դ (չորս) կողմ երկրի: «Եւ Դ (չորք) գլուխք գագանին» զի Աղէքսանդր կացոյց չորրորդապետս, որ զկնի իւր պատմին պտղոմէոսքն:

«Եւ զկնի մորա գագանն չորրորդ՝ ահեղ եւ զարմամալի. ժանիք մորա երկաթիք եւ մագիլք մորա պղնձիք»²⁵, իսկ տեսիլ Նաբուգոդոնոսորոյ: «Սրունքն երկաթի»²⁶. ասի Հոռմայեցոց թագաւորութիւն եւ մարգարէն. «գաւազանեաւ երկաթեաւ»²⁷, իսկ «ոտքն կեսն յերկաթոյ»՝ Հայոց թագաւորութիւն, եւ «կեսն ի խեցոյ»՝ զՎրաց թագաւորութիւն նշանակէ:

«Գագանն չորրորդ առաւել այլակերպ քան զամենեսեան, որ յառաջ քան զնա էին. Ուտէր եւ մանրէր եւ զմնացորդսն առ ոտսն կոտորէր»²⁸. զմարմինս, որ առաւել էր չարիք, քան զամենայն թագաւորս:

«Եւ կերիցէ զամենայն երկիր»²⁹. Հոռմայեցոց թագաւորութիւն: Թեպէտ եւ քիւր պատերազմունք լինիցին՝ ամհմարին է լուծանել զնա, զի ոչ քան զհռմայեցոց թագաւորութիւն ամաւորագոյն եղեւ յաշխարհի. զսա ոչ փոխէ այլ թագաւորութիւն թեպէտ եւ պատերազմ եւ վիշտք բարբարոսացն** ի վերայ յարձակին: Ի մեղաց յանդիմանութիւն լինի եւ կրթութիւն մարդկան, բայց թագաւորութիւն ոչ լուծանի եւ ժամանէ մինչեւ ի Քրիստոսի թագաւորութիւն, եւ տեղի պահէ մեծի Թագաւորին Քրիստոսի, ըստ առաքելոյն Պողոսի վկայութեան,

20 Դան. է 5

21 Անդ. է 4

22 Անդ. է 5

23 Անդ. Ը 3

24 Անդ. է 6

* Այստեղ և այլուր՝ պղնձիք:

25 Անդ. է 7, 19

26 Անդ. Բ 33

27 Սղմ. Բ 9

28 Դան. է 7, 19

29 Անդ. է 23

** Բարբարոսացն:

որ ասէ. « Ի լնույ թագաւորութեան Հոռմայեցոց ամենայն զկայ առնուն մինչեւ ըստ ձեռնի, որ այժմի ունի »³⁰: Եւ ընդէ՛ր « այլակերպ » կոչեաց անուն. ոչ ասէ, զի ոչ զազգի եւ զքնութեան զհետ երթա, այլ զլատագոյն զջաջն ընտրէ:

Կոչէ « այլակերպ », վասն զի ի յայլ եւ յայլազգաց հոռմայեցոցն առեալ լինէին թագաւորքն: Եւ « ահաւոր » ասէ, զի մեծի Թագաւորին պահէ զտեղին եւ ապա ի մնանէ լուծանի. որպէս պատկերն փշրեալ ի վիմէն ցուցանէ: Արդ, վէմն, որ հատաւ ի լեառնէն քաղաքն ձեռնի³¹, որ է « Բրիստոս » անապական կոսութեամբ ծնեալ, որ եհար՝ զպատերազմ եւ փշրեաց ի սպառ իբրեւ զփռչի կալո ամարանոյ. որ զկատարումն եւ զսպառումն կոսապշտութեան նշանակէ ի ձեռն « Բրիստոսի ». զի ամենեքեանն կոսապարիշտք էին, զոր երարձ « Բրիստոս եւ զիւր Աստուածութիւն հաստատեաց: Յաղագս այնորիկ ասէ, թէ « լեառն ելից զդաշտն ամենայն » իւր աստուածգիտութեամբն, այլ վասն վերջին արքայութեան նորա ետես Դանիէլ Հոգովն՝ Աստուծոյ. եւ նկարեաց մեզ մարդկաւրէն՝ ասելով.

« Տեսանէ՛ք մինչեւ Աթոռքն անկանէին եւ Հիմաւորքն ճաւեր: Հանդերձ Նորա սպիտակ իբրեւ զգին եւ հեր գլխոյ նորա իբրեւ զսոր սուրբ: Աթոռ Նորա իբրեւ զբոց հրոյ, անհիւք կառաց Նորա իբրեւ զհոր բորբոքեալ գետ հրոյ յորդեալ խաղալոյ առաջի Նորա, հազարք հազարաց պաշտէին զնա, եւ քիւրք քիւրոց կային առաջի Նորա: Ատեան ճատաւ եւ դպրութիւնք բացան »³²:

Դարձեալ զկնի այսորիկ. « Տեսանէի ընդ յամպս երկնից իբրեւ ի Հիմաւորքն, եւ մերձեմայր մինչեւ ի նա, եւ մատուցեալ առաջի նորա եւ մնա լուաւ իշխանութիւն: Եւ ամենայն ազգք եւ լեզուք մնա ծառայեսցեն, իշխանութիւն նորա ոչ եղծանի եւ թագաւորութիւն նորա ոչ անցանէ »³³:

Այս ի վերայ Փրկչին կատարին:

Բ

« Հողմ »³⁴ զկողմապետ հրեշտակսն ասէ. որպէս ասէ, « Կացոյց զսահմանս ազգի ըստ թոյնոյ հրեշտակաց »³⁵: Որ եւ հրեղէն եւ հողմեղէն եւ լուսեղէնք ասին յերկնից, զի երկնաւորք եւ եւ անտի առեալ հրաման բաղխեն զծով, զի իբր ի բաղխմանէ թունդ առնու աշխարհ, զոր « ծով » կոչէ վասն ծփմանն եւ շարժմանն եւ տատանմանն, որք ի սմա կենցաղավարին: Եւ յաւել ի յառնէ թագաւորաց ըստ այնմ՝ « Յարիցէ ազգ յազգի վերա եւ թագաւորութիւն ի վերա թագաւորութեան »³⁶: Ջոր գազանս կոչեաց թնդալ եւ ամբոխէ յերկիր իբրեւ զծով ալեալք և « գազանս » ասէ, զի գազանաբարոյ եւ ապականիչք էին:

³⁰ Հմմտ. Բ Թեաադ. Բ 7

³¹ Դան. Բ 94

³² Ածդ է 9-10

³³ Ածդ է 13-14

³⁴ Ածդ է 2

³⁵ Հմմտ. Բ Օր. ԼԲ 8

³⁶ Մտթ. ԻԴ 7:

Ա

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԳԱՊԵՏԻ՝ «ԴԱՆԻԵԼԻ ՏԵՍԻԼՔԻ»
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ես՝ Դանիելս, [գիշերային տեսիլքում] տեսնում էի, որ երկնքի չորս հողմերը՝ Աստծու հրամանով, «բախում էին մեծ ծովը» (Ռամ. է 2), [այսինքն]՝ աշխարհը, որ «մեծ և լայնատարած ծով» է (Աղմ. ԺԳ 25): «Ծովից դուրս էին գալիս տարբեր կերպարանքով չորս մեծամեծ գազաններ» (Ռամ. է 3): [Այդ չորս մեծամեծ գազանները նշանակում են, որ] չորս թագավորներ պիտի թաղթրանա՞ն երկրի վրա: [Այա] Բարձրյալ [Աստծու սրբերը պիտի ելնեն ու] առնեն թագավորությունը [և պահեն այն հավիտյան հավիտեցից] (Հմմտ. Ռամ. է 17-18): Ս. Գիրքը, մտնավա՞նդ Ս. Գրքի Տերը՝ Աստված, թագավորներին անվանում է «Գազաններ», որոնք երևացին մախքան Բրիստոսի գալուստը: «Թագավորներ» (Ռամ. Բ 44) է անվանում ընդհանրական [իշխանապետի] և ո՛չ տեղական [իշխանների], որոնք զանազան տեղերում իշխեցին:

Նաբուգոդոնոսորի առաջին երազում [ասվում է]. «Վիթխարի կերպարանքով և ահավոր տեսքով [մի արձան], գլուխը ոսկուց» (Ռամ. է 31-32), քանի որ «գլուխ» [թաղը հատկանշական] է թագավորին և «ոսկին»՝ մուլմախս, որովհետև թագավորը գլուխ է իշխանության: «Գլուխը ոսկուց» [ասելով ակնարկում է] բաբելացիների թագավորությունը, որի առաջին թագավոր Բաբելոնացի Բաբելոնում: Նրանից առաջ այլ տեղում թագավոր չմտնեց: «Բաբելոն» [քաղը] թարգմանվում է «խառնակություն», որովհետև այնտեղ խառնակվեցին լեզուները, ինչպես որ Հայրը Որդուն և Սուրբ Հոգուն ասաց. «Եկեք իջնե՞ք և խառնակե՞՛ք նրանց լեզու» (Ծննդ. ԺԱ 7): Որի համար մարգարեն հարգեց, պատվեց Նրանց թագավորությունը:

Իսկ Բրիստոս գլուխն է բոլոր արարածների, ինչը Առակողն է ասում, թե «Իմաստունի աչքերն իր գլխում են» (Ժող. Բ 14), նաև՝ Բրիստոս գլուխ է եկեղեցու» (Կող. Ա 18)*:

«Առաջին գազանը մման էր թևավոր մատակ առյուծի»․ [ակնարկում է] վեր խոյացած գործության մասին: «Եվ նրա թևերը արծվի [թևերի մման էին]» (Ռամ. է 4), որովհետև Եզեկիելը բաբելացիների թագավորին կոչեց «արծիվ», ինչպես Տերն ասաց. «[Մի առակ բեր] Իսրայելի [տան] մասին և ասա. մի արծիվ մեծաթև լայնատարած թևերով, մագիներով լեցուն, թռավ Լիբանանի վրայով, արմատախիլ արեց ընտիր մայրիկներ և տարավ Բաբելոն» (Տե՛ս Եզեկ. ԺԷ 1-4):

Այսպիսով երկուսից՝ «առյուծին» և «արծվին» միմիանց հարադրեց, որովհետև ինչպես առյուծը թագավոր է չորջուտանների մեջ, նույնպես և արծիվը՝ թռչունների:

«Եվ երկրորդ գազանը մման էր արջի» (Ռամ. է 5), [ակնարկում է] մվազագույն թագավորությունը, որը պարսիկների, մարերի և էլամացիների թագավորությունն է, ինչպես Նաբուգոդոնոսորի երազը՝ «թիկունքն ու լանջերը, բազուկներն ու ձեռքերն արծվի» (Հմմտ. Ռամ. է 4), որ պարսիկների, մարերի և էլամացիների թագավորությունն է:

* Տեղին ակնհայտորեն վնասված է. քննադրը շարունակվում է հետևյալ բառերով՝ «որպես ասաց Սենեքարիմ արքա Բաբելացուց. «Ո՛չ գիտես՝ գիտող կալան հարքն իմ գամե՞նայն երկիրն ասորուց եւ բաբելացուց»:

«Եվ երեք կողոսկրներ կային մրա բերանում» (Դան. Է 5): «Եվ մեկը բարձր էր մյուսից» (Դան. Ը 3):

Քանի որ Պարսից թագավորությունը գորեղ էր, քան մարերիմը և էլամացիներինը, որովհետև նախապես մարերը գտնվում էին Կյուրոսի իշխանության ներքո, իսկ էլամացիները՝ Դարեհի: Եվ երբ Կյուրոսը տիրեց Պարսից [գահին], Դարեհը միավորեց երկու իշխանությունները:

Աստվածաշունչ գիրքը մեզ այսպես է ավանդում. «Եվ երրորդ գաղանը նման էր ինձի» (Դան. Է 6): Ալեքսանդր Մակեդոնացուն արագության պատճառով նմանեցնում էր «ընձի», որ աշխարհի չորս կողմերն ընթանալով՝ արավել և իրեն ենթարկեց Պարսից թագավորությունը:

«Եվ մեջքն ու ազդրները պղնձից» (Դան. Ը 32):

[Ալեքանդրն է] Եգիպտոսն ու Մակեդոնիան, և ինքնակալ Ալեքսանդրի:

«Նրա վրա թռչունի չորս թևեր կային» (Դան. Է 6):

Քանի որ [Ալեքսանդրը] ինչպես թռչուն, սրընթաց արշավեց երկրի չորս կողմերը:

«Գազանը չորս գլուխ ուներ» (Դան. Է 6):

Քանի որ Ալեքսանդրը չորրորդապետների կարգեց, իրենից հետո, իշխանության մի մասին՝ տիրեցին Պտղոմյանները^{**}:

«Եվ դրանից հետո [տեսա] չորրորդ գազանին՝ ահեղ և զարմանալի, որս ժանդեցները երկաթյա էին և մրա մագիլները՝ պղնձյա» (Դան. Է 7, 19): Իսկ Նաբոլզոդոնոստրի տեսիլքում՝ «Սրունքները երկաթյա» (Դան. Բ 33) և մարգարեի [խոսքում] «երկաթյա գավազանով» (Աղմ. Բ 8) ասվում է Հռոմեական թագավորությունը: Իսկ «ոտքերը՝ կեսը երկաթից» [ասելով] խորհրդանշում է Հայոց թագավորությունը, և «կեսը խեցուց»՝ վրաց թագավորությունը:

«Չորրորդ գազանը առավել այլակերպ էր, քան մրանից առաջ բոլոր զուգաները, ուտում էր ու մանրում և մնացորդները կոտրատում ոտքերի տակ» (Դան. Է 7, 19):

Կոտրատում էր այն մարմինները, որ լի էին չարությամբ, քան բոլոր թագավորները:

«Կուլ պիտի տա ամբողջ երկիրը» (Դան. Է 23):

[Այսինքն] Հռոմեացիների թագավորությունը: Թեկուզև բազում պատերազմներ լինեն՝ առհմարին է այն կործանել, քանի որ աշխարհում Հռոմեական թագավորությունից ավելի ահավոր [տերություն] չեղավ. սրան չի փոխարինում այլ թագավորություն, թեկուզև պատերազմ և բարբարոսների հարվածներ վրա հասնեն: [Թեկուզև] մեղքերի հետևանքով մարդկանց խրատելու համար հանդիսանություն լինի, սակայն թագավորությունը չի կործանվում և հասնում է մինչև Քրիստոսի թագավորությունը, և տեղ է պահում Մեծ Թագավոր Քրիստոսին, ըստ Պողոս առաքյալի վկայության, որ ասում է. «Մինչև հռոմեացիների թագավորության ավարտն [այդ պիտի չհայտնվի մինչ այն ժամանակ] երբ մեջտեղից կվերացվի նա, որ այժմ մրան ետ է պահում» (Բմմտ. Բ Թեսաղ. Բ 7):

Եվ ինչո՞ւ «այլակերպ» կոչեց՝ չի ասում, որովհետև ոչ մի ազգության և բնության չի համապատասխանում, այլ [բոլոր] լավագույններից [միայն] լավն է ընտրում: «Այլակերպ» է կոչում, քանի որ [այն թագավորները] ընտրվում և

^{**} Պտղոմյաններ. թագավորական դինաստիա, որ իշխել է հեղեմիստական Եգիպտոսում, մ. թ. 305-30-ին: Հիմնադիրն էր Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Պտղոմեոս Ա Սոտերը:

թագավորում էին այլ օտարազգի հոռմեացիներից: Նաև «առավոր» է ասում, որովհետև Մեծ Թագավորին է ակնարկում և ապա Նրանից կործանվում, ինչպես լեռից փչրված արծաճն է ցույց տալիս (Ռմմտ. Դաճ. Բ 34):

Արդ, քարը, որ առանց ձեռք դիպելու պոկվեց լեռից (Ռմմտ. Դաճ. Բ 34), Բրիստոսն է՝ ծնված ամապական կուսությանը, որ պատերազմ հարուցեց և ինչպես ամառվա կալի փոշի իսպառ փչրեց [արծաճը]՝ խորհրդանշում է Բրիստոսի միջոցով կոապաշտության վախճանն ու կործանումը, որովհետև բոլորը կոապաշտ էին, ինչը Բրիստոս վերացրեց և իր Աստվածությունը հաստատեց: Այս մասին ասում է, թե՛ «Լեռը լցրեց ամբողջ դաշտը» (Դաճ. Բ 35), [այսինքն]՝ իր աստվածագիտությանը:

Դանիելը Աստծու Հոգով տեսավ Նրա վերջին դատաստանը և մարդկորեն մեզ պատմեց՝ ասելով. «Տեսնում էի, մի՞նչ որ աթոռներ դրվեցին, և Ալևորը նստում էր [այնտեղ]... ճրա հագուստը ձյան պես սպիտակ էր, ճրա գլխի մազերը մաքուր էին գեղմի մման: Նրա աթոռը՝ կրակի բոցի մման, ճրա կառքի ամիվները՝ ինչպես բորբոքված կրակ: Նրա առջևից հոսում էր կրակե հորդ մի գետ, հազար հազարավորներ պաշալում էին Նրան, և քյուր-քյուրավորներ կային Նրա առջև: Նա ատյան նստեց, և գրքերը բացվեցին» (Դաճ. Է 9-10):

Դարձյալ այս ամենից հետո ասում է. «Տեսնում էի, որ երկնքի ամպերի միջից գալիս էր մեկը՝ Մարդու Որդու մման, հասնում էր Ալևորին ու մոտենում Նրան: Եվ Նա բերվեց Նրա առջև, Նրան տրվեց իշխանությունը... բոլոր ազգերը և լեզուները պիտի ծառայեն Նրան, Նրա իշխանությունը չի անցնի, և Նրա թագավորությունը չի կործանվի (Դաճ. Է 13-14):

Բ

«Հողմեր» (Դաճ. Է 2) է կոչում հրեշտակներին, ինչպես ասաց. «Ազգերի սահմանները նշանակեց ըստ հրեշտակների թվի» (Ռմմտ. Բ Օր. ԼԲ 8), որոնց նաև երկնքի հրեղեններ, հողմեղեններ և լուսեղեններ են ասվում: Ուստի և երկնավորները հրաման առնելով՝ բախում էին ծովը, որպեսզի բախումից ցնցվի աշխարհը, որը «ծով» է կոչում սրանում կենցաղավարողների ծիսման, շարժման և տատանման, առավել ևս թագավորների միմյանց դեմ դուրս գալու պատճառով, ըստ այն խոսքի՝ «Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ» (Մատթ. ԻԴ 7), որոնց «գազան» կոչեց, որ թնդում և ամբոխում են երկիրը, ինչպես ծովը՝ ալիքներից: Նաև՝ «գազան» ասաց, որովհետև գազանաբարո ապականիչներ էին^{***}:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԻԳԵՆ ԴՊԻՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՋԵՄԱՐԱՆ, Զ ԼՍԱՐԱՆ

^{***} «Արդիճառոր եւ սուրբ Վարդապետին վարդանայ սակաւ ինչ վաստակ ի սուրբն Դանիել», տե՛ս «Մեկնություն սրբաց երկոտասան մարգարեից, արարեալ երանելոյն Ներսէսի Լամբրոնացոյ...», Կ. Պոլիս, 1852, էջ 260:

Հ. ՇԱԽԼ ՌԸՆՈՒ (Ֆրանսիա, Ան Կալկա)

ՓԱՐԻԶԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՄՐ. 44 ՄԱՏՅԱՆԸ (ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ)*

Ֆրանսիայի Ազգային գրադարանի (այսուհետև՝ ԱԳ) հայկական ֆոնդի հմր. 44 ձեռագիրը, որը 1728-1730 թթ. Կոստանդնուպոլսից բերել է Աևհմի պատվիրակությունը¹, բերվել է հավանաբար Անկարայից² և բարձր գնահատականի է արժանացել առաջին անկարագրողների կողմից: Հայր Սուքիաս Պարոնյանը 1864 թ. և վաճառար ժամ-Պոլ Մարտինը 1878 թ. իրենց հրապարակած ցուցակներում այդ ձեռագիրը ներկայացնում են իբրև Թ-ժ դարերում ընդօրինակված երկաթագիր (ուճցիալ) գրչություն³, որպես «մի արժեքավոր և կարևոր հուշարձան ինչպես Հայոց ծիսակարգի պատմության, այնպես էլ հնագրության համար»⁴: Այս ծանոթագրությունը, որն ռզտագործում է Ֆ. Մակլերը իր ցուցակում, միջև այսօր էլ շարժում է պատմաբանների և ուսումնասիրողների հետաքրքրությունը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ռ.Ղ.Ալիշանը 1896 թ. հետազոտել է վավերագրի մի քանի էջը⁵: Այդ մասին տեղեկացնում է Ֆ. Ե. Բրիգոմանը՝ արևելյան պատարագների մասին իր ճշանավոր երկում, որը հրատարակվել է մույն թվականի⁶: Ֆ. Կոնիքերը 1905 թ.

* Այս հրապարակումը որպես զեկուցում ընթերցվել է 1998 թ. հունիսի 12-ին, Ֆրանսիայի Ազգային գրադարանի կողմից կազմակերպված «Հայաստանը արևելքի և արևմուտքի միջև» գիտական կոնֆերանսում (ծանոթ. թարգմանչի):

¹ Հմմտ. H. Omont, *Mission archéologiques françaises en Orient aux XVII^e et XVIII^e siècles*, Seconde Partie, Paris 1902, p. 1078-1118.

² Ազգային գրադարանի ուր երկաթագիր հայերեն ձեռագրերից երեքը իրոք բերված են Անկարայից (հույմ տեղում, էջ 1118):

³ Պարոնյանը իր ցուցակի ծանոթագրությունում (Ազգային գրադարանի հայկական ֆոնդի ձեռ. 298) այն թվագրելով Թ դարով, ինչպես Ռ. Ալիշանը (*Deux descriptions arméniennes des Lieux Saints de Palestine*, տե՛ս *Les Couvents de la Sainte Ville de Jérusalem d'après nos Anciens, avec une traduction française*, Venise 1896, p. 24; Conybeare, *Rituele Armenorum... of the Armenian Church*, Oxford 1905, p. 507) այն կարծիքն է հայտնել, որ այդ ձեռագիրը կարող է ճակ ընդօրինակված լինել Ը դարում: Ֆր. Մակլերը մատյանը թվագրում է Ժ դարով (*Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens*, Paris 1908, p. 23):

⁴ Հմմտ. Պարոնյանի ձեռագիր-ցուցակը (ԱԳ, ձեռ. 298, էջ 33), Մարտինը մոծել է այս արտահայտությունը իր ցուցակի մեջ (ԱԳ, ձեռ. 300-301):

⁵ Հմմտ. ծան. 3:

⁶ Հմմտ. *Liturgies Eastern and Western*, Oxford 1906, p. XCIC.

ճրապարակված *Rituale Armenorum* գրքում⁷ քերում է այս մատյանի ծիսական հատվածների համառոտ թարգմանությունը և աստվածաշնչային հղումների (*pericopes*) սկզբի և վերջի ցուցումները (*incipit et desinit*), որոնք, շուտով, մի շարք ճրապարակումներում աշխույժ հետաքրքրություն առաջացրեցին այդ ձեռագրի և դրա ուսումնասիրության նկատմամբ: Այստեղ մենք չենք փորձի այդ բոլորը թվարկել, այլ, այս մատյանի կարևորության մասին կարճ նախաբանից հետո, կանդորադառնա՞նք այն հեռանկարներին, որոնք այս մատյանի ուսումնասիրությամբ բացվում են աստվածաշնչական ուսումնասիրությունների բնագավառում:

Ա. Համառոտ անդրադարձ

Փարիզի Ազգային Գրադարանի հայկական ֆոնդի համար 44 մատյանի՝ հնագույն հայերեն ձեռագրերից մեկի նկատմամբ առաջացած հետաքրքրությունը հեշտ է բացատրվում: Այս հաստատվոր մատյանն, իրոք, ամենահին վկայությունն է հունարենով ստեղծված, իսկ այժմ կորած, ծիսական գրքերից մեկի՝ 417-439 թթ. Երուսաղեմ քաղաքի Սահմանք-ճաշոցի⁸: Այդ բնագիրը բացատրական հատվածներում կարգավորում է տոնակատարությունների օրը, ժամը և տեղը, տոների հերթականությունը և Ս. Քաղաքի ծիսական տարվա ընթացքը: Այստեղ ամբողջությամբ բերվում են նաև Հիմ և Նոր Կտակարանների ընթերցումները⁹, որոնք ընթերցվում էին ձեսի սկզբում¹⁰: Ո՛չ արևելյան, ո՛չ էլ արևմտյան ծիսական

⁷ Conybeare, *Աշխատք*, էջ 507-527:

⁸ Հայտնի է նույն բնագրի ևս երկու ընդօրինակություն (Երուսաղեմի Ս.Յակոբեանց մատենադարան, հմր. 121՝ 1192 թ., և Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարան հմր. 985՝ ժ դար), որոնք հնագրոտեն ավելի ուշ շրջանի են: Այս համառոտ անդրադարձում շոշափված խնդիրների մասին տե՛ս A. Renoux, *Le codex Jérusalem 121* (Patrologia Orientalis [=PO] t. 35, 1, 36, 2, Turnhout 1969-1971):

⁹ Սաղմոսների բնագիրը և նրանց կցորդները տրվում են միայն սկզբնատողով: Վաղ քրիստոնեության շրջանում, իրոք, սաղմոսերգությունը ստանձնում էր մենակատարը, որին խումբը պատասխանում էր կրկներգով (տե՛ս J. Mateos, *La célébration de la parole dans la liturgie byzantine*, *Orientalia Christiana Analecta* 191, Rome 1971, p. 10-13; A. Verheul, *Les psaumes dans la prière des Heures*, տե՛ս *Questions Liturgiques* 71 (1990), p. 261-295): Մենակատարն ուներ ուրեմն իր գիրքը: Կյուրեղ Ակյութապոլսեցին (*Vie de Théodosios*, éd. E. Schwartz, TU 49, 2, Leipzig 1949, p. 236) և Կյուրեղ Երուսաղեմացին (*Caléchèse* 13, 26 PG 33, 804) վկայում են, որ Երուսաղեմն ուներ «սաղմոսագրքեր»:

¹⁰ Անդրադառնալով երկու մատյաններին (հայկական ճաշոցի հրատարակությունը ներկայացնում է Երուսաղեմյան Սահմանքի երեք տարբեր վիճակ), ժան Դյուլյասին գրել է. «Հայկական վավերագիր Գյուրի վրա հենվելով, կարելի է արդյոք ենթադրել, որ (հունարեն-Ա. Բ) Աստվածաշնչային բնագրերը բերվել են ամբողջությամբ ... կամ բավարարվել են միայն ցուցումը տալով» (*Bulletin de critique textuelle du Nouveau Testament* IV, 2^e partie, տե՛ս *Biblica* 53 [1972], p. 249-251): Երուսաղեմի Սահմանքի բոլոր վկայությունները ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն խմբագրություններում, տարբեր հատվածներում գրեթե ամբողջությամբ բերում են Աստվածաշնչի բնագիրը, քանի որ հնուն Արևելքի ծիսական Սահմանքները նույնական էին: Եթե հունարեն ձագման վավերագրերը

ավանդույթը չի պարունակում այդ տիպի որևէ այլ հուշարձան, որը մույնքան ամբողջական և ճշգրիտ ձևով մեզ տաճեր այդքան հեռու մի դարաշրջան՝ Ե դարի սկիզբ¹¹:

Մեր ձեռագրի երուսաղեմյան Գախատիպը հունարենից հայերեն է թարգմանվել Սահակ Մեծ կաթողիկոսի (+ 438) իշխանության տարիներին¹², հավանաբար՝ դասական թարգմանությունների դարաշրջանում¹³: Այդ ժամանակ, Ե դարի առաջին տարիներին, հայոց այբուբենի ստեղծումից հետո, Եկեղեցին մտահոգված էր ծիսական գրքեր ունենալ հավատացյալների խոսակցական լեզվով, ինչպես այդ մասին վկայում է պատմիչ Ղազար Փարպեցին (437-500)¹⁴: Թ դարով թվագրվող ԱԳ-ի հմր. 44 մատյանը, որի Գախատիպները կորել են, ընդօրինակված է հունարեն սկզբնագրի թարգմանությունից: Այդ մասին են վկայում Զ և հաջորդ դարերի տարբեր հայ հեղինակների վկայությունները¹⁵:

ԱԳ հմր. 44 հայերենով պահպանված վավերագրի հմտության մկատմամբ հետաքրքրությունը մեծացավ ծիսակարգի պատմաբանների համար, որոնք հնարավորություն ստացան ավելի մոտից ուսումնասիրել հին ծեսը: Երուսաղեմը, բոլոր եկեղեցիների Մայր եկեղեցին, Ե դարի սկզբին, իրոք, քրիստոնյա աշխարհում մի հսկայական լույս էր արձակում տարբեր սուրբ վայրերից, ուր ուխտավորներ էին այցելում բոլոր երկրներից¹⁶: Նրա ծիսակատարությունը իր սրարողակարգով և կայունությամբ ձևավորվել է կոնստանդինյան բազիլիկայի կառուցումից հետո, որպես հիշատակ և ճշմարտապատում վկա այն տեղի, ուր եղել է Ջրիտոսը:

Այդ ծիսական կառույցի արարողական բնույթը, իհարկե, արդեն հայտնի էր Եգերիի ուղևորությամբ. ուխտավորուհի Եգերիի 381-384 թթ. ճանապարհորդական օրագրով, որը 1887 թ. հրատարակել էր Գամուրիհին¹⁷: Սակայն Փարիզի ԱԳ-ի համար 44 հայերեն մատյանը, որը մոտենում է, Եգերիի

ճշում են միայն սկզբնատողը և վերջնատողը, արդյոք չէի՞ն կարող գոյություն ունենալ այդ տիպի մի շարք վկայություններ: Արդյոք Հունարեն բնագրի հայ թարգմանիչները բերու՞մ էին աստվածաշնչային բնագրերը, որոնք չկային Գախատիպում: Մեզ այդպես չի թվում:

¹¹ Արևմտյան աշխարհի համար տե՛ս C.Vogel, *Medieval Liturgy: an Introduction to the Sources*, revised and translated by W.G.Storey - N.K. Rasmussen, Washington, 1986, p. 320-355, իսկ արևելյանի համար ոչ ամբողջական ցանկը տե՛ս PO, 35, 1, p. 25-28:

¹² Հմմտ. PO, 36, 2, p. 170-172:

¹³ Հմմտ. L.Ter-Petrossian, *La Littérature arménienne ancienne de traduction*, Erevan 1984, p. 6-9.

¹⁴ Հայոց պատմություն, Ա, 11, հրատարակիչ Գ. Տեր-Մկրտչեանց, Ստ. Մալխասեանց, Թիֆլիս (վերաճարտ. 1985, Դելմար), էջ 18-18:

¹⁵ Հմմտ. Ch.Renoux, *Le lectionnaire de Jérusalem en Arménie: Le casoc'*, t. I, PO 44 (= Le casoc') Turnhout 1989, p. 427-450.

¹⁶ Հմմտ. J.Wilkinson, *Jerusalem Pilgrims before the Crusades*, Warminster 1977, p. 33-43 և *Egeria's travels to the Holy Land*, revised edition, Warminster 1981, p. 10-26; P.Maraval, *Lieux Saints et pèlerinages d'Orient*, Paris 1985, p. 105-162.

¹⁷ J.M.Gamurrini, *S.Hilarii tractatus de Mysteriis et hymni et S.Silviae Aquilanae peregrinatio ad loca sancta...*, Rome 1887.

լատիներեն վավերագրի նկարագրությունը ավելի նշանավոր է, քանի որ էսկանդրեն լրացնում է այս բնագիրը օգտագործված աստվածաշնչական բնագրերով, սաղմոսներով, Հիմ և Նոր Կտակարանների ընթերցումներով: Այդ տոնակատարություններին մասնակցող ուխտավորները, ինչպես նաև Դ. դարի Նրուսաղեսում եղած հայ ուխտավորները¹⁸ կալող էին լսել ընթերցվող բնագրերը երեք լեզուներով (ասորերեն, հունարեն ու լատիներեն)¹⁹ և այնուհետև ներմուծել դրանք իրենց սեփական եկեղեցում: Փարիզյան հմր. 44 ձեռագրի 26որդիվ հնարավորություն ունենք պատկերացնել, թե որքան մեծ էր երուսաղեսյան ծիսական ժաշոցի նշանակությունը մյուս եկեղեցիներում ժաշոցների ձևավորման գործում, քանի որ դրանցից շատերը օգտագործել են միևնույն բնագրերը²⁰: Սակայն ակնհայտ է, որ հայոց եկեղեցում այդ կախումն ամենաբացահայտն է, քանի որ նրա ժամանակակից ժաշոցը, ամբողջությամբ պահպանված իր ձեռագրական ավանդությամբ, ծիսական տարվա, սաղմոսների և ընթերցումների ամենահաճազույն արարողակարգն է, որը ներկայացված է Փարիզի ԱԳ- 44-ում²¹:

Այս ձեռագիրը, որն արտացոլում է Ե դարի սկզբի մի հունարեն վավերագիր և Աստվածաշունչը եկեղեցական աղոթքում օգտագործելու ամենահին վկայությունն է, որը թույլ է տալիս թափանցել Ե դարի սկիզբ, աստվածաշնչածիսական ժաշոցների պատմություն: Իրոք, Որիգենեսը 240-241 թթ. գալով Երուսաղեմ, արդեն մեկնում էր Սամուելի առաջին զրքի ընթերցվածները, ընթերցողի կարդալու պահին²²: Սակայն այդ նույն ընթերցվածները ԱԳ-ի հմր. 44-ում

¹⁸ K.Hintlian, *History of the Armenians in the Holy Land, Jerusalem* 1976; M.Stone, *The Armenian Inscriptions from the Sinai, Cambridge Mss* 1982, p. 25-36; P.Maraval, *Նշվաշխ.*, էջ 112-113:

¹⁹ Հմտ. Itinerarium Egeriea, c. 47, 3-4 (SC 296, p. 314-315).

²⁰ Հմտ. G.Kunze, *Die gottesdienstliche Schriftlesung, Teil I: Stand und Aufgaben der Pericopenforschung*, Göttingen 1947, p. 101-102; Renoux, PO, 35, I, p. 185-186.

²¹ Հմտ. Renoux, *Liturgie arménienne et liturgie hiérosolymitaine*, (Conférences Saint-Serge 1976), Rome 1978, p. 275-288, և *Le casoc'*, p. 463-477 et 530-536.

²² Հմտ. Renoux, *La quarantaine pré-pascale au 3^e siècle à Jérusalem*, dans *La Maison-Dieu* 196 (1993), p. 111-129: Հոդվածն ամառդարացիորեն որակվել է որպես մի «վարկած, որը ձգտում է ցույց տալ, որ սկսած Գ. դարից երուսաղեսում կար քառասնորյա պահք» (հմտ. P.Bradshaw, *L'uniformisation de la liturgie chrétienne au IV^e et au V^e siècle*, dans *La Maison-Dieu* 204 [1995], p. 9-30): Պետք է ընդգծել փաստերը, «որոնք բացահայտում են հին քրիստոնեական ծեսի էականորեն տարբեր բնությունը» (հմտ. P.Bradshaw, *La liturgie chrétienne en ses origines* Paris 1995, p. 232), իսկ ծիսական ակունքների պատմությունը չպետք է զանց առնել: Նորագույն ժամանակներին համապատասխանող պահքի վարկածը «մուտք է գործել Հիսուսի մկրտության տոնից անմիջապես հետո» և դեռևս արմատավորված չի եղել (հմտ. E.Lanne, *Catéchèse et initiation chrétienne dans la tradition pachômienne*, dans *Mystagogie*, 39^e Conférence Saint-Serge, Rome 1993, p. 145-162, սակայն Առաքելական կանոնները թույլ չեն տալիս

ընդված են քառասորյա պահքի հատվածում, ինչպես որ այն կա այսօրվա հայկական ծեսում²³: Արդյոք սկսած Գ դարից, երուսաղեմում գոյություն ունե՞ր, Ե դարում հայերեն թարգմանված, հունարեն Ժաշոցի նախատիպը, որի ամենահին վկայությունը Ա.Գ. հմր. 44 մատյանն է: Հայտնի է, որ այս բնագրի մկատմամբ պատմական հետաքրքրությունը շատ մեծ է, և նրա ամբարած հարստությունը դեռևս հետո է ամբողջությամբ բացահայտված լինելուց:

Բ. Աստվածաշնչագիտական հեռանկարները

Այս մատյանը մեզ հայտնի հնագույն հայերեն ձեռագրերից է ինչպես իր գրության թվականով, այնպես էլ երուսաղեմյան ծիսական Ժաշոցի կառուցվածքով, որով վերականգնվում է վերջինս, և անկասկած նրա աստվածաշնչային բնագիրն արժանի է համակողմանի ուսումնասիրության: Ըստ մեր իմացածի, առնվազն երկու մարդ են մասնավորապես հետաքրքրվել դրանով. Բ. Ստանիսլավ Լիոնեն (†)՝ Նոր Կտակարանի հայերեն տարբերակի ակումբների իր ուսումնասիրությամբ²⁴, և պարոն Պիտեր Քատուն Դանիելի գրքի հայերեն տարբերակի իր հրատարակության մեջ²⁵: Հենվելով միայն ինձ ավետարանական հատվածների համեմատության վրա, հայր Լիոնեն գրում է, որ Ա.Գ.-ի հմր. 44-ը «թվում է, թե ներկայացնում է (աստվածաշնչային-Ծ.Դ.) ձեռագրերի սովորական բնագիրը»²⁶, դա մակ պարոն Քատունի կարծիքն է, երբ հետևում է Դանիելի բնագրին, որն օգտագործվում է որպես ծիսական ընթերցում մույն տիպի մեկ այլ ժառոցտիր-Սահմանքում²⁷: Այս մույն կարծիքին է մակ պարոն Լեոն Տեր-Պետրոսյանը՝ անդրադառնալով հայկական ծիսական Սաղմոսների բնագրերին²⁸:

Ծիսական գրքերի հայկական աստվածաշնչային տարբերակների այս մոտեցումը հիմնավորելու և փաստագրելու համար, ես համեմատեցի Ա.Գ.-ի հմր. 44 մատյանի Սամուելի 1 գրքի երեք ընթերցումները Զոհրաբյանի հրատարակած Աստվածաշնչի փոլգատայի հետ: Այդ բնագրերը 240-241 թթ. ընթերցվել են երուսաղեմյան ծիսակատարությունների ընթացքում, երբ Որիգենեսը եղել է

կապել պահքը Աստվածահայտնության տոնի հետ, ավելի շուտ ընդհակառակը՝ այն պետք է կապել պահքի հետ):

²³ Հմմտ. A. Renoux, Les lectures quadragesimales du rite arménien, dans Revue des Études Arméniennes, N^{elle} Série V (1968), p. 231-247.

²⁴ S. Lyonet, Les Origines de la version arménienne et le Diatessaron (Biblica et Orientalia 13), Rome 1950: տե՛ս էջ 166, հեղինակի կողմից համեմատված Նոր Կտակարանի հատվածների ցանկը:

²⁵ S. Peter Cowe, The Armenian Version of Daniel (Armenian Texts and Studies 9), Atlanta 1992: երբեմն հեղինակը չի արձանագրում Ազգային գրադարան հմր. 44-ի ընթերցումները և բավարարվում միայն երուսաղեմի Հակոբյանց Մատենադարանի հմր. 121-ով (տե՛ս էջ 401 - 406), երուսաղեմյան Ժաշոց-Սահմանքի մյուս ընդօրինակությամբ (տե՛ս վերևում, էջ 2, նաև. 8):

²⁶ Հմմտ. S. Lyonnet, նշվ. աշխ., էջ 166:

²⁷ Հմմտ. P. Cowe, նշվ. աշխ., էջ 401-414, ուր նա տալիս է երուսաղեմ հմր. 121-ի տարբերակների ցանկը (տե՛ս էջ 2, նաև. 8):

²⁸ Հմմտ. L. H. Ter-Petrosyan, ներածությունը (էջ 53) Ա. Ս. Զեյթունյանի հատորի (ՄԱճԻՅԵ ԳԻՐԸ, Երևան 1985):

Երուսաղեմում²⁹: Ամկասկած, պահանջվում էր վերագտնել Ռումարեմ աստվածաշնչային այն բնագիրը, որն իր առջև ուներ Որիգենը: Այն պահպանված է Թ-Ժ դարերում ընդօրինակված հայերեն ձեռագրում, այսինքն՝ Ռումարեմից հայերեն թարգմանված մախարիմակի ստեղծումից հինգ դար հետո: Դրա Ռումարեմ բնագրի մախատիպն արդեն գոյություն ուներ հայերեն թարգմանությունից երկու դար առաջ, ինչն էլ իր առջև էր ունեցել և մեկնել ակեքսանդրյան գիտնականը Երուսաղեմյան ծեսի ընթացքում: Այնուամենայնիվ, այս երեք ընդարձակ ընթերցումները, ամբողջացնելով յոթամասունքերեքորդ ոտքից, շարունակում են հետաքրքրություն ներկայացնել: Համեմատության համար, մենք օգտագործել ենք ոչ միայն Ջոհրաբյանի Աստվածաշունչն իր տարբերակներով, այլ նաև Ջոնսոնի ուսումնասիրությունները Սամուել 1-ի վերաբերյալ: Ջոնսոնը համեմատել է մոտ երեսուն հայկական աստվածաշնչային ձեռագրերի տարբերակները, որոնցից հնագույնները հասնում են մինչև ԺԳ դար³⁰: Ուսումնասիրության դաշտը քավակահին ընդարձակ է:

Մեր երեք հատվածների երկու հարյուր յոթամասուն բառ և արտահայտություն տարբեր են հայկական Աստվածաշնչի բնագրից, սակայն դրանցից ութը նույնանում է Ջոհրաբյանի հրատարակության տողատակում բերված ընթերցումների հետ, իսկ ութն էլ տարբեր աստվածաշնչային ձեռագրերում գտել է Ջոնսոնը: Չորս այլ ընթերցվածներ Աննայի հիմնի (1 Սամուել 2, 1-10), որոնց միավորված են երկրորդ ընթերցման մեջ (1 Սամուել 1, 23b-2, 26), պահպանվել է նույն Հիմնում, որը պահպանվել է ժամակարգության գիշերային ծեսում³¹: Սրանք են ԱԳ-ի հմր. 44 մատյանի հայկական միջավայրում հայտնի հինգ բնագրական առանձնահատկությունները: Նշենք նաև, որ Ռ. Լիոնեն և պ. Պիտեր Քաուն³² նկատել են աստվածային ծեսի ընթացքում աստվածաշնչային Հիմներգրի տարբերակների նկատմամբ հետաքրքրությունը. մեղեդիները և երաժշտական մշանները, որոնք ծիսական ձեռագրերում ուղեկցում են երգեցողության համար մախատեսված աստվածաշնչային բնագրերին, հին ընթերցումներում հաճախ պահպանվել են:

Սակայն վերադառնա՞նք մեր հաշվարկներին: 1 Սամուելի քսան (ծանոթ) առանձնահատկությունները պահպանվել են հայկական միջավայրում, մնում են երկու հարյուր հիսուսը, որոնք չեն համադրվում մինչև այժմ հաշվառված բնագրերում: Այնուհանդերձ, այդ տարբերակների մեծամասնությունը առանձնացված է Ջոհրաբյանի բնագրում իբրև քերականական տարբերություններ. անձնանունների և տեղանունների ուղղագրություն, բայերի ժամանակ, հոգնակի-եզակի, հոլովական վերջավորություններ, հոդերի ձևեր, դերանուններ և մախդիրներ, բառերի շարադասություն և այլն: Այնքան շատ են հայկական Աստվածաշնչի քույրեր Յոթանասնիցի, Պեշիտայի, վրացական տարբերակի, ինչպես նաև լատին

²⁹ Տե՛ս վերևում, էջ 4-5:

³⁰ B. Johnson, Die armenische Bibelübersetzung als hexaplarischer Zeuge im 1. Samuelbuch (Coniectanea Biblica, Old Testament Series 2), Lund 1968.

³¹ Տե՛ս ժամանակագրություն Հայաստանայց Սուրբ Եկեղեցույ, Երուսաղեմ, 1915, էջ 84-85:

³² Տե՛ս S. Lyonnet, Գշվ. աշխ., էջ 167, S.P. Cowe, Գշվ. աշխ., էջ 401-413: Ազգային գրադարանի հմր. 44-ի Աննայի Հիմնի այդ ընթերցվածների ցանկը բերում ենք ներքևում:

վտուգատալի հետ բնագրական զուգահեռ ընթերցումները, որ մրանցից շատերն արժանի են մասնագետների կողմից մասնավոր ուսումնասիրության:

Ի՞նչու դրանք մի կողմ ենք դնում՝ ընդգծելով հավելումները և բացթողումները, բնագրական ըմբռնության «ավելներն» ու «պակասները»: ԱԳ հմր. 44 1 Սամուելի երեք հատվածներում հանդիպում ենք այդ տիպի թիւումներն տարբերակի: Դրանցից 28-29-ը «ավել» են, իսկ քսանմեկը՝ «պակաս»: Երրորդ կարծես համարժեք չեն Աստվածաշնչային թվարկված տարբերակներին: Կարելի է հարց տալ, թե աստվածաշնչային ո՞ր բնագրերն են մոտենում 1 Սամուելի ԱԳ հմր. 44-ի այդ հատուկ ընթերցումներին: Դրանցից և ոչ մեկը արտացոլված չէ Ռուֆինի մշակած՝ Որոգենեսի՝ Սամուելին *նվիրված ճառի* լատին տարբերակում, ուր երբեմն հղվում է մեկնված աստվածաշնչային բնագիրը³³: Ոչինչ չկա նաև 1 Սամուելի եբրայական, հունական և կումրանյան բնագրերի ավելներին և պակասներին վերաբերող Ստեֆեն Գիզանոյի իրականացրած ուսումնասիրության արդյունքներում³⁴: Վերջապես մշեմը, որ այս տարբերակներն այլևս գոյություն չունեն ժԲ և հետագա դարերի ծիսական ժաշոցներում, որոնց աստվածաշնչային բնագրերը մոլորակում են հայկական Աստվածաշնչին կամ մոտենում են մրան³⁵:

Ահա այդ քսանութ տարբերությունների ցանկը զուգահեռ Զոհրաբյան հրատարակությամբ, որի բնագիրը տրվում է առաջինը.

Առաջին հատված (1 Սամ. 1, 1-23 ջ).

1 Սամ. 1, 1 լարիմաթեմայ ի սիփայ] լարեմաթեմ ի մարայ

1 Սամ. 1, 3 քահանայք տեառն] (քայց է թողնված)

1 Սամ. 1, 8 եւ ասէ ցնա] եւ ասէ (երեք անգամ)

1 Սամ. 1, 10 եւ ելաց] ելաց

1 Սամ. 1, 15 ոչ այդպէս տէր] ոչ այդպէս

1 Սամ. 1, 16 ի տխրութենէ] ի բազում տխրութենէ

1 Սամ. 1, 18 ոչ եւս տխրեցան] ոչ տխրեցաւ

1 Սամ. 1, 20 Սամուէլ] Սամուէլ³⁶

1 Սամ. 1, 20 ի Տեառնէ Աստուծոյ զարութեանց] ի Տեառնէ Աստուծոյ

Երկրորդ հատվածը (1 Սամ. 1, 23 Ե- 2, 26).

1 Սամ. 1, 24 եւ պանիք] պանիք

1 Սամ. 1, 25 եւ մատոյց] մատոյց

1 Սամ. 1, 28 եւ պագին երկիր անդ տեառն] եւ պագին անդ երկիր

1 Սամ. 2, 1 լԱստուած իմ] լԱստուած փրկիչ իմ³⁷

³³ Homélie sur Samuel, p. 100-119.

³⁴ S. Pisano, Additions or omissions in the Books of Samuel (Orbis Biblicus et Orientalis 57), Fribourg 1984.

³⁵ Օրինակ Երուսաղեմի Հակոբյանց հմր. 121-ը, որը Ազգային գրադարան հմր. 44-ի (ՊՕ 35, 1, էջ 181-184) նման վկայում է ծեսի ավելի վաղ կառուցվածք, այլևս չի պարունակում 28 տարբերակները: 1 Սամուելի երեք ընթերցումների մրա բնագիրը չնչին բացառություններով է միայն տարբերվում Զոհրաբյան հրատարակությունից (և տարբերակներից) ու Բ. Զոհրաբի բերած բնագրից:

³⁶ Samuel, ուր երեք անգամ հայտնվել է մարգարեի անունը:

³⁷ Նույն ընթերցումը կա Ամենայի Հիմնում, որը բերված է հայերեն ծեսում (տե՛ս ծան. 31): Վրացերեն տարբերակը 1 Սամուել 2,1 ունի նույն ընթերցումը (Մորտիսա

- 1 Սամ. 2, 2 եւ ոչ գոյ արդար] եւ ոչ արդար³⁸
 1 Սամ. 2, 3 եւ Աստուած] Աստուած³⁹
 1 Սամ. 2, 6 իջուցանէ ի դժոխս եւ Քաճէ] իջուցանէ ի դժոխս եւ Քաճէ ի դժոխս
 1 Սամ. 2, 7 եւ բարձրացուցանէ] (բաց է թողնված)⁴⁰
 1 Սամ. 2, 9 այր Ռզար] Ռզար⁴¹
 1 Սամ. 2, 9 Տէր սուրբ է] Տէր սուրբ է ամուսնորա
 1 Սամ. 2, 9 այլ առնու պարծեցի] այլ որ պարծի, ի Տէր պարծեցի⁴²
 1 Սամ. 2, 15 եւ մինչեւ] մինչեւ⁴³
 1 Սամ. 2, 19 տանէր մմա] տանէր⁴⁴
 1 Սամ. 2, 21 եւ յղացաւ] յղացաւ⁴⁵
 1 Սամ. 2, 23 եւ լսեմ] լսեմ⁴⁶

Երրորդ Քատված (1 Սամ. 3, 21 c- 4, 18)

- 1 Սամ. 4, 7 եւ երկեան] երկեան
 1 Սամ. 4, 8 քաջացարութեւ եւ լեռնութեւ արք] քաջալերեցարութեւ
 1 Սամ. 4, 13 եւ եմուտ այրն գոյժ արկանել ի քաղաքին] (բաց է թողնված)
 1 Սամ. 4, 16 զի՞նչ գործ գործեցաւ] զի՞նչ գործեցաւ⁴⁷
 1 Սամ. 4, 18 գտապանակն Աստուծոյ] գտապանակն Տեառն

Այս ցանկը, մեկ անգամ եւ, Քաջակամ Աստվածաշնչի ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրում է ծիսական գրքերի վրա⁴⁸: Այս թեզը եւ մեկ անգամ

mimari macxovarisə weṃiṣa): Հիմնի կոնտամինացիան տե՛ս Ղուկ. 1, 46: Թոթաճանցիցի 1 Սամուել 2,1-ը արդյո՞ք մույնական է Զոհրաբյան հրատարակության հետ:

38 Նույն ընթերցումը մեկ Գիշերային ժամի Ամենայի Հիմնում (տե՛ս վերևում, ծան. 31):

39 Նույն ընթերցումը մեկ ծիսական Ամենայի Հիմնում (տե՛ս վերևում, ծան. 31):

40 Այս բացթողումը կարող է բացահայտ վրիպում լինել. բնագիրը այդ բառի պակասով չի ամբողջանում:

41 Նույն բացթողումն է մեկ Ամենայի Հիմնում Գիշերային ժամի (տե՛ս վերևում, ծան. 31):

42 Նույն ընթերցումը («պարծի»- «պարծի»-ի փոխարեն) կա Ամենայի Հիմնի ծեսում (տե՛ս վերևում, ծան. 31):

43 Etiam antequam, լատին վուլգատայում:

44 quam afferebat status diebus, լատին վուլգատայում:

45 Այն կա եբրայերենում:

46 Նույն բացթողումը առկա է մի շարք հունարեն ձեռագրերում, որոնք նկատված են, տե՛ս Field, Origenis Hexapla t. I, p. 491.

47 Նույն բացթողումը կա մեկ վրացերեն տարբերակում (1 Սամ. 4, 14) և լատիներենում:

48 Տե՛ս ծան. 3,4 և C.Cox, Biblical Studies and the Armenian Bible 1955-1988, տե՛ս Revue Biblique 89 (1982), p. 99-113, և մույն հեղինակի The use of Lectionary Manuscripts to establish the text of the Armenian Bible, տե՛ս Medieval Armenian Culture (Armenian Texts and Studies 6), Chico 1984, p. 365-380.

հաստատվում է ԱԳ-ի հմր. 44 ձեռագրով, որն ընդօրինակված է միմյ ԺԲ դարը, այսինքն այն դարաշրջանից առաջ, երբ աստվածաշնչային տարբեր գրքեր սկսել են միավորվել մեկ հատորի մեջ՝ ստեղծելով մի կայուն բնագիր⁴⁹:

ԱԳ-ի հմր. 44-ի միայն երեք հատվածների համեմատությունն է, իհարկե, հնարավորություն չի տալիս լուրջ եզրակացություններ անել այս ձեռագրում արտացոլված հայկական տարբերակի էության մասին: Կարող ենք միայն նշել, որ *1 Սամուելը* չի համընկնում որևէ ծանոթ հայերեն տարբերակի հետ, և որ այն երբեմն համընկնում է աստվածաշնչային ամենագլխավոր տարբերակների՝ *Բուճարենի*, *ասորերենի* և *լատիներենի* հետ: Այս մատյանի ածանոթ բնագրային տարբերակները նաև ցույց են տալիս, որ, զգտագործելով ավելի լայն ձեռագրական նյութ, պետք է դեռևս բացահայտել այս խմբագրության ծագումն ու էությունը ըստ հին հայկական ծիսական ձեռագրերի աստվածաշնչային հատվածների: ԱԳ-ի հմր. 44-ը ամենահին վկայությունն է Ե դարի Երուսաղեմի Մաշոց-Սահմանքի, և Աստվածաշնչի բնագրի ուսումնասիրության համար չափազանց արժեքավոր վավերագիր է:

Ֆրանսերենից թարգմանեց

ՊԱՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆԸ

⁴⁹ Cox. The use of Lectionary, p. 365.

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈԱՅԱՆ**Պատմական գիտությունների թեկնածու****ՀԱՌԻՃԻ ՎԱՆՔԸ ԺԳ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ****(ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ)**

Հայաստանի նշանավոր վանքերից է Հառիճը, որը, ի տարբերություն միջնադարում հռչակված շատ այլ վանական կենտրոնների, կրոնական և կրթամշակութային կարևոր դեր է կատարել մահ հոր ժամանակներում: ԺԹ դարի կեսերից Ս. Էջմիածնի կաթողիկոսական ամառանոցն էր, ուներ դպրոց, որը մեծ դեր է ունեցել ողջ Օհրակի կրթական կյանքում: Վանքի պատմության մասին առաջին գրքույկը հրատարակվել է Արել վարդապետ Մխիթարյանցի կողմից դեռևս 1856 թ. («Պատմութիւն մեծաստանին Հառիճոյ ի Օհրակ», Տփղիս, 1856): Վանքի պատմությանն անդրադարձել է Ղ. Ալիշանը «Օհրակ» համայնապատումի մեջ, ալմուհետև տարբեր հեղինակներ անդրադարձել են Հառիճի վիմագրերին (Միմաս Վահանյանց, Հ. Եղիազարյան, Հ. Բյուրտյան, Ե. Տեր-Միմասյան), ճարտարապետությանը (Հ. Խալփախյան, Ստ. Մնացականյան, Ա. Զալալյան, Ռ. Բարտաշյան և այլք):

Ս. Էջմիածնի Հոգևոր ժեմարանում գրվել է Հառիճին նվիրված երկու ավարտանաո: Դրանցից երկրորդը՝ «Հառիճա վանքը և նրա վանական դպրոցը» վերնագրով, Արթուր սրկ. Պողոսյանը (Օհրակի թեմից) պաշտպանեց 1997-ի հոկտեմբերին: Օգտագործելով քավականին մեծ թվով արխիվային փաստաթղթեր՝ հեղինակը հատկապես մանրամասնորեն էր ներկայացրել վանական դպրոցի պատմությունը: Լինելով այս՝ ընդհանուր առմամբ հաջողված, աշխատության ընդդիմախոսը, առիթ ունեցանք ավելի հաճախմանորեն անդրադառնալու Հառիճի վանքին վերադարձնող գրականությանը՝ մեկ անգամ ևս համոզվելով, որ, ինչպես մեր միջնադարյան վանքերից շատերի դեպքում, Հառիճի պատմության ուսումնասիրողները մույմպես, հիմնականում օգտագործելով վիմագիր արձանագրություններն ու պատմիչների հակիրճ վկայությունները, զանց են առել ձեռագրերի հիշատակարանները: Միևնույն վանքերի, հատկապես վանական կյանքի, տեղի հոգևորականության մասին շատ արժեքավոր ու ընդգրկուն տեղեկություններ են պարունակում վանական գրչատներում ստեղծված ձեռագիր մատյաններն ու մրանց հիշատակարանները: Ուստի ստորև կփորձենք լրացնել այդ բացը Հառիճի գրչատան ԺԳ դարի սկզբի երկու արժեքավոր հիշատակարանների տեղեկություններով: Դրանք էապես հարստացնում են վանքի պատմությունը, թույլ են տալիս ճշգրտել Հառիճի ԺԳ դարի վանահայրերի ցուցակը:

Սակայն մինչ հիշատակարանների վկայակոչումը, անհրաժեշտ մի անդրադարձ կատարենք վանքի ԺԲ դարի վերջի և ԺԳ դարի սկզբի պատմությանը:

ԶԱՔԱՐԵ ԱՄԻՐՍՊԱՍԱՆԱՐԸ՝ ՀԱՌԻՃԻ «ՀԱՅՐԵՆԱՏԵՐ»

Հառիճի վանքի հիմնադրումը մասնագիտական գրականության մեջ վերագրվում է Է դարին (հնագույն վավերագրերում վանքը կոչվում է Հառիճայ):

Բազրատումյաց շրջանում Ծիրակի մյուս վանքերի պես Հառիճը ևս ծաղկման շրջան ապրեց: Սելջուկների ներխուժմամբ վանքն ամօքացավ, որի խոսում վկան է Գրիգոր վանահոր արձանագրությունը, ուր նա նշում է, թե վերականգնել է վանքը՝ «ի հարիրամեայ կործանմանէն» (*Մխիթարյան, 1856, 81*): Հառիճի այս վաստակավոր վանահոր պատվերով է իր պատմությունը շարադրել Ամիր Մայր Տաճարի փակակալ, պատմիչ Մխիթար Անեցին: Ըստ տապանագրի արձանագրության, որտեղ Գրիգորը կոչվում է «առաջին առաջնորդ երկրորդ շինութեան ուխտիս, որ էր ուսուցիչ եւ արիճակ քարեաց ամենեցուն», նա մահացել է 1188 թ.: Համաձայն մեկ այլ արձանագրության՝ 1196 թ. Պետրոս վանահոր ժամանակ Հառիճ է այցելել ժամանակի նշանավոր վարդապետ Գրիգոր Տուտեորդին և թանկարժեք պահարանապատ խաչ նվիրել վանքին (*Ջյուրտյան, 1957, 268-269*):

Հառիճի վանքը որքան էլ ճանաչված, քայք պատմության մեջ Ծիրակի քաղաքով փոքր վանքերից մեկը կմար, եթե ԺԲ դարի մայրամուտին չդառնար ժամանակի խոշորագույն ռազմաքաղաքական գործիչներից մեկի՝ Ջաքարե ամիրսպասալարի սեփական վանքն ու նրա ամենամշանակալից շինարարական ձեռնարկման վայրը: Հառիճի Ս. Գրիգոր հնագույն եկեղեցու հարևանությամբ Ջաքարեն հիմնեց մեծաշեն և շքեղ Ս. Աստվածածին եկեղեցին, որի շինարարությունն ավարտվեց 1201 թ.:

Հարկ է նշել, որ Ս. Գրիգոր եկեղեցու արձանագրություններում Հառիճի ուխտը Ս. Աստվածածնի և Ս. Գրիգորի անունով էր կոչվում միգյն Ջաքարեի եկեղեցու կառուցումը: 1196 թ. նվիրատու Աստվածատուրը նշում է, որ Արուճուն գտնվող մի այգի ու հնձան է տվել «ի սուրբ ուխտս Հառիճայի, ի Սուրբ Գրիգորս եւ Սուրբ Աստուածածինս»: Նույն թվականին Գրիգոր Տուտեորդին գրում է. «...ետու գսորք նշանս... ի Սուրբ Աստուածածինս Հառիճայու» (*Մխիթարյան, 1856, 82, 83*): Այս և հաջորդ մեջքերումներում կատարված ընդգծումները մերձ են՝ Կ. Մ.): Այժմ Հառիճում, Ջաքարեի եկեղեցուց քացի, Ս. Աստվածածին անունով եղած մյուս եկեղեցու հետքերը չեն երևում, սակայն Ջաքարեն իր եկեղեցին չի կառուցել մուսլմանուն հին եկեղեցու տեղում: Այդ երևում է Հովհաննես գրչի 1219 թ. հիշատակարանից, ուր նշվում է, որ մատյանը գրվել է «ի հրեշտակաբնակ ուխտիս Հառիճ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Գրիգորոյ և ի հրաշակեշտ նոր Կաթողիկէի» (*ԺԳ, 114*): Ջաքարեի շինարարական արձանագրության մեջ ևս նորաշեն եկեղեցին Կաթողիկէ է կոչվում, քայք նշվում է նաև անունը՝ Ս. Աստվածածին: Այսպիսով՝ Ս. Աստվածածին է կոչվել և՛ վանքի հին եկեղեցին, և՛ Ջաքարեի հիմնած Կաթողիկեն:

Հառիճի վանքի անցումը Ջաքարյաններից կատարվել է պատմական այնպիսի մի քախտորոշ ժամանակամիջոցում, երբ Վրաց արքունիքում առաջնակարգ դիրքի հասած այս հայ իշխանները ծրագրված կերպով իրականացնում էին Հայաստանի հյուսիսային շրջանների ազատագրումը սելջուկյան տիրապետությունից: Ջաքարյանների գործունեության դիտարկումը Հառիճում այս խորքի վրա որոշ ուշագրավ համգամանքներ է բացահայտում: Սակայն նախ ներկայացնենք Ս. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրության հիմնական մասը:

«Շնորհիւ եւ ողորմութեամբ մարդասիրին Աստուծոյ եւ Ջաքարե մանդատորութիւնցեա ամիրսպասալար Հայոց եւ Վրաց, որդի մեծի Սարգսի, գանձագին արարի զհոշակաւոր սուրբ ուխտս Հառիճայի յիւր բնական հայրենատեւրացն, յաղագս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թաւար թագուհո, եւ փրկութեան ինձ, եւ հարազատ եղբար իմոյ Իւանէի, եւ զաւակաց մերոց Շահնշահի, եւ Աւագին եւ Շնողաց մերոց, շինեցի ի սմա ամրոց եւ զկաթողիկէս քաղով ծախիւք եւ զարդարեցի ամենայն սպասիւք եւ սրբութեամբ, եւ զիմ գեղն որ

էր մերձ ի սուրբ ուխտս զՄոկոտիսն, ընծայեցի սուրբ Աստուածածնիս քուրք ամէն հաղահատովն, սարովն եւ ջրովն, զոր բնական լեալ է, եւ ետու ջաղաց մի ի Գեառիկ, որ Դիւաղաց կոչի, ջաղաց մի ի յԱնի Գլիձորիմ, եւ պարտեզ մի ի Մաղկ(ոց)աձորիմ, այգի մի յերեւան, եւ այգի մի ի Թալիմ, եւ զառաջին սահմանքն, որ բուն լեալ էր, հաստատեցի ի սահմանախաչէ ի Հառիճայ գետն, կոռ մարգով, գրերովն, ծամաք ձորով, Միմարիմ հարովն, Գոմեցե ձորովն, Արեմ աղբերով, Հիմ Հառիճաով, եւ եղի սահման գայս, որ զաւագ խորանն պատարագել զՔրիստոս յիմ անուն հանապազ:

...Գրեցաւ կտակս հաստատ ի թուին ՈՄ (1201)» (*Մխիթարյան, 1856, 62-64, Եղիազարյան, 1957, 59*):

Ինչպէս տեսնում ենք, շինարարական արձանագրությունը գրվել է 1201 թ., այսինքն այն ժամանակ, երբ Հայաստանի հյուսիսային շրջանները, նաև Ծիրակը, արդեն Ջաքարյանների տիրապետության տակ էին: Անից Ջաքարյաններին անցավ 1198 թ. վերջերին: Իսկ ե՞րբ Ջաքարեմ դարձավ Հառիճի «հայրենատերը»: Ստույգ թվական հայտնի չէ, սակայն ենթադրելի է, որ այդ տեղի է ունեցել միմյն Ծիրակի ամբողջական ազատագրումը:

Նախ, ինքնին հետաքրքիր է, որ վանքի ձեռքբերումը մասկին հայրենատերերից կատարվել է զենամ միջոցով, ինչպես Ջաքարեմ է արձանագրության մեջ նշում՝ «գանձագին արարի զնոչակաւոր սուրբ ուխտս Հառիճայի յիւր բնական հայրենատերացն»: Նշենք, որ գրականության մեջ երբեմն Հառիճի բնիկ հայրենատեր եմ անվանվում Պախլավունցիները (*տե՛ս Խալիփախյան, 1980, 265, Հարտաշյան, 1993, 45*), սակայն այդ մասին վկայող ոչ մի փաստ չկա: Մեր կարծիքով Հառիճը չի պատկանել Պախլավունցիներին, որոնք իրենց հովանավորած քուրք վանքերում մեկից ավելի հիշատակներ ունեն թողած, միմյն Հառիճում այդպիսիք բնավ չկան: Ուստի առայժմ պետք է բաց թողնել վանքի «բնական» հայրենատերերի հարցը, մինչև առավել որոշակի տվյալների երևան գալը:

Ուշագրավ է, որ գանձագին անելով վանքը՝ Ջաքարեմ այստեղ ոչ միայն եկեղեցի է կառուցել, այլև, թերևս ավելի վաղ, ռազմական հեծանվո՝ ամրոց: Արձանագրության մեջ Ջաքարեմ սկզբում հենց այս կառույցն է նշում՝ «շինեցի ի սմա ամրոց եւ զկաթողիկէս»:

Ամրոցի և Ս. Աստվածածին մեծաշեն եկեղեցու կառուցման համար քաղականին ժամանակ էր անհրաժեշտ, և եթե մկատի ունենանք շինարարության ավարտի թվականը՝ 1201 թ., ապա կարող ենք ենթադրել, որ Ջաքարեմ վանքը գանձագին է արել դրանից առնվազն 5-8 տարի առաջ: Հառիճում 1201 թվականին ճախորդող երկու արձանագրություն կա 1196 թվականից (Ս. Գրիգոր եկեղեցու պատին), սակայն մրանցում ոչ մի ակնարկ չկա Ջաքարեմի՝ Հառիճի հայրենատեր լինելու մասին: Կարելի է ենթադրել, որ Ջաքարեմ տեղ է դարձել Հառիճին հենց այդ թվականի վերջին կամ 1197-ին: Հենց այդ ժամանակ են Ջաքարյանները գրավել Ամբերդը և Ծամբորի ճակատամարտում կարևորագույն հաղթանակ տարել Գանձակի ամիրայության մկատմամբ:

Եթե Ջաքարյանների կողմից Արագածոտն գավառի գրավման վերաբերյալ մի շարք արձանագրություններ են պահպանվել (Փարպի, Ամտատուտ, Կոջ), որոնց միջոցով հմարավոր է ուրվագծել ռազմական գործողությունների ընթացքը (*այս մասին տե՛ս Ծաֆիյան, 1968, 197-202, Մուրադյան, 1977, 106, Հարությունյան, 1978, 23-25*), ապա մրանց Ծիրակ մերթափանցելու մասին սկզբնաղբյուր-

ճեղքում ավելի սուղ են¹։ Այս տեսանկյունից Հառիճի պարագան միանգամայն ինքնատիպ և եզակի է։ Այն վկայում է, որ Ջաքարյաններն այստեղ օգտագործել են ոչ միայն զինական ուժը, այլև, օգտվելով ժամանակի տնտեսական ընձեռան հնարավորություններից, մաս՝ դրամը։ Հառիճից ոչ հեռու գտնվող Լմբատավանքը 1191 թ. մահմեդականներից զննել է Ամիի Բաքսեղ Բ արքեպիսկոպոսը՝ թողնելով համապատասխան արձանագրություն. «Ես տեր Բաքսեղ... զննեցի զվանքս յանալրիմաց...» (Կոստանյանց, 1913, 37)։

Հառիճը, գտնվելով Օիրակի հյուսիսարևելյան մասում, որը սահմանակից էր Ջաքարյանների կենտրոնական տիրույթներին (մրանց մետավայրը Լոռից էր), շատ հարմար ռազմավարական հենակետ էր դեպի արևմուտք առաջխաղացման համար։ Ուշագրավ է, որ ԺԲ դարի վերջին Ջաքարյանները գրեթե ամեն տարի արևելյան և հարավային ուղղությամբ մարտական գործողություններ էին վարում, մինչդեռ արևմուտքում՝ Հառիճում, ընդարձակ շինարարություն էին ծավալել։

Սա մաս յուրօրինակ քաղաքություն էր։ Բանն այն է, որ այդ տարիներին (1197-1201) Հայաստանում չի կատարվել ավելի մշանակալից մեկ այլ եկեղեցաշինական իրագործում, քան Հառիճի շքեղ եկեղեցու կառուցումն է։ Ջաքարյան եղբայրներն առանձնահատուկ մշանակություն են տվել Հառիճին՝ պատվիրելով մաս իրենց կոտիտրական բարձրաքանդակը, որը մինչև օրս զարդարում է Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատը։ Հատկանշական է, որ Ջաքարյանների քանդակը կերպարների տեղադրման առումով կատարված է Հաղբատի և Սանահինի թագավորական բարձրաքանդակների միացությամբ (Մնացականյան, 1976, 103), իսկ ընդհանուր հորինվածքով (վերին մասում՝ հովանավոր խաչ) հիշեցնում է Ամիի Բագրատունյաց շրջանի զինանշանը։ Հենց այդ տիրական, «թագավորական» շունչն էր, որ պիտի զգային Հայոց պետության ոստանի՝ Օիրակի բնակիչները՝ տեսնելով Ջաքարյանների վեհաշուք ձեռակերտը։

Բնական է, որ Օիրակում Ջաքարյանների գերխնդիրը Ամիի գրավումն էր։ Այստեղ հարկ է հիշել, որ ԺԲ դարի ընթացքում վրացիները երեք անգամ գրավեցին Ամին (1124-26, 1161-64, 1174-76 թթ.), սակայն հարկադրված եղան կրկին վերադարձնել Օնեդադյաններին։ Հառիճի ամրոցի ու եկեղեցու շինարարությունն սկսելու պահին Ջաքարյանները չէին կարող անվերապահորեն համոզված լինել, որ կառուցման ավարտի ժամանակ արդեն գրաված կլինեն Ամին։ Սակայն հենց այդպես էլ եղավ, և Օիրակի մոտ տերը՝ Ջաքարեն, ոչ միայն վերականգնեց Հառիճի վանքի նախկին սեփականությունը, այլև, դատելով արձանագրությունից, առատ նվիրատվություններ կատարեց իր ընդարձակ իշխանության տարբեր վայրերից (Ամի, Երևան, Թալին, Գետիկ)։ Հառիճը, փաստորեն, կատարեց իր և՛

¹ Վարդան Արևելցու պատմության վեներիկյան հրատարակության մեջ վկայություն կա Ջաքարյանների կողմից 1181-ին Օիրակը գրավելու մասին (Վարդան, 1862, 138), սակայն այն չկա պատմության մոսկովյան հրատարակության մեջ (Վարդան, 1861, 181), չի նշվում մաս նվաճումների ցանկը թվող Հաղարծինի արձանագրության մեջ, Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի կողմից, (Ղիվան, 2, 22, Գանձակեցի, 1861, 163, Օրբելյան, 1910, 391)։ Հայտնի է, որ 1191-ին Ջաքարյանները արշավել են Արագածոտն, ուր Փարպիում Ջաքարեն արձանագրություն է թողել զավառի ազատագրման վերաբերյալ, և չի բացառվում, որ նույն թվականին վրաց-հայկական զորքերը մուտք են գործել մաս Օիրակ։ Սակայն հետագա տարիներին վերաբերող վավերագրերից երևում է, որ դա ժամանակավոր առաջխաղացում է եղել, և թե՛ Արագածոտնի, թե՛ Օիրակի վերջնական գրավումը հետաձգվել է մինչև ԺԲ դարի վերջ։

գործնական, և՛ խորհրդանշական դերը՝ դառնալով այն շքեղ դարպասը, որով Զաքարյանները ոտք դրեցին Օիրակ:

Հատիճում Զաքարեի թողած արձանագրությունը պարունակում է նաև այլ հետաքրքիր տեղեկություններ՝ մասնավորապես վաճառատկան հողերի տեղանշման, կատարված նվիրատվությունների առումով և այլն: Նրա շնորհիվ է հնարավոր դարձել ճշտել Զաքարեի որդու՝ Օհանջանի ծննդյան թվականը (*Մուրադյան, 1977, 104*):

Կաթողիկե եկեղեցու կառուցումից հետո Հատիճի հուշակն ավելի անեց, իսկ ողջ Օիրակի ազատագրումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին մշակութային կյանքի վերելքի համար: ԺԲ դարի վերջին Գրիգոր վանահայրը վանքի վերակառուցման մասին վկայող արձանագրության մեջ հայտնում է նաև ուսյալ միաբանների հավաքման մասին. «Կարգեցի ի սա արս ընտրեալս եւ խրատեալս ատրիճաւքն Աստուծոյ» (*Մխիթարյան, 1856, 81, Գլուխայան, 1957, 267-268*): Բնական է, որ վանքի միաբանները պետք է նաև գրչությանը զբաղվեին: ԺԳ դարի սկզբից ունեցող Հատիճի գրչատան արդյունք համդիսացող երկու հուշարձան:

ՀԱՌԻՃՈՒՄ ՆՈՐՈԳՎԱԾ ՄԱՏՅԱՆԻ 1209 Թ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Մատենադարանի թիվ 1886 պատահիկը (մագաղաթյա մի թերթ է, որը Մատենադարանին է նվիրել Հ. Հազարյանը), ուր պահպանվել է մեծարժեք տեղեկություն «Կումիրի» մեծ գյուղաքաղաքի՝ Գլուխի մասին, Հատիճի գրչատանը 1209 թ. նորոգված մի Ավետարանի հիշատակարան է պարունակում: Այն պատմում է, որ Հովասափ ձերունի կրոնավորը «ազգաւ եւ տոհմի ի մեծ գիւղաքաղաքէն Կումիրոյ» իր «արդար ընչից» գումար հատկացնելով՝ փրկագնել է ձեռագիրը («ազատեցի ի գերողաց»), և քանի որ շատ վնասված՝ «կարի զեղծեալ» էր, տվել է նորոգելու: Հատիճում մատյանը հիմնովին նորոգվել ու կազմվել է, ինչպես Հովասափն է գրում. «Եւտո դարձեալ նշանագրել ծաղկեալ, եւ կազմեալ, եւ արծաթով փառագարդեալ» (ԺԳ, 65): Գործը կատարել է Մարգարե արեղան, որն էլ գրել է հիշատակարանը (*Մաթևոսյան, 1984, 128*): Այս նույն Մարգարեն մի քանի տարի անց, 1211 թ., Անիի Բեխենց վանքում նկարազարդել է հետագայում «Հաղբատի Ավետարան» անունը ստացած նշանավոր ձեռագիրը (Մատենադարան, թիվ 6288), որը Անիի մանրամասն կարչության ցայծմ հայտնի առավել ամբողջական ու հատկանշական տեղեկագրությունն է:

1209 թ. հիշատակարանից դատելով՝ Մարգարեն այդ ժամանակ Հատիճի միաբաններից մեկն է եղել: Ինչպես երևում է, այդ նույն միաբանության անդամն էր նաև Հովասափը: Նրա ամուսին՝ Մարգարեի ձեռքով գրված հիշատականը պահպանել է այդ ժամանակվա Հատիճի միաբաններից ևս մի քանիսի ամուսնները, սակայն առավել կարևոր է վանահայր Վարդանի հիշատակումը, որն այլ աղբյուրներում այլևս չի հանդիպում: Հիշատակարանում կարդում ենք. «(յիշես-ջիք) զհայր Վարդան Հատիճայոյ, եւ ըստ հոգւոյ զեղբարս մեր զԲարսեղ կուսակրաւն քահանայ, եւ զՍարգիս, եւ զԽաչոսն, եւ զմեղաւոր կազմաւոս զՄարգարես, եւ զամենայն միաբանեալսն մեր» (ԺԳ, 65-66): Ինչպես երևում է հիշատակարանի մաղթողական վերջաբանից, Մարգարեն ձեռագիրը միայնակ չի նորոգել. «Եւ Աստուած, որ առատն է ի տուրս, տացէ վարձս քարեաց ստացաւողացն եւ աշխատողացն, եւ ամենայն հաւատացեալոց...: ՈՅԸ (1209) թուիս կազմեալ» (ԺԳ, 66):

Վերը հիշված Գրիգոր վանահորից հետո (մահացել է 1188-ին) Հառիճում հիշվում է վանահայր Պետրոսը (Ս. Գրիգոր եկեղեցու 1192, 1196 թթ. արձանագրություններ), նրանից հետո մեր հիշատակարանի շնորհիվ 1209 թ. տեսնում ենք վանահայր Վարդանից, 1214 թ. Ս Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ հիշվում է մեկ այլ վանահայր Պետրոս (Մխիթարյան, 1856, 65):

Հառիճի վանահայրերի ցամկը լրացնելում օգնում է նաև 1219 թ. մատյանի հիշատակարանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԶԻ 1219 Թ. ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մաշտոցյան Մատենադարանում 1382 թվահամարի տակ պահվող մատյանն ունի 316 թերթ (25,3 × 16 սմ), գրանյութը՝ թուղթ, գրությունը՝ միալույծ, գրչությունը՝ բոլորգիր: Ունի լուսանցազարդեր, որոնցից մի քանիսը մերկայացնում են կերպարվեստի հնագույն ավանդների հետ կապված երևակայական կենդանիներ: Այս հետաքրքրական պատկերների ծագմանն անդրադարձել է Գարեգին Հովսեփյանը (Հովսեփյան, 1969, 87-88):

Ձեռագիրը պարունակում է Հովհաննես Ոսկեբերանի «Մեկնութիւն թղթոյն Եփեսացոյց» և Ագաթոնի «Վասն վերջին ժամանակին» երկերը:

Գրիչը նաև ստացողն է: Հառիճյան այս մատյանը յուրովի շարունակում է Անիում սկզբնավորված անձնական օգտագործման մատյանների ստեղծման սկզբունքը՝ թուղթ գրանյութի և բոլորգիր գրչության կիրառությամբ²:

Հովհաննես գրչի հիշատակարանը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Հառիճի վանքի ժամանակի առաջնորդների և հեղինակավոր միաբանների վերաբերյալ: «Գրացաւ ի ՈՎԸ (1219) թուիս Հայոց, ի հրեշտակարանակ ուխտիս Հառիճ... յառաջնորդութեան հար Պետրոսի և Քրիստափորի և Սոսթենեսի և այլ միաբան սուրբ եղբարցս, որք կամակից եղն և ազմական աղաթիւք, և ընծայեցի զսայ ի սուրբ ուխտս Հառիճայ, յառաջնորդութիւն Գրիգորոյ վարդապետիս, որդւոյ Արասայ, որ եկն ի սուրբ ուխտէն Սամահէն՝ առաջնորդ Մարտ Լուսոյ (այսինքն)՝ «Սուրբ Աստուածածնիս», Կ. Մ.) և սպասաւոր, որ է հեզ և խաղաղարար և բարեսէր:

Արդ, աղաչեմ զամենեւեան, որք կարդայք... զիս՝ զանարհետ և զողորմելի գրողս և զստացիչս զՅովհաննէս, եւ զծնաւոյն իմ և զեղբարսն և զքնսն և զՎարդերեսն յիշեսչիք ի սուրբ յաղաթս ձեր և զվերայգրեալս՝ զհայր Պետրոս և

² Հայերեն հնագույն մատյանը, որն ամբողջությամբ գրված է թղթի վրա և միաժամանակ բոլորգիր գրչությամբ, 981 թ. Դավիթ քահանայի կազմած ու նրա որդի Դուկասի ձեռքով գրված ժողովածուն է (Մատենադարան, թիվ 2679): Անձնական օգտագործման համար ստեղծվող մատյանի նման սկզբունքը օրինակի շարունակություն է ունեցել Անիի շրջանում: 1187 թ. Հոռոմոսում աշխատող Հովհաննես գրիչը, ընդօրինակելով Բարսեղ Կեսարացու ճառերը, հիշատակարանում նշում է, որ ինքը նաև ստացողն է («զՅովհաննէս զաշխատասիրողս և զստացողս յիշեսչիք ի Տէր», (Պողարյան, 1972, 162)), իսկ ձեռագիրը գրված է թղթի վրա՝ բոլորգիրով: Նույն ժամանակ Մխիթար Անեցի գրիչը Հոռոմոսում ընդօրինակում է Սամուել Անեցու ժամանակագրությունը, իր համար, հիշատակարանում նշելով. «Զմեղաւոր ստացաւս և զաշխատաւորս զՄխիթար... յիշել աղաչեմ» (Հովսեփյան, 1951, 675): Մատյանը գրված է թղթի վրա՝ բոլորգիր գրչությամբ (Մատենադարան, թիվ 3613): Եվ ահա շարքը լրացնում է Հառիճի մատյանը, որի գրիչը հիշատակարանում նաև յուրովի բնութագիր է տալիս իր օգտագործած գրատեսակին՝ «զծագրեցի զսա դիւրըմբեղ գրով» (ԺԳ, 113):

գ-Քրիստափոր և զՍոսթենես, և առանել զմոր Քայրս մեր՝ զԳրիգոր վարդապետս գորդի Արտասյ՝ զարդարեալն ամենայն առաքինութեամբ, և զայլ միաբան եղբարքս՝ զքահանայս և զկրտսմատրոսս, և զծերսս և զերիտասարդսս յիշեցեք յաղաթս ձեր: ...Եւ զՂազար տանուտէր տարոյս, որ է Քոզաբարձու եղբարքս, յիշեսցիք յաղաթս...» (ԺԳ, 114):

Հովհաննեսի Քիշատակարանի շնորհիվ իմանում ենք, որ մա մատյանի գրչությունը սկսել է Պետրոս վանաֆոր ժամանակ, քայք ավարտման պահին՝ 1219 թ.: Սանաֆինի վանքից եկել է Արասի որդի Գրիգոր վարդապետը՝ որպես Հառիճի մոր վանահայր: Հիշվում են մաև ավագ վանականներ Քրիստափորն ու Սոսթենեսը, վանքի տնտեսական պետքերը Քոզացող Ղազար տանուտերը, մյուս միաբանները: Հիշատակարանից իմանում ենք, որ Հովհաննեսն իր մատյանն ընծայել է Քարազատ ուխտին:

Արասի որդի Գրիգոր վարդապետի անունը Հառիճում հիշվում է մաև 1221 թ. արձանագրության մեջ (*Մխիթարյան, 1856, 68*), քայք, ինչպես երևում է, մա երկար չի պաշտոնավարել, որովհետև 1224-ին արդեն Քանդիպում ենք Հառիճի Հովհաննեսն վանաֆոր անվան հիշատակությանը (*Մխիթարյան, 1856, 74*): Արասի որդի Գրիգորը մշակութային մեծ վաստակ ունեցող մի Քոզեղրական էր, որը Հառիճից՝ Սանաֆին գմալով՝ ստանձնել է տեղի վանահայրությունը³: Հովհաննեսից հետո՝ 1235 թ., մի արձանագրության մեջ հիշվում է Հառիճի վանահայր Համազասպը (*Մխիթարյան, 1856, 76*):

Հովհաննես գրչի հիշատակարանը կարևոր տվյալներ է պարունակում Հառիճի մեծ ժամատան կառուցողի ու կառուցման ժամանակի վերաբերյալ:

ՀԱՌԻՆԻ ԺԱՄԱՅՆԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՈՂԸ

Հառիճի ճարտարապետության ուսումնասիրողները, օգտվելով միայն վիմա-գրության ընձեռած տվյալներից, Ջաքարեի հիմնած Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մասում գտնվող մեծ ժամատան (գավիթի) կառուցման ժամանակը որոշել են ըստ առաջին թվակիր արձանագրության, քանի որ ժամատունը կառուցող Վահրամ հեջուրի արձանագրության թվականը չի պահպանվել: Ժամատան վրա եղած առաջին թվակիր արձանագրությունը 1224 թվականից է (նվիրատու Մխիթար), ըստ այդմ՝ ժամատունը կառուցված է համարվել մինչև 1224 թվականը (*Եղիազարյան, 1957, 61, Խալափախյան, 1980, 268, Ջալալյան, 1986, 88*):

Հովհաննես գրչի հիշատակարանի շնորհիվ այս հարցն ավելի որոշակի է դառնում. միաժամանակ լրացուցիչ տեղեկություններ ենք քաղում կառուցողի

³ Արասի որդի Գրիգոր վարդապետը որպես Սանաֆինի առաջնորդ հիշատակվում է 1217 թ. մի արձանագրության մեջ, ուր մա մշում է, որ վանքին մի խաչ և 13 ձեռագիր գիրք է նվիրել (*Ղաֆադարյան, 1957, 116*): Մինչ այդ՝ 1214-15 թթ., եղել է առաջնորդի աթոռակից: Գրիգորի՝ Հառիճ տեղափոխվելուց հետո (1219) Սանաֆինի վանահայր է դարձել Ջաքարե ամիրսպասալարի ազգական Հովհաննեսը, որը հիշվում է մինչև 1225 թ.: Դրանից հետո Գրիգորը կրկին դարձել է Սանաֆինի վանահայր, հիշվում է 1229 և 1234 թվականներին: Դեկավարել է տեղի դպրոցը. հիշատակարաններից մեկում անվանվում է «մեծ դպրոնապետ» (ԺԳ, 910): Այս քազմարդուն վարդապետի գրչին է պատկանում «Պատմառաց գիրքը»: Սանաֆինի վանքում է գտնվում Արասի որդի Գրիգորի անթվակիր տապանաքարը (*Ղաֆադարյան, 1957, 55-61, 175, 195*):

վերաբերյալ: Հիշատակարանի ավարտամասում Հովհաննեսը խնդրում է հիշել. «Եւ զմեծ իշխանն մեր զբարեպաշտ Վարհամ, որ զժամատունս շինեաց ի դրան Կաթողիկէս, և զորդիսս իւր՝ զԻշխանն և զՍարգիս պահեսցէ խաղաղութեամբ զմեզ ի խորին ծերութիւնն Քրիստոս, և յետ ասոյ ելանելոյ հանգուցէ զհոգիս անցա յարքայութեանն ըստ սիրելիսս իւր, ամէն» (ԺԳ, 114): Բանի որ Հովհաննէս համարել մինչև 1219 թվականը: Եւ արձանագրութեան է ժամատուն կառուցման իրողութիւնը, ուստի, բնականաբար, Հառիճի ժամատունը պետք է կառուցված համարել մինչև 1219 թվականը:

Ինչպես նշվեց, ժամատունը ունի նաև կառուցմանը վերաբերող անթվական արձանագրություն: Այն հետևյալն է. «Աստուածասէր եւ արդիւնաւոր պատրոնն հիշույ Վահրամ շինեաց զվայելուչ ժամատունս եւ եքեր զմիս ջուրս յիշատակ հոգո իւրոյ եւ զաւակաց իւրոց եւ ամուսնո իւրո Թամարին: Եւ տէր Յովհաննէս միաբանաքս ի խնդրոյ դատերն իւրո խաթունցից հաստատեցին ի տաւնի Թէոթոս թագաւորին զմիայն եկեղեցիքս յանուն Թամարին պատարագել զՔրիստոս Աստծոյն մերոյ անխափան: Թվին» (Մխիթարյան, 1856, 73, Հյուրտյան, 1957, 270) :

Ինչպես տեսնում ենք, սա ուղղակի իմաստով շինարարական արձանագրությունն է, այլ, հիշատակելով Վահրամ հեջուրի կողմից ժամատան կառուցման և դեպի վանք երկրորդ ջրատարը քերելու փաստը, պարունակում է նրա դատեր՝ խաթունցի՝ իր մոր՝ Թամարի համար պատարագ մատուցելու խնդրանքը, որը և բավարարում է Հովհաննէս վանահայրը: Ժամատունը, հնարավոր է, ունեցել է այլ շինարարական արձանագրություն, որը պիտի գրվեր կառուցումից անմիջապես հետո՝ 1219 թվականից առաջ կամ առնվազն Պետրոս Բ կամ Գրիգոր Բ վանահայրերի ժամանակ: Միջնդեռ Հովհաննէսը հիշվում է ավելի ուշ՝ 1224 թվականին:

Արձանագրությունը կարևոր է ոչ միայն ժամատան կառուցումից բացի ջրագծի անցկացման մասին վկայող տեղեկության շնորհիվ, այլև Վահրամ հեջուրի կնոջ ու դստեր անունների հիշատակությամբ: Խաթունցի անվանը հանդիպում ենք նաև Հոռոմոսի վանքի վիմագրերից մեկում: Այստեղ՝ տապանատան մատուռներից մեկի մոտ, պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Քրիստոս Աստուած ի ջո մեծի ծագմանն յոյսո նորոգեա զհոգի Խաթունցին, դստեր հեճույ Վահրամա, որ մեծ յուսով եւ բազում արդեսամբք վերստին նորոգեաց զեկեղեցիքս եւ զի ոչ ունելով մարմնաւոր զաւակ, ստացաւ իւր ժառանգ եւ յիշատակ զսուրբ Յովհաննէսի...» (Սարգիսյան, 1864, 160):

Ինչպես տեսնում ենք, Վահրամ հեջուրի դուստրն անգամակ է եղել և եկեղեցիներ է նորոգել Հոռոմոսում: Հովհաննէս գրչի հիշատակարանի շնորհիվ իմանում ենք Վահրամի որդիների՝ Իշխանի և Սարգսի անունները: Ծավոք, մեզ չհաջողվեց նրանց հիշատակությունը գտնել այլ սկզբնաղբյուրներում (Օիրակի վիմագրերում կամ այդ անուններով իշխանագումներ, քայց հավելյալ փաստերի բացակայությունը թույլ չի տալիս նույնացում կատարել):

Ինչ վերաբերում է իրեն՝ Վահրամ հեջուրին, ապա ենթադրում ենք, որ նա 1218 թ. Անիի արձանագրություններից մեկում հիշատակվող Վահրամ ամիրան է: Հեջուրը կառավարչի պաշտոնն է: Այդ պաշտոնը կրում էին Զաքարյանների տան գործավար, տնտեսավար վերակացուները: Զաքարեի կառուցած եկեղեցու ժամատունը չէր կարող պատահական մեկը կառուցել: Վահրամն այդ արել է հավանաբար իր պարոնի (հենց Զաքարեի կամ նրա որդի Օահնջահի) ցուցումով: Միշտ չէ, որ Վահրամը հիշվում է հեջուրի պաշտոնով: Եթե Հառիճի և Հոռոմոսի վիմագրերում նշված է նրա պաշտոնը՝ հեջուր, ապա Հովհաննէս գրչի հիշատակարանում կոչվում է «մեծ իշխան»:

Անհի վերոհիշյալ արձանագրությունը պահպանվել է Վրաց ետիփան (Եպիփանոս) կաթողիկոսի վրացերեն արձանագրության տակ, Քայերեն. «ԹՎԻՃ ՈԿԷ (1218) ես տեր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս, ես՝ Վահրամ ամիրա քաղաքիս, վկայեմք, որ կաթողիկոսին հրամանք է գալս» (Անհի վիմագրերի ժողովածուում արձանագրության թվականը նշված է ՈԿԵ (1216), (Դիվան, Ա, 61), սակայն Պ. Մուրադյանը ճշտում է՝ ՈԿԷ (1218), (Մուրադյան, 1977, 43): Ջաքարյանների ժամանակ Անհիում ամիրան որոշ իմաստով քաղաքապետի դեր էր կատարում: Անհի գրավելուց հետո Ջաքարե ամիրսպասալարը Լոռիից տեղափոխվեց այստեղ և քաղաքն իր նստավայրը դարձրեց: Բնակամարտ Զաքարեի տամ հեջուրը ևս Անհիում պիտի գտնվեր և կատարեր կառավարիչ-գործավարին հատուկ գործերը: Անհի Ջաքարեի իշխանության վարչատնտեսական կենտրոնն էր, և միանգամայն տրամաբանական է, որ նրա կառավարումը նույնպես հեջուրն իրականացներ, սակայն այստեղ կրելով մեկ ու կես դարյա ավանդությամբ հաստատված ամիրա կոչումը:

Անհի Վահրամ ամիրան հիշվում է նաև մի անթվական արձանագրության մեջ: Ծահնդահի ժամանակ Լուստ աճունով անեցին պարսպի թուրգ է կառուցել և արձանագրել՝ «յամիրութեան Վահրամա կատարեցաւ բուրջս» (Դիվան, Ա, 6): Լրացուցիչ փաստերի բացակայության պատճառով չենք կարող վերջնականապես հաստատել Վահրամ հեջուրի և Վահրամ ամիրայի նույնությունը, սակայն երկուսի ապրած ժամանակը նույնն է, հիշվում են Ջաքարեի որդու՝ Ծահնդահի ժամանակ (Հառիճում՝ 1219 թ., Անհիում՝ 1218 թ.) և կատարում գործավար-կառավարչի միևնույն դերը:

ՀԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԸ

Հառիճի միջնադարյան վանահայրերի առաջին ցուցակը կազմել է Աթել Մխիթարյանը 1856-ին (Մխիթարյան, 1856, 39-42), վերջինը՝ Ղևոնդ Ալիշանը՝ 1881-ին (Ալիշան, 1881, 163): Ահա Ալիշանի ցուցակը.

Համազասպ	(է կամ Ժ դար)
Գրիգոր	ց՝ 1185
Պետրոս	1185-1220
Գրիգոր Բ	1221
Հովհաննես	1224
Համազասպ Բ	1234-5

Վերը բերված 1209 և 1219 թթ. հիշատակարանները թույլ են տալիս էական ճշգրտումներ կատարել: Ըստ վիմագրերի և հիշատակարանների տվյալների համադրման՝ կարող ենք առաջարկել հետևյալ ցուցակը:

Համազասպ Ա	մինչև ԺԱ դար
Գրիգոր Ա	մինչև 1188
Պետրոս Ա	1188-ից
Վարդան	1209
Պետրոս Բ	1214-1219
Գրիգոր Բ	1219-1221
Հովհաննես	1224
Համազասպ Բ	1235-ից

Այս ցուցակի շնորհիվ հնարավոր է մոտավոր ճշտությամբ որոշել Հառիճի միջադարձ անթվական արձանագրությունների գրության ժամանակը, որոնցում հիշատակված են ժամանակի վանահայրերը:

ՎԿԱՅԱԿՈՉՎԱՍԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալիշան, 1881 - Ղ. Ալիշան, Օիրակ, Վենետիկ, 1881:
- Գանձակեցի, 1961 - Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
- Դիվան, Ա - Դիվան հայ վիմագրության, պր. Ա. Ամի քաղաք, Կազմեց՝ Հ. Օրբելի, Երևան, 1966:
- Դիվան, Զ - Դիվան հայ վիմագրության, պր. Զ. Իջևանի շրջան, Կազմեցին՝ Ս. Ավագյան, Հո. Զամփուլայան, Երևան, 1977:
- Եղիազարյան, 1957 - Հ. Եղիազարյան, Հառիճա վանքը և մրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, Ա:
- ԺԳ - ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Կազմեց՝ Ա. Մաթևոսյան), Երևան, 1984:
- Կոստանյանց, 1913 - Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիրք, Տփղիս, 1913:
- Հարությունյան, 1978 - Ս. Հարությունյան, Ամբերդ, Երևան, 1978:
- Հովսեփյան, 1951 - Գ. Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Բ. Ա. Ամթիլիս, 1951:
- Հովսեփյան, 1969 - Գ. Հովսեփյան, Խաղբակեանց և Պողոսեանց Հայոց պատմութեան մէջ, Ամթիլիս, 1969:
- Խալիփախյան, 1980 - Օ. Халпахчян, Архитектурные ансамбли Армении, Москва, 1980.
- Ղաֆադարյան, 1957 - Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և մրա արձանագրությունները, Երևան, 1957:
- Մաթևոսյան, 1984 - Ա. Մաթևոսյան, Նշմարներ Ամի քաղաքի գրչության և մամրանկարչության, «Բամբեր Մատենադարանի», 1984, թիվ 14:
- Մնացականյան, 1976 - Ստ. Մնացականյան, Հայոց աշխարհիկ պատկերաքանդակը 9-14-րդ դարերում, Երևան, 1976:
- Մուրադյան, 1977 - Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977:
- Շահինյան, 1968 - Ա. Շահինյան, Կոշի կոթողը և մրա արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, թիվ 2:
- Պողարյան, 1972 - Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. Յ. Երուսաղեմ, 1972:
- Ջալալյան, 1986 - Ա. Ջալալյան, Հառիճի հուշարձանախումբը, ՀՍՍՀ, ԳԱ, Լրաբեր, հաս.գիտ. 1986, թիվ 2:
- Սարգիսյան, 1864 - Ն. Սարգիսյան, Տեղագրութիւնը ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:
- Վարդան, 1862 - Հավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862:
- Վարդան, 1861 - Մեծիմ Վարդանայ Բարձրերդեցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:
- Քարտաշյան, 1993 - Ռ. Քարտաշյան, Հառիճավանքը վերագտնում է իր տեսքը, «Հուշարձան», տարեգիրք Բ, Երևան, 1993:
- Քյուրտյան, 1957 - Թ. Քիրտեան, Հառիճոյ վանքին Արձանագրութիւնները, «Բազմավէպ», 1957, թիվ 11-12:
- Օրբելյան, 1910 - Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն մահանգին Սիսական, Տփղիս, 1910:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵՆՆ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ՇԼԲ ԲՈԼՈՐԱԿԸ ԸՍՏ ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱԳՈՅՆ ԹՂԹԵԱՅ ՁԵՌԱԳՐԻ

Հայոց անցեալի մշակութային ճոխ ժառանգութեան մի կարեւորագոյն հատուածը մեզ է հասել շնորհիւ շուրջ երեք բիւր հայերէն ձեռագիր մատեանների: Այդ անկրկնելի գանձերի մէջ բացառիկ տեղ ունի Երեսանի Մաշտոցեան Մատենադարանի (Մ.Մ.) թիւ 2679 ձեռագիրը, որ մեզ հասած հայերէն հնագոյն թղթեայ ձեռագիրն է: Փ. 981 թուին գրուած այդ եզակի մատեանի մասին շատ է գրուել, եւ կարիք չկայ այստեղ երկրորդելու: Նշենք միայն, որ լինելով իր ժողովրդի պէս բազմաշարձար, մաշեալ եւ առհաւետ կորստեան վտանգին ենթակայ, այս մշակութային յուշարձանը կարօտ էր արմատական օգնութեան:

Վերջերս, «Նաիրի» հրատարակչութիւնը (ձեռագրի հազարամեակի առթիւ) լոյս ընծայեց այս եզակի մատեանի նմանահանութիւնը՝ աշխատասիրութեամբ Արտաշէս Մաթեոսեանի¹: Այս կոթողային հրատարակութիւնը բացառիկ կարեւորութիւն ունի եւ դժուար է այսօր տալ դրա սպառիչ գնահատականը: Թելէտ հազարամեայ մատեանի (որպէս իրի) կեանքը դարձեալ մնում է վտանգուած, սակայն այս հրատարակութեամբ մէկընդմիշտ կորստից փրկուել է *մշակութային բացառիկ յուշարձանը*: Այս հրատարակութեամբ նաեւ էապէս դիւրացել է տոյ՛ն մատենանում ամփոփուած միւթերի ուսումնասիրութիւնը: Հարկաւ, այս մատեանի պարունակած բոլոր միւթերի հետազօտութիւնը, թելէտ խիստ կարեւոր, սակայն նաեւ՝ յոյժ մեծածաւալ աշխատանք է: Աստ կը ընենք մատեանի միայն մի փոքրիկ մասը:

Մատեանի առաջին չորս էջերը պարունակում են մի հատուած Անանիա Շիրակունու կազմած ՇԼԲ բոլորակից²: Ժամանակին հէնց այս հատուածն է հիմք հանդիսացել Անանիայի ՇԼԲ աղիւսակները վերականգնելու եւ հրատարակելու համար³: Նշուած ձեռագրով մեզ հասած ՇԼԲ-ի հատուածը թերի է: Այն ընդգրկում է Հայոց ՆԶԴ(484)–ՇԾ(550) թուականները, ընդ որում ՆԶԴ–ՇԾ (484–510) հատուածը ինքն էլ է թերի. մեզ է հասել այդ տարիների աղիւսակի միայն հռոմէական կէսը (հայկականը եղել է դրա նախորդ էջի վրայ, որ այժմ

¹ Մատենա Գիտութեան եւ Հաւատոյ Դարթի Զահանայի, աշխատասիր., Արտաշէս Մաթեոսեան, «Նաիրի», Երեսան, 1995:

² ՇԼԲ բոլորակը 532 տարիների մի պարբերաշրջան պարունակող օրացուցային աղիւսակների ամբողջութիւն է, ուր բոլոր 532 տարիների համար տրուում են տարիների թուերը, մահանջները, վերադիրները, եօթներեակները, տօների օրերը, Լուսնի լրումը եւ այլ կարեւոր օրացուցային մակաչափեր: 532-ամեայ պարբերաշրջանը գտնուել է էաս Աղեքսանդրացու կողմից եւ վաւերացուել է Փ. 560 թուին Աղեքսանդրիայում գումարուած 36 տոմարագէտների ժողովում: 532-ամեայ պարբերութեամբ կրկնում են վերադիրները, եօթներեակները, Լուսնի լրումները եւ բոլոր այլ օրացուցային մակաչափերը հռոմէական օրացոյցով (հայկական շարժական օրացոյցով այդպէս չէ. տե՛ս նաեւ ծանօթ. 26):

³ Տե՛ս Աշ. Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, ՀՍՍՌ Մատենադարանի Հրատ., Երեսան, 1944, էջ 107–108, 262–282:

կորած է): Ձեռագրում աղիւսակն աւարտուում է ՇԾ(550) տարիով: Անանիայի ՇԼԲ բուլղոսակի հրատարակողը համարել է, որ աղիւսակը թերի է միայն սկզբից, իսկ վերջում էլ ՇԼԳ-ՇԾ(533-550)թթ. հատուածը հեղինակային չէ, այլ յաւելուած է հետագայում: Այդ ենթադրութեան հիման վրայ էլ՝ հրատարակուած աղիւսակն աւարտուում է ՇԼԲ(532) տարիով, իսկ մեզ հասած աղիւսակի մնացեալ հատուածը դուրս է թողնուել⁴: Արդ նայենք, թէ Հայոց տոմարի եւ Անանիայի տոմարական գործերի մասին ինչ կարող է մեզ տալ այս պատահիկի ուսումնասիրութիւնը:

Նախ նշենք, որ ժամանակին հենց այն ձեռագրով մեզ հասած եւ մասամբ այլ աղբիւրների միթերով լրացուած ու հրատարակուած՝ Անանիայի ՇԼԲ աղիւսակների վերլուծութեամբ հնարաւոր էր եղել քննել ու պարզել Անանիա Շիրակունու բարեփոխած հայկական օրացոյցի բնոյթը: Այս աղիւսակների պարունակած օրացուցային օրինաչափութիւնների վերլուծութիւնը ցոյց էր տուել, որ հենց սրանց վրայ է հիմնուած եղել Անանիայի բարեփոխած հայկական անշարժ օրացոյցը: Այս աղիւսակներում տարի է համարուել ոչ թէ Նաւասարդի 1-ից մինչեւ յաջորդ Նաւասարդի 1-ն ընկած ժամանակամիջոցը, այլ Յունուարի սկզբից մինչեւ յաջորդ Յունուարի սկիզբը եղած ժամանակամիջոցը: Տարեմուտը, անկախ դրան համապատասխանող հայկական ամիս-ամսաթուից, միշտ եղել է Յունուարի սկզբին (ամենայն հաւանականութեամբ՝ 6-ին): Իսկ չորս տարին մէկ էլ փոխուել է տարեմուտին համապատասխանող հայկական ամիս-ամսաթիւ⁵:

Արդ զանց մեզ հասած ձեռագրական նիւթի քննութեանը: Նախ սկսենք նրանից, որ այս ձեռագրի պարունակած ՇԼԲ աղիւսակը սխալաշատ է: Աղիւսակի ընդամենը չորս էջերին առկայ են բազմաթիւ գրչական վրիպակներ, որոնց մի մասը զուտ շփոթութեան արդիւնք է (շփոթուել են իրար մման գրերը), իսկ մի մասն էլ հետեւեալն է գրչի՝ տոմարից շատ հեռու լինելուն եւ դրանից բխող անփութութեան:

Նայենք օրինակներով: Ահա որոշ վրիպումներ հռոմեական եօթներեակների սիւնակում:

ա) 1ա էջին (հռոմեական) եօթներեակների սիւնակում ՆՂԵ և ՆՂԸ (497, 498) յաջորդական տարիների եօթներեակները իրար հաւասար են. երկուսի դիմաց էլ տրուած է եօթներեակը Հ(7): Սա ակնյայտ վրիպակ է, զի յաջորդական տարիների եօթներեակները երբեք չեն կարող նոյնը լինել: Միշտ յաջորդ տարուայ եօթներեակը պիտի նախորդինից փոքր լինի (սովորական տարիներին՝ մէկով, իսկ նահանջ տարիներին՝ երկուսով)⁶:

բ) ՆՂԸ(498)-ից սկսեալ մինչեւ ՇԺԶ(516) թուականը բոլոր տարիների հռոմեական եօթներեակը, ըստ այս աղիւսակի, հաւասար է Յայտնութեան օրուան: Սա եւս ակնյայտ վրիպում է, զի Յայտնութիւնը միշտ Յունուարի 6-ին է, որ Դեկտեմբերի 31-ից 6 օր յետոյ է: Ուրեմն, դրանց շաբաթուայ օրերն էլ կը տարբերուեն միշտ 6-ով (կամ, որ նոյնն է՝ 1-ով, քանի որ շաբաթուայ

⁴ Տես նոյն տեղում:

⁵ Տես Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., Էջմիածին, 1997, էջ 29 - 61:

⁶ Դա զալիս է նրանից, որ տարին ունի 365 օր, որը 52 շաբաթից աւելի է 1 օրով ($365 = 7 \times 52 + 1$), իսկ նահանջ տարին էլ 52 շաբաթից աւելի է 2 օրով:

պարբերությունը 7 օր է): Սիենոյն ժամանակ գիտենք, որ ամեն տարուայ եօթներեակն էլ նախորդ տարուայ վերջին օրուայ (հռոմեականի դէպքում՝ Դեկտ. 31-ի) շաբաթուայ օրն է, ուստի եւ՝ Յայտնութեան օրը պետք է հռոմեական եօթներեակից տարբերուի 6, կամ 1 օրով (վեցով մեծ, կամ էլ մէկով փոքր լինի):

զ) ՇժՁ(516) թիւը նահանջ տարի է, եւ աղիւսակի ծախ եզրային սիւնակում էլ նշուած է նոյնիսկ նահանջի թիւը՝ ճԻԹ: Ըստ եօթներեակների կանոնի, նահանջ տարիները պիտի ունենան երկուական եօթներեակ (հռոմեական), որոնցից մէկը (առաջինը) Յունուար եւ Փետրուար ամիսների համար է, իսկ միւսը (երկրորդը) Մարտից Դեկտեմբեր ամիսների համար: Այս աղիւսակում ՇժՁ նահանջ տարուայ համար տրուած է միայն մէկ հռոմեական եօթներեակ: Ըստ երեւոյթին, այս տարուայ վրայ գրիչը նկատել է իր վրիպումը (տե՛ս նախորդ օրինակը) եւ այդտեղից սկսեալ շտկել է սխալը: Յաջորդ տարիների եօթներեակները գրուել են ճիշդ, բայց արանքում կորել են ՇժՁ տարուայ երկու եօթներեակները:

դ) ՀԽԵ(545) տարուայ տողում տրուած է հռոմեական երկու եօթներեակ (Գ, Դ): Սակայն, այդ տարին նահանջ չէ, ուստի և պիտի ունենար միայն մէկ եօթներեակ: Նահանջ է դրա նախորդ՝ ՀԽԴ(544) տարին, որն էլ, իրօք, ունի երկու եօթներեակ (Բ, Գ): Այս տարուց սկսեալ մինչեւ 550 թիւը դարձեալ իրար հետ համընկել են հռոմ. եօթներեակն ու Յայտնութեան օրը, որ ականայտ սխալ է (տե՛ս ք. օրինակը):

Ինչպէս երեւում է վերոշարադրեալից (չորս ականայտ վրիպակ միայն մի սիւնակում) այս աղիւսակը իր ներկայ տեսքով բաւական սխալաշատ է: Սխալներ կան նաեւ Գայոց եօթներեակների, հռոմ. և հայկական վերադիրների, լրման օրերի, ժամերի և նոյնիսկ՝ Ձատկուայ ամսաթուրների սիւնակներում: Կայ մի վրիպակ, որ նկատուել և շտկուել է հենց գրչագրում (հաւանաբար՝ հենց Դուկաս գրչի կողմից): Ահա այն. ՀԻՁ(526) տարուայ Գայոց վերադիրը գրուել է նախ Գ, ապա շտկուել է եւ դարձուել Դ, որ իրօք այդ տարուայ վերադրի ճիշդ արժէքն է:

ՀԼԵ(535) տարուայ հռոմ. վերադիրը գրուած է ԽԲ (22), որ ներդաշնակ չէ նախորդ տարուայ վերադրին. դրա նախորդ տարուայ վերադիրը ժԹ (19) է (եւ տարին էլ սովորական է՝ նահանջ չէ): Ուստի, ՀԼԵ տարուայ հռոմ. վերադիրը պիտի լինէր 19+11=30(Լ): Այս սխալն առաջացել է վերելում արուած մի այլ սխալից: Ահա այդ սխալը. ՇժՁ, ՇժԷ (516, 517) տարիների վերադիրներն են ԽԲ, Գ (22, 3): Դրանից յետոյ պետք է լինէին վերադիրները 14(ժԴ), 25(ԽԵ), այնինչ, ՇժԸ, ՇժԹ (518, 519) տարիների համար աղիւսակում տրուած են էլի նոյն թուրերը՝ ԽԲ, Գ (այսինքն, կրկնել են վերը գրուածը): Սրանից յետոյ վերադիրները իրար յաջորդում են 11-ակպն աւելանալով: Նշանակում է, ՇժԱ եւ յաջորդ տարիների համար (մինչեւ ՀԼԴ(534) տարին ներառեալ) միշտ տրուել է երկու տարի առաջուայ վերադիրը: Իսկ ՀԼԴ տարուց յետոյ սխալը շտկուել է. բաց է թողնուել երկու տարուայ վերադիր (ժԹ-ից յետոյ Լ-ը եւ ապա՝ ժԼԵ) եւ ՀԼԵ տարուայ համար տրուել է արդէն ճիշդ արժէքը՝ ԽԲ (22), որ սակայն, ճիշդ լինելով հանդերձ, նախորդի հետ ներդաշնակ չէ:

Առայժմ սխալների թուարկումը սահմանափակեմք այսքանով, հաւատալով, որ կան այլ լուրջ սխալներ եւս: Ի՞նչ է նշանակում սխալների այսպիսի առատութիւնը աղիւսակի այս փոքրիկ հատուածում: Գարկաւ, չենք կարող

մտածել, թե այս բոլոր սխալների հեղինակն է Անանիա Շիրակունին, ուստի, առաջին եզրակացությունը, որ այստեղից կարելի է բխեցնել, այն է, որ մեզ հասած սոյն հատուածը *էպպես աղաաղուած է* եւ տարբեր է հեղինակի (Անանիայի) ստեղծածից: Բնական է եզրակացնել նաեւ, որ գրիչը՝ Դաւթի որդի Դուկասը տոմարագետ չի եղել եւ լաւ չի կողմնորոշուել աղիւսակների թուերի ամտառում: Սա նշանակում է նաեւ, որ աղիւսակների այս պատառիկի հիման ամտառում: Սա նշանակում է նաեւ, որ աղիւսակի նախնականը վերականգնելիս հարկ է վրայ՝ Անանիայի կազմած ՇԼԲ բոլորակի նախնականը վերականգնելիս հարկ է ցուցաբերել որոշակի զգուշատրութիւն: Մասնատրապէս, հարկ է զգոյշ լինել Անանիայի կազմած ՇԼԲ-ի սկիզբն ու վերջը ճշդելիս:

Նշուած (նաեւ մնացեալ) սխալների բնոյթի եւ դրանց դասաւորութեան քննութիւնը հնարաւորութիւն է տալիս որոշ գաղափար կազմել Դուկաս գրչի ռուսագործած նախագաղափար օրինակի, դրա կառուցուածքի ու որոշ առանձնայատկութիւնների մասին: Սակայն, նախքան սխալների քննութեանն անցնելը, փորձենք ի յայտ բերել ըստ կարելւոյն բոլոր էական սխալները և դասակարգել դրանք: Սխալները գտնելու՝ թերեւս ամենայուսալի կերպը մեզ հետաքրքրող տարիների համար աղիւսակում տրուած տոմարական մակաջափերը ըստ յայտնի կանոնների հաշուարկել-գտնելն ու այդ հաշուարկուած-գտնուած տուեալները աղիւսակի տուեալների հետ ճադդատելն է: Ձանց առնելով տաղտկալի մանրամասները, նշենք միայն ընթացքը: Նախ ճշդում ենք Ձատիկների հոռմ. ամսաթուերը, հիմք ունենալով Զ. Գիցելի յայտնի գատկացուցակը⁷: Ձատիկները հոռմեական ամսաթուերով ճշդելուց յետոյ ճշդում ենք դրանց հայկականները, ապա՝ Բարեկենդանի օրերը, թուականները, եօթներեակները, վերադիրները, Լուսնի աւագ լրման ամսաթուերը, շաբաթուայ օրերը, հասարակածը, Յայտնութեան օրը եւ մնացեալը: Լուսնի լրման ժամանակը (տիւ-գիշերը եւ ժամը) հաշուել է ըստ Դայոց տոմարական Պատճենում դրա համար տրուած կանոնի. «*Բոլպէ ըստ Դայ ամսոյ այսպէս արա...*» եւ «*Եթէ կամիցիս զլրումն իմանալ եթ տուրնքեան է թէ ի գիշերի, զրոպէ աւուրն կրկնեա, ...*»⁸: Քանի որ սխալները շատ են, տանք ամբողջական աղիւսակները սխալների նշումով⁹: Ձեռագրում աղիւսակների որոշ մասը բացակայում է՝ կապուած թերթերի արտաքին եզրերի մաշուածութեան-քայքայուածութեան հետ: Բնականաբար, այստեղ ոեւէ բան չենք կարող իմանալ այդ թերի հատուածներում սխալներ եղած լինելու-չլինելու մասին եւ սխալների մասին մեր քննութիւնը կը վերաբերի միայն էջերի չվնասուած մասերում եղած տուեալներին: Բացակայող մասերի տուեալները ժամանակին լրացուել են Աշ. Աբրահամեանի կողմից (թերեւս այլ ձեռագրերի եւ կամ՝ տոմարական հաշուարկի հիման վրայ): Այդ հատուածները ստորեւ ներկայացուող աղիւսակների վրայ նշուած են ստուերագծումով:

⁷ F. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie, bd. III, Leipzig, 1914, էջ 411-421.

⁸ Տեւ Աշ. Գ. Աբրահամեան, Յովհաննէ Իմաստասէրի Մատենագրութիւնը, Երեւանի Դամալսարանի Գրատ., Երեւան, 1956, էջ 208, 211:

⁹ Այս աղիւսակները կազմելիս հիմք են ընդունել ձեռագրի համապատասխան էջերի նմանատպութիւնը (տակաւին չիրատարակուած), որ սիրով ինձ տրամադրեց Արտաշէս Մաթեոսեանը: Դրա համար նրան յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը: Նմանատպութիւնը համեմատել եմ նաեւ ձեռագրի նմանահանութեան հետ եւ շտկել նմանատպութեան մէջ եղած որոշ վրիպակներ:

Անանիա Շիրակունու ՀԼԲ բուլդոզերի հատուածը ըստ հայերէն հնագոյն թղթեայ ձեռագրի (սխալները նշուած են թանձր շղագրով)

၁၈ ဒုက္ခကုသ်

[illegible]

2b 34308

[illegible][illegible]

Համեմատության (եւ հետագայ օգտագործման համար) ստորեւ տանք նաեւ նոյն աղիւսակները, նշուած սխալները շտկելուց յետոյ:

**Անանիա Շիրակունու ՀԼԲ բոլորակի նոյն հատուածը՝
սխալները շտկելուց յետոյ
(շտկումները նշուած են թանձր շղագրով)**

1a Հոռոմի

Լսող ամբ	Տեսող կամ	Հնչի անկ	Վերցրա վոր	Կարծի րենակ	Տարբեր մի	Ցանկի քմ	Աւրմ կանդ	Ուղղի քմ	Ցանկի քմ	Գրառա րենակ	Ցանկի քմ	Լրացմ ն	Ցանկի քմ	Յիշ նիշի	Ժամաց ն	Աւրմ կանդ	Ցանկի քմ	Ցանկի քմ
ՅԻԱ	ԼԺԴ	Ա	ԻԸ	ԴԵ	Յ	Յ	Գ	Գրա	ԻԸԸ	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԺԵ	ԱԺ	Յ	Յ	Յ	Ե	ԻԸ	Ի	Ցան	Ի	Կար	Դ	Կար	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԺԶ	Յ	Ի	Է	Յ	Յ	ԱԺԱ	Ե	Ցան	Ի	Ցան	ԻԴԴ	Կար	Յ	Յ	Ցան	ԻԺ	ԻԺ
	ԼԺԸ	ՅԵ	Ա	Ա	Յ	Յ	Է	Է	ԻԵ	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
ՅԻԲ	ԼԺԹ	Ա	ՑԸ	ՑԸ	Յ	Յ	Ա	Կար	Ցան	Ի	Կար	Ա	Կար	Ա	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԺԺ	ԱԵ	ԻԸ	Դ	Յ	Յ	Գ	Գ	Ա	Ցան	Ի	Ցան	ԻԱ	Կար	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԴ	Դ	Դ	Ե	Յ	Յ	Դ	Կար	ԴԴ	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԴԱ	ԴԵ	ՑԵ	Յ	Յ	Յ	Ե	Ցան	ՑԸ	Ցան	Ի	Ցան	ԻԸԸ	Կար	Յ	Դ	Աւր	Ցան
ՅԻԴ	ԼԴԵ	Յ	ԻԺ	ՑԱ	Յ	Յ	Յ	Ցան	Դ	Ցան	Ի	Կար	Ցան	Կար	Ժ	Աւր	Ցան	ԻԺ
	ԼԴԶ	ՑԵ	Է	Յ	Յ	Յ	Ա	Ցան	Ցան	Ի	Կար	Ցան	Ցան	Ա	Ժ	Աւր	Ցան	Է
	ԼԴԴ	Դ	ՑԸ	Գ	Յ	Յ	Ր	Կար	Ցան	Ի	Ցան	ԴԴ	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Է
	ԼԴԵ	ԴԵ	Է	Դ	Յ	Յ	Գ	Ցան	Ա	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
ՅԻԴ	ԼԴԶ	Է	ՑԱ	ԵԸ	Յ	Յ	Դ	Կար	ՑԸ	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԴԸ	Ց	ԴԸ	Է	Յ	Յ	Ց	Կար	Ե	Ցան	Ի	Ցան	ԴԸ	Կար	Ա	Դ	Ցան	ԻԺ
	ԼԴԹ	ՑԵ	Յ	Ա	Յ	Յ	Է	Ցան	ԻԵ	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԼԴԺ	Ի	ՑԴ	Ց	Յ	Յ	Ա	Կար	Ց	Ցան	Ի	Ցան	Է	Կար	Ե	Աւր	Ցան	ԷԱ
ՅԻԸ	Է	ԴԵ	ԴԵ	ՑԸ	Յ	Յ	Ր	Ցան	Ա	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԷԱ	Է	Ց	Ց	Յ	Յ	Դ	Կար	ԻԱ	Ցան	Ի	Կար	Ցան	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Ցան
	ԷԲ	ԷԸ	ՑԸ	Ց	Յ	Յ	Ե	Կար	ՑԸ	Ցան	Ի	Ցան	ԴԸ	Կար	Ա	Ա	Ցան	Ցան
	ԷԳ	Ա	ԴԸ	Դ	Յ	Յ	Ց	Կար	ԴԸ	Ցան	Ի	Կար	Ցան	Կար	Ժ	Է	Ցան	Ցան
ՅԻԺ	ԷԴ	ԱԵ	Ց	ԷԸ	Յ	Յ	Է	Կար	Ցան	Ի	Ցան	Դ	Կար	Յիշ	Ժ	Աւր	Ցան	Է
	ԷԵ	Ց	Ի	Ց	Յ	Յ	Ր	Կար	Ց	Ցան	Ի	Ցան	ԴԴ	Կար	Յ	Ա	Ցան	Է
	ԷԶ	ՑԵ	Ա	Դ	Յ	Յ	Գ	Ցան	Ա	Ցան	Ի	Կար	Ցան	Կար	Ժ	Ա	Ցան	Ցան
	ԷԸ	Ա	ՑԸ	Ե	Յ	Յ	Դ	Կար	ՑԸ	Ցան	Ի	Կար	Ա	Կար	Ա	Ա	Ցան	Դ
ՅԻԷ	ԷԹ	ԱԵ	ԴԴ	ՑԸ	Յ	Յ	Ե	Կար	Ց	Ցան	Ի	Ցան	ԴԱ	Կար	Ժ	Ա	Ցան	ԴԸ
	ԷԺ	Դ	Դ	Ց	Յ	Յ	Է	Կար	ԻԵ	Ցան	Ի	Կար	Ցան	Կար	Ժ	Ա	Ցան	Ցան
	ԷԸ	ԴԵ	ՑԸ	Ց	Յ	Յ	Ա	Կար	Ց	Ցան	Ի	Ցան	ԴԸ	Կար	Յ	Ա	Ցան	ԷԱ

1b အမည်

[illegible]

եղանակով արտագրելու: Օրինակ, ՆՂԸ թուից մինչև ՇԺՁ թիւը ներառեալ հռոմէական եօթներեակները մէկով պակաս են իրական արժէքներից: Սա, ամենայն հաւանականութեամբ, հետեւանքն է այն բանի, որ գրիչը աղիւսակն արտագրել է սիւնակ առ սիւնակ, և այդ ընթացքում թոյլ տրուած մի վրիպումը հանգեցրել է սիւնակի մնացեալ մասի սխալ լինելուն: Աղիւսակները սիւնակ առ սիւնակ լրացուած լինելու մասին այս ենթադրութիւնը հաստատուում է նրանով, որ ձեռագրի մեզ հասած մասում համակարգուած սխալները բոլոր դէպքերում առկայ են աղիւսակների միայն մի՝ կէսում. կամ հայկականում, և կամ հռոմէականում: Եթէ աղիւսակը լրացուած լինէր տող առ տող, ապա պէտք է այդ սխալները լինէին միաժամանակ աղիւսակի թէ՛ հայկական, և թէ՛ հռոմէական մասերում (տուեալ տարուայ տողում): Մինչդեռ այդպէս չէ, որ և հաստատուում է աղիւսակների սիւնակ առ սիւնակ լրացուած լինելը: Այդ կերպ՝ վերոնշեալ ՆՂԸ տարուայ դիմաց եօթներեակների սիւնակում փոխանակ գրելու ճիշդ արժէք՝ *Ն*, գրիչը կրկնել է նախորդ տարուայ եօթներեակը՝ *Ն* և այնուհետեւ շարունակել է արտագրել իր գրած սխալ թուին (*Ն-ին*) յաջորդող արժէքները, որոնք, թպէտ *Ն-ի* նկատմամբ ճիշդ են դասաւորուած, բայց չեն համապատասխանում այն տարիներին, որոնց իրենք վերաբերում են: Այս կարգի սխալ է նաեւ ՇԻԱ-ՇԼԵ տարիների Յայտնութեան տօնի օրը հռոմէական մասում (եջ 2a): Այստեղ էլ՝ սկսած ՇԻԱ տարուց Յայտնութեան օրը տրուած է իրական արժէքից մէկով անելի: Այստեղ էլ գրիչը (եթէ համարենք, որ սիւնակները լրացրել է վերից վար) ՇԻ տարուց յետոյ բաց է թողել յաջորդ՝ ՇԻԱ տարուայ արժէքը և դրա յաջորդ՝ ՇԻԲ տարուանը գրել է ՇԻԱ-ի դիմաց: Ապա շարունակել է իր գրած սխալ արժէքի նկատմամբ ճիշդ յարաբերութեանը շարել թուերը վերից վար: Այս կարգի սխալներ էլի կան: Կան նաեւ այլ տեսակի համակարգուած սխալներ, որոնց մասին կը խօսենք առանձին: Համակարգուած սխալների քննութիւնը կարող է մեզ որոշ տեղեկութիւն տալ գրչի ունեցած նախագաղափար օրինակի մասին: Փորձենք կորզել այդ տեղեկութիւնը:

Սկսենք նախ նրանից, որ ՀԼԲ պարբերաշրջանը հիմնուած է Լուսնի 19-ամեայ¹¹ և Արեգակի 28-ամեայ պարբերաշրջանների¹² վրայ. $532 = 28 \times 19$: Դրանից ելնելով, 532-ամեայ աղիւսակները ընդհանրապէս կազմուել են կամ 19-ամեակներով, կամ 28-ամեակներով: Ուրեմն, սպասելի է, որ Ամանիայի ՀԼԲ աղիւսակները ևս կազմուած լինէին 19-ամեակներով կամ 28-ամեակներով: Այսինքն, սպասելի էր, որ ՀԼԲ-ի իւրաքանչիւր եջ-աղիւսակը պարունակէր հէնց 19, կամ 28 տարի: Այնինչ այդպէս չէ: Մեզ հասած բոլորակի չորս էջերից երեքը պարունակում են 27-ական տարի (մէկը հայկական, երկուսը հռոմէական), իսկ վերջին էջի վրայ էլ գետեղուած են 2 աղիւսակ (հայ. և հռոմ.) 13-ական տարիներով: Այսինքն, մեզ հասած աղիւսակը չի ենթարկւում այդ պարբերութիւններից և ոչ մէկին: Սակայն սա միայն առաջին հայեացքից է այդպէս:

Ինչպէս արդէն նշուեց, մեզ հասած աղիւսակները (ի բաց առեալ վերջին էջը, որի մասին կը խօսենք առանձին) պարունակում են 27-ական տարի: Ուշագրաւ է, որ այս 27-ը միայն 1-ով է փոքր 28-ից, որ արեգակնային շրջանի

¹¹ Դա Լուսնի վերադիրների կրկնման պարբերութիւնն է, որ յայտնի է *Մեթոնի շրջան* անունով: Այդ պարբերութեամբ կրկնում է Լուսնի փուլերի եւ ամիս-ամսաթուերի համապատասխանութիւնը:

¹² Սա էլ ամիս-ամսաթուերի եւ շաբաթուայ օրերի համընկման պարբերութիւնն է: Հաւասար է նահանջների եւ շաբաթուայ պարբերութիւնների արտադրեալին. $7 \times 4 = 28$:

պարբերությունն է: Իսկ ի՞նչ կապ կարող է լինել մեր ունեցած 27-ի եւ 28-ամեայ պարբերության միջեւ: Բանն այն է, որ մեր աղիւսակները տարիների տողերից զատ պարունակում են նաեւ մէկական տող վերելում՝ վերտառութիւնների համար: Այսինքն, վերտառութիւններով միասին մեր աղիւսակները եւս պարունակում են հենց 28-ական տող: Սա եիմք է տալիս մտածելու, որ նախագաղափար օրինակում եղել են հենց 28-ական տարի պարունակող էջեր¹³, դրանից արտագրող գրիչը իր գծած աղիւսակները եւս գծել է 28-ական տողով, սակայն, քանի որ վերին տողը տրամադրել է վերտառութիւններին, ապա բուն աղիւսակի (տարիների) համար մնացել է միայն 27 տող: 532-ամեայ պարբերաշրջանը պարունակում է 19 հատ 28-ամեակ: Այսինքն, մեր ձեռագրի աղիւսակներն էլ պիտի լինէին 19 հատ (կրկնակի՝ հայկական եւ հռոմէական ամիսներով): Բայց 19 հատ՝ 28-ի փոխարեն 27 տարի պարունակող աղիւսակներում կը տեղաւորուէին ընդամենը $19 \times 27 = 513$ տարի, եւ 532-ամեայ պարբերաշրջանից դուրս կը մնար $532 - 513 = 19$ տարի: Այսինքն, գրիչը, նախօրոք իր գծած աղիւսակները լրացնելու վերջում (վերջին աղիւսակը լրացնելուց յետոյ) պիտի նկատէր, որ 19 տարիների տուեալները դուրս են մնացել իր գրած աղիւսակից: Դրա համար էլ նա վերջին աղիւսակի յաջորդ երեսին փորձել է տեղաւորել դուրս մնացած տարիների հատուածը: Հենց այդ է պատճառը, որ աղիւսակների վերջին (2b) էջը գծուած է նախորդ էջերից զգալիօրէն խիտ (գրիչը ջանացել է հնարաւորին չափ շատ բան տեղաւորել այդ մի էջի վրայ): Դրանով պիտի բացատրել նաեւ այն, որ ի տարբերութիւն աղիւսակի նախորդ հատուածի, ուր բոլոր տարիների հայկական եւ հռոմէական մասերը զետեղուած են հանդիպակաց էջերի վրայ, այստեղ միեւնոյն էջին ներկայացուած են թէ՛ հայկական, եւ թէ՛ հռոմէական ամիսներով մասերը (վերելում հայկականը, իսկ հռոմէականը՝ դրանից վար):

Այս դատողութիւնները ունեն մի թոյլ կողմ. բանն այն է, որ եթէ ամեն ինչ եղած լինէր այնպէս, ինչպէս վերը նկարագրուեց, ապա պէտք է այս ՇԼԲ պարբերաշրջանն աւարտուէր 556 թուականով: Իրօք, աղիւսակների վերջին կրկնակի էջը (1b, 2a) աւարտում է ՇԼԷ(537) տարիով. եթէ դրան էլ յաւելենք այն 19 տարիները, որ պիտի դուրս մնացած լինէին, ըստ վերը շարադրուածի, ապա պիտի ստացուէր $537 + 19 = 556$: Միւս կողմից, սակայն, 556 թուականը տոմարական առումով ոեւէ կերպ նշանաւոր չէ: Այն ոչ 19-երեակի սկիզբ կամ աւարտ է, ոչ էլ 28-երեակի: Իսկ մեծապէս սպասելի է, որ ՇԼԲ պարբերաշրջանն սկսուէր եւ աւարտուէր կամ 19-երեակ, եւ կամ էլ 28-երեակ տարիով: Այսինքն, չենք կարող պնդել, որ այս ձեռագրում աղիւսակները սկզբից վերջ պարունակել են հենց 27-ական տարի: Թերեւս պիտի ընդունել, որ արանքում եղել են 27-ից տարբեր (աւելի հաւանական է՝ պակաս) թուով տարիներ պարունակող էջեր: Սա էլ, իր հերթին, նշանակում է, որ միայն այս տուեալների հիման վրայ չենք կարող ճշդել Անանիայի կազմած ՇԼԲ-ի սկիզբն ու վերջը: Այս հարցում մեզ կարող են օգտակար լինել վերը թուարկուած սխալները:

Ամենից աւելի «օգտակար» կարող են լինել համակարգուած սխալները: Ինչպէս արդէն նշուեց, այդ սխալների նախնական քննութիւնը ցոյց էր տալիս, որ աղիւսակները լրացուել են սիւնակ առ սիւնակ (հաւանական է՝ վերից վար): Բնական է, որ այս կերպ արտագրելու դէպքում, գրիչը իր թոյլ տուած

¹³ Ամենայն հաւանականութեամբ, նախագաղափար օրինակում աղիւսակների վերտառութիւնները եղել են ոչ թէ աղիւսակի վանդակաւոր գծուած մասում, այլ դրանից դուրս՝ աղիւսակի վերելում:

սխալները կարող էր չնկատել մինչև նախագաղափար աղիւսակի էջի վերջին հասնելը: Սկսելով արտագրել յաջորդ էջը, նա ինքնաբերաբար կ'ուղղեր իր սխալը, նույնիսկ չնկատելով այն: Այսինքն, սպասելի է, որ համակարգուած սխալների շարքերի վերջերը կամ համընկնեն նախնական օրինակի էջերի վերջերին, կամ էլ լինեն դրանց մօտ (մեկ կամ երկու տարի աւելի կամ պակաս): Ստորեւ աղիւսակի տեսքով ներկայացնենք ՀԼԲ բոլորակի մեր ունեցած հատուածում եղած համակարգուած սխալները:

սխալի սկիզբը	սխալի վերջը	տարիների քանակը
498	516	19
518	534	17
521	535	15
533	534 ¹⁴	2
540	550 ¹⁵	11
545	550 ¹⁶	6

Ուել ակնյայտ օրինաչափութիւն այս աղիւսակում չի նկատուում: 550 թուականով աւարտուող սխալները մեզ հետ քան տալ չեն կարող, քանի որ 550-ը հենց մեզ հասած աղիւսակի վերջին տարին է: Աւելին. մեզ հասած աղիւսակի մինչև վերջին տողը հասնող այս սխալները կարող են դիտուել, իբր վկայութիւն այն բանի, որ նախօրինակ աղիւսակում այդ տարին վերջինը չի եղել¹⁷: Այսինքն՝ Ամանիայի կազմած ՀԼԲ բոլորակը չի աւարտուել ԵԾ(550) տարիով: Միւս սխալներից ուշադրութիւն է գրաւում երեք տարբեր սխալների վերջին տարիների՝ իրար մօտիկ լինելը: Այսպէս, սխալների աղիւսակի երկրորդ, երրորդ և չորրորդ տողերում դրուած համակարգուած սխալները աւարտուած են 534 և 535 թուականներին¹⁸: Միւս կողմից էլ, ինչպէս վերը տեսանք, ամենայն հաւանականութեամբ, նախօրինակ ՀԼԲ բոլորակը կազմուած է եղել 28-ամեակներով. դրա էջերը պարունակել են 28-ական

¹⁴ Այստեղ ձեռագրում պահպանուած է միայն 533 եւ 534 տարիների մասը. մնացեալը էջի մաշուած մասին է եղել: Պարզ է նաեւ, որ դա չի կարող 537 թուից անդին անցնել, քանի որ 538 թիւն արդէն յաջորդ՝ 28 էջի սկզբում է եւ այդ տարրուայ տողում արդէն այդ համակարգուած սխալը չկայ: Ուրեմն, այս սխալը կարող է աւարտուած լինել 534, 535, 536, կամ 537 թուով:

¹⁵ Այս եւ յաջորդ սխալը աւարտուած են 550 թուով, որ չենք կարող ուել եզրակացութեան համար հիմք ընդունել, քանի որ 550 թիւը հենց մեր ձեռագրում եղած աղիւսակի աւարտն է: Աւելին. աղիւսակի վերջին տողում համակարգուած սխալի առկայութիւնը վկայում է, որ այդ տարին չի եղել նախնական օրինակի վերջին տարին, զի ա'յդ դէպքում անպայման պիտի նկատուէր սխալի առկայութիւնը՝ նախնականի եւ արտագրուածի վերջին տողերը համեմատելով: Այս սխալը ունի նաեւ որոշ եական տարբերութիւն միւսների նկատմամբ, որին կ'անդրադառնանք իր տեղում:

¹⁶ Տե՛ս ծանօթ. 15:

¹⁷ Այս մասին տե՛ս նաեւ ծանօթ. 15:

¹⁸ Ինչ վերաբերում է 534 թուին, ապա անկասկած է սխալներից միայն մեկի (518 թուով սկսուողի) աւարտը այդ թուին: Գաղով միւս սխալին (533-ով սկսուողին), ապա այս սխալը կարող էր շարունակուած լինել նաեւ 534-ից յետոյ, սակայն ոչ աւելի՝ քան մինչև 537-ը: (Այս մասին տե՛ս նաեւ ծանօթ. 14:) Ամեն դէպքում, 534-ով և 535-ով աւարտուող երկու այլ սխալների առկայութիւնը շատ հաւանական է դարձնում, որ սա եւս աւարտուած լինի 534-ին, կամ 535-ին:

տարի: 28-երեակի սկիզբ է Չայոց 533 թուականը¹⁹: Տեսնում ենք, որ 28-երեակի սկզբի տարին շատ մօտ է վերոնշեալ սխալների աւարտի տարիներին: Տարբերութիւնը չի գերազանցում երկու տարուց: Սա հիմք է տալիս մտածելու, որ ամենայն հաւանականութեամբ, նախագաղափար ՇԼԲ բոլորակում 533 տարին եղել է նոր էջի սկիզբ²⁰:

Աւելացնենք մի բան եւս: Մեզ հասած աղիւսակները աւարտում են 550 (ԸԾ) տարիով: Եւ դա էլ նշանակում է, որ նախագաղափար աղիւսակների վերջին տարին էլ պիտի շատ հեռու չլինէր 550-ից: Ու քանի որ 550 թին արդէն ամկայ է, մնում է ակնկալել, որ այդ վերջին տարին լինի 550-ից յետոյ:

Արդ, Ամանիայի ՇԼԲ-ի նախագաղափար օրինակի մասին ստանում ենք հետեւեալը:

ա. Այդ բոլորակում 533 տարին եղել է նոր էջի սկիզբ,

բ. Բոլորակը կազմուած է եղել 28-երեակներով, իւրաքանչիւր կրկնակի էջը պարունակել է 28 տարիների տուեալներ:

գ. ՇԼԲ-ի վերջը սպասելի է, որ եղած լինի 550 թուից յետոյ ու նաեւ՝ այդ թուին մօտ:

Այս երեք պայմաններն իրար հետ հանգեցնում են նրան, որ Ամանիայի ՇԼԲ-ի վերջին տարին պետք է եղած լինի Չայոց 560(ԸԿ) թիւը: Իրօք, 560-ը եւ 28-երեակի աւարտ է, եւ էլ շատ հեռու չէ 550-ից եւ, ըստ այդմ, քաւարարում է վերի երեք պայմաններին: Այս 560 թիւը համընկնում է նաեւ այլ ճանապարհով՝ Ամանիայի ՇԼԲ բոլորակի աւարտման տարուայ համար ստացուած արժեքին²¹:

Ամանիայի ՇԼԲ բոլորակի այսպիսի աւարտի օգտին է վկայում նաեւ հետեւեալը: Ամանիա Շիրակացու անուամբ մեզ հասած տոմարական հարցուպատասխանների ԻԱ գլխում «Զի՛նչ է .թ. եւ .ժ. երեակ» հարցին ի պատասխան, կարդում ենք. «... յապրիլի .Դ. իցն մինչեւ ի մարտի ի .Ի. եւ .ն լինի .ԾԻ. որ կոչի օր մի ըստ մասանց լուսնին. և թիւ մի յաւելու ի վերադիրն: Եւ յապրիլի .ԺԳ. են մինչեւ յապրիլի .ԺԵ. ն յամենայն լուսին մասն մի յաւելու, բայց օր ո՛չ կատարի. զի դառնայ լուսինն յապրիլի .Դ. իցն, և նոր սկիզբն առնու բոլորին»²²(ընդգծումը Գ. Բ.): Այս հատուածում, փաստօրէն, հեղինակը 19-երեակի սկիզբ է համարում Ապրիլի Դ(4)-ը, այսինքն՝ Ապրիլի 4 Լուսնի զատկական

¹⁹ Այս տարին նաեւ 19-երեակի սկիզբ է ըստ Աթանաս Տարօնացու հիմնած հայկական քրիստոնէական տօնացոյցի, որ հիմք է դարձել Չայոց Մեծ թուականի համար: Սակայն, ինչպէս ստորեւ կը տեսնենք, Ամանիան 19-երեակի սկիզբ է համարել ոչ թէ Չայոց 533 թուականը, այլ՝ 542-ը: Ի դէպ, հենց այդ 533 տարին էլ հետազայում եղաւ Սարկաւազ վարդապետի հիմնած Չայոց Փոքր թուականի սկիզբը:

²⁰ Չենք կարող էջի սկիզբ համարել 534-ը, կամ 535-ը, քանի որ դրանք տոմարական առումով էական տարիներ չեն, մինչդեռ, 533-ը ինչպէս նշուեց, 28-երեակի սկիզբ է:

²¹ Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Չայոց, էջ 34-35: Այստեղ էլ հիմք է ընդունուել իր նշանաւոր Ձատկի ճառում Ամանիայի յայտնածը, թէ ինքը կազմել է ՇԼԲ բոլորակ Աղեքսանդրացոյց 828 տարուց 1360 տարուայ միջակայքի համար: Յոյց է տրուել, որ աստ օգտագործուած Աղեքսանդրացոյց թուականը Փ. 284-ից սկսուող՝ Դիոկղետիանոսի թուականն է, միայն՝ տարեհաշիւն սկսուած է Փ. 284-ից 532-ամեայ մի պարբերութիւն անաջ՝ և.թ. 249 թուից: Դրանով էլ Ամանիայի տուած 828 Աղեքսանդրացոյց թիւը տալիս է Փ. 580-581-ը, եւ այդ ժամանակ էլ՝ Փ. 581-ի Յունարին սկսուել է Ամանիայի կազմած ՇԼԲ բոլորակի առաջին տարին:

²² Ամանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ Տոմար, Չայպետիրատ, Երեւան, 1940, էջ 69:

լրումով տարին: Հռոմեական վերադիրների հին (Սնանիայի կիրառած) համակարգով դա **Թ** (9) վերադրով տարին է: Սեր ՀԼԲ-ի պատահական **Թ** (9) վերադիր եւ Ապրիլի 4 լրում ունեն **ՆՉԵ**, **ՇԴ**, **ՇԻԳ**²³, ՀԵԲ տարիները (տե՛ս աղիւսակները): Փաստօրէն, ըստ վերի մէջբերման, սրանք թուրքն էլ 19-երեակի սկզբի տարի են: Արդ, եթէ ՀԵԲ(542) տարին ընդունենք 19-երեակի սկիզբ, ապա այդ 19-երեակը կ'աւարտուի **ԸԿ**(560) թուականով: Այսինքն **ԸԿ**(560) տարին միաժամանակ եւ 19-երեակի, եւ էլ 28-երեակի (աւարտի) տարի է²⁴: Իսկ 19-երեակն ու 28-երեակը միաժամանակ կարող են աւարտուել *միայն ՀԼԲ բոլորակի վերջին տարում* (քանի որ սկսւում են միաժամանակ ՀԼԲ-ի առաջին տարում): Այսինքն՝ այստեղից եւս հետեւում է, որ *Սնանիայի ՀԼԲ բոլորակը աւարտուել է ԸԿ(560) թուականով*:

Ի մի բերելով վերը շարադրուածը, ստանում ենք, որ *Սնանիա Շիրակուհու կազմած ՀԼԲ բոլորակը աւարտուել է Հայոց ԸԿ(560) թուականով*, որ համապատասխանում է Փրկչական 1112 թուականին: Սա էլ նշանակում է, որ *այս բոլորակը պիտի սկսուած լինի Հայոց ԻԹ(29) թուականով, որ է Փրկ. 581 տարին*:

Ուշագրաւ է նաեւ 540–550 թթ. ընդգրկող համակարգուած սխալը: Այս սխալն արուած է աղիւսակների հայկական մասում Հայոց վերադիրների սիւնակում: Սկսեալ 540 թուից, մինչեւ վերջ Հայոց բոլոր վերադիրները գրուած են սխալ: Ընդ որում, այս սխալը եւս ունի որոշակի օրինաչափութիւն: 540-ից յետոյ Հայոց վերադիրները իրար յաջորդում են ըստ *հռոմեական* վերադիրների կանոնի: Իրօք. **ՇԼԹ**(539) թուի հայոց վերադիրը **ԻԶ**(26) է, որ այդ տարուայ վերադրի ճիշդ արժէքն է, իսկ դրանից յետոյ Հայոց վերադիրների սիւնակում իրար յաջորդում են է, ԺԹ, Լ, ԺԱ, ԻԲ, Գ, ԺԴ, ԻԵ, Զ, ԺԵ, ԻԸ (7, 19, 30, 11, 22, 3, 14, 25, 6, 17, 28) արժէքները: Եթէ ուշադիր նայենք, կը տեսնենք, որ վերադիրների այս յաջորդականութիւնը ճշգրտօրէն նոյնն է, ինչ հռոմեական վերադիրների համակարգում **ԻԶ**(26) վերադրին յաջորդող շարքը: Համոզուելու համար կարելի է համեմատել հենց ՀԼԲ-ի մեզ հասած հատուածում եղած հռոմ. վերադիրներին: Այստեղ, օրինակ, **ՆԴԲ**(492) տարուայ հռոմ. վերադիրը **ԻԶ**(26) է, իսկ դրա յաջորդ տարիներին հռոմ. վերադիրներն իրար յաջորդում են ճիշդ այնպէս, ինչպէս վերոգրեալ շարքում է: Նշանակում է, այստեղ գրիչը ոչ թէ պարզապէս վրիպել է, այլ հանդիպել է լուրջ խոչընդոտի: Հաւանական է, նախօրինակ ձեռագրի այս մասում հայկական վերադիրները ջնջուած, կամ եղծուած են եղել. ամեն դէպքում, դրանք մատչելի չեն եղել գրչի համար²⁵: Ուստի եւ նա փորձել է այլ աղբիւրից լրացնել պակասող թուերը: Ըստ երեւոյթին, գրիչն իմացել է, որ ընդհանրապէս վերադիրներն իրար յաջորդում են որոշակի օրինաչափութեամբ, կայ դրանց որոշակի յաջորդականութիւն: Ըստ այդմ էլ նա աղիւսակում փնտռել է **ԻԶ**(26) վերադրով այլ տարի, որ

²³ Այս տարուայ վերադիրը մեր աղիւսակում գրուած է սխալ (**ԺԵ**՝ փոխանակ **Թ**-ի). դա ընկել է համակարգուած սխալի մէջ (տե՛ս վերը՝ համապատասխան մասը ու նաեւ՝ սխալների աղիւսակը): Այդ տարուայ հռոմ. վերադրի ճիշդ արժէքն է **Թ** (9):

²⁴ Այդ տարին 28-երեակի աւարտ լինելու մասին մանրամասն տե՛ս վերելում:

²⁵ Այս հատուածում աղիւսակի միւս սիւնակներում այդ կարգի սխալներ չկան, որից էլ կարելի է եզրակացնել, որ գրչի համար մատչելի չի եղել միայն վերադիրների՝ սիւնակի այդ հատուածը, իսկ միւս սիւնակները մատչելի են եղել: Այսինքն, չենք կարող մտածել, թէ գուցէ ձեռագրի այդ հատուածը լոկ է քացակայել, կամ աղիւսակն աւարտուել է այդտեղ: Նման ենթադրութիւնների համար հիմք չկայ:

օգտուհի դրան յաջորդող տարիների վերադիրների շարքից: Իր ունեցած աղիսակի մերձակայ տարիներում ԻԶ(26) արժեքով հայկական վերադիր նա չի գտել²⁶ եւ, ըստ երեւոյթին, չիմանալով հայկական ու հռոմէական վերադիրների համակարգերի սկզբունքային տարբերութեան մասին, օգտուել է վերադիրների հռոմէական համակարգից: Գտել է աղիսակի նախընթաց էջերում ԻԶ(26) արժեքով մերձակայ հռոմ. վերադիրը եւ դրան յաջորդող տարիների հռոմ. վերադիրներով էլ լրացրել պակասող հայկական վերադիրները: Ստացուել է վերոնշեալ համակարգուած սխալը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Դուկաս գրչի օգտագործած ճախագաղափար օրինակը (կամ մի այլ՝ միջանկեալ օրինակ) ունեցել է բաւական լուրջ վնասուածքներ:

Ինչպէս տեսանք, մեզ հասած աղիսակի գրչական վրիպակների քննութիւնը մեզ օգնեց նախագաղափար օրինակի վերջը (որով եւ՝ սկիզբը) գտնելու: Դարկ է, սակայն, նշել, որ մեզ հասած աղիսակներում եղած ոչ բոլոր սխալներն են հետեւանք գրչի (կամ գրիչների) շփոթութեան, անփութութեան: Կան սխալներ, որոնց ծագման հարցում բնաւ չենք կարող մեղադրել գրիչներին: Մեզ հասած հատուածում կայ այդպիսի զոնէ մէկ օրինակ: Դա հետեւեալ իւրօրինակ սխալն է: Մեր ձեռագրի աղիսակները պարունակում են 17 նահանջ տարիներ: Այդ 17 նահանջ տարիներից 9-ի համար հռոմէական մասում Բարեկենդանի ամսաթիւը տրուած է իրական արժեքից մէկով պակաս: Այդ տարիներն են. ՆՁԴ, ՆՁԸ, ՆԴՁ, ՆԴԶ, ՇԴ, ՇԸ, ՇԺԶ, ՇԻԸ, ՇԼԲ (484, 488, 496, 504, 508, 518, 524, 528, 532): Անշուշտ, սա եւս համակարգուած սխալ է, ընդ որում՝ յոյժ իւրօրինակ: Այս տեսակ համակարգուած սխալը գրչական լինել չի կարող, քանի որ չենք կարող մատնանշել մի պատճառ, որ առիթ տար գրչին սխալուելու հէցն միայն *նահանջ* տարիների վրայ, եւ այնպէս, որ սխալն էլ լինէր *միշտ միակերպ* մէկով պակաս իրական արժեքից: Ուստի, այս սխալի առաջացումը պիտի կապել *անպայման* աղիսակը կազմողի, ստեղծողի հետ: Տուեալ դէպքում պիտի ընդունենք, որ սխալուել է ինքը՝ Անանիա Շիրակունին: Նայենք սա փոքր ինչ մանրամասն: Նշուած տարիների հայկական մասում (որքանը, որ մեր ձեռագրում կայ) Բարեկենդանի ամսաթուերը տրուած են ճիշդ, որով, փաստօրէն, հայկական ու հռոմէական ամսաթուերն այդ դէպքում իրար չեն համապատասխանում, եւ հռոմ. մասում նշուած Բարեկենդանի օրն էլ լինում է ոչ թէ կիրակի, այլ շաբաթ: Սա մշամակում է, որ աղիսակը կազմողը հայկական ու հռոմէական մասերի տուեալները հաշուարկել է առանձին-առանձին: Սոյն սխալը պարունակող բոլոր տարիներին էլ Բարեկենդանը եղել

²⁶ Եթէ նոյնիսկ գտնէր էլ, միեւնոյնն է՝ չէր կարող օգտագործել, զի հայկական վերադիրները իրար յաջորդում են ոչ այնպէս, ինչպէս հռոմէականները: Հռոմէական վերադիրները կրկնում են 19: տարի պարբերութեամբ: Մինչդեռ, հայկականներն այդպիսի պարբերութիւն չունեն: Հայկական վերադիրների կրկնման պարբերութիւնը $4 \times 19 \times 76 = 5776$ տարի է (4 տարին մէկ նահանջ է, եւ վերադիրն աւելանում է 10-ով, 19 տարին մէկ 19-երեակ է, եւ վերադիրն աւելանում է 12-ով, իսկ 76 տարին մէկ էլ նահանջ եւ 19-երեակ է միաժամանակ, եւ վերադիրն աւելանում է 11-ով): Բնականաբար, այսքան մեծ պարբերութիւնը բնաւ յարմար չէ կիրառութեան համար: Դրա համար էլ Անանիա Շիրակունին ժամանակին կազմել էր հայկական վերադիրների 532-ամեայ աղիսակ (տե՛ս Գրիգոր Բրուտեան, Անանիա Շիրակունի՝ Հայոց վերադիրների աղիսակը, «Էջմիածին», Ը-Թ, 1997, էջ 94 – 103): Ամեն դէպքում, ԻԶ(26) վերադիրով մերձակայ հայկական տարին եղել է ՇԳ(503) թուականը: Ուրեմն, գրիչը մինչեւ այդ տարին անգամ ետ չի նայել. քաւարարուել է մերձակայ հռոմ. համարժէք վերադիրով, որ ՇԼ(530) տարուամն է:

է Փետրուար ամսին: Ամենայն հաւանականութեամբ, սխալն առաջացել է նրանից, որ այդ տարիների Բարեկենդանի հոռոմ. ամսաթիւը հաշուարկելիս, կազմողը հաշուի չի առել Փետրուարի վերջից (28-ից) յետոյ նահանջ տարիներին յաւելուած «նահանջի» օրը (որ ներկայումս դիտուում է իբր Փետրուարի 29): Փետրուար ամիսը, սովորական տարիների պէս, համարուել է 28-օրեայ: Այդ մի յաւելեալ օրը հաշուի չառնելն էլ բերել է նրան, որ Փետրուարի մէջ եղող Բարեկենդանի ամսաթիւը ստացուել է իրական արժէքից մէկով պակաս: Հայկական մասում այդ նոյն տարիների Բարեկենդանի ամսաթիւը ճիշդ է հաշուել, զի հայկական ամսակարգում նահանջի օր չի եղել: Սա նշանակում է նաեւ, որ աղիսակի կազմողը (Անանիան) Բարեկենդանի ամսաթիւը որոշել է տարուայ Ձատիկը որոշելուց յետոյ՝ Ձատկուայ օրից 7 շաբաթ ետ հաշուարկելով: (Սա ինքնին ամենարճական եղանակն է այդ օրը գտնելու, զի տարուայ շարժական տօների օրերը պայմանաւորուած են Ձատկուայ դիրքով:)

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Անանիայի կազմած ՀԼԲ բոլորակն ինքը զերծ չի եղել վրիպակներից. *վրիպակներ եղել են այս աղիսակի արդէն իսկ հեղինակային օրինակում:*

Զենք կարող միանշանակ որիշել՝ արդեօ՞ք մեզ հասած աղիսաը (Ղուկաս գրչի գրածը) արտագրուել է անմիջապէս Անանիայի ստեղծած նախնական օրինակից, թէ՛ դրա համար նախագաղափար է ծառայել մի այլ՝ միջանկեալ օրինակ: Սեր օրինակում եղած սխալների որոշ առանձնայատկութիւններ թոյլ են տալիս ենթադրել, որ մեր օրինակի եւ Անանիայի ստեղծածի մեջեւ եղել է առնուազն մէկ միջանկեալ օրինակ եւս²⁷:

Թերեւս կարելի է այս ՀԼԲ-ի նախնականի (կամ նախնականների) մասին այլ տեղեկութիւններ էլ դուրս կորզել մեզ հասած հատուածի աւելի մանրակրկիտ քննութեամբ, սակայն, առաջին մօտաւորութեամբ բաւարար սեպենք աստ ստացուածը և սահմանափակուենք այսքանով:

Ամփոփելով, նշենք, որ Մ.Մ. թիւ 2679 ձեռագրով մեզ հասած՝ Անանիա Հիրակունու ՀԼԲ բոլորակի հատուածի սխալների քննութիւնը ցոյց է տալիս, որ

ա. Անանիայի կազմած ՀԼԲ բոլորակը սկսուել է Հայոց ԻԹ(29) տարով և ավարտուել է Հայոց ԸԿ(560) տարով, որոնց համապատասխանում են Փ. 581 և 1112 տարիները:

բ. Ամենայն հաւանականութեամբ, Անանիայի ՀԼԲ բոլորակը կազմուած է եղել 28-երեակներով:

գ. Անանիայի կազմած ՀԼԲ բոլորակն, ինքը զերծ չի եղել վրիպակներից: Առնուազն մի տեսակի համակարգուած վրիպակ հասել է մեզ. որոշ նահանջ տարիների հոռոմ. մասում Բարեկենդանի ամսաթուերը մէկով պակաս են իրական արժէքներից (կազմողը հաշուի չի առել նահանջի օրը Փետրուարի վերջում):

²⁷ Միջանկեալ օրինակների գոյութիւն-չգոյութիւնը և դրանց բնոյթը առանձին հարցեր են, որոնց այստեղ չենք անդրադառնալ:

ՀԱՅՐ ՊԱՎԵԼ ՖԼՈՐԵՆՍԿԻ. ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐ

/Կենսագրական ուրվագծեր/

Մեզին է 1882 հունվարի 9-ին, Ելիզավետպոլ գավառի Եվլախ բնակավայրում /այժմ՝ Ադրբեջան/, ուր հայրը հաղորդակցման ուղիների ինժեներ էր: Մայրը՝ Օլգա Պավելի Սափարյանը, թիֆլիսաբնակ հայուհի էր և սերում էր Սափարյանների երկն տոհմից: Այս առիթով Ֆլորենսկին նշում է, որ «մեր կողմից ծառանգել է նյութի և իրական /կոնկրետ/ աշխարհի վառ զգացողություն»:

Մանկությունն անցել է Թիֆլիսում և Բաթումիում: Թեև ընտանիքը մեկուսացած էր արտաքին շփումներից /հյուրերը եզակի երևույթ էին/, սակայն փոխաբեղը տանը կար հարուստ գրադարան, որով էլ լրացվում էր բացը:

1890-99 թթ. սովորում է Թիֆլիսի թիվ 2 դասական գիմնազիայում, ուր աչքի է ընկնում բարձր ընդունակություններով, աշխատասիրությամբ և տեխնիկական գիտությունների նկատմամբ խոր հակումով: Վերջինս հոր ազդեցության արդյունքն էր: Սակայն գիմնազիան ավարտելիս, հոգևոր ճգնաժամ է ապրում, երբ իր համար պարզում է տեխնիկական գիտությունների սահմանափակությունը: Այս շրջանից առաջանում է հետաքրքրություն կրոնի հանդեպ:

1900 թ. ընդունվում է Մոսկվայի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժին:

1904 թ. ավարտում է համալսարանը առաջին աստիճանի դիպլոմով: Եվ, հակառակ համալսարանում մնալու դասախոսների առաջարկին, նույն թվականի սեպտեմբերի 4-ին ընդունվում է Մոսկվայի հոգևոր ակադեմիա: Այս ֆայլին նա դիմում է ժամանակի նշանավոր եպիսկոպոս Ամտոնի Ֆլորենսսովի միջամտությամբ, ում, նախան այս, դիմել էր վանական դառնալու նպատակով:

1908-ին ավարտում է ակադեմիան: Նույն թվականի սեպտեմբերի 23-ին, երկու փորձնական դասախոսությունների կարդալուց հետո, հաստատվում է Մոսկվայի հոգևոր ակադեմիայի փոխտնօրինության ամբիոնում որպես դոցենտ:

1914 -ի մայիսի 19-ին պաշտպանում է մագիստրոսական դիսերտացիա՝ «Հոգևոր նշմարտության մասին» վերնագրով, որի հիմքում ընկած էր «Կրոնական նշմարտության մասին» թեկնածուական աշխատանքը:

1910 թվականի ամառը րեկումնային է դառնում նրա կյանքում: Ֆլորենսկին ամուսնական ուխտ է հաստատում Աննա Գրանցինովայի հետ: Ընտանիքը Ֆլորենսկու համար այն գլխավոր չափանիշներից էր, որոնք կոչված են օգնելու որոշել սեփական հարաբերությունները մարդկանց և դեպքերի նկատմամբ:

1911 թվականի ապրիլի 24-ին ընդունում է հոգևոր աստիճան՝ ձեռնադրվելով ֆահեան:

1912-17 թթ. ղեկավարում է Մոսկվայի հոգևոր նկուղեֆիլիյի «Աստվածաբանական լրատու» ամսագիրը:

1927 թ. խմբագիրն է «Տեխնիկայում հանրագիտություն», ուր տեղ են գտել նրա 12 հոդվածները:

1933 թ. կեղծ մեղադրումով ձերբակալվում է և աքսորվում:

Գեղարվեստական է 1937 թ.: Արդարացվել է Մոսկվայի ֆառաֆական դասախոսի որոշմամբ, 1958 թ.:

Ֆլորենսյան լավագույնս հաշտեցրել է իր փառանքալուծական կոչումը և գիտությունը՝ գործելով և իր անուրանալի ավանդը բերելով մաթեմատիկայի, փիլիսոփայության և փիլիսոփայության պատմության, արվեստաբանության և էթիկոսոփիայի բնագավառներում: Բայց նրա իրական կոչումը հոգևոր ասպարեզն էր, ուր նա «Բրիստոնի վրա կիմնված գիտակցության» առջև լուսաբեր հորիզոններ բացեց՝ հենվելով իր ֆրիստոսառաջի և ինքնատիպ եկեղեցական մտածողության վրա: /«Սյուն և հաստատությունը ճշմարտության» 1914, «Պատմություն փիլիսոփայություն», «Մտքի ջրաբաժանների մոտ» և այլն/:

Սուրբ Երեմիայանում եմք Հայր Պավել Ֆլորենսյան «Բրիստոսառաջությունը և մշակույթը» գործը:

ՊԱՎԵԼ ՖԼՈՐԵՆՍԿԻ

ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. Ոչ վաղ անցյալի ժամանակը բնութագրվում է վերին հոգևոր պահանջներից և ամբողջական հոգևոր մշակույթից առավելագույնս հեռացմամբ: Սրա հետ մեկտեղ այն բնութագրվում է ամենուր արթնացող հոգևորի պահանջով և գիտակցությամբ, որ մարդկությունը և նրա մշակույթը չեն կարող մասնատված չլինել, եթե չեն առաջնորդվում ոգու բարձրագույն խնդիրներով: Բայց մշակութային աշխարհն այսպիսի կացության մեջ պատահաբար չի ընկել և ոչ էլ՝ երեկվանից սկսյալ: Այն այդ ուղղությամբ անխտոր շարժվել է շատ հարյուրամյակներ, իր առավելագույն ճիգերն ուղղելով, մեծավ մասամբ, ոչ ամբողջապես գիտակցաբար, իր և հավերժական կյանքի աղբյուրի միջև պարիսպ ստեղծելու համար: Այս տարրալուծման ճանապարհի երկարությունը հատկապես ծանր է դարձնում մարդկության տկարությունը: Բայց փոխարենը թույլ է տալիս պարզ հասկանալ ճիշտագույն բնույթը և այսպիսով ապաքինվելու հույս փայփայել:

2. Հնարավոր է ուղիղ և բացահայտ ապստամբություն ընդդեմ Աստծո, ինքը քեզ Աստծուց անկախ հայտարարելու փորձ, և հետևաբար՝ թշնամություն նրա հանդեպ: Սա հոգևոր սուր վարակ է, որը տանում է կա՛մ դեպի շուտափույթ վախճանի, կա՛մ ընդհակառակը, արագ էլ անցնում է, թողնելով հոգում խոր տարակուսանքի զգացում, թե ինչպես կարող էր պատահել այդպիսի ապստամբությունը: Սակայն լինում է և խրոմիկ վարակում մույն թույնով, երբ մարդը մույնիսկ ինքն իրեն չխոստովանելով Աստծուց ունեցած իր անկումը և ձևականորեն անգամ պաշտպանելով կրոնը, փաստորեն ձգտում է քայլ առ քայլ կրոնից ետ նվաճել իր ինքնավարության մարզերը և հետևապես ջնջում է կրոնից համապատասխան կողմերը, կարծես թե ոչ էական և պատմականորեն պատահական մեթոդական այնտեղ: Մեկը մյուսի ետևից կրոնից դուրս են մղում մարդկային գործունեության զանազան կողմերը, մինչև որ վերջապես գործը չի հասնում կրոնական գոյաբանության հիմնական ճշմարտություններին, որոնց վրա է հիմնվում քրիստոնեական քարոշականությունը: Երբ գիտակցության մեջ ընկնում է մահ այս հիմքը, իսկ կրոնը հավասարեցվում է քարոշականությանը, ինքը՝ քարոշականությունը, դադարում է լինել կենդանի և բարու կենսական ներշնչանք, վերածվելով վարքի արտաքին կանոնների, որոնք զրկված են

կապակցվածությունից և այդպիսով պատահական են: Սա բարոյական ինքնորոշումն է, այլ փարիսեցիական բարոյականություն, և դրա ճակատագիրը, իհարկե, կանխորոշված է: Պատմության տրամաբանությունը, անկասկած, երկընտրանքի (դիլեմա) է հանգեցրել մեզ. կա՛մ հրաժարվել քրիստոնեության վերջին մնացորդից՝ «Քրիստոնեական բարոյականությունից», կա՛մ հրաժարվել մախընթաք հակաքրիստոնեական մշակույթի ողջ ընթացքից և ի սրտե խոստովանել, որ Աստված, Ում մեր մեջ ու մեր կյանքում մի անկյուն եմք միայն համաձայնվում հատկացնել՝ մնացած ամեն ինչ թողնելով. «որ գոամ իրենց ճամապարհով» /Գործք, ԺԴ 15/, այլևս մեր գիտակցության մեջ Աստված չէ:

3. Ոչ վաղ անցյալի մշակույթի ընթացքի խաբեությունը այն չէ, որ մշակույթի ներկայացուցիչները մեղանչում էին: Մեծը գիտեմք, որ «մարդ չի կարող ապրել և չմեղանչել»: Մեծը մախօրոք գիտեմք, որ ինչ ճամապարհ էլ ընտրի ապագայի մշակույթը, մեզածից յուրաքանչյուրը պետք է և՛ մեղանչի, և՛ ընկնի ու մուցնիսկ ժամանակ առ ժամանակ հեռանա Աստծուց: Մեծը գիտեմք ման, որ մեզ ինքնավար դարձնող մեղավոր ինքնահաստատումը թափանցում է մեր ողջ էության մեջ և համդգուտ սողոսկել մեր ամեն մի արարքի մեջ: Բայց մախկին ընթացքի արմատական անճշտությունը մեր բնության այդ վիճակի բնական և այդպիսով ճիշտ ճանաչումն է: Այսպիսով, մշակույթը ոչ միայն չէր հակազդում մեղքի, այլև խիղճն էր սկոթեցնում՝ խրախուսելով ինքնավարությանը: Երբ Լապլասը Նապոլեոնին տվեց իր հայտնի պատասխանն այն հարցին, թե ինչո՞ւ Նյուտոնի «Principes»-ում համոզիպում է Աստծու ամուրն, իսկ «La Mécanique Celeste»-ում՝ ոչ, «Ես այդ հիպոթեզի կարիքը չեմ ունեցել», դրանով Լապլասը ամենամեծգոյիտ կերպով արտահայտեց մոր /Եվրոպայի/ Եվրոպական մշակույթի իսկական ոգին: Իրապես, մրա համար Աստված կենդանի Դեմք չէ, առանց որի «եղև ոչինչ, որ ինչն եղև» /Թուֆ., Ա, 3/, ճշմարտություն չի, որից դուրս ոչ մի ճշմարտություն չկա, այլ միայն վարկած է, որով կարկատվում են մեր գիտելիքի և ընդհանրապես մեր մշակույթի ճեղքվածքները: Որքան մշակույթը բարձր է, այնքան մվազ է մրանում այս հիպոթեզի տեղը: Ամբողջովի կատարելագործված «մշակույթը» պետք է լիժի քոլորովի առանց Աստծու: Նոր ժամանակի մշակույթի համար Նա, որի համար հոգին չարչարվում է, ինչպես եղնիկն է կարոտում քրի աղբյուրները /Սաղմ., ԽԱ (ԽԲ) 1-2/, մարդկային հոգու փեսամ միայն անհանդուրժելի վերացական հասկացություն է, մեր մշակույթի անկատարության այլ անվանումը, և այն հանդուրժելի է միայն այն պատճառով, որ մշակույթը փաստորեն դեռ անկատար է:

4. Մշակույթի կառուցումը սահմանվում է հենց Տիրոջ կողմից ազդարարված հոգևոր օրենքով. «Ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» /Դուկ., ԺԲ 34/: Գանձը հոգևոր արժեքն է, այն, ինչ խոստովանում ենք մեր կյանքի օրյեկտիվ իմաստ և արդարացում: Սիրտը Աստվածաշնչյան լեզվով նշանակում է բոլոր մեր հոգևոր ուժերի և ունակությունների կենտրոնացում, իբրև մեր անձնավորությունը կապող հանգույց: Փրկիչն ասում է, որ մեր անձը, և հետևաբար, իր բոլոր դրսևորումները, ամբողջապես որոշվում է մեր /ունեցած/ գանձով: Այսպես, մեր ճամաչողությունը որոշվում է մրանով, ինչը մեր կողմից իբրև ճշմարտություն է հաստատվում, հակառակ մոր ժամանակի կենտրոնացված կանոնադրության, համաձայն որի՝ ճշմարտությունը չէ, որ որոշում է մեր գիտակցությունը, այլ գիտակցությունն է որոշում ճշմարտությունը: Նոր ժամանակի մշակույթները մարդու ինքնավարության իրենց հռչակմամբ մեզ հավատի

քննարկման չենթարկող սուրյնկտներին իբրև գամձ հաստատեցիմ: Աստծու փոխարեն կամզմեցվեց կուռք՝ ինքն իրեն աստվածացրած մարդ, և այդժամ իբրև ամհրածեշտ հետևանք եղավ մշակույթի հետագա ծավալումը, որը մպատակ ուներ ամեհնոր արդարացնել մարդու ինքնաստվածացումը:

5. Մենք այնպես ենք հարմարվել Աստծո փոխարեն դավանել մշակույթիմ, որ մեծամասնությանը թվում է, թե անհմար է տարբերակել «մշակույթ» և «մեր ժամանակների մշակույթ» հասկացությունները, այնպես որ մշակույթի ընթացքը փոխելու ամհրածեշտության մատնանշումները մույնացվում են քարանձավաբնակներին կյանքի կոչելու հետ: Պատմականորեն այդպիսի մույնացումը խորապես կեղծ է, քանզի մշակույթը ունեցել և կարող է ունենալ խիստ տարբեր կառուցվածք: Այսպես, մշակույթների մեծամասնությունը, համաձայն իրենց ստուգաբանության /Cultura-ն այն է, ինչը պետք է cultus-ից զարգացած լինի/, եղել են հեծց կրոնի հատիկի ծլում, մանանեխի ծառ՝ անձ հավատքի սերմերից: Այս պատմական փաստը բոլոր կրոնների կապակցությամբ պատրաստականորեն ընդունում է գոթեց ցանկացած հետազոտող, թերևս մույնիսկ քրիստոնեության առիթով, քանի որ վերջինս դիտվում է միայն իբրև պատմական փաստ: Ներկայումս մեր ժամանակակիցները միայն քրիստոնեության կեցնակերպող ուժն են մերժում, թեկուզև այլ կրոններին հավասար չափով:

Երբ ունկնդիր են լինում ժամանակակից այսչափ բազմաքանակ ուսմունքների, որոնք կարծես թե ցավակցում են քրիստոնեությանը, սակայն /իրականում/ բացահայտ հուչակում քրիստոնեության անգորությունն ու /որպես/ կենաց ծառ անելու անկարողությունը, կյանքի բոլոր բնագավառները, բացի նեղ գիտակցականից, այս աշխարհի տարերքի համաձայն ինքնահավան գործունեություններին զիջելու ամհրածեշտությունը, համակում է խոր խավար ու թախիծ: Չէ՞ որ սա ավելի ամսփոփելի է, քան թե ուղղակի անվստահության հրավեր, որն ատում է, ուրեմն, այնուամենայնիվ, ընդունում է որևէ ուժ: Այս տեսակ աստվածաբանական ուսմունքները հոգեհաց են քրիստոնեության հիշատակին, երբ արդեն անցել է պայքարի խանդավառությունը, և կարելի է մույնիսկ գովեստի խոսք ասել ոչնչացված հակառակորդի մասին: Այս ուսմունքները, գովելով քրիստոնեությունը և սրա հետ մեկտեղ նրան կյանքի ոչ մի ոլորտ չտրամադրելով, կործանում են նրան մակ՝ որպես մեր ներքին իրավիճակ: Չէ՞ որ եթե քրիստոնեությունն ամեհնորեք հալածվում է այն հիմամբ, որ ամեհնոր իշխում են տեղի՝ հոգևորին օտար այս աշխարհի կարգերը, տեղի ինքնավարությունը, ապա այլ կերպ չի ստացվում խոսել և մեր հոգևոր կյանքի մասին, որ մույնպես ենթարկված իր օրենքներին, մույնպես ինքնավար է և իր մեջ շնորհին տեղ չի հատկացնում: Եթե աշխարհն ամեհնոր ինքնավար է, այդ նշանակում է, որ աշխարհն ինքն իր մեջ բացարձակապես կայուն է, և ինքն Աստված է:

6. Չեք կարող ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային /Մատթ., 224/: Հավատն առ Աստված բացատում է ինքնաբավ աշխարհի նկատմամբ հավատը, և ընդունում «աշխարհը» ոչ թե իբրև էություն, այլ միայն կացություն: Եթե մեր մեջ կա հավատքի գոնե կայծ առ Քրիստոս, մեք չենք կարող չխոստովանել, որ կանցնի այս աշխարհի կերպը /Ա. Կորնթ., է 31/, և Քրիստոսի գորությամբ կվերափոխվի Քրիստոսի կերպի: Քրիստոսյան այս կերպարը մախ և առաջ քրիստոնեական կրոնի գործող սկիզբն է, այնուհետև՝ Քրիստոնեական մշակույթ է, վերջապես՝ բնության սրբացում: Կյանքի բոլոր ոլորտները՝ արվեստը, փիլիսոփայությունը, գիտությունը, քաղաքականությունը, տնտեսությունը և այլն,

չեն կարող ընդունվել որպես ինքնաբավ էություններ և միայն իբրև իրապես այս աշխարհի համաձայն դասավորվող պատկերներ, բայց միայն այն դեպքում և միայն այն չափով, երբ և որչափ մշակույթը ընդհանրապես չի կազմակերպվում Բրիտանիայի կերպարի համաձայն: Եթե մենք մշակույթի ոլորտում Բրիտանիայի հետ չենք, ապա անխուսափելիորեն Բրիտանիայի դեմ ենք, քանզի կյանքում չկա և չի կարող Աստծու նկատմամբ չեզոքություն լինել:

Բրիտանացիությունը չի կարող կրավորական (պասիվ) լինել աշխարհի հանդեպ և նրանից հույս վիճակում որևէ բան վերցնել, որպես թե ինքնընտելության եմթադրելի իրողություն: Ոգին չի կարող պասիվ լինել: Այն կարող է ամեն ինչ վերցնել և ամեն ինչից օգտվել, բայց ոչ այլ կերպ, քան Բրիտանիայի նկարագրի համաձայն վերփոխելով: Բարոկկոյի ժամանակաշրջանի արևմտյան քրիստոնեությունը էական սխալմունք թույլ տվեց, երբ փորձեց իր մեջ ներմուծել հակաքրիստոնեական մշակույթի հույս պատանդները և, ներքուստ չիղճարելով դրանք, փորձեց ծածկել արտաքուստ բարեպաշտության փայլով կամ գունազարդել եկեղեցու երանգից համապատասխան: Ըիզովիտների գիտական և մշակութային գործունեությունը, ըստ իր մտահղացման՝ տալ քրիստոնեությանը քրիստոնեական մշակույթ, կարող է խորագրում հարգանքի արժանանալ: Բայց այն խորապես սխալ է, քանզի դա իսկական կառույցներից չի բաղկացած, այլ՝ ցուցադրական տաղավարներից և ծեփածո ժայռերից: Այդպիսի կեղծ մշակույթ կարելի է կառուցել միայն անմիտ նորեկներին շլացնելու, բայց ոչ ամենակից սեփական օգտագործման համար:

Ժամանակակից մարդկությանը հարկավոր է ոչ թե շինծու, այլ լուրջ քրիստոնեական մշակույթ, իրապես ըստ Բրիտանիայի և իրապես մշակույթ: Համեմատելիս, յուրաքանչյուրից պահանջվում է անկեղծորեն սահմանել իրեն, անկախ նրանից, ուզում է ինքը այդ, կամ այդ հմարավոր է արդյոք համարում: Հակառակ դեպքում անիմաստ է խոսել քրիստոնեության մասին և շեղվել ու շեղել ուրիշներից մատախուղված հույսերով առ անիրականացալիք: Այդժամ ճիշտ կլինեն նրանք, ովքեր ջանք են թափում որևէ ձևով այլ կերպ հարմարվելու:

Այդ դեպքում պարզամիտ են քրիստոնեական բարոյականության իդեալների ժխտման դեմ ուղղված անգոր թողաքները, որովհետև առանց քրիստոնեական հավատի դրանք միայն դատարկ երազանքներ են և որպես այդպիսիք խանգարում են կյանքը. «Եթե Բրիտանիայի հարություն չի առել, ապա իդուր էր մեր հավատը, ...սկսեց ուտել ու խմել, քանզի վաղը կմեռնենք» /Ա. Կորնթ., ԺԵ 17, 32/»

7. Մշակույթը իր հիմնական գծերում և փոքրագույն մանրամասներում ձևակերպվում է մեր գիտակցության հաստատումով, այսինքն՝ այն ուղեցույց աստղով, ըստ որի մենք որոշում ենք մեր տեղը կյանքում: Բրիտանական աշխարհը կամենում է հաստատել իր գիտակցությունը Բրիտանիայի՝ մարմնով եկած Աստծո Որդու վրա: Անկեղծ է կամենում, թե ձևականորեն է հայտարարում, բայց մեծավ մասամբ չի ցանկանում և նույնիսկ չի հասկանում, որ պետք է սովորել ցանկանալ: Ձևականորեն հռչակելով գիտակցության հաստատումն առ Բրիտանիայի, բոլոր դավանանքների հավատացյալները հետագայում թույլատրելի են համարում, համաձայն այս աշխարհի, տրվել իրենց ցանկություններին, և իրենց մասնակցությունն են բերում ոչ թե Աստծո Բաղաքի կառուցմանը, այլ բարեկյանքի աշտարակաշինությանը: Ի Բրիտանիայի գիտակցության անսահման կարևոր և փրկարար գլխավոր ուղղության դիմաց քիչ նշմարելի է դառնում քրիստոնյաների ցանկացած մասնավոր տարաձայնությունը, ինչպես որ մյուս կողմից այն թույլ նշմարելի է դառնում քրիստոնյաների՝ այս աշխարհին

մատուցած փաստացի ծառայության դեպքում: Ե՛վ բարձրամալիս, և՛ իջեցելիս բոլոր քրիստոնյաները միմյանց մոտենում են: Եթե որևէ դավանանքի քրիստոնյաները հավատալիմ այլ դավանանքի քրիստոնյաների առ Քրիստոս հաստատման ճշմարտությամբ, ապա հավանական է, որ քաժանկամներ չէին լինի, ինչը չէր խոչընդոտի տարբերությունների գոյություն ունենալուն: Եվ ընդհակառակը, չէին լինի կրոնական բաժանումներ մասն այն դեպքում, եթե մենք վերջնականապես խոստովանեինք քրիստոնեական հաստատումը լոկ ազգոր և ոչնչի չպարտավորեցնող վերապրույ: Բայց քրիստոնյաները բաժանվում են և թշնամանում միմյանց միջև, որովհետև կասկածում են մեկը մյուսի քրիստոնեական հաստատման իսկությամբ, քայց դեռ չեն մխտում սկզբունքով հաստատման ճշմանկությունը: Եվ սա վերաբերում է ոչ միայն տարբեր դավանանքներին, այլև առանձին դավանությունների ներսում ընթացող տարբեր հոսանքներին և մուսուլման առանձին քրիստոնյաների փոխհարաբերություններին: Քրիստոնեական աշխարհը լի է փոխադարձ կասկածաբարությամբ, անբարյացակամ զգացումներով և թշնամանքով: Այն փոքր է հենց իր հիմքում, քանզի չունի Քրիստոսի գործնականությունը (ակտիվություն) և սրա հետ մեկտեղ համարձակությունը և ամկեղծությունը չունի ընդունելու իր հավատի մեխանիզմները: Հաճույքով քննարկում են դավանաբանական բանաձևերի, եկեղեցական ծեսի, կանոնական կառուցվածքի մանրամասնությունները, մրթություններն ու մամրակրկիտ ստուգությունները, ամվերջ քննարկում են և ոչ մի կերպ չեն կարողանում հասնել համաձայնության որևէ տարբերակի: Բոլոր այս բանակցությունների անհաջողությունը մրանից չէ՞ արդյոք, որ հավատքի հարցերին մոտենում են ոչ թե ներքուստ, իբրև հավատացյալներ, այլ արտաքուստ, որպես հեղափոխություն, և, կորցնելով հոգևոր իրականության զգացումը, ինչպես կույրեր, չեն կարողանում ամբողջը պարփակել:

Մեր ժամանակների աստվածաբանների մասին կարելի է ասել, թե մրանցից չեն, ովքեր խոսում են այնպես, ինչպես իշխանություն ունեցողները /Մարկ., Ա, 22/: Բայց եթե մրանք գիտակցում են իրենց իշխանություն չունենալը, ապա ինչպե՞ս կարող են համոզ առնել հարցեր լուծել, որոնք լուծվում են ոչ այլ կերպ, քան իշխանությամբ: Ո՛չ մի եկեղեցական դիվանատում, ո՛չ մի քյուրուկրատիա և ո՛չ մի դիվանագիտություն սիրո և հավատի միասնություն չի ներշնչի այնտեղ, ուր այն չկա: Բոլոր արտաքին սոսնձումները ոչ միայն չեն միավորի քրիստոնեական աշխարհը, այլև ընդհակառակը, դավանությունների միմյանց միջև մեկուսացման պատճառ կդառնան: Մենք պետք է խոստովանենք, որ վարդապետության, ծեսի և եկեղեցական կառուցվածքի այս կամ այն տարբերությունները Քրիստոնեական աշխարհի մասնատման իրական պատճառը չեն, այլ՝ փոխադարձ խոր անվստահությունը հիմնականում հավատք առ Քրիստոս, մարմնով եկած Աստծու Որդի: Մենք պետք է խոստովանենք, որ այս կասկածանքներն ամբողջովին զուրկ չեն հիմնավորումից, քանզի հավատն, իր խորագույն հոգևոր հիմունքներում, իսկապես թուլացել է, որը և արտահայտվում է թերահավատության պտուղների միջոցով՝ հակաքրիստոնեական մշակույթով: Սա չի վերաբերում այս կամ այն առանձին դավանանքին, այլ ողջ Քրիստոնեական աշխարհին, որն այժմ միավորելի է միայն մեկ հատկանիշով՝ հավատքի անկումով: Քրիստոնեության գալիք ճգնաժամի համդեպ բոլոր մրանցից, ովքեր Քրիստոնյա են անվանվում, պահանջվում է իրենց առջև վերջնագրային հարց դնել և ապաշխարել «միասիրտ և միաբերան» /Հոմ., ԺԵ, 6/՝ հայտարարելով՝ «Տե՛ր, օգնի՛ր իմ անհավատությանը» /Մարկ., Թ, 24/: Այդժամ քրիստոնյա աշխարհի միավորության հարցը

դիվանատնից առաջին անգամ թարմ օդի դուրս կգա, և մարդկանց համար դժվարին ու անհմարիճը Աստծու համար բոլորովին հնարավոր կդառնա:

8. Սա չի նշանակում, որ եկեղեցական կյանքի ճշգրիտ ձևերը, ձևակերպումները, ծեսը, կանոնադրությունը, եկեղեցական կառուցվածքը անկարևոր են և պետք է անտեսվեն հաճում միության: Ամենից առաջ մա, ով չի հարգում իր դավանության կրոնական կյանքի որոշակի ձևերը, չի սովորի հարգել մահ այլ դավանանքի ձևերը, և այդժամ միավորությունը կեղծ կլինի, կորստաբեր՝ հենց կրոնական կյանքի համար, որի ամբողջության մպատակով մարդիկ մտածեցին միավորության մասին: Եթե այս ճանապարհով հնարավոր լինի ավելի առաջ գնալ, ապա դժվար չի լինի միավորել մահ ողջ մարդկությունը՝ իմչ-որ հումանիստական դատարկության մեջ: Սակայն մարդկությանը պետք է ոչ թե ցանկացած գնով ձեռք բերված ինքնին միավորություն, այլ կյանք՝ ճշմարտության և սիրո մեջ: Միմյնեռ, կրոնական ճշմարտության հասու լինելը վերացականորեն չի տրվում, այլ կատարվում է որոշակի և լիարյուն կենսական միջավայրում: Ես՝ որոշակի դավանանքի պատկանողս և, հետևաբար, իմ եկեղեցու հաստատումները կյանքը ճշմարիտ կազմակերպող ճանաչողս, կսկսեի խաբել կա՛մ իմ եկեղեցուն, կա՛մ այլ դավանության հավատացյալներին, եթե հաճում միավորության թեթևամտորեն կամ տակտիկորեն հրաժարվեի իմ եկեղեցու հաստատումներից: Բայց, ընդունելով դրանց կարևորությունը, ես կխախտեի Քրիստոսի սիրո պատվիրանը, եթե բոլոր դավանանքներից՝ որպես շփման անվիճելի պայման, սկսեի պահանջել իմ եկեղեցու կրոնական կյանքի որոշակի ձևերի յուրացում: Եթե ես վստահում եմ որևէ մեկի ի Քրիստոս հիմնված գիտակցության անկեղծությանը, ապա սրանով փոխադարձ ընդունման և շփման հնարավորությունն ու անհրաժեշտությունն է տրվում, քանզի ողջ որոշակի կյանքը որպես թե բողբոջից է բացվում, այստեղից ու միայն այստեղից, իսկ ողջ մնացյալը կլիմայի ու բնաժողի հատկություններ են, որոնց վրա անցե հավատի սերմը:

Սակայն տարաձայնությունը և տարբերությունն անխուսափելիորեն կլինեն: Նախ և առաջ՝ ըստ հոգևոր տարիքի տարբերության: Որոշ դավանություններ կարող են դեռ հասունացած չլինել կրոնական կյանքի հայտնի դրսևորումների համար և սնվել «կաթով և ոչ թե չոր կերակուրով» /Եբր., Ե, 12/: Պետք չէ ինքնախաբեությամբ տարվել և փորձել ուշադրությունից դուրս թողնել հոգևոր և մշակութային հասակների այսպիսի մի տարբերություն, որ գոյություն ունի և՛ մեկ դավանանքի, և՛ մուլմիսկ մեկ ընտանիքի ու մտերիմ գաղափարակիցների շրջանակներում: Բայց այս տարբերությունը ոչինչ չի ասում փոխադարձ ընդունման հնարավորության դեմ: Երեխան կամ երիտասարդը, որ ծերին հայտնի եղածից շատ չեն հասկանում վերջինիցս, ավելի մվազ անհրաժեշտ չեն երկրի վրա և հաճելի Աստծուն: Իսկ շփոթությունների դեպքում այստեղ հարկ է գործը թողնել ժամանակին: Երկրորդ՝ կամ տարբերություններ ինչպես ամբողջ քրիստոնեության, այնպես էլ առանձին դավանանքների մեջ՝ կախված ռասայից, ազգությունից, խառնվածքից, պատմական վարժավածությունից և այլն: Այստեղ որոշակի ձևերով ապրող դավանանքին հակադրվում է ուրիշ մեկը՝ այլ ձևերով: Այս դավանական ձևերը մեկը մյուսին անսովոր են, հնարավոր է, օրգանապես օտար և անհասկանալի: Կեղծ և սուտ կլինե՞ր ձգտել յուրացնել այդ օտար ձևերը: Բայց և այստեղից ոչինչ չի հետևում փոխադարձաբար իրար չընդունելու առումով:

Տիեզերական եկեղեցու ընդհանրական կյանքը հավասար չէ ոչ միայն առանձին մարդկանց կյանքերի գումարին, այլև առանձին եկեղեցիների. ամբողջ

առավել է մասերի գումարից: Ինչպես առանձին մարդու օրգանիզմը երկու տարբեր աչքերով, ամեն մեկն իր հայեցակետով, որակապես տարբեր է տեսնում, քան միայն մեկով, այսպես էլ Քրիստոսի մարմնի այլապիսի անդամների կառուցվածքի և գործառնության տարբերությունները մրան կենսական դրսևորումների հնարավորությունում եմ տալիս, որոնք անհասանելի կլինեին ամբողջական միօրինակության դեպքում. «Կետք է, որ հերձվածներ լինեն» /Ա. Կորնթ. ԺԱ 19/: Աչքը միայն չէ ձեռքին, և ձեռքի կառուցվածքը օտար է աչքին: Բայց մա չի կարող ասել ձեռքին. «Դու իմն ամհրածնշտ չես», ինչպես և, հակառակը, ձեռքն էլ իրեն անհասկանալի աչքին չի կարող ասել. «Դու իմն Կետք չես»: Առողջ օրգանիզմում անդամները, ուր յուրաքանչյուրը մյուսից տարբեր իր գործն է կատարում, հաշտ եմ ապրում՝ /մեկը մյուսին/ կարիքը զգալով և ծառայելով ընդհանուր օրգանիզմին: Բոլոր անդամներում եղող կյանքը դրդում է մրանց, մեկը մյուսի կառուցվածքն ու դերը չհասկանալով էլ վստահելու միմյանց, իբրև դեկավարվողներ և շնչավորվողներ մեկ հոգով, համում որի մրանք բոլորը գոյություն ունեն: Մեկի հիվանդությունը անդրադառնում է բոլորի վրա, իսկ գրեթե բոլոր անդամների հիվանդ ճամաչումը հավասարազոր է մյուսների էլ հիվանդության ընդունմանը: Որոշակի ամոսմի տեսակետից, որ չի հասկանում օրգանիզմի ամբողջական կյանքը, հնարավոր է թվա, որ ինչ-որ մեկը բացահայտ անճիշտ է գործում: Արդյոք գիտակցության այսպիսի մեղացման դեպքում չէ՞ր առաջանա երկու աչքերի հակառակություն, որոնցից յուրաքանչյուրը քայլելիս կատարում է հակառակը մրան, ինչ անում է մյուսը: Բայց միևնույն հենց մրանց հակասությունն է ծառայում ամբողջ օրգանիզմին իբրև քայլելու պայման, այն դեպքում, երբ ուրքերի միամեամություն գործելու համաձայնությունը կտաներ կանգառի կամ ամճոռնի թոխչքների:

Չարժե համում միավորության սվաղել հավատաբանական տարբերությունները, ընդհակառակը, շատ կարևոր է հատուկ հաստատել դրանք: Սակայն եթե այս դեպքում մենք ունենանք անկեղծ վստահություն և սեր ոչ թե անմիջականորեն մեկս մյուսի հանդեպ, քանզի մենք բոլորս կարող ենք մտորվել, այլ Նրա նկատմամբ, Ով ապրում է Տիեզերական եկեղեցում և Ում միջոցով առաջնորդվում է այն, ապա այդժամ տարբերությունները առիթ կդառնան մեզ ոչ թե թշմամանքի, այլ ավելի շուտ առիթ՝ համերաշխության զգացումի քրիստոնեական աշխարհի հանդեպ և մախախմախության ուղիների առջև՝ երկյուղածությամբ: Մենք գիտենք, որ հոգին մեկ է, իսկ շնորհները՝ բազում: Բայց այդ գիտությունը մեր կողմից յուրացված չէ և մեզ ցանկալի է ընդունել միայն մեկ իրական, մեզ համար սովորական հոգու շնորհատվություն, իսկ ողջ մնացյալը նվազեցնել կամ ընդհանրապես չճանաչել իբրև հոգու պտուղներ: Մեր ժամանակը մեղանչում է բոլոր դավանանքներում «կաթոլիկ» տերմինի մոռացմամբ, վերագրելով այդ բառին տարածական /էտեռնիկ/ և քանակական իմաստ, այն դեպքում, երբ καθολικός-ն նշանակում է մախ և առաջ լարվածություն /իմտեռնիկ/ և որակ: Քրիստոնեությունը ընդհանրական է, քանզի Աստծու մախահավիտյան խոսքով /համ/ ամեն ինչ եղավ /Հովհ. Ա 3/, և հետևաբար ի Քրիստոս գիտակցության հաստատումը ընդգրկում է դրսևորումների անվերջություն և ամբողջություն: «Ամեն բարի շնորհ և ամեն կատարյալ պարգև վերնից է» /Հակոբ Ա 17/: Եկեղեցին իբրև Ամբողջություն չցանկանալը ըստ էության հերձվածողություն և աղանդավորություն է, ինչպիսի դավանանքից էլ որ բխեն մնամատիկ ձայներ: Յուրաքանչյուր առանձին հավատացյալ, ինչպես և յուրաքանչյուր առանձին համայնք, թեմ, եկեղեցի, դավանանք առանձին վերցրած ունեն սահմանափակության գծեր և, հաստատվելով իրենց

այդ սահմանափակության մեջ, ձեռք են բերում աղանդների բնույթ: Ընդհակառակը, իրենց սեփական սահմանափակության գիտակցումը և այստեղից բխող ձգտումը՝ սեփական շնորհը լրացնել ուրիշների շնորհով, որ գտնվում են տվյալ խմբի պարսպից այն կողմ, ընդհանրականացնում է դավանանքը:

9. Թերիափատությունը, վախճնալով ընկնել ամբողջական անհավատության մեջ, երկշտորեն կաշույն է կրոնական կյանքի ձևերին և չկարողացալով նրանցում տեսնել հոգու և ճշմարտության բյուրեղացած արտահայտություններ, դրանք գնահատում է իբրև իրավաբանական օրենսդրության չափանիշներ: Այն /թերիափատություն/ վերաբերում է նրանց արտաքինից և փայփայում է դրանք ոչ իբրև Քրիստոսի լույսը տվող պատուհաններ, այլ իբրև արտաքին հեղինակության պայմանական պահանջներ: Քրիստոնեական գիտակցությունը գիտի, որ եկեղեցական հաստատումները պատահական չեն և եկեղեցու կողմից փրկության համար որպես արդյունավետ պայմաններ են՝ առաջարկվում: Սա է քրիստոնեական համայնքի առողջ և հոգևոր կյանքի կանոնն ու հրամանը: Բայց քրիստոնեական գիտակցությանը միշտ պարզ է, որ հոգևոր առողջապահության բուժամիջոցները կարող են որոշակի պայմաններում փոխարինվել ուրիշներով. եկեղեցական պահանջների պահպանումը, համաձայն իրենց ներքին իսկության, որն է համագործակցել փրկությանը, երբեմն տալիս է տառացի դրանց չկատարելուն: Հավասարապես տառացի պահպանումը կարող է հակասել պահանջների հոգևոր իսկությանը:

Օրենքի և ազատության հակասության մեջ, որով կազմվում է Նոր Կտակարանի հյուսվածքը, եզրերից ոչ մեկը չպետք է տկարացվի: Ծառաթից իրապես սուրբ է, բայց Մարդու Որդին նաև Ծառաթի Տերն է: «Ծառաթի» թեթևամիտ մեթոդը նույնչափ հակառակ է քրիստոնեությանը, որչափ քրիստոնեական ազատությունը չընդունելը, և միայն այս հակասության շեղքով բարեպաշտ ընթացքն է որոշում Քրիստոնյային: Ընդհակառակը, բարեպաշտ կյանքի կորուստը կամ թուլացումը անխուսափելիորեն տանում է այդ հակասության քայքայմանը: Այսպես, Քրիստոնեական աշխարհը բոլոր դավանաբաններում բաժանվել է մոր սաղոնեցիության և մոր փարիսեցիության: Միայն հավատացյալ հայացքով խորացված ներթափանցումը կրոնական կյանքի որոշակի ձևերի մեջ բոլոր դավանություններին հնարավորություն է տալ ներթափանցելու և՛ մեկից և՛ մյուսից: Մենք պետք է հասկանանք կրոնական կյանքի ձևերը հենց որպես կյանքի դրսևորումներ՝ վերծանելով Տիեզերական եկեղեցու ընդհանրական մտքի այդ հիերոգլիֆները և յուրացնելով դրանք իբրև Քրիստոսի գիտակցության արտահայտություն: Այս դեպքում մեզ հասկանալի կդառնա, որ դրանք զծագրված են միակ օրենսդրի կողմից ի հորդորումն մեզ, որ նրանք չեն կարող քնահաճորեն փոփոխելի լինել: Միաժամանակ չի հետևում, որ մյուս բոլոր կանոնները պետք է վերացվեն: Դավանությունների թշնամությունը այլ դավանաբանների սրբազան խորհրդանիշների հանդեպ հենվում է խորհրդանիշների նկատմամբ ոչ հոգևոր մոտեցման վրա: Իսկ արդյո՞ք հոգևորին ոչ հոգևոր մոտեցումը կոպիտ սխալ չէ: Եվ չի՞ տանում արդյոք այն վտանգավոր տգիտության:

10. Այսպիսով, քրիստոնեական աշխարհի միավորումը հնարավոր է միայն «մտածելակերպի փոփոխության /μετάνοια/ և կշռադատված խորհրդածելու դեպքում՝ նախ և առաջ սեփական դավանանքի սահմաններում: Ով ձգտում է հոգևոր կերպով հարմարվել իր դավանաբանին և լինել իրապես հավատարիմ զավակը իր եկեղեցու, նա դրա հետ մեկտեղ կմիավորվի ի Քրիստոս նաև մյուս

քրիստոնյաների հետ: Ի Քրիստոս, քանզի միայն այսպիսի միավորումը կարող է փրկարար լինել: Մեզ պետք չեն արհեստական դաշինքներ ըստ մարդկային հաշվարկների: Բացի վերը նշված տարբերակների պատճառներից, ճիշտ է, որ կարող է լինել մաս երրորդը՝ ուղղակի մոլորություն: Սակայն անիմաճալի են Տիրոջ ճանապարհները: Ընդհանրական եկեղեցու տնտեսության մեջ մուլմիսկ մոլորությունները երբեմն ունեն իրենց իմաստը: Եվ քացի այդ, ո՛չ առանձին հավատացյալին, ո՛չ առանձին դավանությանը քոլորովին կարիք չկա օտար մոլորությունը ճշմարտություն անվանելու և սեփական խիղճը թյուրելու: Հանդիպելով անկեղծ հաստատում կա առ Քրիստոս, հեռավոր է հուսալ, որ այդ մոլորությունը ժամանակավոր է և կփարատվի իր ժամանակին: Հաճախ այդպիսի մոլորությունը բնաճող է ունենում էական ճշմարտությունների որոշակի թերի լուսաբանվածությունը միայն գիտակցության մեջ, ովքեր համակարծիք չեն այդ մոլորությանը, այդ իմաստով տանում է ճշմարտության քացահայտման:

Պաշտպանողական ջատագովության փոխարեն բոլոր դավանությունները կարիքն են զգում իրենց ապավինությունների իմաստի դրական քացահայտման և պարզաբանման: Եվ այսպես կլինեն, իհարկե, առավել հասկանալի մեկը մյուսին և անհավատներին, քան թե պաշտպանելով սեփական դիրքերը՝ հակառակորդի փաստարկներում անտրամաբանություններ և հակասություններ մատնանշելու ճանապարհով: Անհավատության համար հատկապես գայթակղիչ է հանդիսանում մարդկային բնությանը և բոլոր արարածներին վերաբերող այն հայացքների չքացահայտվածությունը, որոնք որպես բնական հետևանք /իմպլիցիտ/ ընդգրկվում են ի Քրիստոս հավատքի մեջ: Աշխարհայացքը, որ ոչինչ չի ասում այս հիմնական հարցերի շուրջ, բնականաբար, անվստահության է հանդիպում միայն կողմից, ովքեր լավ թե վատ, քայքայ անկեղծ, իրենց ողջ ուշադրությունն ու ուժերն են հատկացնում հատկապես այս առարկաներին: Այնինչ, քրիստոնեությունը ասելիք ունի դրանց վերաբերյալ և, իհարկե, միայնովն մախառեսված են քրիստոնյաների պարտավորությունները բոլոր արարածների հանդեպ:

Բայց բոլոր քացատրություններից հետո էլ կարող են լինել և կլինեն չարացած անհաշտության և հպարտորեն առանձնացման դեպքեր: Եվ պարզ է, որ այստեղ արդեն խոսք չի կարող լինել Քրիստոսի վրա գիտակցության հաստատության մասին, թեկուզև Քրիստոսն է եղել բռնի գործողության պատրվակ: Ինչ էլ որ լինի, բաժանումն ու թշնամությունը կնվազեն, եթե քրիստոնեական աշխարհի կողմից յուրացվեք առաքյալի ասած խոսքը. «Ո՞վ ես դու, որ դատում ես ուրիշի ծառային, կանգնած լինի, թե ընկած՝ իր Տիրոջ համար է» /Հռոմ. ԺԴ 4/: Այս խոսքերը պատճառ չկա սահմանափակել միայն մեկ «ծառայով» և չտարածել այդպիսիների ամբողջական հասարակության վրա:

11. Պետք է Քրիստոնյա աշխարհի՝ առ ապաշխարհության կոչ հնչի, կոչ թերահավատությունից դեպի հավատ և բաբելոնյան աշտարակից դեպի Աստծո՝ Հաղաք: Այն ոչ ոքի չի հարկադրում հրաժարվել իր դավանանքի սեփականած որոշակի ձևերից: Այն միայն կոչ է անում յուրաքանչյուրին սեփական հավատքի մեջ խորացման և ներշնչում մի բան՝ հոգևոր ակտիվություն: Բոլորին սպառնացող մեծագույն վտանգը, որից մտածում ենք, կլինքավորենք մեր ուժերը, պետք է ստիպի քրիստոնյաներին պատասխանատվության զգացումով վերաբերվել այդ կոչին՝ հանուն իրենց սեփական հաշվարկների, հանուն իրենց երեխաների ապագայի: Մենք հաճախ տարածայնում ենք երրորդականի պատճառով այնպիսի ժամանակ, երբ գլխավորի պահպանության համար ստիպված անուշադրության պետք է թողնել տարածայնության և առաջնային եղող առիթները:

Մենք, ասում են, որ հարուստ ենք, բայց մենք աղքատ ենք, որովհետև մեր մշակույթի գործերն առաջնորդում են մեր գիտակցության, հիրավի, ոչ-քրիստոնեական հաստատման ճանաչողությանը: Այսպիսով, թողնենք մեր հարստության մասին սնափառ միտքն ու հաստատ յուրացնենք, որ Տիեզերական եկեղեցու մեծագույն գանձերը միայն Քրիստոսի միջոցով կարող են մերը դառնալ, բայց փաստորեն չեն կազմում մեր կարողությունը:

Յուրաքանչյուր եկեղեցու սեփականացրած որևէ բանից չհրաժարվելով՝ քրիստոնյաներին մախ և առաջ անհրաժեշտ է կանգնեցնել քրիստոնեության դրոշմ իբրև Քրիստոնյա աշխարհին կոչ՝ ինքնաճանաչման և Քրիստոնեական մշակույթի կառուցման, որ հավաքվի այդ դրոշի շուրջ Քրիստոսի հոտը: Այդ դրոշը չի կարող և չպետք է ծանր լինի, քանզի նրանում ժողովված են միայն այն հոգևոր մշակները, առանց որոնց արդեն հիմք չկա Քրիստոնյա կոչվելու: Սրանք մվագագույն պահանջներ են և սրանք չեն կարող քիչ չթվալ համեմատած առանձին դավանությունների հառաջացած ուսմունքների: Քրիստոնեական հավատքի միայն այս տեսակ կարճ համադրտագրությունը թույլ կտա ներկայումս մեր ուշադրությունը կենտրոնացնել ամենագլխավորի վրա: Բնությունից դուրս պետք է թողնել թեկուզև կարևոր, սակայն երկրորդական և երրորդական հարցերը, որոնք միաձայն լուծել քրիստոնեությանը ներկայումս դժվար թե կհաջողվի, իսկ դրանց վրա կանգ առնել՝ անբարեխոհ և հանցավոր կլինի Քրիստոսին՝ մարմնով եկած Աստծու Որդի միահոգի դավանելու ճանապարհին:

Առաջաբանը և ուսերենից թարգմանությունը՝

ԿԱՐԱԳԵՏ ԱՐԵՂԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀՐԱՉՅԱ ԱՇՈՏԻ ԱՍՄԱՐՅԱՆ

Պատմ. գիտ. թեկնածու

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Իտալիան մինչև անկախություն /1870 թ./ ձեռք բերելը, գտնվում էր ֆրանսիական, իսպանական և ավստրիական տիրապետության ներքո: Անկախությունը ձեռք բերվեց թանկ գնով:

Վերջին շրջանում իտալական ազգային-ազատագրական շարժման երեք խոշոր մեծությունների՝ Ջուզեպպե Մաձձինիի, Ջուզեպպե Գարիբալդիի և Կամիլլո Կավուրիի գնահատման հարցի շուրջ լուրջ հակասական և իրարամբոժ կարծիքներ կան, ըստ որոնց այս գործիչները սխալներ են թույլ տվել Իտալիայի միավորման գործում: Ժխտվում և անտեսվում է նրանց դերը զանազան պատճառաբանություններով և մասնավորապես՝ Ջ. Գարիբալդիի հարցում:

Մեր մեծերը՝ Միխայիլ Նալբանդյանը, Ավետիս Ահարոնյանը, Ավետիք Իսահակյանը և ուրիշներ, բարձր են գնահատել իտալական ազգային-ազատագրական շարժումը՝ այն համարելով քախտակից ազգի պատմությունը:

Իտալացիները և հայերը 19-րդ դարում դարձան քախտակիցների, քանի որ Հայաստանը նույնպես քաժանվել էր երկու մասի՝ Արևմտյան, որը գտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ, և Արևելյան: Վերջինս միացվել էր ցարական Ռուսաստանին: Հայ գործիչները ևս ձգտում էին իրենց երկիրը միավորված տեսնել, ինչպես ժամանակին միավորվեց Իտալիան:

Իտալական մեծերն ունեցել են և՛ վերելքի, և՛ նմանապես վայրէջքի շրջաններ: Բայց դրանք պատմական ժամանակաշրջանի արդյունք էին, քանի որ Ջ. Մաձձինին /1805-1872/ և Ջ. Գարիբալդին /1807-1882/, իրենց հայացքներով լինելով հանրապետական գործիչներ, երբեմն զիջում էին միապետական կարգին /Վիկտոր-Էմանուել Միկոդորո թանգավորին/: Ջ. Գարիբալդին և մյուսները մեծ հայրենասերներ էին, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրեցին ազգային վեհ նպատակներին:

Ջ. Մաձձինիի հեղափոխական գործունեությունը շատ դիպուկ է բնութագրել պատմաբան Կ. Է. Կիրովան իր «Ջուզեպպե Մաձձինիի կյանքը» աշխատության մեջ: «Այնպես ստացվեց, որում է նա, որ Ջուզեպպե Մաձձինիի պատմությունը ոչ միայն պատմություն է նրա անձնական հաջողությունների և սխալների, նրա անձնական թռիչքների և անկումների, այլև ինչ-որ չափով իտալական ազգի պայքարի պատմություն էր անկախության, միասնության, Իտալիայի վերածնության համար»¹:

Ջ. Մաձձինին որպես քաղաքական գործիչ արդո՞ւմ ունեցել է սխալներ: Այո՛, և ոչ չի: Նա կուրորեն հավատում էր զանգվածների «հեղափոխական նախաձեռնությունը»: «Հատկապես այդ կուլը վստահությունն է, որ ազգային-ազատագրական հեղափոխությունը հնարավոր էր համարում յուրաքանչյուր պահին՝

¹ К. Э. Кирова, Жизнь Джузеппе Мадзини, М., 1981, стр. 175.

անգամ հեղափոխական ալիքի անկման շրջանում, և դրանով է բացատրվում շատ ապստամբությունների և դավադրությունների անհաջողությունը²:

Սակայն իտալական շարժումը միատարր չէր. «Իտալիայի ազատագրական շարժման մեջ որոշակիորեն նկատվում էր երկու ուղղություն՝ չափավոր լիբերալները, որոնք հանդես էին գալիս երկրի միավորման համար՝ «վերևից» և ազգային-հեղափոխականները, որոնք ձգտում էին իտալական Դեմոկրատական Հանրապետություն ստեղծելու»³: Ազգային-հեղափոխական ուղղության ղեկավարներն էին Ջ. Մաձինիին և Ջ. Գարիբալդին, իսկ չափավոր-լիբերալ ուղղությանը՝ Պիեմոնտի վարչապետ կոմս Կավուրը: Հայ իրականությունում այդ երկու ուղղություններն էլ արդարացվում էին:

Բերինգ մի քանի փաստեր՝ մեր տեսակետները հիմնավորելու համար:

Իտալիայի համար 19-րդ դարը համարվում էր «Կավուրի և Մաձինիի դար»:

Ջուզեպպե Մաձինիի՝ «երևելի մարդու մահի պատճառով» հռչկվածներ են լույս տեսել հայ պարբերական մամուլում՝ «Արևելյան մամուլ», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Փորձ» և այլն: Հետաքրքրական փաստ է, որ նրա մասին իրարամերձ կարծիքներ են հայտնվել:

1872-ին «Արևելյան մամուլում» բարգմանաբար տպագրվում է Ժ. Տը Բրեսի «Մաձինի» վերնագրով երկու հոդված: Հոդվածի տպագրության առիթով մի փոքր առաջարկ է գրել Մատթեոս Մամուրյանը: Այստեղ երևում է նրա դրական վերաբերմունքը Մաձինիի գործի նկատմամբ: Մ. Մամուրյանը գրում է. «Իտալիա կորույս Մաձինիին, որ՝ Գավուրի և Կարիպալտի չափ՝ մեծ ծառայություններ մատուցեց էր իր հայրենյաց, և անշուք կապրեց Բիզայի մեջ»⁴:

Հեղինակը Մաձինիի ծառայությունները հավասարեցնում էր Կավուրի և Գարիբալդիի կատարածին: Դա սխալ էր, քանի որ Մաձինին և Գարիբալդին իտալական ազգային-ազատագրական շարժման հեղափոխական թևի ակնառու ներկայացուցիչներն էին, իսկ Կավուրն իր գործելակերպով նրանց հակառակ բեռնում էր գտնվում՝ պատկանելով լիբերալ բուրժուական թևին:

Իսկ «Մեղու Հայաստանին» Մաձինիի մահվան կապակցությամբ գրում էր. «Մոտեմուս, փաղափական աշխարհը կորցրեց իր նշանավոր գործիչներից մեկը»:

սա էր Ջուզեպպե Մաձինին»⁵: Լրագիրն իր ընթերցողներին ծանոթացնում էր նրա հանրապետական հայացքներին, տալիս նրա կյանքի մանրամասները: «Մեղու Հայաստանին», ներկայացնելով Մաձինիին, աշխատում էր իր ընթերցողներին վարակել նրա «հայրենասիրական և ազատության սուրբ կրակով»:

Ջ. Մաձինիի մահվան առիթով «Մշակը» նույնպես տպագրել է ընդարձակ հոդված⁶, ուր վեր է հանել նրա կյանքի մանրամասները: Հոդվածագիրը անդրադարձել է հատկապես նրա փառափառական հայացքներին ձևավորմանը: Ջ. Մաձինին դեռևս համալսարանական տարիներին գրել էր «Դեմոկրատիայի հայրենասիրությունը» վերնագրով հոդվածը, որտեղ երիտասարդ հայրենասերը առաջ էր փառում «հայրենիքի միության» գաղափարը:

Նա նշանակալից գործունեություն ծավալեց, երբ Պիեմոնտը Ֆրանսիայի հետ պատերազմ սկսեց Ավստրիայի դեմ: 1866 թ. Ջ. Մաձինին (արդեն ֆանիերորդ

² Նույն տեղում, էջ 177:

³ "Восемьдесят лет истории", М., 1959, т. 6, стр. 532.

⁴ «Արևելյան մամուլ», Ջուլուսեթա, 1872, մարտ, էջ 124:

⁵ «Մեղու Հայաստանի», 1872, թիվ 6:

⁶ «Մշակ», 1872, թիվ 12:

անգամ) դատապարտվեց մահվան: Բայց շուտով նրան ներում է շնորհվում: Դրանից հետո նա հեռանում է քաղաքական ասպարեզից:

Հողվածում բերված փաստերը համապատասխանում են պատմական իրականությանը, և, ներկայացնելով նրա ամօր, հողվածագիրը հանդես է գալիս առաջադիմական դիրքերից՝ հավասարապես վեր հանելով Ջ. Մաժժինիի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը:

«Փորձում» տպագրվում է Լ. Ասսինգի «Մաժժինի» հոդվածը (թարգմ.՝ Ն. Լալայանցի), որտեղ գրված էր. «Իսկապես Մաժժինուն կարելի է միայն յուր հետ համեմատել. նորա կյանքն ու գործունեությունը համարյա թե մի առասպել պիտի թվի ապագա սերնդին»⁷:

Ջ. Մաժժինիի քաղաքական հայացքներն ավելի պարզորոշ երևում են նրա՝ կյանքի վերջում գրված «Պ. Ռենան և Ֆրանսիա» հոդվածաշարում: «Արևելյան մամուլը»⁸ տպագրել է Մաժժինիի նույն վերնագրով հոդվածաշարը: Ջ. Մաժժինին, «որ երեսուն տարի գրչով ու զենքով Իտալիո ազատության և միության համար մահառեցավ», հողվածաշար է նվիրել Ֆրանսիայի զարգացման ուղուն: Էժենաս Ռենանը գովաբանում էր հին կարգերը՝ միապետությունը Ֆրանսիայում: Մաժժինին, իր հողվածաշարում, նրան հակադրվում էր իր համարադասական գաղափարներով: Մաժժինին, հակառակ Ռենանի, հանգում էր ճիշտ եզրակացության, որ Ֆրանսիայի զարգացման «ուղիղ ճամբան» հանրապետությունն է: Սա ժամանակի տեսանկյունից քավականին առաջադիմական քայլ էր: Մ. Մամուրյանին հետաքրքրել են Մաժժինի անհատի գործունեությունն ու հայացքները: Այդ իսկ պատճառով մի շարք հոդվածներ է գետնել իր հանդեսում: Եթե դրանից առաջ Մաժժինին հանդես էր գալիս իբրև մի սովորական «ավագակ», ապա այս դեպքում նա ներկայացվում էր իր ողջ գործունեությամբ: Մաժժինիի քաղաքական հայացքների տատանումները նրան տարան ոռու վտարանդի Միխայիլ Բակունինի անարխիստական ուղիով:

Ֆրանսիացի պատմաբան Էլի Սորենը իր գրքում՝ «Իտալիայի պատմությունը 1815 թ. մինչև Վիկտոր-Էմանուելի մահը» (Ա. Պետերբուրգ, ռուս., 1898, էջ 119), նույնպես քարծր է զննատում Ջ. Մաժժինիի հեղափոխականությունը՝ նրան համեմատելով ֆրանսիական Մեծ հեղափոխության (1789-1794 թթ.) առաջնորդի՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի հետ: Կարծում ենք, համեմատությունը տեղին է:

Արդյո՞ք պատահական էր, որ հայ պարբերական մամուլը ինչպես 19-րդ դարի 50-60-ականներին, այնպես էլ դարավերջին հողվածներ էր տպագրում ընդհանրապես իտալական ազգային-ազատագրական շարժման և մասնավորապես Ջ. Գարիբալդիի վերաբերյալ: Հայ ազգային մեծերը՝ Մ. Նալբանդյանը և նրա արևմտահայ համախոհներ Հ. Սըվանյանը, Ս. Թազվորյանը, Մ. Պեշիկպաշլյանը, Ստ. Ոսկանյանը, Մ. Մամուրյանը, Գր. Զիլիկյանը, Արմ. Հայկունին և ուրիշներ, համարում էին իտալական ազգային-ազատագրական շարժմանը: Դրա արդյունքն էր Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը (որը գրեց 1859 թ. Մայնի-Ֆրանկֆուրտում), ուր իտալացի աղջկա օրինակով ոգեշնչում էր հայ ժողովրդին:

Մ. Նալբանդյանը Իտալիայում էր գտնվում 1860 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1861 թ. հունիսի 11-ը: Նա այնուհետև լինում է Մեսսինա, Ջենովա, Թուրին, Հռոմ քաղաքներում: «Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Գարիբալդի» անուոռ աղաղակում է հասարակ ժողովուրդը. «Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Վիկտոր-Էմանուելի» գրում էր Մ. Նալբանդյանը Նեապոլից իր գործընկերոջը՝ Հ. Սըվանյանին, գտնում ենք քաղաքից, այսինքն՝ միջնակարգ ժողովուրդը: Այս ուրախական բացականչու-

⁷ «Փորձ», 1876, թիվ 1, էջ 207:

⁸ «Արևելյան մամուլ», 1874, մարտ, ապրիլ և մայիս ամիսներին համարներում:

բլուռն, քեպետև հառաջանում են տարբեր սկզբունքներից, վերաբերությամբ դեպի Գարիբալդիի և դեպի Վիկտոր-Էմմանուելը, բայց «Իտալիան» ամռնում է այս խոշոր տարբերությունը⁹:

Սո. Ոսկանյանն «Արևմուտքում» նկարագրում է Ջ. Գարիբալդիին և նրան բնութագրում այսպես. «Հայկական ֆաշիզմում մը, կարգե դուրս անվախություն մը, հրարալի ազգասիրություն մը և ռազմագիտական անգլյուտ ոգի մը, ահա կարիպալտիի հատկությունները: Քանի մարդ կա նվրդալի մեջ որ զանգն ունենա և գործ անի... կարիպալտի և իր գլուցագրի գունդը իդալանի անունը կփառավորեն և հիշել կուտան, որ մեռած է ֆաշիզմը անոնց սիրտին մեջ»¹⁰:

Հարց էին տալիս՝ ո՞վ է Ջուզեպպե Գարիբալդին: Նրա ամենալավ գնահատականը տվել է Վիկտոր Հյուգոն. «Ո՞վ էր Գարիբալդին: Մարդ է, և ուրիշ ոչինչ, բայց նա մարդ է քառիս ամենաբարձր մտնով: Ազատության մարդ, մարդասիրության մարդ: Ունի՞ նա գործ: Ո՛չ, միայն մի բուն կամավորներ: Ունի՞ նա ռազմամեքեր: Ո՛չ: Իսկ վառո՞ղ: Միայն մի ֆանի տակառ: Ֆեդանոթեն՝: Այնքան, որքան խլված են թշնամուց: Ինչո՞ւմ է նրա ուժը: Ի՞նչն է պատճառը նրա հաղթությունների: Ո՞վ է նրա նիգակակիցը: Ժողովուրդների հոգին»¹¹:

«Հյուսիսափայլին» ուղղած իր նամակում Ժամանակի հասարակական գործիչ Ռուբեն Ջալալյանը գրում է, թե «Սովրեմեննիկ» ամսագրում կարդացել է նշանավոր ռուս հրապարակախոս Նվգենի Կարենովիչի «Գարիբալդիի կյանքը» վերնագրով հետաքրքրական վարագրությունը և ցանկություն հայտնել «երևելի մարդու» կենսագրությունը թարգմանված տեսելու հայերեն: Խմբագրությունն ընդառաջում է: «Հյուսիսափայլի» չորս համարներում տպագրվում է այդ ակնարկաշարը (թարգմանիչը՝ Մարտիրոս Հրաչյան՝ Մարտիրոս Հրաչյա Սիմոնյանցն էր): Գարիբալդիի մասին ակնարկաշարում ասված է. «Ահա Գարիբալդու խոռվալից և աշխատասեր կյանքը: Մի հրաշալի կախարդող գորություն ունեցել է նա բոլոր Իտալիայի մեջ: Գարիբալդին կլինի նյութ ֆաշիզմական երգերի, ազգային տաղերի, ֆաշիզմական գրույցների և չափազանց հրաշապատում ավանդությունների»¹²:

«Արշալույս Արարատյանը» նյութեր է տպագրում, որոնք նվիրված էին նվրդալի ֆաղափական վիճակին և մասնավորապես Իտալիային: Պարբերականում տպագրվել են հոդվածներ Ջ. Գարիբալդիի հերոսական գործունեության մասին՝ «Մեծահամբավ կարիպալտի ֆաշ և իմաստուն գորապետը», «Իտալիո ազատության առաջնորդը»: Նա ցավով է գրում, որ իտալական ազգային-ազատագրական թեծ պահին ֆաղափական հարցերի շուրջ Սարդինիայի կամ Պիեմոնտի վարչապետ Կավուրի և Գարիբալդիի միջև տարածություն է առաջ եկել: «Այս տարածությունը ցավալի և վտանգավոր է անշուշտ այժմյան պարագայից մեջ: Բայդ կեռասցվի, թե Վիթթոր-Էմմանուել թագավորին անձնական ազդեցությամբ խաղաղությունը շուտով պիտի հաստատվի այս երկու հոչակավոր մեծանուն անձանց մեջ, որոնք Իտալիո ազգային շարժումին և ազգային ազատագրության հոգին են. և որոց մեկուն կենցաղագիտական

⁹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, Եր., 1949, հատոր 4, էջ 83:

¹⁰ «Արևմուտք», 1859, թիվ 12, էջ 98:

¹¹ «Ազգային հերոս», Թիֆլիս, 1907, էջ 14:

¹² «Հյուսիսափայլ», 1881, թիվ 8, էջ 124:

տաղանդի (եեղինակը նկատի ունի Կավուրին) և մյուսույն զինվորական
 ֆաշիստական վրա (Գարիբալդին - Զ. Ա.) կախանա նվիրյալ»¹³:

1863-ին Կալկաթայի «Նդրալասերը» նույնպես դրվատանքով է խոսում
 Գարիբալդիի գործունեության մասին. «Կարիպալտի երևելի գորավար և
 ազատարարն Իտալիո»¹⁴: Իսկ Գարիբի Պատկանյանը գրում է. «Նվիրյալի մեջ
 կարծեմ. Գարիբալդին վերջինը լինի, որ բռնությամբ ազատեց յուր հայրե-
 նիքը»¹⁵:

Իտալական ազգը, գնահատելով նրա ծառայությունները, նրան ընտրում է
 միացյալ Իտալիայի պառլամենտի անդամ, իսկ ավելի ուշ՝ մի շարք ֆալաֆներում
 կանգնեցնում նրա արձանները: Իտալիայում հանապարհորդելիս, - վկայում է Ս.
 Ռուսոնովան, - յուրաքանչյուր մեծ ֆալաֆում՝ Ջենովայում, Միլանում, Վենետի-
 կում, Հռոմում և ուրիշներում, դուք ամեն տեղ կտեսնեք միևնույն մարդու՝ Ջ.
 Գարիբալդիի հիշատակին կանգնեցրած արձանները: Արձանների վրա համարյա
 միշտ գրված է լինում, որ այն կանգնեցրել է «երախտագետ Իտալիան».
 «միացյալ Իտալիան»¹⁶:

Հայ պարբերական մամուլում տպագրվել են նաև Ջ. Գարիբալդիի նամակները՝
 ուղղված իր մարտական ընկերներին, զինվորներին և ժողովրդին: Դրանցից մի
 ֆանիսը հրատարակվել են «Արևմուտքում», «Մասյաց աղավնիում», «Մեղու
 Հայաստանիում», «Մշակում» և այլուր: Դրանցում արտահայտված են Ջ.
 Գարիբալդիի ջերմ հայրենասիրությունը, ազատասիրական ոգին, ժողովրդա-
 սիրությունը, գորավարի տաղանդը:

Ո՞վ էր Կավուրը և ի՞նչ ձևով նվաստեց իտալական վերածնությանը:
 «Հանճարեղ ֆալսեին» և «մարգարեն», - այսպես էին բնութագրում ժամանա-
 կակիցները Իտալիայի միասնության և վերածնության համար պայքարող կոմս
 Կավուրին: Իտալիայում «ճերբեկից» սկսված հեղափոխությունը հաղթանակից
 «վերեկից»: Այս գործում մեծ էր նաև Կավուրի /1810-1861/ դերը, որը նույնպես
 կոդմնակից էր Իտալիայի միավորմանը:

Կավուրն իր նամակներից մեկում շվեյցարացի իր ֆեոդոլուն գրում էր, որ
 ինքը ֆալաֆականության մեջ «ռսկե միջին» գիծ է բռնել: Կավուրը չէր ընդունում
 բացարձակ միապետությունը, սակայն չէր ընդունում նաև Մաժձինի
 «հեղափոխականին», որի գործունեությունը նա համարում էր «աճեցուցիչ և
 վնասակար»: Ինչպես միշտ նկատել է Յ. Կինը. «Կավուրի գաղափարական և
 ֆալաֆական պլատֆորմը հիմնվում էր մի ֆանի ընդհանուր սկզբունքների վրա,
 որոնք կյանք մտան միասնական Մեծ հեղափոխության ժամանակից: Նրան
 հարգանք էին ներշնչում անգլիական ֆալաֆական համակարգը և առաջադեմ
 գաղափարները»¹⁷: Կավուրը կոդմնակից էր առևտրի ազատությանը: «Նա
 վերածնությանը նայում էր առաջին հերթին այն իմաստով, որ հերթական
 շարժումը Իտալիային աստիճանաբար բարձրացնելու և հասցնելու էր նվիրյալ
 զարգացած տնտեսական հարաբերությունների և ավելի առաջադեմ ֆալաֆական

¹³ «Արշալույս Արարատյան», 1 հոկտեմբերի 1860:

¹⁴ «Նդրալասեր», 1863, թիվ 36, /վիմատիպ/, էջ 304:

¹⁵ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., 1956, գ. 2, էջ 76:

¹⁶ Տե՛ս Ս. Ռուսոնով, Ջուզեպպե Գարիբալդի, Բաֆու, 1904, էջ 7:

¹⁷ Ц. Кин, Италия конца XIX века, М., 1978, с. 10.

մակարդակի»¹⁸։ Այս իմաստով վերածնությունը ուզգային և բուրժուական հեղափոխություն էր։

Ուշագրավ է, որ Կավուրը գործունեության սկզբում իր առջև խնդիր էր դրել իտալական ֆեոդերատիվ պետությունները ստեղծել։ Սակայն 1860 թ. ապրիլի 4-ին Սիցիլիայում սկսված ապստամբությունը, Գարիբալդիի հաջողությունները Կավուրին և լիբերալներին բերեցին այն եզրակացության, որ անհրաժեշտ է միավորել իտալիան։ Եվ, վերջապես, Կավուրն էլ իր ձևով էր պայքարում իտալիայի միասնության համար։ Այս առիթով նշանավոր ռուս պատմաբան Ս. Սկազկինը «Կավուրը և իտալիայի միավորումը» ծողվածում նկատել է, որ «Կավուրը... ասում էին նրանք /իտալական դեմոկրատները - Հ. Ա./ - ձգտում էր ոչ այնքան իտալիայի միավորման, որքան Պիեմոնտի ընդարձակման, նա

օգտագործեց ժողովրդական շարժումը բուրժուազիայի շահերի համար»¹⁹։

Կավուրի քաղաքական գործունեությունը բարձր էին գնահատում նաև հայ գործիչներին շահերը։

Կ. Պոլսում հրատարակվող «Մասիսը» կոմս Կավուրի մահվան առիթով /նա հանկարծամահ եղավ 1861 թ./ տպագրել է իր թղթակից Վ. Պ. Պառնասյանի երկու ծավալուն հոդվածը, ուր գնահատում «Քավուրի պես հանճարին»։ Երբեմն էլ Կավուրին հակադրում է իտալիայի ազգային հերոս Գարիբալդիին՝ նսեմացնելով վերջինիս գործը։ «Քավուր մը... գրում է նա... ավելի գործ կտեսնե, ավելի փառք ու պատիվ կունենա, քան թե կարմիր շապկով Կարիպալտի, որուն խիզախ հանդգնությանը դիմ գնտակ մը բավական է անդամալուծի պես մահինը ձգելու համար»²⁰։

«Մասյաց աղավնի» պարբերականում /Թեոդոսիա/ Գարրիել Ավագովսկին գրում է. «Վասն զի Քավուր կոմսը բոլոր յուր կյանքը նվիրել էր ազատ, միացյալ և գործավոր ընելու իտալիան»²¹։

«Փարիզ» լրագիրը ևս անդրադարձել է կոմս Կավուրի մահվանը։ Այստեղ ընդարձակ հոդվածաշար է տպագրել Խաչատուր Միսաֆյանը, որտեղ ներկայացնում է «Քավուռ, իտալիո նախասահմանյալ և վերջին ազատարարին»։ Խ. Միսաֆյանն անոնսում է Մաժժինիին, իսկ Գարիբալդիի մասին գրում է, թե «իբր բոլոր կենացը մեջ, զենքով և միամտությամբ մարտնչած էր հայրենյաց փրկությանը համար»²²։

Ստ. Նազարյանը «Հյուսիսափայլում» տպագրել է «Կոմս Կամիլլոս Կավուր» հոդված-մանախոսականը։ Ստ. Նազարյանը իր նախորդների նմանությամբ գերազնահատում է Կավուրի դերը և նրա մասին գրում. «Թող բնենն ու զնենն բոլոր համաշխարհական պատմագրության թերթերը, աշխույժ գտանելու են շատ փոքր օրինակներ այնպիսի հոյակապ արդյունակատարության, որպիսի ցուցել է Կավուրը»²³։ Ստ. Նազարյանը գիտակցում էր, որ իր գրած տողերում շռայլումներ կան Կավուրի հասցեին։ Ռուսաստանում աշխատելով, հնարավոր է, որ Ստ. Նազարյանը ծանոթ էր դեմոկրատներին՝ Կավուրի մասին գրած բնագրատական հոդվածներին և դրա համար էլ զգուշավոր վերաբերմունք էր

¹⁸ Նույն տեղում, էջ 11։

¹⁹ С. Д. Сказкин, Избранные труды по истории, М., 1972, с. 392.

²⁰ «Մասիս», 21 սեպտեմբերի 1863, թիվ 606։

²¹ «Մասյաց աղավնի», 1 եռլիսի 1861, էջ 156։

²² «Փարիզ», 1861, թիվ 50։

²³ «Հյուսիսափայլ», 1861, թիվ 6, էջ 503։

հանդես բերում. «Ինչ կամին, թող ասեն, բայց մի բան հավաստի է. նորա բոլոր կյանքը նվիրված էր Իտալիային. Իտալիայի համար ապրում էր նա, Իտալիայի համար մեռավ նա այնպիսի բուն իսկությանմբ, որպես թե մեռած լինեք կռվի մեջ, կարմիր ու սպիտակ ու կանաչ դրոշմը շարժելով ընդդեմ թշնամուն և յուր վերջին շնչի մեջ ականջ դնելով հաղթության ձայնին»²⁴: Հայ գործիչները մեծ մասամբ Իտալիայի փրկությունը ներկայացնում էին միակողմանիորեն, միայն տեսնում էին այն ուղին, որով ընթացել էր Կավուրը:

Ավետիս Ահարոնյանը նախապահորդել է Իտալիայում, երբ ավարտվել էին իտալական ազգային-ազատագրական շարժումները: Նա այդ առիթով երատարակեց «Իտալիայում» գրքուկը, որում անդրադառնում է երրորդությանը: «Նթե այսօր վեցնեոիկը մտել է իտալական մեծ հայրենիքի ծոցը, գրում է Ավ. Ահարոնյանը, այդ մեծ գործն ստեղծեց այն զարմանալի երրորդությունը, որի ձեռքը Գարիբալդին էր, եռգին՝ Կավուրը, և գրուխը՝ Վիկտոր-Էմանուելը»²⁵: Այստեղ հեղինակը գտնում է, որ հայ ժողովուրդը նրանց կատարած օրինակից դասեր պետք է քաղի:

Ինչպես տեսանք, հայ գործիչներից շատերը կողմնակից են եղել Կավուրի գործին և դրականորեն արտահայտվել նրա մասին: Մյուսներից տարբերվում էր Միխայել Նալբանդյանը իր մտածելակերպով: Նա իր գրած տողերում իտալական ազգային-ազատագրական շարժման ընթացքում խարազանում էր Կավուրին և քննադատում նրա վարչագիծը: Միխայել Նալբանդյանը գործելով ռուս իրականության մեջ, թվում է, թե ծանոթ էր ռուս հեղափոխական-դեմոկրատներ Ն. Ջերնիշևսկու և Ն. Գորբոլյուբովի՝ կոմս Կավուրի մասին գրած բացասական գնահատականներին: Դրան հակառակ, Միխայել Նալբանդյանը իտալական շարժման ընթացքում շատ բարձր էր գնահատում «սուրբ Մածոկեանի և սուրբ Գարիբալդիի» առաքելությունը: Այս հարցում Միխայել Նալբանդյանը հավանաբար հետևել է ռուս մեծ մտածողների գաղափարներին:

Եվ, վերջապես, նույն թեմայով Ավետիս Իսահակյանը գրեց իր «Գարիբալդիականը» պատմվածքը, ուր ոչ միայն գնահատում էր Ջ. Գարիբալդիին, այլև նրա փառապանծ զինվորներից մեկին՝ հայր Ջիովաննիին:

Պատմական հենք ունի Ավետիս Իսահակյանի «Գարիբալդիականը» պատմվածքը, որի հերոսը՝ հայր Ջիովաննիին, իրական անձնավորություն է: Ավետիս Իսահակյանը առաջին անգամ պատմվածքի հերոսի հետ հանդիպել է Օդեսայում:

Հայր Ջիովաննին մասնակցել է Ջ. Գարիբալդու կազմակերպած «Ալպիական որսորդների», «Հազարակի», Ասպրոմոնտեի, Մենտանի նակատամարտերին:

Այսպես, հայ հասարակական միտքը միշտ էլ դրականորեն է արտահայտվել և բարձրորեն գնահատել իտալական ազգային-ազատագրական շարժումների և նրանց մեծերի մասին՝ ցանկանալով նաև հայ իրականության մեջ տեսնելու այդպիսի խոշոր գործիչներ:

²⁴ Նույն տեղում, էջ 504:

²⁵ Ավետիս Ահարոնյան, Իտալիայում, Թիֆլիզ, 1903, էջ 85:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՍՊԱՍԱՎՈՐԸ

Հայաստանի Հանրապետության գրականության, արվեստի և մամուլի պետական արխիվի տնօրեն Սանդրո Բեքրուդյանը, նախանձախնդիր մի հետևողական և անհրաժեշտ շարունակելով հրապարակել Հայ եկեղեցու և հրա հավատարմագույն սպասավորների դեմ 1920-30-ական թթ. ծավալված հալածանքների մասին պատմող վավերագրերը, իր իսկ եիմնած «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» մատենաշարի երրորդ հատորը նվիրել է Արտակ Եպիսկոպոս Սմբատյանցի կյանքին ու գործունեությանը:

Այն լույս է տեսել մեկնաստությամբ Կարլ և Էմմա Սոդոյան ամուսինների և հովանավորությամբ Մեսրոպ արքեպս. Աշենյանի: Մեսրոպ սրբազանը գրել է նաև այս աշխատանքի արժևորմանը նվիրված «Սուրբերը և մեք» գնահատանքի խոսքը:

Եվ ինչպես մատենաշարը նվիրված է Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակին, այնպես էլ այս հատորը նվիրվում է Արտակ Եպս. Սմբատյանցի ծննդյան 120-ամյակին և եղերական մահվան 60-րդ տարեիցին: Ինչպես առաջարկում է Ս. Բեքրուդյանը և գրում, «Մեր նպատակն է՝ սույն համեստ հատորով մոռացության խավարից հանել մի լուսավոր առում և կենդանացնել հրա բարի հիշատակը»¹:

Արիստակես (աշխարհական անվամբ՝ Ղազար) Եպս. Սմբատյանցը ծնվել է 1876 թ. մարտի 19-ին, Շամշադիցի շրջանի Տավուշ գյուղում, քահանայի ընտանիքում: 1887 թ. ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց, որն ավարտելով, այնուհետև 1894-97 թթ. սովորում է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ձեռնարանում: 1899 թ. ընդունվում է Դոբայանի համալսարան, ուր ուսումնառության ընթացքում հմտանում է ռուսերեն և գերմաներեն լեզուներում և խորացնում գիտելիքները աստվածաբանության ու փիլիսոփայության բնագավառում: 1902 թ. ավարտում է համալսարանը և վերադառնում Մայր Աթոռ: 1902 թ. նոյեմբերի 24-ին կուսակրոն քահանա է ձեռնադրվում, այնուհետև տարբեր պատասխանատու պաշտոններ վարում Մայր Աթոռում, հոգևոր հովվության ու թեմակալ առաջնորդության կոչվում Բեսարաբիայում, Շիրակում, Սյունիքում, Վրաստանում, իսկ կյանքի եղերական ավարտից առաջ՝ Նրևանում, որպես ներկայացուցիչը Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Այս հատորում բազմաթիվ վավերագրերի միջոցով ներկայացվում է հրա անցած կյանքի ճանապարհը: Ինչպես հատորի հեղինակն է գրում, «Ներկա հրատարակությամբ առաջին փորձն է կատարվում՝ ի մի հավաքելու և հրապարակելու Արտակ Եպս. Սմբատյանցի գրած նամակները, զեկուցագրերն ու հայտարարությունները, հրա անտիպ աշխատությունների եիմնական ու արժեքավոր մասը, տարբեր ժամանակներում խոսած քաղաքների ընտրանքին և Հայաստանի

¹ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Արտակ Եպիսկոպոս Սմբատյանց (Տավուշցի). հոգևոր, գրական, պատմա-քաղաքական գործունեությունը և գեղակաշարությունը, 1876-1937 թթ., կազմեց՝ Սանդրո Բեքրուդյանը, Նրևան, 1997, 695 էջ:

Այսուհետև այս գրքից կատարվող հղումների էջերը կնշենք մեջբերման վերջում:

Ազգային անվտանգության նախարարությունում և Գերագույն դատարանի արխիվում գտնվող նրա հարցաքննության և մեղադրական գաղտնի փաստաթղթերը» (էջ 11): 388 միավոր ընդգրկող այս վավերագրերն ու հրապարակումները Քեներուդյանը, հավաքելով տարբեր արխիվային պահոցներից, վերծանել, ռուսերեն արձանագրությունները հայերեն է թարգմանել, ներկայացվող յուրաքանչյուր միավորը բուն հրապարակումից առաջ վերնագրել համառոտ վերաշարադրմամբ և այս ամենը դասավորել ըստ ժամանակագրական ընթացքի՝ հատորն օժտելով նաև անճանաչողների ցանկերով:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի «Հայ Եկեղեցին իր ծառայական կերպին մեջ» քննդրման հետևողությամբ կարող ենք ասել, որ այս եռտորի վավերագրերի ընթերցմամբ մեր առջև հանում է «իր ծառայական կերպին» նվիրված հայ հոգևորականը:

Փայլուն կրթություն ստացած ու գիտելիքների մեծ պաշար ամբարած Արտակ սրբազանը այն լիարուռ իր ժողովրդին ծառայեցնելու փոխարեն, հարկադրված էր 1920-30-ական թթ. բոլշևիկյան հալածանքների և Հայ Եկեղեցու համատարած ունեզրկման պայմաններում կազմակերպել թեմական կյանքը, հոգալ Եկեղեցու համար աներաժեշտ կարիքները և այս պայմաններում իսկ հեջեցնել Տաթևի վանքի լուծած զանգը:

Նըջանկահիշատակ Գևորգ Զ և Նահատակ Խորեն Ա Կաթողիկոսների, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի դեկլարներին Սրբազանի գրած նամակներում և զեկուցագրերում արտացոլվում են Եկեղեցիների փակման և բռնագրավման, ֆահանջների ունեզրկման, հալածանքների, ապա և ձերբակալությունների դեմ ծառացող խիզախ և աներեր հոգևորականի կերպարը:

Այս հատորը կարևորվում է նաև եոգևոր-եկեղեցագիտական առումով, քանի որ հրապարակվում են Մաքսալանցի անտիպ մի շարք ուսումնասիրություններ և ֆարոգներ: Դեռևս Գևորգյան ձեմարանում ուսանելու տարիներին նա գրում է «Անանիա Շիրակացի» հոդվածը, որում ներկայացնելով Շիրակացու կենսագրությունը, մատենագրական ժառանգությունը, այնուհետև մանրամասնաբար նկարագրում և վերլուծում է էջմիածնի Մատենադարանի (այժմ՝ Նրևանի Մատենադարանում պահվող) հին Գևորգյան ցուցակի հմր. 102 ձեռագիրը, թե այն ինչով է արժևորվում Շիրակացու մատենագրական ժառանգության և ընդհանրապես հայ տոմարագիտության պատմության համար:

Հաջորդ աշխատանքը՝ «Քաղկեդոնական վեների սկիզբը հայոց մեջ» ձեմարանի ավարտաճառն է, որում ընդհանուր եկեղեցական պատմությանը նվիրված աշխատությունների հիման վրա, Քաղկեդոնի ժողովը ներկայացնելով Տիեզերական հրեմ ժողովների, ինչպես նաև Ընդհանուր Եկեղեցու ճեղքում ծավալված նեստորականության և մյուս հերձվածների ողջ եռմապատկերում, այնուհետև ներկայացնում է վերջինիս արձագանքները հայ իրականությունում:

Հատորում տեղ են գտել նաև Սյունյաց թեմի առաջնորդ եղած տարիներին գրած զեկուցագիրը Զանգեզուրի վանքերի վիճակի մասին, ըստ 1925 թ. դրության և վերջինիս հիմքի վրա էլ գրված «Համառոտ պատմություն Սիւնեաց թեմի նշանաւոր վանքերի» ուսումնասիրությունը, ինչպես նաև Ալեքսանդրապոլի անկմանը նվիրված եռուցագրությունը:

1900-ական թվականներից Արտակ եպս. Մաքսալանցը աշխատակցել է «Արարատ» ամսագրին՝ ինքնուրույն և գերմաներենից ու ռուսերենից կատարված թարգմանություններով, այդ թվում նաև մի քանի ոգեշունչ ֆարոգներով: Այս հատորում տեղ են գտել նաև 1920-30-ական թթ. խոսած մի շարք ֆարոգների՝ իր

իսկ ձեռնով կատարած գրառումները: Այս ֆարոգներում նա, Աստվածաշնչի խորը իմացությամբ և հոգևոր բարձր իմացականությամբ, այլաբանության լեզվով փորձում է հաշտեցնել ժենաշտեյին՝ Ավետարանի ֆարոգությունը և իր ապրած ժամանակը, որը և սակայն չներվեց նրան: Պատահական չէ, որ այս ֆարոգները դարձան իր դեմ ներկայացվող գլխավոր մեղադրանքներից մեկը: Իր դեմ վկայություն տվողներից մեկը հարցաֆննության ժամանակ ասում է. թե Արտակ սրբազանը նրանցի Ս. Սարգիս եկեղեցում ֆարոգելիս զարգացրեց այն միտքը, «որ Հայ եկեղեցին ստեղծվել է հենց Հիսուսի կողմից, գոյություն ունի Հիսուսով, այն անպարտելի է, Քրիստոս մեզ հետ է և այլն»: Այսինքն՝ հոգեկան արիություն ներշնչելով հավատացյալներին, անուղղակի ձևով այն միտքն է շեշտել, որ եկեղեցին երկնային հաստատություն է, և բոլշևիկները ի զորու չեն այն կործանելու: Եվ ինչպես գնդակահարության համար հիմք ծառայած մեղադրական եզրակացությունում է ասվում, «Քարոզների միջոցով պարբերաբար հակախորհրդային, ազգայնամոլական ֆարոգչություն է վարել» (էջ 630), որի համար էլ ժամանակի տխրահռչակ «եռյակի» կողմից դատապարտվում է մահվան: Դատավճիռը հետմահու քեկանվում է միայն 1957 թվականին: Իսկ մինչ այդ, փորձելով կանխել անդառնային, Արտակ եպիսկոպոսի ձերբակալության առիթով, Խորեն Ա Մուրադբեկյանը 1937 թ. մայիսի 9-ին բոլշևիկյան ճիվաղներից ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսար Խաչիկ Մուղդուսուն է դիմում՝ Արտակ սրբազանին ազատ արձակելու համար, սակայն ամենահանց իր այս կեցվածքով նահապտակ Կաթողիկոսը արագացրեց միայն իր մերօրյա վկայական մահը...

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՄԵՅՐ ԵԹՈՌՈՒՄ
ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԵՐԵՔ ՆՈՐԸՆԾԱ ԱԲԵՂԱՆԵՐԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑԻՆ

Հունվարի 25-ին Մայրավանքի երեք մոորընծա միաբանները՝ Տ. Արշակ արքեպիսկոպոստը, Տ. Խորեն արքեպիսկոպոստը, Հովհաննիսյանը և Տ. Արշեն արքեպիսկոպոստը, քառասնորյա պահեցողության և վերապատրաստության շրջանն անցնելուց հետո, մատուցեցին իրենց անդրանիկ Պատարագը՝ համապատասխանաբար՝ Մայր Տաճարում, Ս. Հովսիսիմե եկեղեցում և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում:

Հայ Առաքելական Եկեղեցու կանոնների և ավանդության համաձայն, մոորընծա քահանաները, նմանողությամբ Հիսուս Քրիստոսի քառասնորյա ծննդյան և անապատում Սատանայի կողմից փորձվելուց և Երան Բաղդելուց հետո միայն իր տնօրինական գործունեությունը սկսելու, վանքի պատերից ներս ապրում են պահեցողության, ինքնամփոփման, առանձնացման ու վերապատրաստման քառասուն օրեր, որից հետո մատուցում Անդրանիկ Ս. Պատարագ: Անդրանիկ Պատարագից հետո քահանան իրավունք է ստանում քահանայական գործունեությունը սկսելու:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության անունից ջնորհավորում ենք մոորընծա արքեպիսկոպոստին՝ անդրանիկ Պատարագի առիթով, և մաղթում հաջողություններ՝ իրենց քահանայական ծառայության մեջ:

Պատարագիչ Հայր Սուրբերը, հրնթացս Ս. Պատարագի, քարոզ խոսեցին, որոնք զետեղում ենք ստորև:

Տ. ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«...Մեղքն ձեր օրօշնն ի մէջ ձեր եւ ի մէջ Աստուծոյ...

Ձիք որ որ խօսի զարդարութիւն, ...յուսացեալ են ի սնտիս եւ խօսին զունայնութիւն...»:

«...Ձեր մեղքերն են պատենչ զարձել ձեր և Աստծու միջև... Ձկա մեկը, որ արդարութիւն խօսի... Հույս են գրել սնտի բաների վրա և ունայնութիւն են խոսում...»:

(ԵՍԱՅԻ ԾԹ 2, 4)

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Տեսեք, թե ինչպիսի մեղադրական է ներկայացնում հրեա ժողովրդին Նաայի մարգարեն, որն ամենայն որոշակիությամբ ու ներքից, հոգևոր հստակատեսությամբ ունի այն կատարյալ համոզումը, թե Աստծու ժողովրդի և Աստծու, Արարչի և արարածի միջև գոյություն ունեցած կապի խաթարման միակ մեղավորը մարդն է: Իսրայելի ժողովրդի ուսերին է ծանրացած պատասխանատվու-

թյունն այն մղձավանջային իրականությանն, որն առաջացել է Աստծու ժողովրդի անհնազանդությունից, ինքնաթափանցությունից ու կամակորոշությունից:

- Ինչպե՞ս պոռնկացավ հավատարիմ քաղաք Սիոնը, ինչպե՞ս անձնական ձգտումների, երկրավոր ու անցողիկ հրապույրներից հետամուտ լինելով, խոտորվեց ու ոսկրացյալ սրտի տեր դարձավ Աստուծո ժողովուրդը,- շվարած ու վշտացած աղաղակում է կայծակնաշուրթ մարգարեն:

Մարգարեի տառապանքի խորունկ ու անհատական պատճառը այն զարհուրելի իրականությունն է, որ Աստծու ժողովուրդը հակվել է ստորության, ապաքարոշական մղումները թափանցել են բոլոր հարաբերությունների և բոլոր դասակարգերի գործունեության մեջ: Վաճառականները խաթեբայությանը են զբաղվում, իշխաններն ու մեծատոնները գողությանը ու կաշառակերությանը են պարարտանում. միով բացիվ՝ ոչ ոք չկա, որ արդարություն խոսի: Ամենքը հույսները դրել են սնուտիների վրա և ունայնախոս դարձել:

Սիրելի հավատացյալներ, քույրեր ու եղբայրներ ի Ջրիստոս, ձեզմից ո՞ւմ մեջ այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ Եսայի մարգարեի՝ Աստծու մաքրամաքուր խոսմանի զայրույթն ու վիշտը միայն այն ժամանակվա համար էր, ո՞վ կպնդի, որ մարգարեի շանթող խոսքերը, որոնք բարոյական ու հոգևոր ուշիմության հիմն են հնչեցնում մեր ականքներին, այսօրվա համար չեն ասված նաև:

Փոխենք աշխարհագրական անուններն ու պայմանական կողմը ամոսսենք և կոնսենք, որ մեր առջև կանգնած է այսօրվա մարդկությանը մեղադրամքը շուրթերին դիմող մի Աստվածային պատգամախոս, որ շարունակ կրկնում է.

- Ո՛վ մարդ, ո՛վ ժողովուրդ, Արարչիդ հետ կտրված կապիդ միակ պատասխանատուն դու ես: Մեղքերի բազմահրապույր քամիներին տուրք տալդ է քեզ զրկում Աստծու հաճությունից:

Եվ հիրավի, այսօր քանի՜-քանի՜ ազնիվ հոգիներ, եթե գտնվեին, մարգարեներ կդառնային ի տես այն չարաշահումների, ի տես այն անարդարությունների, որոնք կատարվում էին ոչ միայն վաղնջական Իսրայելում, այլև ուղղակի հենց քո ծոցում, ո՛վ հայ ժողովուրդ:

Մի՞թե այսօր մենք բարոյապես ավելի բարվոք վիճակում ենք ապրում, քան սրանից 2700 տարիներ առաջ մի ժողովուրդ, որին Եսային մեղադրում էր: Մի՞թե այդ մեղադրականին մենք կարող ենք այսօր ուշադրություն չդարձնել և մեզ համար մի ժամանակավորեայ արտահայտություն նկատել:

- Մենք ո՛ւր, հրեաները ո՛ւր, մեր ժողովուրդն ուրիշ է, լավն է,- կմտածեն ազգային սնապարծություն ունեցողները:

Այո՛, իրավացի են նրանք: Ժողովուրդները, ազգերը տարբեր են միմյանցից, տարբեր են լեզվով, մշակույթով, ֆիզիկական առանձնահատկություններով, սակայն բոլորը մի են մեղքի նկատմամբ ունեցած բուռն փափագով և այն բարի կամքով, որ կարող են հաղթահարել այդ չարիքը:

Մենք ևս ընկել ենք մեղքի ճիրանների մեջ, հույսներս դրել ենք սնուտի բաների վրա և դարձել ունայնախոս: Մեզմից ամեն մեկը իր համար առատ խորհրդածության նյութ է գտնում՝ սեփական ապագան լուսավոր ու նյութական փառահեղ պայմաններում ուրվագծելու մեջ: Ողորմելի ու չնչին մահկանացուներ լինելով, որ դրանով իսկ հաստատում ենք մեր մեղանշականությունը, մեզանից շատերը մեզ կառքով երկինք սլացող արքայազներ ենք կարծում: Ի՞նչ է մեր այսօրվա կյանքը: Դրամական մի մրցավազք: Ամեն մեկը ձգտում է դրամի, հարստության, ունեցվածքի, քարեկեցության...

Բարի ու Աստծու հավանությանն արժանացած արդյունքներ են սրանք: Բայց... Բայց չպետք է մոռանալ, երբեք չպետք է շփոթվել ու դրանց տալ կարևորագույն ու կենտրոնական արժեք: «Ուր գանձք ձեր են, ահա և սիրտը ձեր եղիցին» (Մատթ 6 21),— ասում է Փրկիչը: Այն պահից սկսած, երբ մենք կամուրջներ ինքնակառավարման դեկլ կհանձնենք դրամի, հարստության ու բարեկեցության մեր մեջ եղած մոլուցքին, հենց այդ պահից ինքներս էլ կդառնանք մեր բարության ու իշխմության գերեզմանափորը:

Այն օրվանից, երբ մենք մեր հոգու ու մտքի առաջաստիճանը լայնորեն կբացենք իշխելատենչության, իշխանության հասնելու բուռն ու կատաղի մրրիկներից, այդ օրվանից իսկ հույսներս դրած կլինենք մի սին ու սմամեջ իրականության վրա:

Մենք կդառնանք ունայնախոս և արդեն իսկ ենք, որովհետև մեր՝ իմ, քո և բոլորիս ամենօրյա խոսակցություններից հաճոյասիրություն, փափկասիրություն ու ցուցամոլություն է բուրում: Մեր ժողովրդի ամենակենսունակ տարրի՝ երիտաւարության շրջաններից հագիվ թե ունկնդրին հաջողվի լսել մի մախադասություն, մի պարբերություն, ուր չշոշափվեն հաճույքը փառաբանող թեմաներ, ուր ամեն լուրն չխնկարկվի դրամի ու իշխանության «ամենակարող» ուժը: Ավելի առաջ գնացածներ էլ կան, որ մոռտում են, անարգում ամեն մի սրբություն՝ հենվելով իրենց պիղծ ու կեղծ գաղափարախոսության վրա. «Կեր, արք և ուրախ լեր»:

Այո՛, կարելի է և այսպես ապրել: Բայց մի պահ անդրադառնանք, միայն մի լուրջ հույսներս կտրենք սնուտիցներից, դադարենք ունայնախոսությամբ զբաղվելուց և հարցնենք ինքներս մեզ.

– Ո՞ւր ենք գնում, ո՞րն է իմաստը մեր կյանքի:

Իրապես, ո՞րն է մեր կյանքի իմաստը: Արդյո՞ք մենք ծնվել ենք, որ զուտ քարշ տանք մեր այսրաշխարհային գոյությունը, աշխարհ ենք եկել միայն, որ, անցնելով հաճույքի պարտեզի միջով, քայլենք ու մեկ առ մեկ ըմբռնենք վայելքի՝ վարդերի ամուշ բուրմունքը: Այո՛, կարելի է այսպես էլ ապրել և ո՛չ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է, եթե այդպես ապրածներից ու ապրողներից որևէ մեկը հավաստի այդպիսի կենցաղավարության ճշմարտացիությունը: Բայց ասա ինձ դու, դո՛ւ, որ ճաշակել ես այդ բարիքները, ինքդ քեզ լիովին բավարարված զգացել՝ ես: Թող Սողոմոն իմաստունն ասի, նա, ով մահկանացուների մեջ ամենից շատն է ճաշակել հաճույքի խաբուսիկ վայելքը: Բայց տեսե՛ք, տեսե՛ք, նա ինչ է ասում. «Ունայնութիւն, ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» (ԺՈՂ. Ա 2), ամեն ինչ «ի ձեռանէ Աստուծո՛ւ է» (ԺՈՂ. Բ 24): Ամեն ինչի մախասկիզբը Աստված է և Նրանից պետք է օրհնություն հայցենք և, իբրև այդ օրհնության հետևանք ու շնորհ, վաղեմք այն բարիքները, որոնք Աստվածաստեղծ են:

Այս իսկ պատճառով, ինչպես ասում է Աստվածորդին, «Աստծու արքայությունն ու արդարությունը նախ փնտրեցեք, և ամեն ինչ ձեզ ավելիով կտրվի» (ՂՈՒԿ. ԺԲ 31): Ամեն օր, երբ ծագում է արեգակը, երբ մենք աչքներս բացում ենք լույսին ու տեսնում մեր շրջապատը, Աստծու շնորհն է՝ տրված մեզ, և այդ շնորհը մեզ տրվում է ո՛չ թե նրա համար, որ մենք հույսեր կապենք այլ և այլ սնուտի բաների հետ, ունայնախոսությամբ լցնենք մեր ժամանակը, տրվում է ո՛չ թե նրա համար, որ մեր նյութական բարիքները կրկնապատկելու մոլուցքով տառապենք ու ամենօրյա ցոփությամբ ընկղմվենք հաճոյապաշտական ցեխի մեջ, այլ Աստված մեզ ժամանակ ու հնարավորություն է տալիս՝ անդրադառնալու և մեր խոտոր ընթացքից տրամագծորեն շրջադարձվելու: Բազմիցս մենք վճռել ու

երդվել ենք, որ պետք է վերածնվենք ու վերանորոգվենք, բազում ամգամներ սկզբունքային մոտեցում ենք ցուցաբերել այս կամ այն հարցի նկատմամբ, բայց մույնքան ամգամ էլ, մոռացության մատնելով մեր սկզբունքն ու վճիռը, մի բարոյական ապտակ հասցնելով ինքներս մեզ, մորից դարձել ենք միևնույն սխալներից, միևնույն մեղքից, ինչպես շունն է դառնում իր փսխածին: Մեզցից յուրաքանչյուրը, սիրելի՛ հավատացյալներ, կյանքում ունի իր կրեյլը խաչը, ամեն մեկիս սրբազան պարտականությունն է հսկել սեփական բարոյական կերպարի վրա, յուրաքանչյուրիս պարտքն է հսկել իր հոգու աչքերին, որպեսզի մրանց պարգությունից հոգևոր վիճակն էլ լուսավոր լինի: Մենք պարտավորություն ունենք ինքներս մեր և Աստծու առջև ուշիմություն համդես բերելու և Աստծուն մերձենալու մեր վճիռները չլուծանելու ու չմոռանալու՝ կրկին տեղքայլ չկատարելու համար: Սա բարդ առաքելություն է: Համակ մաքառում ու ջանք է պահանջում հոգևոր առաջընթացը: Պայքարել ու պայքարել է պետք՝ բարոյական արիության և ուշիմության հասնելու համար, որպեսզի վերանա այն պատմեջը, որ գոյացել է մեր և Աստծու միջև, որպեսզի կամրջվի այն անջրպետը, որ բաժանում է արարածին իր Արարչից: Ահա այս սրբազան առաքելության շավիղներում իր ծառայության առանձնակի ու կարևոր նշանակությունն ունի հոգևորականը: Այսպիսի մի ծառայության կոչվեցին սրանից 40 օրեր առաջ, անցյալ տարվա դեկտեմբերի 14-ին, մեր սրբություն սրբոց Տաճարի Խորանի վրա ծնրադրած ու կուսակրոն քահանայի օծում ու ձեռնադրություն ստացած երեք ճեմարանավարտ սարկավագներ. մեկը՝ խոսքերիս նվաստ հեղինակը, երկրորդը՝ Տ. Խորեն արեղան, և երրորդը՝ Տ. Արշեն արեղան:

Սիրելիք ի Քրիստոս, աղոթեցե՛ք մեզ համար, որ մենք արժանի լինենք սպասավորելու մի Եկեղեցու, արժանի լինենք մեր անարժան գլուխները դնելու մի զոհասեղանի վրա, որը սրբագործվել է մեր լուսապսակյալ նահատակ նախահարց արյունով ու քրտինքով: Անսահման մեծ է մեզ վրա դրված պատասխանատվությունը, անչափելի է արժեքը քահանայական աստիճանի, որ կոչված է լինելու օղակը այն հսկա կամրջի, որ պետք է ընթանա դեպի Աստված՝ հաղթահարելով մեղաց անջրպետը:

Այսպիսի «հաւառ ու փառաւորեալ պաշտօն»-ի մերձենալու և արժանանալու համար բառերով արտահայտելի երախտագիտության զգացմունքներս եմ զեղում Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա Կաթողիկոսի ոտքերի առջև՝ հավաստիացումով, որ գլխիս հետ Հայ Եկեղեցու զոհասեղանին եմ թողնում նաև նվիրումս ու հանգմունքս, սերս ու հավատքս:

Խորապես զգացված ու շնորհակալական ապրումներով լեցուն է սիրտս առ այն սիրահոժար քայլը, որով մեզ ընդառաջեցին մեր Եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականներ՝ Տ. Զավեն արքեպս. Զինչիմյանը և Տ. Ներսես արքեպս. Պողոսպալանը՝ դառնալով մեր հոգևոր ծնողները:

Չեմ կարող ամտաբեր գտնվել, ջերմ ու սիրալի խոսքեր չհղել միաքանակից եղբայրներին, որոնց ջերմագին զգվանքների մերքո աճեցինք ու արմատներ մետեցինք Մայր Եկեղեցու անդաստանում:

Շնորհակալություններս ձեզ, սիրելի՛ հավատացյալներ: Ձեր աղոթքներում հիշեցե՛ք նաև ինձ, որպեսզի, լինելով մեր Եկեղեցու նվաստ սպասավորն ու զինվորը, մի օր արժանի լինեմ իրականացնելու Տերունի այն պատգամը, թե «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովվ. Ժ 11): Ամեն:

Տ. ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փառք քեզ, Աստված, որ իմ հողեղեն մեղավոր անձը բարձրացրիր և արժանի արեցիր Սուրբ Սեղանիդ սպասավոր և կուսակրոն քահանա դառնալու:

Փառք քեզ, Աստված, որ արժանի արեցիր ինձ հովիվ ու սպասավոր լինել ժողովրդիս և հաղորդակից լինել Սուրբ Մարմնիդ և Սուրբ Արյանդ:

Փառք քեզ, Աստված, որ արժանի արեցիր ինձ Սուրբ Խոսքիդ տարածող և դեսպանդ լինել երկրիդ վրա:

Եվ այսօր, իմ անդրանիկ Պատարագին, ես որդիական սիրով իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ հայտնում Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի բարձր կարգադրությամբ ես և իմ օժակից երկու եղբայրները արժանացանք Սուրբ ձեռնադրության և օծման:

Եվ, վերջապես, իմ շնորհակալությունը Եզիպտոսի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Զինչինյանին, որը եղավ իմ ձեռնադրողը և հոգևոր ծնողը:

Սիրելի հավատացյալներ, խնդրում եմ ձեր աղոթքներում հիշեք իմ անձը, որպեսզի լինեմ «մշակ առանց ամօթոյ»:

*«Փառք քեզ Աստուած, փառք քեզ
յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:*

Մեր երկնավոր Հայրը մեզ բաշխած իր անսահման բարիքների դիմաց մեզմից շատ բան չի պահանջում, բավական է միայն ազնվարանական պատվիրաններով ապրել ու գործել և փառաբանել Աստծուն: Ահա թե որքան քիչ բան է պահանջվում մեզմից այն անսահման բարիքների ու շնորհների դիմաց, որ Տերը անվարձաբաժնույց մեզ է տվել:

Մենք բոլորս, իբրև զավակները մեր ծնողների, խոնարհվում և մեր երախտագիտությունն ենք հայտնում մեր հայրերին ու մայրերին, որ պատճառ են եղել մեր ծննդյան և լույս աշխարհ գալուն: Այո՛, նրանք արժանի են իրենց որդիների կողմից տված գնահատանքին: Արդ, եթե անհատապես շնորհակալություն ենք հայտնում մեր երկրավոր ծնողներին, ապա տասնապատիկ ու հարյուրապատիկ ավելին մարդկությունը պետք է մատուցի Աստծուն՝ իր երկնավոր ծնողին, քանզի Նա է ամեն ինչի պատճառն ու սկիզբը:

Աստվածաշնչի ՄՃճոց գիրքը ասում է. «Երկիրն անձև ու անկազմ էր, խավար էր տիրում անհունի վրա...» (ՄՃճոց Ա 2):

Բայց արարիչն Աստված ստեղծեց երկիրն ու երկինքը, բաժանեց ջրերը ցամաքից և տարվա սքանչելի չորս եղանակներով զարդարեց այն: Ստեղծեց բուսական ու կենդանական զարմամահրաշ այս աշխարհը: Իսկ վեցերորդ օրը Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով և նմանությամբ: Վերջինս, լինելով արարչագործության թագն ու պսակը, պետք է տիրեր իրենից առաջ բոլոր ստեղծվածներին: Դեռ ավելին, մարդուն դրախտի փափկության մեջ դրեց, որպեսզի ապրի ու վայելի: Սակայն մեր անմտության պատճառով ճաշակեցինք

արգելված պտղից, կործանվեցին և վտարվեցին դրախտից: Բայց, չնայած մեր անհավատարմությանը, քաղմագութ Աստված ներեց մարդուն, Միածին Աստվածորդուն՝ Հիսուս Քրիստոսին աշխարհ ուղարկեց, որ պեսոյի չարչարվի ու խաչվի մեր մեղքերի համար: Քրիստոս, որ Հայր Աստծո կերպարանքն էր, իր անճառելի փառքից խոնարհվելով, ծառայաբար առաքյալների ոտքերը լվաց:

Փառք տանք Բարձրալիք, քանզի Հիսուսի միջոցով փրկվեցին ու ազատվեցին, մաքրվեցին մեղքերի ու անօրենությունների ճահճից և դեպի Աստված բարձրանալուն արժանացանք:

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր, մեր հանդեպ Աստծո ունեցած այս անասնաման սիրո և առատաձեռնության դիմաց արդյոք պահանջված փառք և գոհունակություն ընծայո՞ւմ եմք Նրան, ինչպես զավակը իր հորը և, վերջապես, ինչպես արարածը իր Արարչին: Եթե չեմք անում, ուրեմն ափսոս մեզ, եկեք արթնանանք ու թոթափվենք այս հոգևոր կուրությունից: Մեր ընծայած փառաբանությունից Տիրոջ փառքը ո՛չ կավելանա և ո՛չ էլ կպակասի: Նա մեր փառաբանության կարիքը չունի, այլ մենք է, որ փառաբանվում ենք, երբ փառաբանում ենք Աստծուն: Հետևաբար, ամեն պարագայում, ամեն ինչի համար պետք է խոնարհաբար մեր որդիական երախտագիտությունը հայտնենք Նրան, քանզի արարչագործության մեջ ինքնին ոչինչ չար չէ, բայց մարդն է, որ իր քնահաճ և չար շահադիտական նպատակներով բարին ի չարս է գործադրում: Երբ ամերիկացիները ատոմային ռուսք պայթեցրին Մալոնիայի երկու քաղաքներում, հարյուր-հազարավոր մարդկանց կյանքեր դադարեց թույնների ընթացքում, որը դարձավ մարդկության տեսած չարիքներից մեկը: Իսկ երբ մարդ այդ նույն նյութը բարի նպատակով է օգտագործում, այն բարիքի աղբյուր է դառնում: Ահավասիկ, որքան կենսական նշանակություն ունի մեզ համար Հայաստանի Ատոմակայանի շահագործումը:

Պարզ դանակի վերքերից հազարավոր մարդիկ իրենց աչքերը հավերժ փակել են այս աշխարհին և շարունակում են փակել, երբ մարդ դանակը ի չարս է գործածում: Բայց դանակը ինքնին չար չէ: Թող վկայեն մեր մայրերն ու քույրերը, թե ինչքան կոծվարամար իրենց գործը, երբ խոհանոցներից հանկարծ պակասեք դանակը:

Այնպես որ ցանկացած իրավիճակում պետք է փառք տալ Աստծուն, քանզի, ինչպես տեսանք, դժբախտությունները և ծանր վատաբանքները իրենցից չէ, որ գալիս է մեզ, այլ դրանք առաջ են գալիս այն դեպքում, երբ մարդ Աստծո ստեղծած բարիքները ի չարս է գործածում և ծառայեցնում իր մութ ու զարտուղի նպատակներին:

Բերանացի, խոսքով փառաբանությունից դուրս կա փառաբանության մյուս երեսը, որը արտահայտվում է մարդու կեցվածքով և գործելակերպով դեպի իր մեանը՝ մարդը:

Եթե մեկը կարողանում է սիրել իր մեանին, կարողանում է հեզ և խոնարհ լինել, անոխակալ ու ողորմած, անհիշաչար և եղբայրասեր, մա իր իսկ կյանքով արդեն փառաբանած է ինքնու Աստծուն:

Սիրելի հավատացյալներ, մաղթում եմ, որ Աստված իր շնորհները առատաբար բաշխի ձեզ, և երբ դուք փառք տաք Աստծուն, ինքներդ իսկ փառավորված լինեք:

Եկեք մեկ անգամ ևս մեր հայացքները երկինք հառելով ասենք.

«Փառք քեզ Աստուած, փառք քեզ

յաղագս ամենայնի, Տեր, փառք քեզ»:

Տ. ԱՐՇԵՆ ԱՔԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ԱՆԳՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*«Շնորհեա ինձ քահանայական փառք մտանել
ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ, որք
անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո»:*

*«Շնորհիր ինձ քահանայական փառքով Քո
սրբությունները պաշտել նրանց հետ, ովքեր անմե-
ղությամբ պահեցին Քո պատվիրանները»:*

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅԹ

Սիրելի հավատացյալներ Ս. Սարգիս եկեղեցու, այս բառերն էի արտասանում
Ս. Պատարագից առաջ՝ ընթերցելով Պատարագամատուց տետրից:

Ծուրք քառասուն օրեր առաջ երկու օծակից եղբայրներիս հետ ծուցկի եկանք
Մայր Տաճարում, Իջման Ս. Սեդակի առջև, և մեր քահանայական ուխտը
կատարեցինք և ապա ձեռնադրվեցինք ու օծվեցինք Հայց. Առաքելական
եկեղեցու քահանաներ՝ համաձայն մեր Տիրոջ այն խոսքի, թե «Ինչպես Հայրը
իմձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (ՄՄՏԹ. ԻԸ 18), և որին հաջորդեց
քառասնօրյա պահեցողության շրջանը Մայրավանքի պատերից ներս:

Եվ ահա այսօր, որպես լրումն այդ օրերի, մեր հայրերի Աստվածաշնորհ
տնօրինությամբ մեր անդրանիկ և ուխտի Պատարագն ենք մատուցում՝ առ
Աստված կանչելով «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Այսօր, ի նշան մեր քահանայագործման սկզբի, ծուցկի ենք գալիս մեր
հոգիներում և Աստուծո, նրա բոլոր սրբերի և ձեր առջև վերստին նորոգում ու
վերարծարծում ենք մեր Ուխտը, այն է՝ մերկամանք հիմ մարդուց և ասեմք.
«Քրիստոսի հետ խաչը ելա. կեցողանի եմ այսուհետև, բայց ոչ թե ես, այլ իմ մեջ
ապրում է Քրիստոս»:

Այսօր իմ ձեռքերն ու աչքերը վեր են բարձրանում՝ առ Բարձրալը, և
գոհություն ու փառք եմ մատուցում մեր Տիրոջը, որ իր անսահման գթասրտու-
թյամբ և առատ ողորմությամբ իմձ արժանի դարձրեց իր Ս. Սեդակի սպասավորն
ու մատուպակը լինելու, իրեն հավատացողների ծայր հասցեղ իր բարձունքներից
և հայեղ խաղաղություն մեր ժողովրդի և համայն մարդկության համար և,
խաչակից լինելով իրեն, իր շնորհը ստանալ:

Զեռնադրության խորհրդով ձեռնադրվողը Աստուծոց ոչ միայն ընդունում է Ս.
Հոգու շնորհները, նվիրապետական կարգ, երկնային իշխանություն՝ վեց
խորհուրդներ կատարելու, Քրիստոսի փրկությունը բաշխելու ու Քրիստոսաման
կյանք պարգևելու, այլև Քրիստոսի Ավետարանը քարոզելու և ուսուցանելու և
ժողովրդին ապաշխարության հրավիրելու:

Զեռնադրության խորհուրդը, որ Հիսուս Քրիստոսի կողմից փոխանցվեց
առաքյալներին և առաքելական հաջորդականությամբ հասավ ձեռնադրված-
ներին, մեզ տալիս է իշխանություն՝ քարոզել Աստուծո խոսքը, ապաշխարող-
ներին մեղքի կապանքներից արձակել և, որ ամենակարևորն է, Տիրոջ մարմինը
քահանայագործել՝ զոհաբերել:

Այս երեք հիմնական կետերի վրա է խարսխվում քաճաճայական խորհուրդը, որի պատիվը և կարևորությունը պետք է լրջությամբ պահպանվի, քաճաճան պետք է «աճի և դողութեամբ սպասատրի Աստուածայնոցն», ինչպես ասում է Ներսես Օմորհայի մեծագործ Հայրապետը:

Պատարագիչը Հիսուս Քրիստոսից ստացած իշխանությամբ փոխարինաբար մերկայացնում է Նրան, և ինքը բուն գոհագործողը չէ, և իր կամքից կախում չունի անարյուն պատարագը, այլ Նրանից՝ Սեր Տիրոջից, և որի համար աղոթում ենք իրեն՝ «Բաւականացո զիս զօրութեամբ Հոգւոյդ Սրբոյ, որ զգեցեալ եմ քաճաճայական շնորհ, կալ առաջի Սրբոյ սեղանոյս եւ քաճաճայագործել զքո ամարաւտ մարմինդ եւ զպատուական արինդդ»:

Փառք Տիրոջը, որ ինձ ընտրեց որպէս անոթ՝ իրեն քարոզելու, իրավունք տվեց հորդորելու ամեն մարդու և ուսուցանելու իր վարդապետությունը բոլոր նրանց, ովքեր փափագ ունեն կատարյալ լինելու, ովքեր Աստուծո որդիներ լինելու կոչումն ունեն: Նաև նրանց փրկության հույսը մերժել, ովքեր հուսահատ են դարձել՝ կյանքի փորձություններից ընկրկելով, նրանց, ովքեր թեթևությամբ ու անտարբերությամբ են ապրում՝ խորհրդածության մյուս չդարձնելով անգամ իրենց կյանքի նպատակն ու իմաստը, որպեսզի, ինչպես ասում է Պողոս առաքյալը՝ «բոլորը մեկտեղվեն սիրով և հասնեն կատարյալ իմաստության մոխտությանը՝ ճանաչելու համար Աստուծո խորհուրդը, որը հայտնվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մեջ» (ԿՈՂ. Բ 2):

Եվ այդ աստվածային հայտնության օրերից մինչև այսօր շուրջ երկու հազար տարիներ են լեռնացել: Բայց Ավետարանի ճշմարտությունները այդ լեռներից այն կողմ դողդոցով, բայց և դղրդյունով խաղաղություն սփռելով ու հաստատելով են մեզ հասել՝ մշտապես իր շեփոթողն ու տարփողողը գտնելով, իր առաքյալն ու աշակերտը ընտրելով, իր համար մաքսիրոսավորի ու վկայի սուրբ արյան կենսատվության վկան դառնալով, իրեն սիրողներ և համուն ճշմարիտ սիրո իրենց կյանքը Աստուծո սիրով ապրող նվիրյալներ ունենալով: Եվ ինձ համար մեծագույն պատիվ է այդ նվիրյալների կողքին ծառայել նույն նպատակին: Նվիրյալներ, ովքեր, ճշմարիտ սիրով և հավատքով ապրելով իրենց կյանքը, քրիստոնեությունը ապրեցին իրենց կյանքով և աստվածային պատգամները փոխադրեցին իրենց կյանքից մերս, սիրեցին՝ Սեր տարածելով, հավատացին՝ Հավատք քարոզելով, հուսացին՝ Հույս մերժելով, և քրիստոնեավայել ապրեցին՝ Երկնքի Արքայության գաղափարը իրենց կյանքով վկայելով համաձայն Տիրոջ այն խոսքի, թե «Արքայութիւնն երկնից ի մերքս ձեր է»:

Եվ որի համար աղոթում ենք Տիրոջը՝ «Ընորհիր ինձ քաճաճայական փառքով և արքայությունները պաշտել նրանց հետ, ովքեր անմեղությամբ պահեցին և պատվիրանները»:

Սիրելի հավատացյալներ, ես այսօր իմ Ուխտն եմ վերանորոգում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ՝ նրան ծառայելու ամհուն պատրաստականությամբ: Լուսավորչաբնաստատ Ս. Էջմիածինը դարեր շարունակ եղել է մեր ազգի հոգևոր կենտրոնը և Աստվածային լույսը ստանալով՝ այն սփռել է իր զավակների վրա, լուսավորել նրանց ճանապարհները՝ մշտապես նրանց հոգիներում և մտքերում բորբոքելով Քրիստոսի սիրո հուրը: Եվ մեր պարտքն է, որպես հոգևորական, խունկ դառնալ նրա բուրվառիկ և մի կաթիլ լույ՝ նրա կանթերը վառ պահելու:

Իմ որդիական պարտքն եմ համարում երախտագիտության և շնորհակա-

լուծյալ խոսք հղել առ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Օտուրք երեք տարի է, որ մեզ բախտ է վիճակվել սնվել վեհափառ Հայրապետի անսահման իմաստությունից: Դեռևս ուսանողության տարիներից վեհափառ Հայրապետը ամեն մի պատեմ առիթ օգտագործում է՝ իր եկեղեցանվեր ու հայրենասեր շունչը երիտասարդ սերունդին փոխանցելու, նրանց մեջ եկեղեցուն և Հայրենիքին ծառայելու ոգի սերմանելու և ամրապնդելու, իր երիտասարդական եռանդով Աստուծո ծառաներին ծառայելու կենդանի օրինակ դառնալով, նրանց մեջ ծառայասիրության հուրը բորբոքելու: Այժմ էլ իր Հայրապետական կարգադրությամբ մեզ քահանայության կոչելով՝ առաքելության է կանչում ծառայելու Աստծուն, Եկեղեցուն և Ժողովրդին, և հորդորում միշտ մնալ հավատարիմ զավակը և ծառան Ս. Էջմիածնի: Եվ մենք, իբրև հոգևոր պտուղ իր բազմաբնույթ գործունեության մեկ ոլորտի, մեր նվիրվածության և հավատարմության առհավատ յայտարարելով, այս Սուրբ Խորանից խոստանում ենք իր կանչը չթողնել առանց արձագանք և առանց վարանելու «Ո՛ւմ ուղարկեմ, և կամ ո՞վ կզնա այդ ժողովրդի մոտ» հարցին նախի մարգարեի ոգևորությամբ պատասխանենք՝ «Ահավասիկ ես, ի՛նձ ուղարկիր» (ԵՍԱԹԻ Զ 8): Մաղթում ենք վեհափառ Հայրապետին երկար ու բազմարդյուն տարիների գործունեություն՝ ի փառս Աստուծո և մեր ժողովրդի:

Ես իմ երախտագիտության խոսքն եմ ուղղում իմ Հոգևոր ծնողին՝ Եզիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Տ. Զավեն Արքեպս. Զիջիյանին, որ պատրաստակամորեն Եզիպտոսից եկավ Մայր Աթոռ և ստանձնեց մեզ Հոգևոր ծնող լինելու պատասխանատվությունը՝ ձեռնադրելով և օծելով մեզ քահանաներ: Աղոթում ենք մեր Տիրոջը, որ առավել զորացնի նրան և արևշատ օրեր պարգևի:

Խորին երախտագիտություն և շնորհակալություն Հոգևոր Ընտարանի նախկին և ներկայիս տեսչությանը, ինչպես նաև դասախոսական կազմին, որ իրենց անդույլ, անձանձիր ու նվիրական աշխատանքով իրենց նպաստն են բերում հայ հոգևորականի հոգեկերտման ու զարգացման գործում: Եվ փառք Աստուծո, որ Գևորգյան Ընտարանի նախկին շենքի վերաբացումով նոր հորիզոններ ու դաշտեր են բացվում՝ նրանց եռանդն ու ջիղը առավելագույնս ներդնելու առումով:

Մենք երախտապարտ ենք Մայր Աթոռի միաբանությանը, հատկապես ավագ միաբաններին, ովքեր աչալորջությամբ ու հետևողականությամբ հետևեցին ու դաստիարակեցին մեզ՝ մեր Եկեղեցու ու Մայրավանքի ավանդությունների համաձայն, սիրով ու ջերմությամբ պարուրելով մեզ, իրենց նվիրական շարքերն ընդունեցին:

Սիրելի հավատացյալներ, այսօր ձեր աղոթքն ու բարեխոսությունն ենք ակնկալում մեզ համար, որ Աստուծո պահապան աջը մեր վրա լինի՝ ծառայության մեջ մեր անվստահ քայլերին իր կանխորոշած ուղիներով առաջնորդելու համար: Վստահ ենք, որ ձեր աղոթքների ձայնը կլսվի Աստծու կողմից, ու մեզ վրա դրված պարտականությունները կկարողանանք հաջողությամբ իրականացնել:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի հունվարի 25-ին Գեղարքունիքի թեմի Առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում հավաքվել էին թեմի քահանայական դասը, հավատացյալները, Գավառի պաշտոնատար անձինք: Թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաքսյանը քահանա էր ձեռնադրում Տիգրան սարկավագ Մարտիրոսյանին:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց «Կոչումն ընծայութեան» կարգը, երբ նորընծան հանդիսավորապես հանձն է առնում հետևել ուղղափառ դավանության և «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալու կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Հունվարի 25-ին, ժամը 11-ին, սկսվեց Ս. Պատարագը:

Պատարագիչն էր Սրբազան Հայրը: Տիգրան սրկ. Մարտիրոսյանը, առաջնորդությամբ խորտավիլակ Տ. Մեսրոպ քահանայի, բարձրանում է խորան և «Աստուածային և Երկնային» շարականի երգեցողությամբ, հավատացյալների առջև բարձրացնում է ձեռքերը դեպ արևմուտք՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Սրբազան Հայրը ձեռնադրեց և օծեց Տիգրան սարկավագին՝ վերանվանելով Տ. Գնել քահանա:

Ձեռնադրությունից հետո Սրբազան Հայրը պատգամ տվեց նորընծա քահանային և հորդորեց սրբությամբ և ուղղությամբ ծառայել Աստուծոյ և ժողովուրդին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Տ. Գնել քահանային ձեռնադրության առթիվ և մաղթում հաջողություններ իր ծառայության մեջ:



Տ. ԳՆԵԼ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(ավագանի անունը՝ Տիգրան),

Ծնվել է 1973 թ. օգոստոսի 13-ին, Արարատի շրջանի Կիրովի պետական-ստորաբաժանում:

1980 թ. ընդունվել է Ստեփանավանի հմր. 1 միջնակարգ դպրոցը:

1988 թ. երկրաշարժից հետո ուսումը շարունակել է Էջմիածնի հմր. 6 գիշերօթիկ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Հոգևոր Մեմարան:

1993 թ. ծառայության է մշանակվել Օիրակի թեմում՝ Ստեփանավան քաղաքի Ս. Սարգիս եկեղեցում:

1995 թ. փետրվարի 24-ին Օիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բուցիայանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1996 թ. մայիսից ծառայության է մշանակվել Գեղարքունիքի թեմում՝ Գավառի Ս. Աստվածածին եկեղեցում՝ որպես Թեմի Բրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի տեսուչ:

1998 թ. հունվարի 25-ին Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Ամանիա եպս. Արաքսյանի ձեռամբ ձեռնադրվել է քահանա և ծառայության կոչվել Գավառ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում՝ որպես շրջանի Հոգևոր Ռովիվ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՈԹՔԻ ՇԱԲԱԹ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻՑ ՏԱԹԵՎ ՍՐԱԶԱՆԻ
ԷԿՈՒՄԵՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱԼԻԱ

Ամենայն Հայոց Վեհապետ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի տնօրինությանը և Իտալիայի Լորենթո քաղաքի Կաթոլիկ Եկեղեցու՝ արքեպիսկոպոս Ս. Ամբելո Բոմասթրիի և Աբ. Իջիդիո Բամաշխարհային ընկերակցության /կենտրոնատեղին/ Հոռմում /հրավերով հունվարի 19-27-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից Ս. Տաթև արք. Սարգսյանը մասնակցեց Բրիտոննեական եկեղեցիների Միության Համաշխարհային Աղոթքի Շաբաթվա աղիթով Իտալիայում կազմակերպված արարողություններին:

Այցելության ընթացքում Տաթև Արքագանը մասնակցեց Աբ. Իջիդիո ընկերակցության ամենօրյա աղոթքներին, բազմաթիվ անգամներ քարոզեց: Արքագան Հայրը այցելեց ընկերության կողմից հովանավորող ընկերային ծառայության կենտրոններ ու քարեխրական հաստատություններ, հանդիպումներ ունեցավ ընկերային ծառայության աշխատակիցների հետ, ծանոթացավ առկա խնդիրներին:

Լորենթոյի Մայր Տաճարում /ըստ ավանդության այստեղ է գտնվում Երուսաղեմից քար առ քար փոխադրված Փրկչի ներկրավոր ծնողների տունը՝ հայտնի La Casa Santa անունով/ Արքագան Հայրը մասնակցեց սրբապետիկում կատարված աղոթքներին, Կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչների հետ միասին ելույթ ունեցավ միութենական աղոթքի շաբաթվա աղիթով կազմակերպված «Մարդկությունը դեմ հանդիման ցավին և տառապանքին» թեմայով դասախոսությունների ընթացքում:

Հունվարի 24-25-ին՝ շաբաթ և կիրակի օրերին, Արքագան Հայրը մասնակցեց Ջենովայի Ա. Իջիդիո Բամայնի միութենական աղոթքի շաբաթվա գլխավոր հանդիսությանը: Շաբաթ երեկոյան Տաթև Արքագանը Ա. Ստեփանոս Տաճարում կազմակերպված հանդիսության գլխավոր քարոզիչն էր՝ «Եկեղեցու Միությունը՝ Բրիտոսից մեզ փոխանցված Արքագան ավանդ» թեմայով:

Հունվարի 26-ին Արքագան Հայրը Բամայնի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելեց կարդինալ Սիլվեստրինիին և Բրիտոննեական միության համեմատողովի ընդհանուր քարտուղար Պիեռ Դյուպոնին:

Այցելության ընթացքում Արքագան Հայրը հանդիպումներ ունեցավ մասերիտասարդների հետ, նրանց ներայացրեց Հայաստանի ներկա իրավիճակը, ինչպես նաև Հայ Եկեղեցու կատարած աշխատանքները քարոզչական, կրթական, կազմակերպչական և ընկերային ասպարեզներում:

ՄԱՍԵԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՌԻՂԱՓԱՌ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՅԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ

Հումվար ամսին ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Ռիչմոնդ քաղաքում, Միացյալ Աստվածաբանական ճեմարանում և Քրիստոնեական Ղաստիարակության Պրեսբիտերյան դպրոցում, տեղի ունեցավ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների և Բարեկարգյալ բողոքական Եկեղեցիների Քամաշխարհային միության ներկայացուցիչների համատեղ ժողովը, որին մասնակցում էր նաև Հայ Առաքելական Եկեղեցին: Ուղղափառ Եկեղեցիներից մասնակցում էին նաև Անտիոքի Սիրիական, Եգիպտոսի Ղպտի և Հնդկաստանի Մալաբար ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Բարեկոխյալ Եկեղեցիները ներկայացնում էին Չեխիայի, Լիբանանի, Հնդկաստանի, Օտտյանդիայի և ԱՄՆ-ի պատգամավորները: Ժողովը նախագահում էին Բարեկարգյալ Եկեղեցիների Քամաշխարհային միության գլխավոր քարտուղար դոկտ. Միլան Օպոսեմսկին և Տ. Վիգեն Եպս. Ալքազյանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Միջեկեղեցական թվով չորրորդ այս հանդիպման նպատակը երկխոսության միջոցով Եկեղեցիների միջև փոխըմբռնման խորացումն էր:

Քրիստոսաբանության, Ա. Գրքի և ավանդության, Եկեղեցու բնույթի և առաքելության հարցերի շուրջ ծավալված երկխոսության արդյունքում ընդունվեց մի փաստաթուղթ, որը Ռիմք կհամդիսանա Ռետազա երկխոսության համար: Այն տեղի կունենա մեկ տարի անց՝ 1999 թ. հունվարին, Ս. Եփրեմի աստվածաբանական ճեմարանում (Ղամասկոս):

ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԵԳՈՐ ՍՏՐՈԵՎԸ ԱՅՅԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՔ. ԷԶՄԻԱԾԻՆ


Հունվարի 28-ին Մայր Աթոռ Սք. Էջմիածին այցելեց Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Եգոր Ստրոևի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի և փոխնախագահ Արա Սահակյանի ուղեկցությամբ: Վեֆարանի սրահում պատվիրակությանն ընդունեց Մայր Աթոռ Սք. Էջմիածնի դիվանապետ Ներսես արք. Պողոսյանը:

Ողջունելով հյուրերին, Ներսես արքագանը նշեց, որ Հայ Եկեղեցին ձգտում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու և ռուս ժողովրդի հետ հարատև բարեկամության, ինչի արտահայտությունն են երկու Եկեղեցիների պետերի փոխադարձ այցելությունները, ամցած տարի կրելով թացված Հայ Եկեղեցու գանձերի ցուցահանդեսը: Սրբազան Հայրը պատվիրակությանը փոխանցեց Վեֆափառ Հայրապետի ողջույնը, պատմեց Մայր Աթոռ Սք. Էջմիածնի մասին:

Պրն. Ստրոևը ողջունեց Հայ և Ռուս Եկեղեցիների բարեկամությունը, շեշտեց հավատքի կարևորությունը ժողովուրդների կյանքում: Նախագահն իր հիացմունքը հայտնեց նաև հայ հոգևոր արժեքների, հայկական հմագույն ձեռագրերի մասին:

Հանդիպման ավարտին փոխանակվեցին հուշանվերներ, այնուհետև հյուրերը շրջեցին Մայր Աթոռի թանգարանում:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, Ռինգշաբթի.- Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Խորանի վրա, Սուրբ և անմահ Պատարագ մատուցեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն Մ. Վրդ. Նաջարյանը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք, որից հետո պատարագիչ քահանան իր պատգամը տվեց ներկաներին:

Ապա ողջ միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի սաները վեհարանում շնորհավորեցին վեհափառ Հայրապետի Ամանորը:

Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պապապետյանը, հանուն Մայր Աթոռի միաբանության, շնորհավորեց Նորին Սրբությանը՝ ցանկանալով նրան առողջություն, արևշատություն և զալիք տարում արգասաբեր աշխատանք:

Այնուհետև վեհափառ Հայրապետը շնորհավորեց ներկաների Ամանորը և ցանկացավ, որ 1998-ը ամենքի համար լինի ծրագրավորված աշխատանքի իրականացման տարի:

Հունվարի 2-ին, ուրբաթ.- Դ օր Ծննդեան պահոց:

Այսօր «Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը վեհարանում շնորհավորեց վեհափառ Հայրապետի Ամանորը: Ամսագրի գլխավոր խմբագիր հոգեծնորհ Տ. Բագրատ արքեպս. Գալստյանը հակիրճ խոսեց կատարված և կատարվելիք աշխատանքների մասին և հայեցեց Նորին Սրբության հայրական օրհնությունը:

Հայեց Հայրապետը ոչ միայն իր օրհնությունը տվեց աշխատակազմին, այլև գոհունակություն հայտնեց խմբագրության կատարած աշխատանքների համար:

Հունվարի 4-ին, կիրակի.- Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Սուրբ և անմահ Պատարգ մատուցեց հոգեշնորհ Տ. Բարկեն արեղա Սալրիյանը: «Հայր մեր»-ից առաջ Հայր Սուրբը «երկինքը և երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի» (ՂՈՒԿ. ԻԱ 33) քնարանով օրվա խորհրդին պատշանող փարոզ խոսեց:

Հունվարի 5-ին, երկուշաբթի.- Մրազալոյց Մենդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Սուրբ և անմահ Պատարգ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոգոպայանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշանի փարոզ խոսեց: Ս. Պատարգից առաջ չորս սարկավազներ հանդիսավորությամբ Ավագ Խորանից ընթերցեցին Դանիելի թուղթը:

Ս. Պատարգին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարգից հետո թափորը, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ, շարժվեց Վեհարան, ուր կատարվեց տարվա անդրանիկ օրհնությունը: Ապա եղջ միաբանությունը և ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, հավաքվեց միաբանական սեղանատանը՝ միասին անցկացնելու խթան ընթրիք:

Սիրո նաշը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով:

Հունվարի 6-ին, երեքշաբթի.- Տօն Մենդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Խորանի վրա, Ս. Պատարգ մատուցեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոյանը: «Հայր մեր»-ից առաջ իր հայրապետական պատգամը ներկաներին հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Ապա Վեհափառ Հայրապետի քարժք նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեֆի հոգեպարար արարողությունը:

Ս. Պատարգին ներկա էին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Բարկեն Արարիջյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, բույր եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ հյուրեր:

Հունվարի 7-ին, չորեքշաբթի.- Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Սուրբ Սեդանի վրա, Սուրբ և անմահ Պատարգ մատուցեց արժանապատիվ Տ. Իսահակ Բախանա Մարգարյանը:

Հավարտ Սուրբ Պատարգի կատարվեց հոգեհանգիստ՝ վասն համորեն նեղեցիլոց:

Սուրբ Պատարգին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 10-ին, շաբաթ.- Ե օր Մենդեան:

Այսօր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին շենքի հանդիսությանց սրահում տեղի ունեցավ «Սուրբ Մարիամ Աստվածածին» կիրակնօրյա վարժարանի Ամանորյա և Սուրբ Մենդյան հանդեսը:

Հունվարի 11-ին, կիրակի.- Զ օր Մենդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Սուրբ Սեղանի վրա, Սուրբ Պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Տիրայր Բահանա Գլխավոր: Պատարագի Բահանան «Հայր մեր»-ից առաջ «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք, որ հաւատալ յիս... մի մեղքի ի յաւիտեան...» (ՀՈՎՀ. ԺԱ 25) բնաբանով Բարոզ խոսեց:

Հունվարի 13-ին, երեքշաբթի.- Տօճ անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Սուրբ Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց ԳԴԳԿ-ի վարիչ-տնօրէն հոգեշէքեր Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագի Հայր Սուրբը Բարոզ խոսեց՝ «և իբրեւ լցան աւուրք ուր թլփատել զնա, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս...» (ՀՈՎԿ. Բ 21) բնաբանով:

Այսօր Վեհաբանում տեղի ունեցավ միաբանական ժողով. որի ընթացքում Վեհափառ Հայրապետը ներկաներին տեղեկացրեց իր՝ Եգիպտոս և Գերմանիա կատարելիք այցելութեանց և դրանց կարևորութեան մասին:

Հունվարի 14-ին, չորեքշաբթի.- Պահը:

Այսօր Վեհափառ Հայրապետը Արագածոտնի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կնոյանի, Ս. Հռիփսիմե վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մովսէս վարդապետ Մովսիսյանի և Հայաստանի Հանրապետութեան կրօնից գործոց կոմիտեի նախագահ Լազար Սուրյանի ընկերակցությամբ մեկնեց Եգիպտոսի հայոց թեմ, որտեղից էլ կայցելի Գերմանիայի հայոց թեմ:

Հունվարի 18-ին, կիրակի.- Ա կիրակի զկնի Մենդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ Բն. Միմնյանը: Պատարագի Բահանան «Հայր մեր»-ից առաջ Բարոզ խոսեց՝ «Առաքեա Տէր զյոյս քո եւ զնշմարտութիւն քո» (Պատարագամատույց) բնաբանով:

Հունվարի 25-ին, կիրակի.- Բ կիրակի զկնի Մենդեան:

Այսօր նորոգ ձեռնադրւյալ Տ. Արշակ, Տ. Խորեն և Տ. Արշեն արեղաները դուրս եկան մեր Եկեղեցւոյ ստեմանած 40-օրյա պահեցողութեան շրջանից և մատուցեցին անդրանիկ Ս. Պատարագը: Ըստ ավագութեան կարգի, հայր Արշակը պատարագեց Մայր Տաճարում, հայր Խորենը՝ Ս. Հռիփսիմեում, իսկ հայր Արշենը՝ Արարատյան Հայրապետական թեմի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցւում:

ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

(1974-1983)

1977

444. Աճեմյան Շահե արքեպիսկոպոս: - Փրկության հղացքը ուղղափառ մոտեցումով: 1977, հունիս, էջ 48-53:

445. Ամանորը Մայր Աթոռում: 1977, հունվար, էջ 19-23:

446. Ամավերջի հանդիսություն Գոգեւոր ճեմարանում: 1977, հունիս, էջ 45-47:

447. Ամենայն Հայոց Հայրապետը Մոսկվայում: 1977, հունիս, էջ 32-33:

448. Ամենայն Հայոց Հայրապետի եւ Կիարոսի նորընտիր Խրիստոմոս արքեպիսկոպոսի միջեւ փոխանակված հեռագրեր: 1977, նոյեմբ., էջ 5-6:

449. ԱՄՆ-ի Արեւելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը եւ թեմական խորհրդի ատենապետ տիար Ջոն Նաջարյանը Մայր Աթոռում: 1977, հուլիս, էջ 3-4:

450. Այվազյան Արգամ: - Շոռոթի եւ Գաղի եկեղեցական ճարտարապետական հուշարձանները: [Ուսումնասիրություն]: 1977, մայիս, էջ 46-56:

Վեց նկար:

451. Անասյան Հ[ակոբ] Ա[եղբայր]: - «Արմատ Հաւատոյ»-ի աղբյուրներից: (Բիտալիոս Անտիոքացի - Գրիգոր Աքանչեւագործ): [Ուսումնասիրություն]: 1977, դեկտ., էջ 53-59:

452. Անասյան Հ[ակոբ] Ա[եղբայր]: - «Արմատ Հաւատոյ»-ի աղբյուրներից (Իրենեոս Լուգդոնացի):

[Ուսումնասիրություն]: 1977, օգոստ., էջ 41-47:

453. Ապրիլի 24-ը Մայր Աթոռում: 1977, ապրիլ, էջ 19-20:

Երկու լուսանկար: Ներդիր:

454. Առաքելյան Վարազ: - Աստվածաշնչի հայերեն թարգմանության լեզուն եւ ոճը: [Ուսումնասիրություն]: 1977, նոյեմբ., էջ 28-38:

455. Ասատուրյան Վազգեն սարկավազ: Մանդակյան Սորին սարկավազ: ՝ Սեծ պահոց խոհեր: 1977, փետրվար, էջ 16-19:

456. Աստվածաշնչական ընթերցումներ: 1977, մայիս, էջ 10-11:

457. Արաբաջյան Անանիա վրդ.: - Կրոնական գործիչների համագումար՝ ի պաշտպանություն խաղաղության՝ ընդդեմ մեյտրոնային ռումբի արտադրության եւ գործադրման: 1977, դեկտ., էջ 12-17:

Բովանդ.՝ Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը: - Ուղերձ-կոչ կրոնական ղեկավարներին եւ համայն աշխարհի հավատացյալներին: [Զագորսկում]:

458. Արաբաջյան Անանիա վրդ.: 1977, դեկտ., էջ 6-11, Համայն Վրաստանի նորընտիր պատրիարք-կաթողիկոսի գահակալության հանդիսությունները Թբիլիսիում: [Տ. Իլիա]:

Բովանդ.՝ Վազգեն Վեհափառի անունով ստացված հրավերը: - Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի եւ շնորհավորության խոսքը Ացխեթայի Տաճարում: - Ամենայն

Հայոց Վեհափառ Հայրապետի ծառը ճաշկերության ժամանակ:

Երկու նկար: Ներդիր:

459. Արաբաքյան Անանիա վրդ.:

- Հանգիստ Նորին Սրբություն Չամայն Վրաստանի պատրիարք-կաթողիկոս Տ.Տ. Դավիթ Ե-ի (1903-1977): [Վազգեն Առաքինի ցավակ-ցական խոսքով և հեռագրով]: 1977, նոյեմբ., էջ 8-11:

Երկու նկար: Ներդիր:

460. Արաբաքյան Անանիա վրդ.:

- Միաբանական հավաք Մայր Աթոռում: 1977, սեպտ., էջ 35-37:

461. Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերոբե արքեպիսկոպոս Մանուկ-յանի հովվական այցելությունը Հոլանդիա և Շվեդիա: 1977, դեկտ., էջ 36-38:

462. Արգունյան Ջավեն Ժ. վրդ.: - Զննություն ձեռագրաց Ը դարու հայ հեղինակ Ղեւոնդ Երիցու պատմագրության:

[Ուսումնասիրություն և բնագրեր]: 1977, հունվար, էջ 38-45:

463. Բերբերյան Արսեն եպիսկոպոս: - Հայ-անգլիկան եկեղեցի-ների պատմության էջերից: [Երեք նամակի բնագիր]: 1977, դեկտ., էջ 24-35:

464. Բերբերյան Արսեն եպիսկոպոս: - Հոր և որդու դատապարտելի արարքը (Վերապատվելի Սարգիս Կոնսուլյանին): [Իր որդու Տ. Տիրայր քին. Կոնսուլյանի մասին]: 1977, հունիս, էջ 36-37:

465. Գալուստյան Շնորհք արքեպիսկոպոս: - Ավագ Հինգշաբթի: («Ավագ շաբաթ»): 1977, ապրիլ, էջ 28-33, հուլիս, էջ 15-22, օգոստ., էջ 7-13, սեպտ.-հոկտ., էջ 41-45, նոյեմբ., էջ 20-27:

466. Գայայան Հարություն: - Խաչի գարդամոտիվները կապա-ղովակաժայ գորգարվեստում (13-15

դդ.): [Ուսումնասիրություն]: 1977, փետրվար, էջ 55-61:

Նկ. Երեսուներեք գորգեր և խաչագարդ նախշեր:

467. Գեորգյան Սամվել: - Մայր Տաճարին: [Բանաստեղծություն: Չայնագրություն]: 1977, հունիս, էջ 60-61:

468. Դեմիրճյան Դերենիկ: - Վարդանանք: (Հատված): («Վարդանանք»): 1977, մայիս, էջ 24-25:

469. Դիվան Մայր Աթոռի: - Ծանուցում: [Տիրայր քին. Կոնսուլ-յանի կարգալույծ անելու մասին]: 1977, հունիս, էջ 37:

470. Դիվան Մայր Աթոռի: Հաղորդագրություն: [ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու պատվիրա-կության, գլխավորությամբ եպիսկոպոսաց խորհրդի նախագահ Ջոն Ա. Ալլի եպիսկոպոսի, Մայր Աթոռ ժամանելու մասին]: 1977, հուլիս, էջ 5-6:

471. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Երուսաղեմի Տ. Եղիշե Պատրիարքի և տ. Սերոբե արքեպիսկոպոս Մանուկյանի ապրիլի 20-ին Ա. Էջմիածին ժամանելու մասին: Երուսաղեմի սրբոց Հակոբ-յանց վանքում գումարվելիք եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման և եկեղեցական բնության այլ հար-ցերի մասին Վեհափառ Հայրապետի հետ խորհրդակցելու համար]: 1977, մայիս, էջ

472. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Մոսկվայում տեղի ունեցած կրոնական գործիչ-ների համաշխարհային համաժողովին, որը նվիրված էր կայուն խաղաղության հաստատմանը, մասնակցում էր Վազգեն Վեհափառը]: 1977, հունիս, էջ 22-23:

473. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Վազգեն Վեհափառը թբիլիսիում մասնակցեց Համայն Վրաստանի Պատիարք-

կաթողիկոս Իլիայի գահակալության հանդիսությամբ]: 1977, նոյեմբ., էջ 4-5:

474. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Վազգեն Վեհափառը մեկնեց Բուխարեստ մասնակցելու Ռումին եկեղեցու նորընտիր Հովվապետ Տ. Յուստին պատրիարքի գահակալությամբ]: 1977, հունիս, էջ 34-35:

475. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Վազգեն Վեհափառի հովանավորության ներքո լիբանանահայ կարոտյալների օգտին հանգանակված գումարների մասին]: 1977, հունվար, էջ 17-18:

476. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Վրաստանի պատրիարք-կաթողիկոս Տ.Տ. Դավիթ Ե-ի վախճանվելու մասին]: 1977, նոյեմբ., էջ 7:

Նկ. Հանգուցյալ Տ. Դավիթ պատրիարք-կաթողիկոս համայն վրաց: Ներդիր:

477. Դրյուբին Վ.: - Վարդապետի կյանքի բանաձևը: [Արտատպված «Հայրենիքի ծայն»-ից]: 1977, հուլիս, էջ 53-54:

478. Էկումենիկ կյանք: - ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի 30-րդ նստաշրջանը: 1977, օգոստ., էջ 52-53:

479. Էկումենիկ կյանք: - «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի ուսումնասիրական խորհրդակցությունը Գալնոյկիր-խենում: 1977, հուլիս, էջ 55-56:

480. Էկումենիկ կյանք: Խորհրդակցական հանդիպում: 1977, հունիս, էջ 62-63:

481. Էկումենիկ կյանք: - Խորհրդակցություն ԵՀԽ-ի եւ Արեւելյան Եվրոպայի երկրների անդամ եկեղեցիների ներկայացուցիչների միջեւ: 1977, ապրիլ, էջ 57-58:

482. Էկումենիկ կյանք: 1977, մարտ, էջ 51-55:

Բովանդ. Հինգ նոր պատասխանատու աշխատակիցներ ԵՀԽ-ում: Խորհրդակցություն «Աստվածաշնչի մատերիալիստական ընթերցման» շուրջ: - ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարը մասնակցելու է Ավստրալիայի միացյալ եկեղեցու առաջին համաժողովին: - Օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանս Շամբեգիում: - «Հավատո եւ կարգի» շարժման հիմնադրության 50-րդ տարեդարձը: - Հանդիպում քրիստոնյաների եւ մահմեդականների միջեւ: - Էկումենիկ դաստիարակությունը որպես լրացուցիչ մաս կրոնական ուսուցման: - Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի այցը Հնդկաստան: - Էկումենիկ աղոթք Ձագորսկում քրիստոնյաների միության համար: - Խաղաղության համակրոնական համագումարի մախապատրաստական կոմիտեի հանդիպումը Մոսկվայում:

483. Էկումենիկ կյանք: 1977, հունվար, էջ 61-63:

Բովանդ. Նոր հանդիպում կաթողիկե եկեղեցու եւ արեւելյան ուղղափառ եկեղեցիների աստվածաբանների միջեւ: - Ամերիկյան եկեղեցիներից մեկը հրաժարվում է ԵՀԽ-ի անդամությունից: - Օրթոդոքս աստվածաբանների հանդիպում Հունաստանում: - Արդյունավետ երկխոսություններ կաթոլիկների եւ լութերականների միջեւ: - Էկումենիկ մախաձեռնություն: - Երիտասարդության Էկումենիկ խորհրդի ութերորդ համաժողովը Եվրոպայում: - Խորհրդակցություն օրթոդոքս եւ բարեկարգական եկեղեցիների ներկայացուցիչների միջեւ:

484. Թահմիզյան Ն.: - Մխիթար Այրիվանեցիի եւ Ավագ հինգշաբթի

օրվա «Սիրտ իմ սասանի» գանձ-երգը: [Ուսումնասիրություն]: [Նաեւ վերը հիշված գանձ-երգի ծայնագրությունը]: 1977, հունվար, էջ 33-37:

485. Թամանյան Յու. Ա.: - Վայոց ձորի ս. Կարապետ եկեղեցու վերանորոգումը: 1977, մայիս, էջ 40-45: Հինգ նկար:

486. Իսրայելյան Ռաֆայել: - Խաչքարեր: 1977, հուլիս, էջ 41-49, օգոստ., էջ 31-40:

Տասնչորս խաչքարերի նկարներ:
487. Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նստաշրջանը Ջենիայում: 1977, մայիս, էջ 57-58:

488. Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի գործունեությունը 1976 թվականի ընթացքում: 1977, փետրվար, էջ 62-63:

489. Կակովին Ա.: - Գարեգին (արքեպիսկոպոս) Հովսեփյանը՝ հայ ոսկերչական արվեստի ուսումնասիրող: [Արտատպված «Պատմաբանասիրական հանդես»-ից]: 1977, հուլիս, էջ 50-52:

490. Կանայան Խաչատուր: - Էջմիածնի նվիրակությունը ժՈ դարում (պատմական ակնարկ): [Ուսումնասիրություն]: 1977, փետրվար, էջ 48-54, մարտ, էջ 26-31, ապրիլ, էջ 44-48:

491. Կապուտիկյան Սիլվա: - Սպրիլ 24, Երեւան: («Նճանկար հոգու եւ քարտեզի գույներից»): 1977, ապրիլ, էջ 24-26:

492. Կարդինալ Ժան Վիլբրանդոս: - Կարդինալ Ժան Վիլբրանդոսի մամակը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին: [Ս. Էջմիածնում ստացած իր տպավորությունների մասին]: 1977, մարտ, էջ 5-6:

493. Կոսիդովսկի Ջենոն: - Նոր կտակարանը եւ նրա հավանական հեղինակները: (Ուսերենից թարգ-

մանեց Անանիա վրդ. Արարաջյանը): 1977, սեպտ.-հոկտ., էջ 79-83:

494. Կրոնական գործիչների համաշխարհային համաժողով՝ նվիրված կայուն խաղաղության, զինաթափման եւ ժողովուրդների միջեւ արդար հարաբերությունների հաստատմանը: - Հայոց Հայրապետի խոսքը համաժողովում: 1977, հունիս, էջ 24-31:

Երկու լուսանկար:

495. Հակոբյան Գրիգոր Արշակի: - 8-րդ դարի մեր կին շարականագիրները: Սահակրուխտ, Խոսրովիդուխտ: [Բնագիր շարականների]: [Ուսումնասիրություն]: 1977, մարտ, էջ 20-25:

496. Հակոբյան Գրիգոր Արշակի: - Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը որպես մատենագիր: [Ուսումնասիրություն]: 1977, նոյեմբ., էջ 51-56:

497. Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան թեմի 75-րդ տարեկան ժողովի գումարումը: [Վազգեն Վեհափառի օրհնության գիրը ժողովին]: 1977, սեպտ.-հոկտ., էջ 77-78:

498. Հայրապետական հանդիսավոր պատարագ Երեւանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում: - Հայրապետական քարոզ Երեւանի սուրբ Սարգիս եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի քարոզը Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում: 1977, մայիս, էջ 5-9:

499. Հայրապետական վճիռ [Հայրապետական վճռով տ. Վահան Եպս. Տերյանին կարգալույծ անելու եւ Անդրանիկ Եզեկիելի Տերյան անվամբ աշխարհականների շարքը դասելու մասին]: 1977, սեպտ.-հոկտ., էջ 34:

Մեկ նկար: Ներդիր:

500. Հայրենիք-սփյուռք հարաբերություններ: 1977, հունվար, էջ 28-29:

501. Հանգիստ արժանապատիվ տ. Ձավեն քին. Մոսկովյանի (1922-1977): [Կենսագրական-մահախոսական: Դիմանկարով]: 1977, փետրվար, էջ 64:

502. Հանգիստ Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք Նորին Սրբություն ժուստինիանին: 1977, ապրիլ, էջ 13-18:

Բովանդ. Վեհափառ Հայրապետը Բուխարեստում: - Հայոց Հայրապետի ցավակցական խոսքը հանդիսության ընթացքում: - Այց տեղապահ տ. ժուստին միտրոպոլիտին: - Հրաժեշտի այցելություններ: - Հանդիսավոր ս. պատարագ եւ հայրապետական քարոզ: - Վերադարձ Մայր Աթոռ:

Երեք լուսանկար:

503. Հատիտյան Ա[րթուն]: - Անկորնջելի մի հիշատակ սուրբ էջմիածնում՝ նվիրատվությամբ մեծանուն բարերար Ալեքս Մանուկյանի: [Թանգարան-մատենադարան շենքի կառուցումը]: [Շենքի ճակատային մասը]: 1977, նոյեմբ., էջ 12-15:

504. Հ[ատիտյան Ա[րթուն]: - Հայրենիք-սփյուռք հարաբերություններ: 1977, նոյեմբ., էջ 16-17:

505. Հ[ատիտյան Ա[րթուն]: Մահ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Տիգրանի Գասպարյանի (1917-1977): [Դիմանկարով]: [Վեհափառի դամբանականը խոսված Մայր Տաճարում եւ ցավակցական հեռագիրը Մինիստրների Սովետի նախագահին]: 1977, օգոստ., էջ 21-24:

506. Հատիտյան Ա[րթուն]: - Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան «Աստուածաշնչական սուրբեր»: Գրախոսություն: Իսթանպուլ, 1977, 207 էջ: 1977, օգոստ., էջ 25-30:

507. Հ[ատիտյան Ա[րթուն]: - Սուրբ Աթանաս Հայրապետ Ալեքսանդրացի: [Ուսումնասիրություն]: 1977, փետրվար, էջ 20-30:

508. Հատիտյան Ա[րթուն]: - Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի (329-379): Ժամանակաշրջանը, կյանքն ու գործունեությունը: [Ուսումնասիրություն]: 1977, մայիս, էջ 26-32, հունիս, էջ 54-59:

509. Հատիտյան Ա[րթուն]: - Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունները: [Ուսումնասիրություն]: 1977, հուլիս, էջ 23-32:

510. Հատիտյան Ա[րթուն]: - Սուրբ Գրիգոր Հայրապետ Նազիանզացի աստվածաբան (330-389/390): [Ուսումնասիրություն]: 1977, սեպտ.-հոկտ., էջ 46-59:

511. Հատիտյան Ա[րթուն]: Սուրբ Գրիգոր Հայրապետ Նյուսացի (334-394): [Ուսումնասիրություն]: 1977, նոյեմբ., էջ 39-50:

512. Հ[ատիտյան Ա[րթուն]: - Սուրբ Կյուրեղ Հայրապետ Ալեքսանդրացի (375-444): [Ուսումնասիրություն] 1977, մարտ, էջ 9-17, ապրիլ, էջ 34-39:

513. Հատիտյան Ա[րթուն]: - Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետ Ամտիոքացի (354-407): [Ուսումնասիրություն]: 1977, դեկտ., էջ 39-46:

514. Հարությունյան Վարդգդատ, պրոֆեսոր: - «էջմիածին» ամսագրի խմբագրությամբ: [Ռաֆայել Իսրայելյանի «Խաչքարեր» ուսումնասիրությունը հրատարակության ներկայացնելու մասին] 1977, հուլիս, էջ 40:

515. Հնդիկ Մալաբար եկեղեցու միտրոպոլիտ Պաուլոս Մար Գրիգորիոսի այցելությունը Մայր Աթոռ: 1977, մարտ, էջ 32-33:

516. Հոգեւոր ճեմարանի վերաբացումը: 1977, սեպտ.-հոկտ., էջ 38-40:

517. Հոսադրող հեռանկարներ: խմբագրական: [Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Կիլիկյան Աթոռի հարաբերությունների մասին]: 1977, հունիս, էջ 3-9:

518. Մահ պրոֆեսոր Արարատ Ղարիբյանի (1899-1977): [Մահախոսական-կենսագրական]: [Նաեւ վազգեն Վեհափառի ցավակցական հեռագիրը]: 1977, մարտ, էջ 18-19:

519. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, հունվար, էջ 30-32:

Բովանդ.: հունվարի 2 [Մայր Աթոռում ուխտավորաբար գտնվող Ամթիլիասի միաբան տ. Անուշավան վրդ. Դանիելյանը ս. պատարագ է մատուցում Մայր Տաճարում]: - հունվարի 10 [Մայր Աթոռ է ժամանում Հռոմի քահանայապետական Արեւելյան ինստիտուտի բյուզանդական ծիսագիտության դասախոս հայր Միգել Արրանցը եւ ընդունվում Վեհափառի կողմից]:

520. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, փետրվար, էջ 11-12:

521. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, մարտ, էջ 7-8:

Բովանդ.: Մարտի 8 [խորհրդային Միությունում Արգենտինայի հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Լեոպոլդ Բրավոն այցելում է Մայր Տաճար, ապա հանդիպում Վեհափառ Հայրապետին]: - մարտի 20 [Հավարտ ս. պատարագի Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն Բուխարեստում երկրաշարժից ռումին եւ հայ զոհվածների համար]:

522. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, ապրիլ, էջ 21-23:

Բովանդ.: Ապրիլի 21 [Մայր տաճար է այցելում Հայաստանում գտնվող Մեծ Բրիտանիայի պառլամենտական պատվիրակությունը՝ գլխավորությամբ համայնքների պալատի լեյբորիստական կուսակցության խմբի նախագահ Բլեդլին Հյուզի]: - ապրիլի 27 [Հոգեւոր ճեմարանի դահլիճում ուսանողության համար գեկուցում է կարողում Ռումինիայի թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զավեն ծ. վրդ. Պարոնյանը՝ «Հայ Եկեղեցու պատարագի կարեւորությունը ժամանակակից եկուսենիկ տեսակետից» թեմայով]:

523. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, մայիս, 16-19:

Բովանդ.: մայիս 1 [Մայր տաճարում հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Նյու Յորքում 103 տարեկան հասակում վախճանված Մայր Աթոռի հարազատ զավակ եւ ազգային բարերար Հայկ Գավուքճյանի մահվան առիթով]: - մայիս 25 [Մայր Աթոռ են ժամանում Պրո-Օրիննոն կաթոլիկական կազմակերպության ներկայացուցիչներ դոկտոր Թեոդոր Պիֆե-Պերչելիչը՝ Ավստրիայի հասարակական եւ մշակութային գործերի նախկին մինիստր, եւ Պրո-Օրիննոնի նախագահ Ալֆրեդ Շտիլման՝ նույն կազմակերպության վարիչ քարտուղարը]:

524. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, հունիս, էջ 38-40:

Բովանդ.: հունիս 11 [Մայր Տաճարում ս. պատարագ է

մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց ս. Զակարյանց վանքի միաբան տ. Ռուբեն վրդ. Դովակիմյանը]: - հունիս 25 [Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Փարիզից ժամանած Մայր Աթոռիս միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը]: - հունիսի 30 [Օշական գյուղում, ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունն ամփոփող եկեղեցում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Ս. Էջմիածնում գտնվող ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության ղեկավար եւ Ուեսչեստրի հոգեւոր հովիվ տ. Գարեգին քհն. Գասպարյանը]:

525. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, հուլիս, էջ 7-11:

Բովանդ. հուլիսի 1 [Վեհափառ Դայրապետը Վեհաբանում ընդունում է Սովետական Միությունում Ավստրալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան սըր Ջեյմս Պլիմստլիին]: - Դուլիս 3 [Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ս. Էջմիածին ուխտավորաբար այցելած ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Ֆիլադելֆիա քաղաքի ս. Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ տ. Արշեն վրդ. Այվազյանը]: - Դուլիս 15 [Դայրոց Դայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում բելգիացի հոգեւորական կանոնիկոս Ռայմոնդ Գորը, որը հունիսի 6-10-ը մասնակցել էր Մոսկվայում գումարված կրոնական գործիչների համաշխարհային ժողովին, որը նվիրված էր կայուն խաղաղության, զինաթափման եւ ժողովուրդների միջեւ արդար հարաբերությունների հաստատմանը]:

526. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, օգոստոս, էջ 16-17:

Բովանդ. օգոստոսի 7 [Մայր Տաճարում քահանայական իր առաջին ս. պատարագն է մատուցում Ավագ արքեպ Սաստուրյանը: Դավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Կիպրոսի հանրապետության նորոգ հանգուցյալ պրեզիդենտ Տ. Մակարիոս արքեպիսկոպոսի հիշատակին]:

527. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, սեպտ.-հոկտ., էջ 28-34:

Բովանդ. սեպտեմբեր 18 [Վեհափառ Դայրապետը ընդունում է սփյուռքահայ ուխտավորների, նրանցից լիբանանահայ օգնության խաչի «Շուշանիկ» մասնաճյուղի ատենապետ Եղիսաբեթ Գազանճյանը Վեհափառին է դիմում երախտագիտության խոսքով]: - հոկտեմբեր 18 [Մայր Աթոռ է ժամանում եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Դավատո եւ կարգի» հանձնաժողովի տնօրեն դոկտոր Լուկաս Ֆիշերը]:

528. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, նոյեմբեր, էջ 18-19:

Բովանդ. նոյեմբերի 2 [Վեհափառ Դայրապետին են այցելում Ղաճասկոսի թեմի հանրային գործիչ Վարուժան Սալաթյանը եւ Եզիպտոսի հայոց թեմական խորհրդի անդամ Վահան Գավուկճյանը իր տիկնոջ հետ]: - նոյեմբեր 8 [Վեհափառ Դայրապետի են այցելում լիբանանահայ հասարակական մի շարք գործիչներ, այդ թվում պրոֆ. Բարունակ Թովմասյանը, Դարուն Մաղեյանը եւ Ավետիս Դեմիրճյանը]:

529. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1977, դեկտեմբեր, էջ 21-23:

530. Մանդալյան Սորին սարկավագ: - ԱՄՆ-ի և Կանադայի հայ երիտասարդաց կազմակերպությունների ամրաամենը Մայր Աթոռում և Հայրենիքում: [Մեկ լուսանկար]: 1977, հուլիս, էջ 12-14:

531. Մելիքյան Սպիրիդոն: - Մակար Եկմալյանի դերը և տեղը հայ երաժշտության պատմության մեջ: [Դրատարկության պատրաստեց Ն. Թահմիզյանը]: 1977, հուլիս, էջ 33-39:

532. Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի աթոռակից-կաթողիկոսի ընտրության առթիվ Մայր Աթոռի և Ամթիլիասի Աթոռի միջև փոխանակված գրություններ: 1977, հունիս, էջ 10-20:

533. Մկրտչյան Շահեն: - Հաղորդի շրջանի եկեղեցական և պատմական հուշարձանները: [Ուսումնասիրություն]: 1977, մարտ, էջ 40-50: Ինք լուսանկար:

534. Մովսիսյան Անաստաս սարկավագ: - Գրախոսական: Վաչե վրդ. Իզմատոսյան «Աստվածամայրը», Վենետիկ-ս. Ղազար: 1977, ապրիլ, էջ 56:

535. Մովսիսյան Անաստաս սարկավագ: - Ս. Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրություն Մայր Տաճարում: [Հունիկ սրբազանը սարկավագ է ձեռնադրում Ստեփանոս Չաքալյանին և Հովսեփ Մովսիսյանին]: 1977, դեկտ., էջ 18-20:

536. Նորին Արքունիքում Պողոս Զ պապի պատգամը 1977 թվականի հունվարի մեկի «հաղադրության համաշխարհային օրվա» առթիվ: [Սույն պատգամից հրատարակվում են որոշ հատվածներ]: 1977, հունվար, էջ 6-8:

537. Նորին Արքունիքում Վազգեն Ա Հայրապետի և Նորին Արքունիքում Պողոս Զ Պապի միջև փոխանակված հեռագրեր: 1977, նոյեմբ., էջ 3-4:

538. Շահբազյան Պարզե: - Հայ գրականության մեծ երախտավորը: (Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ): 1977, մայիս, էջ 20-23:

539. Շահբազյան Պարզե: - Մխիթար Սեբաստացի: (Ծննդյան 300-ամյակի առթիվ): 1977, սեպտ.-հոկտ., էջ 70-76:

540. Շահինյան Ա. Ն.: - Սիջմադարյան նորահայտ հուշարձաններ: [Ուսումնասիրություն]: 1977, ապրիլ, էջ 49-55: Յոթ նկար:

541. Շաքարյան Նարեկ եպիսկոպոս: - Սուրբ Դեոնիսյանը: 1977, փետրվար, էջ 13-15:

542. Չինչինյան Զավեն եպիսկոպոս: - Հուլյսը հավատով ու սիրով: 1977, սեպտ.-հոկտ., էջ 60-64:

543. Պատրիկ Առաքել: - Մեր քանդակագործ դռները: [Ուսումնասիրություն]: [Հինգ դռան լուսանկար]: 1977, հունվար, էջ 55-60:

544. Պետրոսյան Կիկտոր Մնացականի: - Թեղենյաց վանքը և նրա առաջնորդները: [Ուսումնասիրություն]: [Երեք նկար]: 1977, օգոստ., էջ 48-51:

545. Պետրոսյան Կիկտոր: - Վաչուտյան իշխանական տան եկեղեցաշինական գործունեությունը: [Ուսումնասիրություն]: 1977, սեպտ.-հոկտ., էջ 84-86:

546. Ողջուլեսկու տ. Նիկոլայե քահանա: - Ազատության հիմքերը նոր Կտակարանում: [Ուսումնասիրություն]: (Ռումիներենից թարգմանեց Սորին սրկ. Մանդալյանը): 1977, սեպտ.-հոկտ., էջ 65-69, դեկտ., էջ 47-52:

547. Ոիժկով Մարկ: [Բանաստեղծություն]: (Թարգմանությունը:

Միլվա Կապուտիկյանի): 1977, ապրիլ, էջ 27:

548. Սաղումյան Սուրեն Տիգրանի: - Սուղմու ս. Գետորգ եկեղեցին եւ նրա վիմագրերը: [Ուսումնասիրություն]: [Վիմագրերով]: 1977, հունվար, էջ 46-54:

Հինգ լուսանկար:

549. Սրբոց Վարդանանց զորավարաց տոմը եւ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 1977, փետրվար, էջ 9-10:

550. Սուրբ գրական ընթերցումներ: 1977, հունվար, էջ 15-16:

551. Ա. Ստեփանոսի տոմը եւ սարկավազների ձեռնադրություն Մայր Աթոռում: [Բուսիկ եպս. Սանթրոյանը սարկավազ է ձեռնադրում Բյուզանդ Գալայեյանին, Գրիգոր Հաճյանին եւ Գետորգ Զեվեյանին]: 1977, հունվար, էջ 26-27:

552. Ա. Ծննդյան տոմը Մայր Աթոռում: 1977, հունվար, էջ 24-25:

553. Սուրենյանց Կարպիս: - Վազգեն Ա Հայրապետ Հայոց: [Ոսկեծառ աթուրբների բացման առթիվ]: 1977, փետրվար, էջ 31-47:

554. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: Պէյրուք: Պատուարժան վարչութեան հայկական բարեսիրական կրթական միութեան ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Վեհափառ Հայրապետի կոնդակը Բեյրութի հայկական բարեսիրական կրթական միության վարչությանը: 1977, մարտ, էջ 3-4:

555. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Քրիստոսաւանդ սիրոյ ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Պատրիարքութեան Հայոց Երուսաղէմի,

Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, թեմական երեսփոխանական ժողովոց, եկեղեցական եւ մշակութային կազմակերպութեանց, թեմական եւ թաղական խորհրդոց, եւ պաշտօնէից, եւ սիրեցեալ համայն հավատացեալ ժողովրդեան հայոց: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Կ. Պոլսի երջանկահիշատակ տ. Հովհաննէս Կոլտ Պատրիարքի ծննդյան 300-ամյակը մշելու մասին: 1977, օգոստ., էջ 3-6:

556. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Սմանորի եւ Սուրբ Ծննդյան տոմերի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին եւ եկեղեցական համայնքներին: 1977, հունվար, էջ 13-14:

557. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի Հրաշափառ եւ Սուրբ Հարության տոմի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին եւ եկեղեցական համայնքներին: 1977, ապրիլ, էջ 9-10:

558. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Լոնտոնի «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի յարգարժան հիմնադիրներին եւ անդամներին ողջոյն հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Վեհափառ Հայրապետի կոնդակը Լոնդոնում «Հայ երաժշտական

ինստիտուտ»-ի հիմնադրության առթիվ: 1977, փետրվար, էջ 3-4:

559. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի ողջույնի եւ օրհնության գիրը, ուղղյալ Միացյալ Նահանգաց Հայոց արեւելյան թեմի հոգեւորականաց համագումարին: 1977, փետրվար, էջ 7-8:

560. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի ողջույնի եւ օրհնության գիրը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց հայոց արեւելյան թեմի տարեկան թեմական պատգամավորական ժողովին: 1977, փետրվար, էջ 5-6:

561. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի ողջույնի գիրը Սովետական Միության մարշալ Բաղրամյանին՝ ծննդյան 80-ամյակի առթիվ: 1977, մայիս, էջ 3:

562. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայրապետական քարոզ Փրկչի Հրաշափառ եւ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում (1977 թ. հունվարի 6): 1977, հունվար, էջ 3-5:

563. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի Հրաշափառ եւ Սուրբ Հարության տոնի առթիվ Մայր Տաճարում: 1977, ապրիլ, էջ 3-5:

564. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամառորի եւ Փրկչի Հրաշափառ եւ Սուրբ Ծննդյան տոնների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծույնում

Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների Հոգեւոր պետերի միջեւ փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1977, եունվար, էջ 10-12:

565. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոզան Արքեպիսկոպոս Քենտրբերիի եւ առաջնորդ ու միտրոպոլիտ համայն Անգլիայի: - Համատեղ հաղորդագրություն: 1977, սեպտ.-հոկտ., էջ 11-13:

566. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Փրկչի Հրաշափառ եւ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծույնում Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1977, ապրիլ, էջ 6-8:

567. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը վեհարանի գահասրահում: [Ուղղված Քենտրբերիի արքեպիսկոպոս Դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոզանին]: (2 հոկտեմբերի 1977 թ., կիրակի): 1977, սեպտ.-հոկտ., էջ 3-7:

568. Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի նախագահության նախագահ Բարկեն Ե. Սարկիսովին: 1977, հունվար, էջ 9:

Նկ.՝ Մայր Տաճարից դեպի վեհարան: Ներդիր:

569. Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի մեծահարգ նախագահ Տիար Ֆ. Տ. Սարգսյանին: 1977, հունիս, էջ 21:

570. Վերափոխումն Սուրբ Աստվածածնի: [Վաչե վրդ. Իգնատյանի «Աստվածամայրը» գրքից, էջ 23-27]: 1977, օգոստ., էջ 18-20:

571. Տեր-Ղեւոնդյան Ա.: - Հայ եւ քրիստոնյա արաբական առնչությունների պատմությունից: [Ուսումնասիրություն]: 1977, նոյեմբ., էջ 57-63:

572. Տեր-Ղեւոնդյան Ա. Ն.: - Քրիստոնյա արաբները եւ հայերը միջնադարում: [Ուսումնասիրություն]: 1977, մարտ, էջ 34-39:

573. Տեր-Միքայելյան Նուբար: - Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոտ ստացված ձեռագրերի: 1977, մարտ, էջ 56-63, ապրիլ, էջ 59-63, մայիս, էջ 59-63, հուլիս, էջ 57-63, օգոստ., էջ 54-63, սեպտ.-հոկտ., էջ 87-95:

574. Տերտերյան Եղիշե արքեպիսկոպոս (Եղիվարդ): - Բարի լուրը: («Հեթանոսաց առաքյալը»): 1977, մայիս, էջ 12-15:

575. Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1977 թվականի ընթացքում տպագրված նյութերի: 1977, դեկտ., էջ 60-64:

576. Փիտեճեան Գրիգոր: - Նորահրաշ: [Զայնագրություն Շնորհալու շարականի]: 1977, մայիս, էջ 33-39:

577. Փիտեճեան Գրիգոր: - Սիոնի: [Զայնագրություն]: 1977, ապրիլ, էջ 40-43:

578. Փրկչի Հրաշափառ Հարության տոնի առթիվ հանդիսավոր սուրբ պատարագ եւ հայրապետական քարոզ Մայր Տաճարում: 1977, ապրիլ, էջ 11-12:

579. Քահանայական ձեռնադրություն Մայր Տաճարում: - [Բուսիկ սրբազանը քահանա է ձեռնադրում Վազգեն եւ Սարգիս սարկավազներին, վերանվանելով նրանց հայր Ավագ եւ Տեր Սարգիս]:

[Նորընծաների կենսագրականը]: 1977, հունիս, էջ 41-44:

Նկ.՝ ձեռնանդությունից մի պահ: Ավագ արեղայի դիմանկարը:

580. Քենտրերբրիի արքեպիսկոպոս ղուկտ. Ֆրեդերիկ Ղոնալդ Կոզան: [Կենսագրություն]: 1977, օգոստ., էջ 14-15:

Նկ.՝ Քենտրերբրիի արքեպիսկոպոս ղուկտ. Ֆրեդերիկ Ղոնալդ Կոզան: Ներդիր:

581. Քենտրերբրիի արքեպիսկոպոս ղուկտ. Ֆրեդերիկ Ղոնալդ Կոզանը Մայր Աթոռում: 1977, սեպտ.-հոկտ., էջ 14-27:

Բովանդ.՝ ժամանում հյուրերի: - Հայոց Հայրապետի բարիգալստյան խոսքը: - Ղուկտ. Ֆրեդերիկ Ղոնալդ Կոզանի խոսքը Մայր Տաճարում: - Խորհրդակցություն վեհարանում: - Այցելություններ: - Հիմնարկեք Ալեք-Մարի Մանուկյան մատենադարանի եւ պատկերասրահի: - Երեկոյան ժամերգություն եւ հոգևոր համերգ Մայր Տաճարում: - Հանդիսավոր ս. պատարագ եւ քարոզ Մայր Տաճարում: - Քենտրերբրիի արքեպիսկոպոսի ողջույնի խոսքը Մայր Տաճարում: - Հանդիսություն վեհարանի գահասրահում: - Հրաժեշտի ընդունելություն վեհարանում: - Համատեղ հաղորդագրության ստորագրում:

Չորս նկար:

582. Քենտրերբրիի արքեպիսկոպոսի խոսքը վեհարանի գահասրահում: [Ղուկտ. Ղոնալդ Ֆրեդերիկ Կոզանի]: 1977, սեպտ.-հոկտ., էջ 8-10:

Նկ.՝ Քենտրերբրիի արքեպիսկոպոսը արտասանում է իր ճառը:

"ՇՇՄԻԱԶԻՆ"

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1998)

1. Рождественская проповедь Католикоса Всех Армян Гарегина I в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 6 января 1998 г. (стр. 3-7).
2. Редакционная. Восхождение звезды (стр. 8-10).

ОФИЦИАЛЬНЫЙ ОТДЕЛ

3. Обмен приветственных и поздравительных писем и телеграмм между Его Святейшеством Католикосом Всех Армян Гарегиним I и Главами христианских церквей в связи с Новым Годом и Рождеством Христовым (стр. 12-15).
4. Новогоднее приветствие Католикоса Всех Армян Гарегина I (стр. 16-18).
5. Сообщение (о поездке Католикоса Всех Армян Гарегина I и президента Республики Армения Левона Тер-Петросяна во Францию 3 января) (стр. 19).
6. Пребывание Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I во Франции, в Парижской Палате Конгрессов, на благотворительном концерте Шарля Азнавура, 3-5 января (стр. 20-294).
7. ДИАКОН АРАРАТ ГАПОЯН. Новый год в Первопрестольном Эчмиадзине, 31 декабря (стр. 30-31).
8. МАРИАМ ВАРДАНЯН. Рождество и Богоявление Господа нашего Иисуса Христа, 6 января 1998 г. (стр. 32-35).
9. Новогодние и рождественские торжества под опекой Верховного Патриарха (стр. 36-37).
10. Патриаршее признание (Свящ. Барсет Казарян и свящ. Саркис Чапарян удостоены сана протоиерея, свящ. Вардан Мкртчян, свящ. Тирайр Саградян, свящ. Нораир Багдасарян, свящ. Аветис Даниелян, свящ. Серовбе Петросян, свящ. Мамбре Кесабян, свящ. Мюрон Арамян удостоены права ношения черной цветастой фелони, а свящ. Амазасп Бабаджанян, свящ. Корюн Мартиросян, свящ. Гарник Карапетян, свящ. Ваан Арамян права ношения нагрудного креста) - (стр. 38).

РЕЛИГИОЗНО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ОТДЕЛ

11. Проповедь ректора Геворковской Духовной Академии протоархимандрита Айказуна Наджаряна в Кафедральном Соборе, 1 января 1998 г. (стр. 40-41).
12. ПРОТОИВРЕЙ ВАРДАН ТЕУЛКЕРЯН. Праздник кротких и смиренных (Рождественское слово)- (стр. 42-44).
13. Лекция архиепископа Шаге Ачемяна в связи с праздником, посвященным апостолам Фаддею и Варфоломею, 29 ноября 1997 г. (стр. 45-51).
14. Упокой Блаженного апостола Иоанна и Евангелиста Богослова (Перевод с древнеармянского на современный армянский протоархимандрита Микаела Ачалагяна)- (стр. 52-54).
15. Молитва на водосвятие Василия Великого (переложение на армянский иеромонаха Аршака Хачатряна)- (стр. 55-59).

16. Св. Ефрем Сирий (предисловие, изложение жития и перевод поучения диакона Ваана Закарияна)- (стр. 60-94).
17. АКОП КЕОСВЯН. Фрагменты из толкований Степаноса Сюнеци на книги Иова и Даниила (исследование, подлинники. Перевод чтеца Вигена Казаряна)- (стр. 95-105).
18. О. ШАРЛЬ РЭНЭ. Рукопись за № 44 в Парижской национальной библиотеке (один из древнейших описаний христианского богослужения) (Перевод с французского Азата Бозояна)- (стр. 106-114).
19. КАРЕН МАТЕВОСЯН. Монастырь Арыч в начале XIII века (исследование)- (стр. 115-124).
20. ГРИГОР БРУТЯН. 532-летний цикл Аналии Ширакаци по древнейшей бумажной рукописи на армянском языке (исследование) - (стр. 125-143).
21. ИЕРОМОНАХ КАРАПЕТ АРУТЮНЯН. Отец Павел Флоренский. Верный и преданный служитель Русской Православной Церкви (биографическая справка)- (стр. 144-145).
22. ПАВЕЛ ФЛОРЕНСКИЙ. Христианство и культура (перевод с русского иеромонаха Карапета Арутюняна)- (стр. 145-154).
23. ГРАЧЬЯ АШОТОВИЧ АСМАРЯН. Вожди итальянской национально-освободительной борьбы в оценке армянской общественной мысли (исследование)- (стр. 155-161).
24. ВАРДАН ДЕВРИКЯН. Преданный служитель Армянской Церкви (рецензия на III том серии "Документы по истории Армянской Церкви")- (стр. 162-164).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ И ЕПАРХИЯХ

25. Трое новопосвященных иеромонахов совершили свои первые Божественные литургии 25 января 1998 г. (иеромонах Аршах Хачатрян, иеромонах Хорен Ованесян и иеромонах Аршен Саносян)- (стр. 166).
26. Первая проповедь иеромонаха Аршаха Хачатряна в Кафедральном Соборе св. Эчмиадзина, 25 января 1998 г. (стр. 166-169).
27. Первая проповедь иеромонаха Хорена Ованесяна в храме св. Рипсимэ, 25 января 1998 г. (стр. 170-171).
28. Первая проповедь иеромонаха Аршена Саносяна в церкви св. Саркиса в Ереване, 25 января 1998 г. (стр. 172-174).
29. Рукоположение во иерея в Гегаркуникской епархии, 25 января 1998 г. Прилагается также биография священника Гнела Мартиросяна (стр. 175-176).
30. Недели Всемирной молитвы в Италии, 19-27 января, 1998 г. (стр. 177).
31. Участие Армянской Апостольской церкви в диалоге Восточных Православных церквей с Реформатскими церквями (стр. 178).

Приемы в Первопрестольном Св. Эчмиадзине

32. Егор Стросс посетил Первопрестольный св. Эчмиадзин, 23 января 1998 г. (стр. 179).
33. Церковная хроника за январь месяц (стр. 180-182).
34. ИЕРОМОНАХ ХОРЕН ОВАНЕСЯН. Библиография журнала "Эчмиадзин" (1974-1983) - (стр. 183-193).

"ETCHMIADZIN"

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN

(JANUARY 1998)

1. Pontifical Sermon on the Feast of Nativity in the Cathedral, 6 January 1998 (pp. 3-7).

EDITORIAL

2. Rising of the Star (pp. 8-10).

OFFICIAL

3. Telegramms and letters of greetings and salutation between Karekin I Catholicos of All Armenians and the heads of Sister Churches on the occasion of New Year and Christmas (pp. 12-15).
4. New Year Message of His Holiness Karekin I, 31 December 1997 (pp. 16-18).
5. Communiqué (About the visit of His Holiness Karekin I and the President of Republic of Armenia Levon Ter-Petrossyan to France, 3 January 1998) - (p. 19).
6. His Holiness Karekin I was present on benevolent concert of Charles Aznavour in Palais de Congress of Paris, 3-5 January 1998 (pp. 20-29).
7. DEACON ARARAT GAPOYAN - New Year in the Mother See, 31 December 1997 (pp. 30-31).
8. MARIAM VARDANYAN - Nativity and Epiphany of the Lord Jesus Christ, 6 January 1998 (pp. 32-35).
9. New Year and Christmas ceremonies under the patronage of His Holiness (pp. 36-37).
10. Pontifical appreciation (Priests Barsegh Ghazaryan and Sarkis Chaparyan received archpriest's honour, priests Vardan Mkrtchyan, Tirayr Sahradyan, Norayr Baghdasaryan, Avedis Danielyan, Serovbe Petrossyan, Mambre Kcssahyan and Myuron Adamyan received the right to bear figured mantle, priests Hamazasp Babujyan, Koryun Martirosyan, Garnik Karapetyan, Vahan Aramyan and Tiran Arushanyan received the right to bear priest's cross) - (p. 38).

RELIGIO-PHILOLOGICAL

11. Sermon of Archimandrite Haykazun Najaryan, the Dean of Gevorgyan Seminary delivered in the Cathedral, 1 January 1998 (pp. 40-41).
12. ARCHPRIEST VARDAN DYULGERYAN - The feast of humbles and meeks (Christmas message) - (pp. 42-44).
13. Lecture of Archbishop Shahe Ajemyan delivered on the feast of SS. Apostles Thadaeus and Bartholomew, 29 November 1997 (pp. 45-51).
14. The rest of the blessed apostle and evangelist John the Theologian (translated from classical Armenian by Archimandrite Mikael Ajapahyan) - (pp. 52-54).
15. The prayer of blessing of water by S. Basil of Ceasarea (translated from classical Armenian by Hieromonk Arsġak Khachaturyan) - (pp. 55-59).
16. S. Ephrem the Syrian (Foreword, Life of Ephrem the Syrian and translation of Homily by Deacon Vahan Zakaryan) - (pp. 60-94).

17. HAGOP KYOSEYAN - Excerpts from Commentaries on Job and Daniel by Stapanos of Syunik (translation of excerpts by Vigen Ghazaryan) - (pp. 95-105).
18. CHARLES RENOUX - Manuscript 44 of the National Library of Paris (an ancient testimony of christian worship) (translation from French by Azat Bozoyan) - (pp. 106-114).
19. KAREN MATEVOSSYAN - The Harj Monastery in the beginning of XIII century (pp. 115-124).
20. GRIGOR BRUTYAN - The 532 years' table of Anania of Shirak according the most ancient armenian manuscript on paper (pp. 125-143).
21. HIEROMONK KARAPET HARUTYUNYAN - Father Pavel Florenskij: the devoted and faithful servant of the Russian Orthodox Church (pp. 144-145).
22. PAVEL FLORENSKIJ - Christianity and culture (translation from Russian by Hieromonk Vardan Harutyunyan) - (pp. 145-154).
23. HRACHYA AMSARYAN - Leaders of Italian national movement for liberation valuated by the armenian social opinion (pp. 155-161).
24. VARDAN DEVRIKYAN - The faithful servant of the Armenian Church (recension on III volume of "Documents of the History of Armenian Church" by Sandro Behbutyan) - (pp. 162-164).

IN THE MOTHER SEE & DIOCESES

25. Three newly ordained hieromonks celebrated their first Holy Liturgy on 25 January 1998 (Hieromonks Arshak Khachatryan, Khoren Hovhannisyan and Arshen Sanossyan) - (p. 166).
26. The first sermon of Hieromonk Arshak Khachatryan delivered in the Cathedral, 25 January 1998 (pp. 166-169).
27. The first sermon of Hieromonk Khoren Hovhannisyan delivered in S. Hripsime Monastery, 25 January 1998 (pp. 170-171).
28. The first sermon of Hieromonk Arshen Sanossyan delivered in S. Sarkis Church of Yerevan, 25 January 1998 (pp. 172-174).
29. Ordination of a priest in Gegharkunik diocese, 25 January 1998. With the biography of Priest Gnel Martirosyan (pp. 175-176).
30. International Week of Prayer in Italy, 19-27 January 1998 (p. 177).
31. Armenian Apostolic Church participates in Oriental Orthodox-Reformed dialogue (p. 178).

RECEPTIONS IN THE MOTHER SEE

32. Yegor Stoev visited the Mother See, 23 January 1998 (p. 179).
33. Church pulpit: News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See in January (pp. 180-182).
34. HIEROMONK KHOREN HOVHANNISYAN - Bibliography of "Etchmiadzin" monthly (1974-1983) - (pp. 183-193).

"ETCHMIADZINE"

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE

(JANVIER 1998)

1. Homélie pontificale dans la cathédrale de St-Etchmiadzine à l'occasion de la fête de la Nativité (pp. 3-7).

REDACTION

2. La naissance de l'étoile (pp. 8-10).

OFFICIEL

3. Les lettres et télégrammes de salutations et de meilleurs vœux échangés entre SS Karékine 1er Catholikos de tous les arméniens et les chefs des églises chrétiennes à l'occasion de la fête de la Nativité (pp. 12-15).
4. Le message de SS Karékine 1er à l'occasion du Nouvel An. 31 décembre 1997 (pp. 16-18).
5. Communiqué au sujet du voyage en France de SS Karékine 1er et du Président de la République d'Arménie Mr Lévon Der Bédrossian. 3 janvier 1998 (p. 19).
6. La visite de SS Karékine 1er en France, à l'occasion du gala de bienfaisance de Charles Aznavour au palais des congrès de Paris. 3/5 janvier 1998 (pp. 20-29).
7. DIACRE ARARAD KAPOYAN. Le Nouvel An au St-Siège le 31 décembre 1997 (pp. 30-31).
8. Mariam Vartanian. La Nativité et l'Epiphanie de notre Seigneur Jésus-Christ, 6 janvier 1998 (pp. 32-35).
9. Les cérémonies du Nouvel An et de la Nativité, sous le parrainage de SS Karékine 1er (pp. 36-37).
10. Félicitations pontificales. Titre et honneur de prieure aux RP Parsegh Ghazarian, Sarkiss Tchapanian. Le droit d'utiliser la chasuble florale aux RP Vartan Meguerdtchian, Dirair Sahratian, Norair Baghdassarian, Avédis Taniélian, Séropé Bedrossian, Mampré Kessabian, Miron Aramian. Le droit de porter la croix pectorale aux RP Hamazash Bahadjanian, Gorin Mardirossian, Karnig Garabédian, Vahan Aramian et Diran Arouchanian (p. 38).

PHILOLO-RELIGIEUX

11. L'homélie du recteur du collège Kévorkian prononcée dans la cathédrale le 1er janvier 1998 (pp. 40-41).
12. ARCHIPRETRE VARTAN DULGHERIAN. La fête des humbles et des modestes (message de la Nativité) (pp. 42-44).
13. ARCHEVEQUE CHAHE ADJEMIAN. Conférence à l'occasion de la fête de St Thadée et Barthélemy. 29 novembre 1997 (pp. 45-51).
14. Le repos du théologien évangéliste et bienheureux apôtre Jean. Transcription en

- arménien moderne par l'archimandrite Mikaël Adjahayan (pp. 52-54).
15. La prière de la bénédiction de l'eau de Parsegh Guéssaratsi (Basile de Césarée). Transcription en arménien moderne par le père Archag Khatchadrian (pp. 55-59).
 16. St Yéprem Khouri Assori (St Ephrem d'Assyrie). Introduction : la traduction de l'exhortation et la recomposition du caractère de St Yéprem (pp. 60-94).
 17. HAGOP KEUSSEYAN. Les reliques de Stépanos de Sunik d'après les interprétations de Job et David. Etude et textes. Traduction: Clerc Vikène Ghazarian (pp. 95-105).
 18. PERE CHARLES RENOUX. Le livre no 44 de la bibliothèque nationale de Paris. Un vieux témoignage du rite chrétien. Traduction du français: Azad Bozoyan (pp. 106-114).
 19. GARENE MATEVOSSIAN. Le monastère de Haridj au début du 13^e siècle. Etude (pp. 115-124).
 20. KRIKOR BROUTIAN. La colonne calendrique no 532 d'Anania de Chirak selon un vieux manuscrit arménien. Etude (pp. 125-143).
 21. PERE GARABED HAROUTIOUNIAN. Père Pavel Florenski. Le fidèle et croyant serviteur de l'Eglise orthodoxe russe. Biographie (pp. 144-145).
 22. PAVEL FLORENSKI. La chrétieneté et la culture. Traduction du russe: père Garabed Haroutiounian (pp. 145-154).
 23. HRATCH ASMARIAN. Les chefs de la lutte libérale-nationale italienne d'après l'estimation et la pensée publique arménienne. Etude (pp. 155-161).
 24. VARTAN DEVRIGUIAN. Le fidèle serviteur de l'Eglise arménienne. Critique littéraire du 3^e volume du livre "écrits authentiques de l'Eglise arménienne" de Sandro Béboutian (pp. 162-164).

AU ST-SIEGE ET DANS LES DIOCESES

25. Les 3 moines nouvellement ordonnés ont célébré leur première messe le 25 janvier 1998: pères Archag Khatchadrian/Khorène Hovanissian/Archène Sanossian (p. 166).
 26. La première homélie du père Archag Khatchadrian, prononcée dans la cathédrale du St-Siège, le 25 janvier 1998 (pp. 166-169).
 27. La première homélie du père Khorène Hovanissian, prononcée dans l'église St-Hripsimé, le 25 janvier 1998 (pp. 170-171).
 28. La première homélie du père Archène Sanossian, prononcée dans l'église St-Sarkiss d'Erevan, le 25 janvier 1998 (pp. 172-174).
 29. Ordination sacerdotale dans le diocèse de Kégharkounik, le 25 janvier 1998. Biographie du RP Knel Mardirossian (pp. 175-176).
 30. La semaine mondiale de la prière en Italie du 19 au 27 janvier 1998 (p. 177).
 31. L'Eglise Apostolique Arménienne participante au dialogue entre les églises orthodoxes et réformées d'orient (p. 178).
- Réceptions au St-Siège
32. Yékor Stroief a visité le St-Siège le 25 janvier 1998 (p. 179).
 33. Diverses informations ecclésiastiques. Description des différentes messes, homélies, célébrations et cérémonies au mois de janvier 1998 (pp. 180-182).
 34. PERE KHORENE HOVANISSIAN. Bibliographie du mensuel "Etchmiadzine". 1974/1983 (pp. 183-193).

ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԶՄԻԱԾԻՆ

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ԴԱՍԻԶ՝ 77784

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ